

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

**ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԿՈՎԿԱՍ-ԿԱՍՊՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՈՒՄ**

ARMEN MANVELYAN

**ENERGY SECURITY AND GEOPOLITICAL CHALLENGES
IN THE CAUCASUS-CASPIAN REGION**

АРМЕН МАНВЕЛЯН

**ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ И ГЕОПОЛИТИЧЕСКИЕ
ВЫЗОВЫ В КАВКАЗСКО-КАСПИЙСКОМ РЕГИОНЕ**

ԵՐԵՎԱՆ - YEREVAN - ЕРЕВАН
2015

Երաշխավորված Է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Գիտական խմբագիր՝ **Աշոտ Ենգոյան** քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ Զաղաքագիտության պատմության
ու տեսության ամբիոնի վարիչ:

Գիտական խորհրդատու՝ **Արեգ Գալստյան**, տեխնիկական գիտություն-
ների թեկնածու, դոցենտ, ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների
նախարարի տեղակալ:

Արմեն Մանվեյան
Էներգետիկ անվտանգությունը եւ աշխարհաքաղաքական
մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում
Երեւան, 2015, 258 էջ:

Մենագրությունում հետազոտվում են հետխորհրդային շրջանում Կովկաս-կաս-
պյան տարածաշրջանում միջազգային ուժերի միջեւ սկսված մրցակցությունը եւ
այդ պայքարում Էներգետիկ անվտանգության ու աշխարհաքաղաքականության
նշանակությունը, տարածաշրջանի վերածումը դեպի Արեւմուտք եւ Արեւելք նավ-
թի ու գազի արտահանման միջանցքի եւ Հարավային Կովկասի անվտանգային
դինամիկան: Վերլուծվում են Հայաստանի Հանրապետության դերը տարածաշր-
ջանի Էներգետիկ անվտանգության համակարգում եւ ՌԴ, ԱՄՆ-ի ու Եվրա-
միության Էներգետիկ քաղաքականության ազդեցությունը Հարավային Կովկասի
քաղաքական-անվտանգային միջավայրի վրա:

Երախտիքի խոսք

«Էներգետիկ անվտանգությունը եւ աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում» գիտական մենագրության պատրաստման գործին օժանդակելու համար, հեղինակը իր խորին շնորհակալությունն է հայտնում գեներալ մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ **Հայկ Քոթանջյանին**՝ գիտական խորհրդատվության եւ մասնագիտական աջակցության համար, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ Զաղաքագիտության պատմության ու տեսության ամբիոնի վարիչ **Աշոտ Ենգոյանին**: Հեղինակը շնորհակալ է ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության փոխնախարար, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արեգ Գալստյանին**, ՀՀ ԱԳՆ հարակից երկրների վարչության պետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արսեն Ավագյանին**, ՀՀ ԳԱԱ Արելեւագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու **Վահրամ Տեր-Մաթեոսյանին**, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու **Բենիամին Պողոսյանին**:

Տեխնիկական եւ խմբագրական աշխատանքների համար հեղինակը շնորհակալ է **Պարույր Հակոբյանին**, **Դավիթ Փարվանյանին**, **Տիգրանուհի Տիրացունյանին**, **Առլեն Շահվերդյանին**, **Սիրանույշ Ղազարյանին**:

Հեղինակը շնորհակալ է Ռամկավար Ազատական կուսակցությանը մենագրության տպագրությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԾԻՔ	9
ԱՌԱՋԱԲԱՆ	11
Էներգետիկ անվտանգություն և աշխարհաքաղաքականություն	15
ԳԼՈՒԽ I. ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՇՈՒՐՁԸ ԾԱՎԱԼՎՈՂ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	19
1. Կասպից ծովի միջազգային կարգավիճակի պայքարի պատմությունը	20
2. Կասպից ծովի միջազգային կարգավիճակի հարցը հետխորհրդային շրջանում	24
2-1. Կասպից ծով-լիճ կարգավիճակի հարցը	31
2-2. Կասպից ծովի կարգավիճակի կարելորությունը և սեպարատ պայմանավորվածությունների ժամանակաշրջանը	35
3. Սպառազինությունների մրցավազքը Կասպից ծովում	47
4. Մերձկասպյան երկրների տարածայնությունները Կասպից ծովի կարգավիճակի հարցում (ամփոփում).....	54
ԳԼՈՒԽ II. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԿՈՎԿԱՍ- ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԳԱԶԱՄՈՒՂՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	61
1. Էներգետիկ պաշարների գնահատման նոր ժամանակաշրջանը	62
1-1. Ղազախստանի Հանրապետություն	66
1-2. Ադրբեջանական Հանրապետություն	69
1-3. Թուրքմենստանի Հանրապետություն	74
1-4. Ուզբեկստանի Հանրապետություն	75

2. Գազամուղների շուրջը ընթացող միջազգային պայքարը. Արեւելյան ուղղություն	77
3. «Հարավային միջանցք» նախագիծը եւ խողովակաշարային պայքարի նոր շրջանը	87
4. Անդրկասպյան գազամուղի համար սրվող պայքարի նոր շրջանը եւ միջպետական հարաբերությունները	90
5. Նոր դիմակայություն Եվրամիություն-Ռուսաստան էներգետիկ հարաբերություններում	94
6. Եվրամիության էներգետիկ նոր ռազմավարությունը եւ դրա ազդեցությունը տարածաշրջանի երկրների վրա	98
7. Ադրբեջանա-թուրքական նոր գազամուղը. TANAP-ի սկիզբը եւ NABUCCO-ի ավարտը	102

ԳԼՈՒԽ III. ԿԱՍՊՅԱՆ ՆԱՎԹԱՄՈՒՂՆԵՐԸ՝ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ ԿՈՎԿԱՍ-ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ..... 113

1. Կասպյան նոր նավթամուղները ու Ադրբեջանի, Ղազախստանի եւ Ռուսաստանի շահերը	116
2. Չինաստան-Ղազախստան, Ղազախստան-Իրան նավթային ծրագրերը	127
3. Ադրբեջանական ուղղության կարելորումը Արեւմուտքի կողմից	134
4. Բաքու-Ջեյհանի քաղաքական եւ տնտեսական բաղկացուցիչը	142
5. Նավթամուղների ազդեցությունը Կովկաս-կասպյան տարածաշրջանում (ամփոփում).....	146

ԳԼՈՒԽ IV. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԶԵՎԱՎՈՐՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ..... 153

1. Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները էներգետիկ անվտանգության ոլորտում	156
---	-----

2. <i>Ըներգետիկ անվտանգության համակարգերի առանձնահատկությունները</i>	165
2-1. Ըներգետիկ անվտանգությունը Հարավային Կովկասում	167
3. <i>Ըներգետիկ աշխարհաքաղաքականությունը եւ գսպման գործոնները Հարավային Կովկասում</i>	171
3-1. Ըներգետիկ գործոնը՝ տարածաշրջանում կայունության ապահովման կարելոր բաղկացուցիչ	172
4. <i>Թերթաքարային գազի հեռանկարները եւ Հայաստանի Հանրապետությունը</i>	178
5. <i>Հարավային Կովկասի Ըներգետիկ միջանցքի նշանակությունը Եվրամիության համար եւ Հայաստանը (ամփոփում)</i>	182
RESUME	189
<i>ENERGY SECURITY AND GEOPOLITICAL CHALLENGES IN THE CAUCASUS-CASPIAN REGION</i>	<i>189</i>
Chapter 1: The International Status of the Caspian Sea and the competition around it	189
Chapter 2: The Energy Resources of the Caspian Sea and the Competition on the Construction of Gas Pipelines	193
Chapter 3: The Caspian oil routes as a new factor in the Caucasus-Caspian region	196
Chapter 4: The Energy Security System being formed in the South Caucasus and Armenia	199
РЕЗЮМЕ	205
<i>ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ И ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ВЫЗОВЫ В КАВКАЗСКО-КАСПИЙСКОМ РЕГИОНЕ</i>	<i>205</i>
Глава I. Международный статус Каспийского моря и разворачивающаяся вокруг него конкуренция	205

Глава II. Энергетические запасы бассейна Каспийского моря и конкуренция в строительстве газопроводов	209
Глава III. Каспийские нефтепроводы - новый политический фактор в Кавказско-Каспийском регионе	212
Глава IV. Формирующиеся на Южном Кавказе системы энергетической безопасности и Армения	216
ՀԱՎԵԼՎԱԾ Ա.....	221
ՀԱՄԱՈՒՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ	229
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐ	231
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲԵԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	235
<i>Արխիվային նյութեր, փաստաթղթերի ժողովածուներ</i>	<i>235</i>
<i>Ուսումնասիրություններ, մենագրություններ.....</i>	<i>241</i>
<i>Մասնագիտական ամսագրեր, լրագրեր, հոդվածներ եւ կայքէջեր.....</i>	<i>245</i>
<i>Մամուլ եւ լրատվական գործակալություններ</i>	<i>250</i>

ԿԱՐԾԻՔ

«Էներգետիկ անվտանգությունը եւ աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում» մենագրության մասին

Պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մանվելյանի «Էներգետիկ անվտանգությունը եւ աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում» մենագրությունը մասնագիտական լայն շրջանակներին է ներկայացվել ճիշտ ժամանակին եւ պահանջվածին: Մեր տարածաշրջանում ընթանում է աշխարհաքաղաքական պայքար, որի հիմքում գերիշխող են դառնում առանցքային խաղացողների Էներգետիկ շահերը: Այդ շահերի շուրջ ընթացող հակասություններն էլ բնորոշում են տարածաշրջանային զարգացումները եւ ազդում Զարավային Կովկասի բոլոր պետությունների՝ այդ թվում Զայաստանի Զանրապետության անվտանգության հիմնախնդիրների վրա:

Չեղինակին հաջողվել է խորությամբ ուսումնասիրել այս խնդիրը, տալ պատմա-քաղաքական իրադարձությունների ճշմարիտ պատկերը եւ կատարել գիտական խորը վերլուծություն ստեղծված իրավիճակի պատճառներն ու տարածաշրջանում զարգացումների հնարավոր սցենարները գնահատելու համար:

Մենագրությունը առանձնահատուկ գիտական արժեք է ներկայացնում Կովկաս-կասպյան տարածաշրջանում ընթացող իրադարձու-

թյունները խորքային կերպով հասկանալու ու հատկապես էներգետիկ գործոնի դերը ճիշտ գնահատելու համար:

Հեղինակին հաջողվել է մեկ գրքում ամփոփել այս բարդ ժամանակաշրջանում Կովկաս-կասպյան տարածաշրջանում էներգետիկ պաշարների եւ դրանց տարանջման ուղիների նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար ընթացող պայքարի պատմությունը, տալ դրա քաղաքագիտական գնահատականը:

Գիրքը չափազանց օգտակար է մասնագետների համար: Այն հնարավորություն է տալիս մանրակրկիտ կերպով պատկերացնել տարածաշրջանային քաղաքական շահերն ու հետաքրքրությունները եւ դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության համակարգի վրա:

*Արեգ Գալստյան, տ.գ.թ., դոցենտ,
ՀՀ էներգետիկայի եւ բնական
պաշարների նախարարի տեղակալ*

ԱՌԱՋԱԲԱՆ

Նավթի արդյունաբերական շահագործումը սկիզբ դրեց այդ էներգակրի գերիշխանությանը ողջ աշխարհում եւ տնտեսական գործոնից շատ արագ վերածեց քաղաքականի, իսկ ներքին այրման շարժիչը նավթը դարձրեց շատ պետությունների արդյունաբերության զարգացման եւ տնտեսական առաջընթացի գլխավոր խթանիչը: 20-րդ դարի սկզբից նավթը, դարի վերջից նաեւ գազը քաղաքական հզորության ու աշխարհաքաղաքական խաղի կարեւորագույն լծակներ են: Յետեւաբար՝ այդ լծակներին տիրապետելը միջազգային դերակատարների համար եղել եւ մնում է դաժան մրցակցության պատճառ:

Գլոբալացող՝ փոխկապակցված աշխարհում նավթի կամ գազի քիչ թե շատ նշանակալի պաշար ունեցող ամեն մի տարածաշրջան հայտնվում է աշխարհում հիմնական դերակատարություն ունեցող միջազգային ուժերի հետաքրքրությունների շրջանակում: Պայքարելով այդ տարածքների համար՝ նրանք առաջ են մղում իրենց քաղաքական շահերը՝ ոտնահարելով թույլերին եւ լարվածություն ստեղծելով տարածաշրջաններում:

Հայաստանը, մոտ լինելով էներգակիրներով հարուստ տարածքների, միշտ կրել է այդ ազդեցությունը եւ ԽՍՀՄ-ի քայքայումից հետո՝ աշխարհաքաղաքական փոփոխությունների հետեւանքով նորից է հայտնվել ազդեցությունների համար ընթացող պայքարի կիզակետում:

Յետեւաբար՝ Կովկաս-կասպյան տարածաշրջանում էներգետիկ աշխարհաքաղաքականության եւ էներգետիկ անվտանգության ուսումնասիրությունը կարեւոր նշանակություն ունի տարածաշրջանի անվտանգային դինամիկայի վրա ընդհանրապես եւ ՀՀ անվտանգության

վրա մասնավորապես՝ Էներգետիկ գործոնի ազդեցությունը հասկանալու համար:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկսվեցին փոփոխություններ, որոնք արտահայտվեցին ոչ միայն աշխարհաքաղաքական սոր դասավորություններով եւ այսպես կոչված միաբեւեռ քաղաքական համակարգի ձեւավորմամբ, այլեւ պետական սոր միավորների ստեղծմամբ, որոնք անմիջապես հայտնվեցին Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի ուշադրության կենտրոնում: Նորաստեղծ պետությունների վրա քաղաքական ու տնտեսական ազդեցության տարածման մրցակցությունը սուր էր նաեւ Հարավային Կովկասում եւ Կասպից ծովի ավազանի երկրներում: Հետաքրքրությունները պայմանավորված էին ոչ միայն դրանց աշխարհագրական դիրքով, այլեւ նավթի ու գազի պաշարներով, որոնցով հարուստ են Կասպից ծովի ավազանի պետությունները:

Էներգետիկ պաշարների վերահսկողության հաստատման ու տարանցիկ ուղիների կառուցման համար սկսված պայքարը շատ գիտնականներ անվանեցին «Նոր մեծ խաղի»¹ սկիզբ, ինչը, ըստ նրանց, նման էր XIX դարում Ռուսաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ Կենտրոնական Ասիայում ընթացող պայքարին:

Աշխարհագրորեն գտնվելով Եվրասիա մայրցամաքի կենտրոնում՝ այս տարածաշրջանները մեծ հետաքրքրություն էին ներկայացնում Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի համար, որտեղ «մեծացած» քաղաքագետների մի ողջ սերունդ հավատացած է, թե վերահսկողությունը աշխարհի ամենամեծ մայրցամաքի նկատմամբ գերտերության կարգավիճակը պահպանելու հիմնական պայմանն է: Նրանց համար բրիտանացի հայտնի տեսաբան, աշխարհագրագետ եւ պատմաբան Հալֆորդ Ջոն Մակինդերի «Հարթլանդի (Heartland)* տեսությունը», դարձել

¹ Տե՛ս *R.H. Dokmejian, H.H. Simonian. Troubled waters. The Geopolitics of The Caspian region. London, New York, 2001, P. 133:*

* Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այս տեսությունը ակտիվորեն կիրառում էին ֆաշիստական Գերմանիայի տեսաբանները, մասնավորապես՝ Զառլ Հաշովերը եւ Ֆրեդերիկ Ռաթգելը:

եր ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական առաջընթացի գաղափարախոսություններից մեկը:

Այս տարածաշրջան ներթափանցելու եւ վերահսկելու գաղափարը մշակում էին Սպիտակ տան արտաքին քաղաքականության վրա հզոր ազդեցություն ունեցող քաղաքագետներ եւ վերլուծաբաններ՝ Չբիգնեյ Բժեգինսկին իր հայտնի «Շախմատային մեծ խաղադաշտ» գրքով, ԱՄՆ-ի փոխնախագահ Դիկ Չեյնիի ազգային ավտանգության հարցերով խորհրդական Լյուիս Լիբին, ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Պոլ Վոլֆովիցը եւ այլք: Այսինքն՝ այս տարածաշրջանում հաստատվելու համար կար տեսական հիմք, որը հիմնավորում եւ արդարացնում էր քայլի անհրաժեշտությունը ԱՄՆ-ի համար՝ որպես թիվ մեկ գերտերության կարգավիճակի պահպանման, էլ ավելի հզորացման եւ նոր գերտերությունների առաջացմանը խոչընդոտելու համար: ԱՄՆ-ում «Յարթլանդի» (Heartland)² տեսության կողմնակիցները համոզված էին, որ Վաշինգտոնը օր առաջ պետք է վերահսկողություն հաստատի այս տարածաշրջաններում, որը հնարավորություն կտա վերահսկելու ոչ միայն Եվրասիայի կենտրոնական շրջանները, այլեւ Էներգետիկ հարուստ պաշարները:

Եթե Կասպից ծովի ավազանը տերություններին հետաքրքրում է իր Էներգետիկ պաշարներով, ապա Յարավային Կովկասն այն տարանցիկ ուղին է, որով այդ Էներգակիրները հոսում են դեպի Արեւմուտք: Յետեւաբար՝ Արեւմուտքի քաղաքական եւ քաղաքագիտական շրջանակները այս երկու տարածաշրջանները դիտարկում են որպես մի ընդհանրություն եւ շատ հաճախ, Կասպից ծովի ավազան ասելիս, նկատի ունեն նաեւ Յարավային Կովկասը³: Պատահական չէ, որ ԱՄՆ-ի պետքարտուղարների կասպյան հարցերով խորհրդականները պատասխանատու են եղել նաեւ Յարավային Կովկասի համար: Նրանցից, օրի-

² Տես *H.J. Mackinder*. The Geographical Pivot of History. «The Geographical Journal», December 1, 2004:

³ Տես *B. Shaffer*. U.S. Policy toward the Caspian Region: Recommendations for the Bush Administration. Caspian Studies Program at Harvard University's John F. Kennedy School of Government, July 2001:

նակ, Սթիվեն Մանը եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ եւ զբաղվել դարաբաղյան հարցի բանակցային գործընթացով, իսկ Ռիչարդ Մորնինգսթարը զբաղեցրել է ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնը Ադրբեյջանում (2012-2014թթ)⁴:

Կասպից ծովի ավազանի եւ Հարավային Կովկասի համար 90-ականներից մինչ օրս ընթացող համառ մրցակցությունը տարածաշրջանի պետություններին ստիպում է իրենց քաղաքականությունն ու պետական շահերը հարմարեցնել այդ գործընթացին: Հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ այնքան մեծ է, որ աշխարհի մի շարք գիտական կառույցներում, օրինակ՝ Ռայսի, Հարվարդի, Ստենֆորդի համալսարաններում, Բեյքերի ինստիտուտում, «Հերիթիջ», «Ջեյմսթոուն» հիմնադրամներում եւ այլուր, ստեղծվեցին հատուկ գիտական կենտրոններ, որոնք զբաղվում են կասպյան ավազանով, դրա շուրջն ընթացող զարգացումների ուսումնասիրությամբ եւ այդ թեմայով վերլուծական ու գիտական աշխատությունների հրապարակմամբ:

Եվրոպայի հետաքրքրությունը տարածաշրջանով բացատրվում է Էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից թուլացնելու եւ, որպես այլընտրանք, դեպի Եվրոպա նոր Էներգակիրների ներմուծումը կազմակերպելու տեսակետից: Այսինքն՝ Էներգետիկ խնդիրներն էին այն կարելու պայմանները, որոնք թելադրում էին տարածաշրջանի զարգացումները հետխորհրդային շրջանում: Հետեւաբար՝ Էներգետիկ պաշարների համար տարածաշրջանի երկրների եւ մեծ տերությունների պայքարն է կանխորոշել վերջին տարիների քաղաքական զարգացումները Հարավային Կովկասում եւ Կասպից ծովի ավազանում: Այս իրադարձությունների գիտական ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու զարգացումները նշված ժամանակաշրջանում, ինչպես նաեւ գնահատելու դրանց հետագա ազդեցությունը:

⁴ Stu *Graham Allison, Emily Van Buskirk*. U.S. Policy on Caspian Energy Development and Exports. Caspian Studies Program. Harvard University, John F. Kennedy School of Government, May 2001:

Էներգետիկ անվտանգություն եւ աշխարհաքաղաքականություն

Էներգետիկ անվտանգություն եւ Էներգետիկ աշխարհաքաղաքականություն տերմինները գիտական ակտիվ շրջանառության մեջ մտան անցած դարի 70-ական թվականներին: 1973թ. հայտնի Էմբարգոյից հետո ԱՄՆ-ը եւ նավթ սպառող այլ պետություններ 1974թ. նոյեմբերի 18-ին ստեղծեցին Միջազգային Էներգետիկ գործակալությունը⁵, որը սկսեց մշակել «Էներգետիկ անվտանգության» առաջին համակարգերը:

Էներգետիկ անվտանգության մասնագետներ Կարլոս Պասկուալը եւ Ջոնատան Էքինդը իրենց աշխատությունում⁶ այդ երեւոյթը նկարագրում են, որպէս անընդհատ ընտրություն, որը մենք կատարում ենք տնտեսական զարգացման, ազգային անվտանգության եւ միջավայրի պաշտպանության միջեւ: Ըստ վերջիններիս, շատերի համար Էներգետիկ անվտանգություն եւ Էներգետիկ անկախություն արտահայտությունները հոմանիշներ են, ու դրանք ակտիվ կերպով օգտագործվում են այս թեմայի շուրջ ծավալվող բանավեճում: Հեղինակները համարում են, որ երկարաժամկետ միտումով Էներգետիկ անվտանգությունը դա ածխաջրածնից կախվածության նվազեցումն է, իսկ ապագայում ընդհանրապէս հրաժարումը:

Սակայն կարճաժամկետ հեռանկարում Էներգետիկ անվտանգությունը սպառող պետությունների համար շարունակում է մնալ բազմա-

⁵ International Energy Agency, <http://www.iea.org/aboutus/history/>

⁶ Carlos Pascual, Jonathan Elkind, Energy Security: Economics, Politics, Strategies, and Implications, brookings institution press, Washington, D.C. Copyright . 2010

զան աղբյուրներից եւ տարբեր ուղիներով կայուն մատակարարման սկզբունքը: Միաժամանակ Էներգետիկ անվտանգությունը արդի աշխարհում դա տնտեսական, բնակլիմայական եւ աշխարհաքաղաքական իրավիճակների համադրությունն է, որոնց կայունությունն ու Էներգակիրների նկատմամբ հասանելիությունն էլ ապահովում է Էներգետիկ ընդհանուր շուկայի անվտանգ, վստահելի ու անխափան աշխատանքը:

Էներգետիկ աշխարհաքաղաքականության սկզբունքը սկսվեց մշակվել ԱՄՆ-ում, որը չնայած միջազգային Էներգետիկ գործակալության (ՄԷԳ) անդամն էր, սակայն հաշվի առնելով վերջինիս աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական, ազդեցությունը հետաքրքրությունները Էներգետիկ անվտանգության համակարգի նկատմամբ, որպես միայն ներքին սպառման անվտանգության միջոց, բավարար չէր: Միջազգային Էներգետիկ գործակալությունից անկախ ամերիկյան գիտնականները սկսեցին մշակել ու ներկայացնել մեկ այլ համակարգ, որն անվանվեց Էներգետիկ աշխարհաքաղաքականություն:

Քաղաքագիտական այս նոր ուղղության մշակմամբ ԱՄՆ Էներգետիկայի նախարարության հետ զուգահեռ ակտիվ կերպով սկսեց զբաղվել ԱՄՆ Պաշտպանական գերատեսչությունը: Պենտագոնի նմանատիպ մոտեցումը փորձագետները բացատրում էին երկու պատճառով, նախ ռազմական գերատեսչության հետաքրքրությամբ կայուն Էներգամատակարարում ապահովելու խնդրով (Պենտագոնը ԱՄՆ Էներգակիրներ սպառող ամենախոշոր դաշնային կառույցն է, մոտ 80%)⁷, երկրորդ՝ Էներգակիրներով հարուստ տարածաշրջանների նկատմամբ ամերիկյան աշխարհառազմավարական հետաքրքրության կտրուկ ակտիվացմամբ:

ԱՄՆ ռազմական գերատեսչությունը մինչ օրս էլ համարվում է աշխարհի ամենախոշոր նավթ սպառող կառույցներից մեկը, ըստ ֆրանսիացի գիտնական Սոիբեթ Կարբուզի, ԱՄՆ-ի պատշպանական գերա-

⁷ Sohbet Karbuz, U.S. Military Energy Consumption, Geopolitics, and Energy Security, <http://karbuz.blogspot.com/2007/05/us-military-energy-consumption-facts.html>

տեսչությունից ավելի աշխարհում նավթ եւ սպառում միայն 35 պետություններ, իսկ մեկ շնչի հաշվարկով նավթի սպառման ծավալով, այդ գերատեսչությունից առաջ եւ միայն 3 պետություններ⁸:

Էներգետիկ ախարհաքաղաքականության հայտնի մասնագետ ամերիկյան Մասաչուսեթս համալսարանի պրոֆեսոր Մայքլ Զլարը, իր «Արյուն եւ նավթ» աշխատությունում անդրադառնալով ԱՄՆ-ի էներգետիկ քաղաքականությանը այն համարում է միահյուսված պետության ռազմական շահերի հետ, «եւ եթե մենք շարունակենք ապավինել մեր ռազմական ուժերի վրա լուծելու համար մեր էներգետիկ պաշարների ինդիքը, ապա մեզ սպասվում է շատ արյունալի եւ վտանգավոր դարաշրջան»⁹, նշում է հեղինակը: Այսինքն ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը զուգորդվում են նաեւ նրա էներգետիկ շահերի հետ, եւ այն տարածաշրջանները, որոնք հարուստ են էներգակիրներով ԱՄՆ-ի համար դառնում են հետաքրքրությունների առանձնահատուկ գոտիներ:

ԱՄՆ-ում հրատարակվող մի շարք աշխատություններում փորձում են սահմանել էներգետիկ աշխարհաքաղաքականություն տերմինը, այն նկարագրելով որպես էներգետիկ հումքով պայմանավորված աշխարհագրական որոշակի տարածքների նկատմամբ մեծ տերությունների կողմից աշխարհառազմավարական հետաքրքրությունների աճում:

Մասնավորապես էներգետիկ աշխարհաքաղաքականության տերմինը ամերիկացի մասնագետներ Մալվին Զոնանտը եւ Ֆարն Գոլդը նկարագրում են որպես ավելի ընդարձակ գործոն: Վերջիններս շեշտում են, որ էներգետիկ աշխարհաքաղաքականությունը ավելին է քան ինչ որ տարածքում էներգետիկ հումքի առկայությունը, այն ամբողջական գործընթաց է, որը իր մեջ ներառում է նաեւ այդ հումքի

⁸ Sohbet Karbuz, U.S. Military Energy Consumption, Geopolitics, and Energy Security, <http://karbuz.blogspot.com/2007/05/us-military-energy-consumption-facts.html>

⁹ Michael T. Klare, Blood And Oil, https://www.mediaed.org/assets/products/124/presskit_124.pdf

արդյունահանման վերամշակման եւ տեղափոխման գործընթացի նկատմամբ ամբողջական վերահսկման հաստատում¹⁰:

Էներգետիկ աշխարհաքաղաքականությունը նաեւ հարաբերությունների նոր որակ է, երբ գերիզոր պետությունները, որոնք որպես կանոն այդ հումքի հիմնական սպառողներն են, վերանայում են իրենց հարաբերությունները պետության կամ պետությունների նկատմամբ պայմանավորված վերջիններիս տարածքում էներգակիրների առկայության քանակի հետ: Այս քաղաքականության պայմաններում ի հայտ են գալիս նոր դաշինքներ, որոնք ապահովում են գերիզոր պետությանը էներգակիրների նոր աղբյուրներից կայուն ու անխափան մատակարարումներով, իսկ տեղական պետությանը կամ պետություններին տալիս են տնտեսական, քաղաքական եւ որպես կանոն անվտանգային նոր երաշխիքներ:

Սակայն էներգետիկ աշխարհաքաղաքականությունը փոփոխական է՝ պայմանավորված միջազգային շուկայում պահանջարկի եւ առաջարկի փոփոխմամբ, ինչը կարող է արտահայտվել տնտեսական, բնակլիմայական, քաղաքական եւ անվտանգային միջավայրի փոփոխությամբ, որոնք որոշակիորեն ազդում են էներգետիկ աշխարհաքաղաքականության վրա: Մասնավորապես էներգակիրներով հարուստ պետությունները կարող են դուրս մնալ էներգետիկ աշխարհաքաղաքականության գործընթացից զրկվելով նաեւ այստեղից բխող բոլոր առավելություններից:

¹⁰ Malvin A. Conant, Farn Racine Gold, The Geopolitics of Energy. Westview press. Boulder, Colorado. 1978

ԳԼՈՒԽ I. ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՇՈՒՐՋԸ ԾԱՎԱԼՎՈՂ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հարավային Կովկասը, Կասպից ծովի ավազանը եւ Կենտրոնական Ասիան հայտնվեցին ԱՄՆ-ի եւ Եվրամիության ուշադրության կենտրոնում: Նշված տարածաշրջանները նրանց համար կարելու էին թե՛ իրենց աշխարհագրական դիրքով, թե՛ էներգետիկ պաշարների հարստությամբ:

Կասպից ծովի ավազանի վերահսկողությունը հնարավորություն է տալիս ազդեցություն ձեռք բերելու նաեւ Կենտրոնական Ասիայի նկատմամբ, իսկ Հարավային Կովկասն այն միջանցքն է, որը կապում է այս տարածաշրջաններն Արեւմուտքին:

Ստեղծված իրավիճակում անկախություն ստացած մերձկասպյան հանրապետությունները ցանկանում էին օր առաջ սկսել Կասպից ծովի ընդերքի շահագործումը՝ հարստացման եւ սեփական վարչակազմերի պահպանման համար: Սակայն դրա հիմնական խոչընդոտներից մեկը ծովի կարգավիճակի հարցն էր, որը թույլ չէր տալիս ակտիվ ներդրումներ կատարել եւ ներգրավել արեւմտյան ընկերություններին՝ մասնակցելու նավթի ու գազի արտահանմանը:

Եվ այդ պատճառով Կասպիցի իրավական կարգավիճակի որոշման հարցը առաջնային դարձավ ափամերձ հինգ պետությունների՝ Ռուսաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Իրանի եւ Ադրբեջանի համար:

1. Կասպից ծովի միջազգային կարգավիճակի պայքարի պատմությունը

Կասպից ծովը աշխարհի ամենամեծ փակ ջրային տարածքն է, որի ընդհանուր մակերեսը մոտ 371 հազար քառակուսի կմ է: Աշխարհագրորեն ծովը բաժանվում է 3 մասի՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային: Հյուսիսային մասը աչքի է ընկնում ափամերձ ցածր գծով և ոչ մեծ խորությամբ (մոտ 8 մետր): Կասպից ծովի ձգվածությունը մոտ 1200 կմ է, միջին լայնությունը՝ 320 կմ, ափագծի երկարությունը՝ մոտ 7 հազար կմ, առավելագույն խորությունը՝ 1025 մ: Մակարդակը համաշխարհային օվկիանոսից 28,5 մ ցածր է: Կասպից ծովում կա մոտ 50 կղզի: Հյուսիսից ծով են թափվում Վոլգա, Էմբա, Ուրալ, Թերեք, արեւմուտքից՝ Սուլակ, Կուր, Սամուր գետերը¹¹ (տե՛ս նկար 1):

Կասպից ծովը իր աշխարհագրական դիրքով գտնվում է Եվրասիա մայրցամաքի կարելորագույն խաչմերուկում և իր Էներգետիկ պաշարներով հետաքրքրություն է ներկայացնում թե՛ Արեւմուտքի, թե՛ Արեւելքի պետությունների համար:

ԽՍՀՄ-ի քայքայումը վերակենդանացրեց Կասպից ծովի շուրջը ընթացող պայքարը, և եթե նախկինում Կասպիցը բաժանված էր միայն ԽՍՀՄ-ի և Իրանի միջև, ապա այսօր այնտեղով անցնում են 5 պետությունների սահմանները:

Կասպից ծովն իր աշխարհագրական դիրքով և Էներգետիկ նշանակալի պաշարներով լուրջ «ազդեցություն» ունի հարակից պետությունների վրա. «ստիպում է» նրանց ներքին և արտաքին քաղաքականության մեջ հաշվի առնել ծովի աշխարհառազմավարական առանձնահատկությունը և նրա նկատմամբ մեծ տերությունների ունեցած հետաքրքրությունը: Ինչպես նշում է պատմաբան Ռուստամ Մամեդովը՝ «Կասպից ծովը տարածաշրջանի բոլոր երկրների աշխարհաքաղաքա-

¹¹ Տես «Կասպից ծով»: «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5: Ե., 1979, էջ 277:

կան բոլոր խնդիրների պատճառն է»¹²: 1990-ականներին Կասպից ծովի շուրջն ընթացող պայքարում, մերձկասպյան պետություններից բացի, ներգրավված էին նաեւ ԱՄՆ-ը եւ մասամբ Եվրամիությունը: Վերջին տարիներին այս հարցում ակտիվություն է ցուցաբերում Չինաստանը:

Պատմականորեն Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը միշտ կարելոր է եղել տարածաշրջանի պետությունների համար: Այս հարցն առաջին անգամ բարձրացվել է 19-րդ դարում տեղի ունեցած ռուս-պարսկական պատերազմների ժամանակ (1804-1813թթ., 1826-1828թթ.): 1913թ. հոկտեմբերի 24-ին կնքված Գյուլիստանի պայմանագրի 5-րդ հոդվածը Կասպից ծովում գործունեություն ծավալելու հավասար իրավունքներ էր տալիս Ռուսաստանի եւ Պարսկաստանի առեւտրային նավատորմերին: Սակայն նույն հոդվածն էլ նշում էր. «...Ռուսաստանից բացի՝ այլ տերություն իրավունք չունի Կասպից ծովում ունենալու ռազմական դրոշ (նկատի ունի ռազմական նավատորմ - հեղ.)»¹³:

Գյուլիստանի, ապա Թուրքմենչայի պայմանագրերով առաջին անգամ ձեւավորվեց Կասպից ծովի միջազգային կարգավիճակը, որով Պարսկաստանը իրավունք ուներ միայն առեւտրային նավատորմ պահելու Կասպից ծովում:

Ցարական Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կնքվեցին եւս մի քանի պայմանագրեր (1881թ., 1893թ.)¹⁴, որոնք ճշտում էին ռուս-պարսկական սահմանը Կասպից ծովում: 1917թ. հեղափոխությունները եւ Ռուսական կայսրության անկումն ու դրան հետեւած իրադարձու-

¹² P. Мамедов. Современный международно-правовой статус Каспийского моря: политика, дипломатия и право. «Право и политика», журнал, 2001, № 3 (<http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772>).

¹³ Ств «История дипломатии», т. 1. Под ред. В. А. Зорин, В. С. Семенов, С. Д. Сказкин, В. М. Хвостов. 2-е изд., переработанное и дополненное. М.: Госполитиздат, 1959, с. 527:

¹⁴ Ств А. Бумаев. Каспий: зачем он Западу? (<http://www.caspiy.net/>):

թյունները խախտեցին ստեղծված հավասարակշռությունը Կասպից ծովի տարածաշրջանում:

Ծովի կարգավիճակի հաստատման համար հետագայում Խորհրդային Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կնքվեցին պայմանագրեր՝ 1921, 1935 եւ 1940 թթ., որոնցով կողմերը հավասար իրավունքներ էին ստանում Կասպից ծովում գործունեություն ծավալելու:

1921թ. փետրվարի 26-ին Խորհրդային Ռուսաստանի եւ Իրանի միջեւ կնքված պայմանագրով չեղյալ էին հայտարարվում նախկինում ստորագրված բոլոր պայմանագրերը, իսկ պայմանագրի 11-րդ հոդվածը փաստորեն Կասպից ծովի նոր կարգավիճակ էր սահմանում: Այստեղ մասնավորապես ասվում էր. «...կողմերը համաձայն են, որ ստորագրման պահից իրենք իրավունք են ստանում ազատորեն լողալու ծովի ողջ տարածքում սեփական դրոշների ներքո»¹⁵:

Այս պայմանագրով Ռուսաստանը հրաժարվեց նաեւ 1907թ. կնքված անգլո-ռուսական պայմանագրից, որով Պարսկաստանը բաժանվում էր ազդեցությունների գոտիների: 1921թ. կնքված պայմանագրի 6-րդ հոդվածում հատուկ նշվում էր, որ պարսկական կողմը չպետք է թույլ տա այլ պետությունների գործերի մուտքը իր երկրի տարածք¹⁶: Այս պայմանագիրը, որը կախվածության մեջ էր դնում Խորհրդային Ռուսաստանից, Թեհրանի համար թերեւս ձեռնտու էր միայն նրանով, որ Կասպից ծովը ստանում էր նոր կարգավիճակ, Պարսկաստանը իրավունք էր ստանում ազատ կերպով նավարկելու եւ ձկնորսությամբ զբաղվելու ծովի ողջ տարածքում:

Փաստաթղթում նույնիսկ հատուկ շեշտվում էր «խորհրդա-պարսկական ծով» տերմինը: Իսկ որ ծովը փակ էր երրորդ կողմի համար՝ հստակորեն ասվում էր արդեն 1935թ. Խորհրդային Միության եւ Իրանի միջեւ կնքված հերթական պայմանագրի 14-րդ հոդվածում, որտեղ գրված էր. «...Կասպից ծովի ողջ երկայնքով կարող են գտնվել նավեր,

¹⁵ Տե՛ս *В.Г. Трыханов. История международных отношений и внешняя политика СССР (1917-1939)*, т. 1. М., 1961, с. 126:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

որոնք պատկանում են միայն ԽՍՀՄ-ին եւ Պարսկաստանին կամ նրանց քաղաքացիներին ու ընկերություններին, որոնք լողում են մի-միայն կողմերի դրոշների ներքո, եւ նրանց անձնակազմը բաղկացած է միայն այդ երկրների քաղաքացիներից»¹⁷: ԽՍՀՄ-ի եւ Պարսկաստանի միջեւ կնքված պայմանագրերով Կասպից ծովը համարվում էր «խորհրդա-պարսկական փակ ջրային տարածք», որտեղ որեւէ այլ պետության մուտքն արգելված էր:

Կնքված պայմանագրերը չէին հստակեցնում Պարսկաստանի եւ ԽՍՀՄ-ի սահմանները, նշվում էր միայն, որ 10-մղոնանոց* ավամերձ տարածությունը առանձնացվում է որպես ձկնորսության գոտի: 1921-1991թթ. կողմերի միջեւ կնքված բոլոր համաձայնագրերում հատուկ նշվում էր, որ Իրանի** եւ Խորհրդային Միության միջեւ Կասպից ծովում չկան ներքին սահմաններ, եւ այդպիսին չէր համարվում նաեւ ավամերձ 10-մղոնանոց հատվածը: 1940թ. կնքված պայմանագրում հատուկ շեշտվում էր, որ կողմերը իրավունք ունեն ձկնորսությամբ զբաղվելու ծովի ողջ երկայնքով¹⁸:

Չնայած կնքված երկկողմ բազմաթիվ պայմանագրերին, ԽՍՀՄ-ը իրականում միակողմանի հաստատել էր Աստարա-Եսանգուլի (նկար 2) սահմանագիծը: 1982թ. Խորհրդային Միությունը հայտարարեց, որ Աստարա-Եսանգուլի սահմանային գծին տալիս է պետական կարգավիճակ, որով ԽՍՀՄ-ը փաստորեն խախտում էր Կասպից ծովի ավազանում հավասար իրավունքներով գործունեության պայմանները, որոնք ամրագրված էին խորհրդա-իրանական բոլոր փաստաթղթերում: Վերը նշված գծով Կասպից ծովը փաստորեն բաժանվում էր Խորհրդային Միության եւ Իրանի միջեւ՝ 88-12 տոկոսային հարաբերակցությամբ¹⁹:

¹⁷ Տես նույն տեղում, էջ 130:

* Մղոնը (ծովային) հավասար է 1852 մ:

** 1935թ. Պարսկաստանը անվանվեց Իրան:

¹⁸ Տես «История дипломатии», т. 2. Под ред. А. А. Громыко и др. 2-е издание, переработанное и дополненное. М.: Госполитиздат, 1959, 831 с.:

¹⁹ Տես А. Бумаев. Каспий: зачем он Западу? (<http://www.caspiy.net/>):

Յետագայում՝ 1990թ., ԽՍՀՄ-ը միակողմանի խախտեց երկկողմ պայմանագրերի մի կարեւոր կետ եւս՝ «խորհրդա-իրանական փակ ջրային տարածքում» թույլ տալով արտասահմանյան նավթային ընկերությունների գործունեությունը²⁰:

Այսպիսով՝ մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզումը խորհրդա-իրանական բոլոր պայմանագրերը հաստատում էին, որ Կասպից ծովն ուներ «փակ ջրային տարածքի» կարգավիճակ: Չնայած ԽՍՀՄ-ի քայքայմանն ու տարածաշրջանում մի քանի նոր պետությունների ի հայտ գալուն, ծովի կարգավիճակի նոր պայմանագրի բացակայության պայմաններում, ըստ որոշ մասնագետների, շարունակում են գործել նախկին՝ ԽՍՀՄ-ի-րան պայմանագրերը (Ռուսաստանի Դաշնությունը իրեն հայտարարել է ԽՍՀՄ-ի իրավահաջորդ եւ ստանձնել է վերջինիս կնքած բոլոր պայմանագրերի կատարման պատասխանատվությունը - հեղ.), որոնցով, ինչպես արդեն նշեցինք, ծովը պետք է համարվի «փակ ջրային» տարածք:

2. Կասպից ծովի միջազգային կարգավիճակի հարցը հետխորհրդային շրջանում

Խորհրդային Միության քայքայումից հետո խորհրդա-իրանական նախկին պայմանագրերը այլեւս չին արտացոլում տարածաշրջանում ստեղծված նոր իրողությունները, հետեւաբար հարկավոր էր նոր պայմանագրեր կնքել՝ որոշելու Կասպից ծովի միջազգային կարգավիճակը: Ավազանի երկրների միջեւ սկսվեց բանակցությունների մի գործընթաց, որը տարբեր ընդհատումներով շարունակվում է մինչ օրս, եւ չնայած դիվանագիտական հնգակողմ եւ երկկողմ ձեւաչափով ողջ աշխատանքներին՝ կողմերն այդպես էլ չեն կարողանում գալ ընդհանուր հայտարարի՝ որոշելու ծովի կարգավիճակը: Այդ կարգավիճակի հարցը հատկապես հրատապ էր, քանի որ նորաստեղծ պետություններին առաջին հերթին հետաքրքրում էին Կասպից ծովի ածխաջրածնային

²⁰ Տես *К.С. Гаджиев. Геополитика Кавказа. М.: Международные отношения, 2003, с. 65:*

պաշարները, իսկ գոյություն ունեցող խորհրդա-իրանական պայմանագրերը կարգավորում էին միայն ծովի ջրային հատվածի բաժանումը եւ նավագնացությունը (նկար 3):

Օգտվելով այս անորոշությունից՝ տարբեր երկրներ սկսեցին ակտիվորեն ներգրավվել նորանկախ պետությունների՝ Ղազախստանի, Թուրքմենստանի եւ Ադրբեջանի նավթային ծրագրերում: Այս գործընթացում առաջնությունը պատկանում էր ԱՄՆ-ին: Ըստ ռուսաստանցի մասնագետ Ա.Բուտաեւի՝ այս ամենը խախտում է գործող խորհրդա-իրանական պայմանագրերը, որոնք, ինչպես նշվեց, արգելում են այլ երկրների մուտքը Կասպից ծով, որը համարվում է փակ ջրային տարածք²¹:

ԽՍՀՄ-ի քայքայումից հետո, արդեն 1991թ. դեկտեմբերին, Ռուսաստանի արտգործնախարարությունը հանդես եկավ առաջարկությամբ՝ Կասպից ծովը համարել փակ ջրային տարածք՝ հիմք ընդունելով խորհրդա-իրանական գործող պայմանագրերը, ինչը նշանակում է.

1. Ռուսաստանը, Ղազախստանը, Թուրքմենստանը, Իրանը եւ Ադրբեջանը «սուվերեն» իրավունքներ ունեն ծովի ափամերձ շրջանի 10-մղոնանոց հատվածի վրա, իսկ ծովի մյուս հատվածներում կողմերն ունեն հավասար իրավունքներ,
2. Կասպից ծովը համարվում է փակ այն պետությունների եւ նրանց ընկերությունների համար, որոնք ելք չունեն դեպի ծով եւ չեն կարող օգտվել նրա բնական պաշարներից²²:

Ռուսաստանի արտգործնախարարությունը նաեւ առաջարկեց մերձկասպյան երկրներին՝ ստեղծելու կառավարման ընդհանուր մարմին, որը կկարգավորեր երկրների գործունեությունը 10-մղոնանոց տարածքից դուրս գտնվող հատվածում: Ըստ ՌԴ-ի՝ այս մարմինը պետք է մենաշնորհային իրավունք ունենար արտոնագիր տրամադրելու այն ընկերություններին, որոնք կցանկանան զբաղվել ածխաջրած-

²¹ Տես *А. Бутаев. Каспий: зачем он Западу?* (<http://www.caspiy.net/>):

²² Տես «Ministry Pursuing Preemptive Mineral Rights in Caspian sea. Jamestown Foundation Monitor». Moscow, December 6, 1995:

նի արդյունահանմամբ: Այս առաջարկը առաջինը մերժեց Բաքուն, ըստ որի՝ խորհրդա-իրանական պայմանագիրը դադարել է գործելուց հետո՝ ԽՍՀՄ-ի փլուզման հետ, եւ Կասպից ծովի կարգավիճակի հարցով թեհ-րանյան հավաքում (1992թ.) առաջարկեց ծովը բաժանել ազգային հատվածների մերձկասպյան երկրների միջև²³:

1992թ. հոկտեմբեր ամսին Թեհրանում ընթացող մերձկասպյան երկրների առաջին կոնֆերանսի ժամանակ Իրանը իր հերթին առա-ջարկեց ստեղծել Մերձկասպյան երկրների համագործակցության կազ-մակերպություն (ՄԵՅԿ): Ըստ իրանական կողմի՝ այս կառույցի հիմնա-կան նպատակը պետք է լինի Կասպից ծովի շահագործման հարցում ընդհանուր մոտեցումներ ձեւավորելը²⁴:

Ռուսական կողմն իր հերթին կարծում էր, որ հարցի ադրբեջանա-կան ձեւակերպումը, այսինքն՝ ծովի բաժանումը ազգային հատվածնե-րի, հակասում է խորհրդա-իրանական պայմանագրերին: Ըստ ռուսնե-րի՝ ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանը եւ Իրանը ամբողջովին կրում են նախկինում կնքված բոլոր պայմանագրերի պատասխանատու-թյունը: Եվ քանի դեռ դրանք չեղյալ չեն հայտարարվել պայմանագիրը ստորագրած պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության (որպես ԽՍՀՄ-ի իրավաժառանգորդի) եւ Իրանի Իսլամական Հանրապետու-թյան կողմից, շարունակում են գործել, եւ նորանկախ պետությունները պարտավոր են հետեւել Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ կնքված խորհրդա-իրանական բոլոր պայմանագրերի պահանջնե-րին²⁵:

²³ Տես *R.H. Dokmejian, H.H. Simonian*. Troubled waters. The Geopolitics of The Caspian region:

²⁴ Տես *P. Мамедов*. Современный международно-правовой статус Каспийского моря: ... (<http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772>):

²⁵ Տես *Yusin Lee*. Toward a New International Regime for the Caspian Sea. «Problems of Post-Communism», May/June 2005, Vol. 52, N 3, PP. 37-48:

Ռուսական կողմը պնդում էր, որ, ըստ միջազգային օրենքների, մինչև ծովի կարգավիճակի նոր պայմանագրի կնքումը սահմանամերձ բաժանումները հակասում են գործող պայմանագրերին:

Քննարկելով Կասպից ծովի կարգավիճակի հարցը՝ նկատենք, որ Խորհրդային Միության գոյության տարիներին ԽՍՀՄ-ի նավթային արդյունաբերության միևնույնությունը ծովը բաժանել էր Խորհրդային հանրապետությունների միջև, որպեսզի այդ հանրապետությունները այդ տարածքներում կատարեն երկրաբանական հետազոտություններ: Եվ հենց այդ քարտեզն է, որ նորանկախ պետությունները եւ հատկապես Ադրբեջանը օգտագործում են՝ ապացուցելու իրենց իրավունքները ծովի այս կամ այն հատվածի նկատմամբ:

Ըստ այդ քարտեզի՝ Ղազախստանը ստանում էր ավիամերձ շրջանի մոտավորապես 30 տոկոսը, Ադրբեջանը՝ 19, Ռուսաստանը՝ 19, Թուրքմենստանը՝ 18, իսկ Իրանին էր տրամադրվում մոտ 14 տոկոսը, մոտ 2 տոկոսով ավելի, քան կարող էր ունենալ ըստ Աստարա-Եսանգուլի սահմանագծի²⁶: Հենց այս քարտեզն է շատ դեպքերում վեճերի ու սուր հակասությունների պատճառ դառնում տարածաշրջանի երկրների միջև՝ թույլ չտալով ընդհանուր հայտարարի գալու: Ադրբեջանը, վկայակոչելով այդ քարտեզը, փորձում էր ապացուցել, որ Կասպից ծովը միշտ էլ բաժանված է եղել ազգային հատվածների, ինչն այժմ հարկավոր է հաստատել միջազգայնորեն՝ լճի կարգավիճակի մասին կողմերի միջև կնքված նոր պայմանագրով:

1993թ. իրանական Ռեշտ քաղաքում հերթական անգամ հավաքվեցին մերձկասպյան երկրների պատվիրակությունները՝ քննարկելու Կասպից ծովի կենսապաշարի պահպանման եւ շահագործման հարցերը: Այս հավաքի ժամանակ առաջին անգամ Ադրբեջանն առաջարկեց քննարկել Կասպից ծովի միջազգային կարգավիճակը որպես «սահմա-

²⁶ Տես նույն տեղում, էջ 37-48:

նային լճի», ինչին ընդդիմացան Ռուսաստանի եւ Իրանի ներկայացուցիչները²⁷:

Թուրքմենստանի պատվիրակությունը եւ Ղազախստանը ձեռնպահ մնաց կարծիք հայտնելուց, թեեւ, ըստ ադրբեջանական աղբյուրների, հակված էր պաշտպանելու այդ դիրքորոշումը: Այսինքն՝ Ռեշտ քաղաքում ընթացող քննարկման ժամանակ ադրբեջանական դիրքորոշումը այդպես էլ չարժանացավ կողմերի հավանությանը:

1993թ. մի քանի անգամ եւս մերձկասպյան երկրները հավաքվեցին տարածաշրջանի տարբեր քաղաքներում (հոկտեմբերի 14-ին՝ Աստրախանում, դեկտեմբերի 8-10-ին՝ Աշգաբադում), սակայն այդ տարի այդպես էլ չհաջողվեց գալ ընդհանուր հայտարարի: Ծովի կարգավիճակի շուրջը առկա այս տարածայնությունների եւ անորոշությունների պայմաններում տարածաշրջանի նորաստեղծ պետությունները, չսպասելով կարգավիճակի վերաբերյալ համընդհանուր, բոլորի կողմից ընդունելի համաձայնագրի կնքմանը, շտապում էին պայմանագրեր կապել նավթային վերազգային ընկերությունների հետ:

Պաշտոնական Բաքուն արդեն 1994թ. սեպտեմբերին հայտարարեց «Դարի պայմանագրի» կնքման մասին²⁸, ինչը հարուցեց Ռուսաստանի արտգործնախարարության կոշտ պատասխանը, որտեղ մասնավորապես ասվում էր. «...վերջին շրջանում Ադրբեջանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը համառ ջանքեր են գործադրում պայմանագրեր կնքելու արեւմտյան ընկերությունների հետ՝ Կասպից ծովի ընդերքը շահագործելու համար: Բացի դրանից՝ Ադրբեջանը եւ Թուրքմենստանը ընդունել են օրենսդրական ակտեր՝ փորձելով տիրանալ Կասպից ծովի տարածքների: Նշված գործողությունները չեն համապատասխանում

²⁷ Стu P. Мамедов. Современный международно-правовой статус Каспийского моря: ... (<http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772>):

²⁸ Стu R.H. Dokmejian, H.H. Simonian. Troubled waters. The Geopolitics of The Caspian region, P. 112:

ծովի գործող իրավական կարգավիճակին եւ սպառնում են Ռուսաստանի իրավունքներին ու շահերին»²⁹:

Եվ այսպես՝ Նորանկախ պետությունները սկսում էին ակտիվացնել իրենց գործողությունները ծովի ափամերձ շրջանում կարգավիճակի համաձայնության բացակայության պայմաններում: Նման գործողությունները պայմանավորված էին այն համոզմամբ, որ քաղաքական եւ տնտեսական շահերի սուր հակասությունների պատճառով դժվար թե հաջողվի շուտափույթ կերպով գալ համաձայնության Կասպից ծովի կարգավիճակի հարցում:

Սրվող հակասությունների պայմաններում, Ռուսաստանի Նախաձեռնությամբ, 1994թ. հոկտեմբերի 11-12-ին մերձկասպյան երկրների լիազոր ներկայացուցիչները հավաքվեցին Մոսկվայում՝ քննարկելու Կասպից ծովի միջազգային կարգավիճակի մասին կոնվենցիայի Նախագծերը, որոնք ներկայացրել էին Ռուսաստանը, Ադրբեջանը եւ Ղազախստանը³⁰: Ադրբեջանի Նախագծով Կասպից ծովը սահմանվում էր որպես «սահմանային լիճ», Ղազախստանը առաջարկում էր «փակ ծովի» կարգավիճակ, ինչը ձեռնտու չէր հատկապես Ռուսաստանին: Իսկ վերջինիս առաջարկվում էր լայն համագործակցություն, միաժամանակ Կասպից ծովի միջազգային կարգավիճակի հարցում խորհուրդ էր տրվում հետաձգել քննարկումը անորոշ ժամանակով: Այս մոտեցումը, իր հերթին, ձեռնտու չէր մերձկասպյան Նորանկախ պետություններին, որոնք օր առաջ ցանկանում էին սկսել համագործակցությունը միջազգային նավթային ընկերությունների հետ, իսկ ծովի կարգավիճակի անորոշությունը որոշակի դժվարություններ էր ստեղծում այդ հարցում³¹:

²⁹ Stu «Caspian sea status: Moscow reaches back to Soviet treaties». Jamestown Foundation Monitor, September 23, 1999:

³⁰ Stu *P. Мамедов*. Современный международно-правовой статус Каспийского моря: ... (<http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772>):

³¹ Stu *Yusin Lee*. Toward a New International Regime ..., PP. 37-48:

Ինչեւէ, հարաբերությունները կողմերի միջեւ սրվում էին, եւ դեռ մինչեւ խորհրդաժողովը սկսելը՝ 1994թ. հոկտեմբերի 6-ին Ռուսաստանը ՄԱԿ-ում տարածեց մի փաստաթուղթ, որը կոչվում էր «Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին»³²: Փաստաթղթում մասնավորապես հայտարարվում էր, որ նորաստեղծ պետությունները պարտավոր են կատարել խորհրդա-իրանական 1921թ. եւ 1940թ. պայմանագրերի պահանջները, եւ Ռուսաստանը իրեն իրավունք էր վերապահում իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ կլինեն խախտված իրավական կարգավիճակի վերականգնման համար:

Այսինքն՝ այդ շրջանում Ռուսաստանը առաջարկում էր, որ ծովի փամերձ շրջանը՝ 10-12 մղոն, բաժանվի կողմերի միջեւ, իսկ ծովի ընդերքի պաշարները ընդհանուր շահագործման օբյեկտ լինեն: Ըստ ռուս մասնագետների, մասնավորապես՝ Աիմեդ Բուտաեւի, 1921 եւ 1940թթ. պայմանագրերով նորանկախ պետությունները կարող են հավակնել միայն փամերձ շրջանի 10-մղոնանոց հատվածին եւ նրա ընդերքի ածխաջրածնային պաշարներին, իսկ Կասպից ծովի կենտրոնական շրջանի հանքային պաշարներն ամբողջովին պատկանում են երկու պետության՝ Ռուսաստանի Դաշնությանը եւ Իրանի Իսլամական Հանրապետությանը³³:

Այսպիսով, մի կողմից՝ Ռուսաստանի ու Իրանի, մյուս կողմից՝ Ղազախստանի ու Ադրբեջանի միջեւ կային լուրջ տարաձայնություններ Կասպից ծովի կարգավիճակի եւ նրա ընդերքի ածխաջրածնի պաշարների շուրջն ընթացող պայքարում: Ռուսաստանը Իրանի աջակցությամբ փորձում էր պահպանել իր նախկին ազդեցությունը Կասպից ծովում, որը նա ավանդաբար համարում էր իր լիճը, իսկ Ադրբեջանը եւ Ղազախստանը ցանկանում էին ծովի միջազգային նոր կարգավիճակի հաստատմամբ սկսել այնտեղից էներգակիրների արդյունահանումը եւ արտահանումը:

³² Տես «Caspian sea status: Moscow reaches ...»:

³³ Տես *А. Бумаев. Каспий: зачем он Западу?* (<http://www.caspiy.net/>):

Այդ պայքարում նորանկախ պետությունները ակնկալում էին այլ տերությունների աջակցությունը: Թուրքմենստանը փորձում էր հնարավորինս չեզոք դիրքորոշում ունենալ՝ ավելի շատ հակված լինելով պաշտպանելու ռուս-իրանական կողմնորոշումը: Այդ շրջանում պաշտոնական Ղազախստանն առաջարկեց ծովում հաստատել սահմանային գոտի՝ 12-մղոնանոց հատվածով, իսկ ծովի մնացած մասը բաժանել այսպես կոչված տնտեսական գոտիների, որոնց շահագործման իրավունքը, այսինքն՝ նավթի ու գազի արդյունահանման եւ արտահանման, պետք է տրվի ափամերձ երկրներին (նկար 4):

Ղազախական տարբերակը չարժանացավ Ռուսաստանի եւ Իրանի հավանությանը: Կասպից ծովի կարգավիճակի հարցում մերձկասպյան երկրների միջեւ հակասությունները ավելի շատ էին, քան ընդհանրությունները:

2-1. Կասպից ծով-լիճ կարգավիճակի հարցը

ԽՍՀՄ-ի քայքայումը առաջ բերեց հին հարցը՝ Կասպիցը ծո՞վ է, թե՞ լիճ: Խորհրդային Միության գոյության տարիներին հրատարակված պաշտոնական քարտեզներում եւ ատլասներում ներկայացվում էր որպես լիճ³⁴, միջազգային մի շարք հանրագիտարաններում՝ «ծով-լիճ»: Աշխարհաքաղաքական տեսանկյունից ոչ էական թվացող այս հարցը սուր տարաձայնություններ առաջացրեց մերձկասպյան պետություններում:

Հայտնի է, որ աշխարհագրագետները ծով են անվանում ջրային այն տարածքները, որոնք բնական կապ ունեն համաշխարհային օվկիանոսի հետ: Այս տեսակետը հաստատում է նաեւ ՄԱԿ-ի Ծովային օրենսդրության մասին կոնվենցիան³⁵ (1982թ. դեկտեմբերի 10): Ըստ այդ փաստաթղթի՝ Կասպիցը ոչ թե ծով է, այլ՝ լիճ, քանի որ չունի բնա-

³⁴ Տես «Малый атлас СССР», 1978; «Малый атлас мира», 1981; «Географический атлас», 1980:

³⁵ Տես «United Nations convention on the law of the sea. Agreement Relating to the Implementat of part XI of the Convention» (http://www.un.org/Depts/los/convention_agreements/texts/unclos/closindx.htm):

կան ելք դեպի օվկիանոս: Նկատենք նաեւ, որ Կասպից ծովի մակերեսը մոտ 28 մետրով ցածր է, քան օվկիանոսներինը եւ նրանց հետ բնական կապ ունեցող ծովերինը: Կարող ենք ասել՝ թե՛ աշխարհագրական բնորոշմամբ, թե՛ միջազգային օրենսդրությամբ Կասպիցը լիճ է: Սակայն, ինչպես նշում է ռուսաստանցի հայտնի գիտնական Բուտաեւը, «եթե մերձկասպյան 5 երկրների նախագահները հավաքվեն եւ որոշեն, որ Կասպիցը ծով է, ապա կստանա ծովի կարգավիճակ, եւ նրա վրա կտարածվեն ՄԱԿ-ի 1958 եւ 1982թթ. ընդունված համապատասխան կոնվենցիայի կետերը»³⁶:

1990-ական թվականների սկզբին Ղազախստանը հայտարարում էր, թե Կասպիցը չի կարող համարվել ո՛չ լիճ, ո՛չ էլ ծով: Ըստ Աստանայի՝ եթե Կասպից ծովը համարվի լիճ, ապա լուրջ խնդիրներ կառաջանան նավագնացության հետ կապված, իսկ եթե համարվի ծով, ապա միջազգային օրենսդրությամբ ծովերին հատուկ ավիամերձ 200-մղոնանոց հատվածները կհատվեն, ինչը լուրջ հակասությունների պատճառ կդառնա³⁷:

Կասպիցի հնարավոր ծովային կարգավիճակը ձեռնտու չէր նաեւ Ռուսաստանին, քանի որ այդ դեպքում, միջազգային օրենսդրության համաձայն, երրորդ երկրները կարող են Մոսկվայից պահանջել միջազգային համարել Կասպիցը Սեւ, Բալթիկ ու Սպիտակ ծովերին կապող եւ դեպի օվկիանոս ելք ապահովող ջրային ուղիները, եւ ըստ այդմ դրանք պիտի ազատ լինեն երրորդ երկրների նավարկության համար, Ռուսաստանը ստիպված կլինի այդ ուղիներով թույլ տալ այլ երկրների ոչ միայն առետրային, այլեւ ռազմական նավերի ազատ նավարկությունը³⁸: Ռուսաստանը դեմ է Կասպիցի ծովային կարգավիճակին՝ համարելով այն միայն ներքին ջրային տարածք:

³⁶ А. Бумаев. Каспий: зачем он Запад? (<http://www.caspiy.net/>).

³⁷ Steu H. Zimnitskaya, J. von Geldern. Is the Caspian Sea a sea; and why does it matter? «Journal of Eurasian Studies», 2011, Vol. 2, Issue 1, PP. 1-14 (www.elsevier.com/locate/euras):

³⁸ Steu Լույն տեղում:

Ռուսաստանին ձեռնտու չէր նաեւ Ղազախստանի առաջ քաշած «փակ ծովի» գաղափարը³⁹: Ծովերի մասին ՄԱԿ-ի օրենքի 122-րդ հոդվածով, որը սահմանում էր «փակ ծով» հասկացությունը, նշվում է. «Փակ կամ կիսափակ ծով է համարվում ծոցը, ավազանը կամ ծովը, որը շրջապատված է երկու կամ ավելի երկրներով եւ կապ ունի այլ ծովի կամ օվկիանոսի հետ նեղ կապով...»⁴⁰: Փակ ծովերի մասին միջազգային օրենքի այս ձեւակերպումը ցանկության դեպքում կարելի էր կիրառել Կասպից ծովի նկատմամբ, եթե Վոլգա-Ռոն ջրանցքը կամ Վոլգան Բալթիկ եւ Սպիտակ ծովերին միացնող ջրային ուղիները համարվեին հենց այն «միջանցքը»:

Ծովերի մասին միջազգային օրենքի հոդվածների այս անորոշությունը մասնագետներին եւ ավամերձ պետություններին հնարավորություն չէր տալիս եզրակացություն անելու, թե ինչ կարգավիճակ «շնորհել» Կասպից ծովին՝ լճի՞, ծովի՞, փա՞կ ծովի, թե՞ մեկ այլ: Նման երկվությունը ավելի էր խորանում, երբ նույն օրենքի 123-րդ հոդվածը ավամերձ պետություններին հնարավորություն էր տալիս օգտագործելու իրենց իրավունքները եւ միմյանց հետ համագործակցելու, ընդհանուր համաձայնության գալու ծովի միջազգային կարգավիճակը որոշելու հարցում: Հենց իրավունքների այս լայն շրջանակն էլ խանգարում է հարեւան երկրներին վերջնական որոշում կայացնել:

Այսպիսով պարզ է, որ մինչեւ Կասպից ծովի կարգավիճակը չհստակեցվի եւ այս հարցի պատասխանը չգտնվի, դժվար կլինի խոսել երկու տասնամյակից ավելի ձգձգվող բանակցային գործընթացի հնարավոր հաջողության մասին: Ինչ վերաբերում է Կասպիցի լիճ լինելուն, ապա նկատենք, որ լճերը համարվում են ջրային ներքին տարածքներ, եւ նրանց վրա չի տարածվում ծովերի մասին ՄԱԿ-ի օրենքը: Իսկ սահմա-

³⁹ Stu P. Мамедов. Современный международно-правовой статус Каспийского моря: ... (<http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772>):

⁴⁰ Stu «United Nations Convention on the Law of the Sea. ...» (http://www.un.org/Depts/los/convention_agreements/texts/unclos/closindx.htm):

Նամերձ լճերի իրավական կարգավիճակի վերաբերյալ համաձայնությունները ձեռք են բերվում միմիայն դրանց հարող երկրների միջև:

Սահմանամերձ շատ լճերի եւ ջրային տարածքների կարգավիճակի ու շահագործման հարցերը որոշվում են սահմանակից երկրների փոխհամաձայնությամբ: Եվ միմիայն նրանք կարող են որոշել, թե ինչ կարգավիճակ է շնորհվելու ջրային այդ տարածքին: Այսպես, ըստ ծովային իրավունքի մասնագետ Ալեքսանդր Կոլոդկինի⁴¹՝ «...միջազգային ջրերի եւ լճերի մեծ մասը շահագործվում է համատեղ, եւ դրանք բաժանված չեն սահմանային գծերով»: Օրինակ՝ Տիտիկակա լիճը միասնաբար են շահագործում Պերուն եւ Բուլղարիան, իսկ Չադ լիճը համարվում է Կամերունի, Նիգերիայի, Նիգերի եւ Չադի համատեղ սեփականությունը, Զյուսիսային Ամերիկայի Մեծ լճերը օգտագործվում են ԱՄՆ-ի եւ Կանադայի կողմից, եւ այլն: Այսինքն, սահմանամերձ ջրային տարածքի կարգավիճակը որոշվում է ավամերձ պետությունների փոխհամաձայնությամբ, որը իր ձեւի մեջ կարող է լինել բացառիկ⁴²:

Կասպից ծովի կարգավիճակի եւ նրա ջրային տարածքների ու ընդերքի շահագործման հարցերը կարող են որոշել միմիայն ավամերձ երկրները: Չնայած արդեն երկու տասնամյակից ավելի ձգձգվող բանակցություններին ու բազմաթիվ հանդիպումներին՝ դեռեւս չկա մի ընդհանուր փաստաթուղթ Կասպից ծովի կարգավիճակի եւ նրա հարստության շահագործման սկզբունքների մասին:

Ստեղծված անորոշ իրավիճակը, ըստ որոշ մասնագետների, ձեռնտու է նորաստեղծ պետություններին, խանգարում է Ռուսաստանին ու ձեռնտու է Իրանին⁴³:

⁴¹ А. Колодкин. судья Международного трибунала ООН по морскому праву. «Observer» (http://www.nasledie.ru/oboz/N06_98/6ST_10.HTM).

⁴² Տե՛ս Yusin Lee. Toward a New International Regime ..., pp. 37-48:

⁴³ Տե՛ս H. Zimnitskaya, J. von Geldern. Is the Caspian Sea a sea; ... (www.elsevier.com/locate/euras):

2-2. Կասպից ծովի կարգավիճակի կարելությունը եւ սեպարատ պայմանավորվածությունների ժամանակաշրջանը

Կասպից ծովի միջազգային կարգավիճակի հարցը նորանկախ պետությունների համար 1990-ականներին կարելու էր նախ եւ առաջ ծովի նավթի ու գազի պաշարների շահագործման առումով, սակայն ժամանակը ցույց տվեց, որ առանց միջազգային կարգավիճակի էլ կարողանում են շահագործել էներգետիկ պաշարները: Այնուամենայնիվ, առանց կարգավիճակի խնդրի լուծման կողմերը չեն կարող համաձայնության գալ մի շարք հարցերում: Նախ եւ առաջ մերձափնյա երկրների սահմանների խնդիրն է, թե ծովի որ հատվածը ում է պատկանում: Մինչեւ հիմա պարզ չէ, թե ափից մինչեւ որ մասն է ձգվում մի երկրի տարածքը, եւ որտեղ են սկսվում այսպես կոչված չեզոք ջրերը: Տարածքային բաժանման՝ սահմանային խնդրի լուծումն ինքնըստինքյան կկարգավորի ծովի կենտրոնական եւ վիճելի հատվածներում գտնվող այս կամ այն հանքավայրի պատկանելությունը: Իսկ մինչեւ ծովի կարգավիճակի համընդհանուր պայմանագրի կնքումը այս հարցերը կմնան անպատասխան:

Կարելու են նաեւ ծովի բնապահպանական խնդիրները, որոնք նույնպես պետք է կարգավորվեն միջազգային պայմանագրով: Փորձագետները նշում են, որ 10 գ նավթը բավարար է, որ «ոչնչացնի» մեկ խորանարդ մետր ջուր⁴⁴: Նավթարդյունահանումը նախատեսում է նաեւ նավթի հումքի որոշակի կորուստ, հետեւաբար կարող ենք ասել, որ ծովի ածխաջրածնային պաշարների շահագործման ողջ ընթացքում հազարավոր տոննա նավթ է հոսել Կասպից ծովում: Բացի դրանից՝ ծովի ափամերձ շրջանների հազարավոր մեծ ու փոքր քաղաքները եւ մյուս բնակավայրերը ամեն օր տոննաներով կեղտ են բերում ջրային այդ փակ տարածք: Այնպես որ, բնապահպանական խնդիրը եւս պետք

⁴⁴ Տե՛ս *С. Прутчин*. Мутная правовая среда Каспия. «GUNDOGAR» (<http://www.gundogar.org>):

Է կարգավորվի հենց ծովի միջազգային կարգավիճակի փաստաթղթով:

Կասպից ծովի միջազգային կարգավիճակը ծովի ափամերձ երկրների համար ունի ռազմավարական նշանակություն, եւ հենց այս փաստն է նաեւ խանգարում նրանց՝ համաձայնության գալու եւ կնքելու այդքան ցանկալի պայմանագիրը:

Ռուսաստանցի մասնագետ Վ.Գրունինի կարծիքով՝ «Կասպիցը առանձնահատուկ, ներմայրցամաքային ջրավազան է, որի վրա չեն տարածվում ծովերի մասին ՄԱԿ-ի օրենսդրությունը եւ ծովերի բաժանման միջազգային ընդունված փորձը: Ռուսաստանին ձեռնտու չէ ծովի հատվածային բաժանման սկզբունքը, այդ թվում նաեւ ռազմաքաղաքական նկատառումներով, քանի որ այդ դեպքում խարխիլվում է ազատ նավարկության սկզբունքը եւ հնարավորություն է տրվում ծովում այլ երկրների ռազմական նավատորմի գտնվելուն, ինչպես նաեւ հող է ստեղծվում տարածքային վեճերի եւ հակամարտությունների համար: Այդ իրավիճակը նաեւ լրջորեն կվտանգի Կասպից ծովի բնապահպանական համակարգը»⁴⁵: Վ.Գրունինը, արտահայտելով պաշտոնական Մոսկվայի տեսակետը, նշում է, թե սկզբնական շրջանում Ռուսաստանը կողմ էր, որ միջազգային կարգավիճակի պայմանագիրը պետք է տարածվի հանքային պաշարների ընդհանուր շահագործման սկզբունքով: Հետագայում Ռուսաստանը հրաժարվեց նման տեսակետից՝ պայմանավորված նորանկախ պետությունների դիրքորոշմամբ, որոնք, առանց սպասելու միջազգային պայմանագրի կնքմանը, արդեն սկսել էին ծովի բաժանման գործընթացը:

ՌԴ-ն, փորձելով պաշտպանել իր մոտեցումները ծովի միջազգային կարգավիճակի հարցում, պնդում էր, որ գործող խորհրդա-իրանական պայմանագրերով Կասպիցը չի կարող բաժանվել հատվածների, քանի որ դա հակասում է 1921, 1935 եւ 1940թթ. կնքված պայմանագրերին:

⁴⁵ В. Ф. Грунин. Правовой статус Каспийского моря и проблемы обеспечения национальных интересов Российской Федерации в прикаспийском регионе. «Журнал теории и практики Евразийства», № 13 (<http://www.e-journal.ru/bzarub-st6-13.html>).

1991թ. Ալմաթիում կնքված «Անկախ պետությունների համագործակցության մասին» պայմանագրով նորանկախ պետությունները պարտավորվում են ճանաչել ԽՍՀՄ-ի կնքած միջազգային բոլոր պայմանագրերը եւ պարտավորությունները⁴⁶:

1995 թվականին մերձկասպյան պետությունները մի քանի հանդիպում անցկացրին Ալմաթիում եւ Թեհրանում, սակայն դրանք նույնպես ոչնչի չհանգեցրին: Այս պայմաններում Ադրբեջանը միակողմանի կերպով հայտարարեց Կասպիցի իր՝ ազգային հատվածի գոյության մասին: Այս որոշումը արտահայտվեց երկրի սահմանադրության մեջ նոր հոդվածի (11-րդ) ավելացմամբ, որը պաշտոնական Բաքվի համար հաստատում էր ծովի ազգային հատվածի (սեկտորի) բաժանման իրողությունը եւ այդ կարգավիճակի հաստատումը: Համաձայն այդ հոդվածի՝ Կասպից ծովի ադրբեջանական հատվածի ընդերքը, ջրային եւ օդային տարածությունները համարվում էին երկրի պետական սեփականությունը⁴⁷:

Իրանը շարունակում էր պնդել Կասպից ծովի երկրների կազմակերպություն ստեղծելու գաղափարը եւ 1995թ. թեհրանյան համաժողովի ժամանակ հերթական անգամ առաջ քաշեց այս գաղափարը: Միջազգային այդ կառույցը պետք է որոշեր եւ լուծեր ծովի կարգավիճակի, նավթի եւ մյուս պաշարների արտահանման, ինչպես նաեւ քաղաքական խնդիրները:

Այս ծրագիրը, ինչպես եւ նախկինում, չէր արժանանում մերձկասպյան մյուս պետությունների աջակցությանը, իսկ Ադրբեջանը կտրուկ դեմ էր նման կառույցի ստեղծմանը՝ գնահատելով որպես այլ երկրների ներկայությունը Կասպից ծովում սահմանափակելու փորձ: Ունենալով նրանց աջակցությունը՝ Ադրբեջանը հայտարարեց. «Ձանի որ Կասպից ծովը Էներգետիկ հսկայական պաշարներ է պարունակում, ինչը կա-

⁴⁶ Տես *М. П. Кройссант, С. М. Кройссант. Диспут о статусе Каспийского моря: Международная ассоциация кавказских региональных исследований*, т. 3, N 1, 1997 (<http://www.vub.ac.be/POLI/>):

⁴⁷ Տես «Конституция Азербайджанской Республики» (<http://ru.president.az/azerbaijan/constitution/>):

րելոր նշանակություն ունի ավամերձ եւ այլ տարածաշրջանների պետությունների համար, ապա կարծում ենք, որ խնդիրը վաղուց արդեն զուտ տարածաշրջանայինից վերաճել է համաշխարհայինի»⁴⁸:

Նման մոտեցումն արժանացավ Եվրամիության աջակցությանը, որը նույնիսկ TACIS-ի (Technical Assistance for the Commonwealth of Independent States) շրջանակներում կազմեց փորձագետների խումբ, որը «պետք է ուսումնասիրեր Կասպյան տարածաշրջանից եւ Կենտրոնական Ասիայից պաշարների փոխադրման այլընտրական ուղիների հարցերը»:

Նորանկախ պետությունները դեմ էին ծովի կենտրոնական մասի ընդհանուր սեփականության՝ կոնդոմինիումի գաղափարին՝ 1996թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Իրանի դեմ ընդունված պատժամիջոցների շրջանակում: Այդ օրենքով արգելվում էր 20 մլն դոլար գումարից ավելի ներդրում կատարել Իրանի նավթային հատվածում, իսկ Կասպիցի նավթային հորերի համատեղ մշակման դեպքում վերազգային նավթային ընկերությունների եւ նորանկախ պետությունների դեմ կսկսեր գործել այդ օրենքը: Բանակցային գործընթացի վերաբերյալ իր տեսակետը հայտնեց նաեւ պաշտոնական Վաշինգտոնը Թուրքմենստանի իր դեսպանի միջոցով. «Եթե Կասպից ծովը համարվի ընդհանուր տարածք, ապա միջազգային ընկերությունները, որոնք ցանկություն ունեն մասնակցելու նավթի արդյունահանմանը, ստիպված են լինելու բանակցություններ վարել ծովի ավամերձ բոլոր երկրների կառավարությունների հետ, իսկ դա գործնականում անհնար է»⁴⁹:

1996թ. ձեւավորվել էր Ադրբեջան-Ղազախստան դաշինքը, որը, ունենալով ԱՄՆ-ի եւ մասամբ Եվրամիության աջակցությունը, պահանջում է ծովը բաժանել ազգային հատվածների՝ դրանք շահագործելու լայն իրավունքով: Այս պայմաններում կողմերը համաձայնեցին արտ-

⁴⁸ Stu *P. Mamedov*. Современный международно-правовой статус Каспийского моря: ... (<http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772>):

⁴⁹ Stu *Yusin Lee*. Toward a New International Regime ..., PP. 37-48:

գործնախարարների հանդիպում կազմակերպել Թուրքմենստանի մայրաքաղաքում՝ ստեղծված իրավիճակից ելքեր փնտրելու համար: Առաջարկվեց ծովը բաժանել հատուկ տնտեսական գոտիների, որոնք, ըստ Իրանի, պետք է կազմեին ափամերձ հատվածի 10-մղոնանոց հատվածը: Ռուսաստանն առաջարկում էր այդ սահմանը հաստատել 20 ծովային մղոն հատվածով: Իսկ Թուրքմենստանը եւ Ղազախստանը համապատասխանաբար առաջարկում էին 60 եւ 80 մղոն հատվածները հայտարարել հատուկ տնտեսական գոտիներ: Միայն Ադրբեջանն էր շարունակում պնդել, թե ծովը ամբողջովին պետք է բաժանվի ազգային հատվածների⁵⁰:

Սակայն այս համաժողովը եւս չկարողացավ լուծել առկա ճգնաժամը եւ մերձկասպյան պետություններին մոտեցնել ընդհանուր հայտարարի: Միակ հարցը, որին կողմերը համաձայնեցին, այն էր, որ պետք է ստեղծվի աշխատանքային խումբ՝ ծովի կարգավիճակի բանակցությունները շարունակելու համար:

1997թ. մայիսի 23-ին Ալմաթիում ծովի բաժանման տարբերակի քննարկման ժամանակ Ղազախստանը առաջարկեց Կասպիցի հատակը միջին գծով բաժանել տնտեսական գոտիների, որոնց սահմաններում էլ ափամերձ երկրներն իրավունք կունենան զբաղվելու ածխաջրածնի շահագործմամբ, իսկ ձկնորսության, բնապահպանական, նավարկության եւ այլ հարցերը կլուծեն արդեն միասնաբար: Սակայն Ղազախստանի առաջարկը նույնպես չարժանացավ կողմերից եւ ոչ մեկի հավանությանը:

1997թ. նոյեմբերին Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը մեկնեց Վաշինգտոն: ԱՄՆ-ի փոխնախագահ Ալբերտ Գորը հանդիպման ժամանակ հայտարարեց. «ԱՄՆ-ը կիսում է Ղազախստանի տեսակետը Կասպից ծովի հարցում»⁵¹: Այսինքն՝ Կասպից ծովի մի-

⁵⁰ Տես *R.H. Dokmejian, H.H. Simonian. Troubled waters. The Geopolitics of The Caspian region*, P. 23:

⁵¹ Տես «Казахстанская Еженедельная Газета». «PANORAMA», 21 ноября 1997, № 45 (<http://panoramakz.com/archiv/1997/45.htm>):

ջազգային կարգավիճակի բանավիճային գործընթացում, Ադրբեջանից բացի, Ղազախստանը եւս ստացավ ԱՄՆ-ի աջակցությունը:

1997թ. արդեն Կասպից ծովի միջազգային կարգավիճակի շուրջը մերձկասպյան երկրների համատեղ հանդիպումներն ու խորհրդակցությունները արդյունավետ չէին: Այդ շրջանում քննարկումների վրա, այսպես թե այնպես, ազդում էին նաեւ երրորդ երկրները, որոնք ցանկանում էին ակտիվ դերակատարում ունենալ ծովի կարգավիճակի բանակցություններում:

Մերձկասպյան երկրները, բացի համատեղ քննարկումներից, նաեւ առանձին հանդիպումներ էին անցկացնում՝ փորձելով մոտեցնել իրենց դիրքորոշումները, որպեսզի հաջորդ հանդիպումների ժամանակ միասնական ճակատով հանդես գան: Բացի միջպետական բանակցային գործընթացից՝ ծովի այս կամ այն հատվածի շահագործման հարցում բանակցում էին նաեւ նավթային ընկերությունները: Մասնավորապես՝ 1997թ. հուլիսի 4-ին ռուսական «Լուկոյլ» (ЛУКОЙЛ) եւ «Ռոսնեֆտ» (Роснефть) ընկերությունները Ադրբեջանի պետական նավթային ընկերության հետ կնքեցին պայմանագիր՝ վիճահարույց Զյափազ եւ Ազերի նավթային հանքավայրերում համատեղ աշխատանքների իրականացման համար: Դա առաջացրեց պաշտոնական Ազգաբաղի բողոքը, եւ Ռուսաստանը ստիպված էր պաշտոնապես չեղյալ հայտարարել պայմանագիրը⁵²:

Ռուսական նավթային ընկերությունների հետաքրքրությունը կասպյան նավթի նկատմամբ աճում էր, եւ ըստ ռուսաստանցի փորձագետ Բուտաեւի՝ «հենց այդ ընկերությունների ճնշման տակ Բորիս Ելցինը համաձայնեց սեպարատ պայմանագիր կնքել Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի հետ»: 1998թ. հուլիսին Ելցինը եւ Նազարբաեւը ստորագրեցին «Ընդերքի օգտագործման սուվերեն իրավունքի պահպանման համար Կասպից ծովի հյուսիսային մասի հա-

⁵² Stu A. *Cohen*. Energy Security in the Caspian Basin. «Energy Security Challenges for the 21st Century». Praeger Security International, 2009, PP. 109-128:

տակի բաժանման մասին» պայմանագիրը⁵³: Պայմանագրում նշվում էր, որ երկու հատվածները բաժանող սահմանագծի նավթի և գազի հանքերը համատեղ շահագործվելու են ընդհանուր իրավասության ներքո: Պայմանագիրը վերաբերում էր ծովի միայն հատակին, իսկ ջրային հատվածը և մակերեսային մասում էին ընդհանուր օգտագործման:

Այս պայմանագիրը վերջ դրեց գործող ավանդույթին և պետություններին մղեց սեպարատ պայմանավորվածությունների, ինչն ավելի դժվարացրեց ծովի կարգավիճակի հարցում հետագայում ընդհանուր պայմանավորվածությունների ձեռքբերման համար ընթացող բանակցությունները:

Ռուս-ղազախական պայմանագրի կնքումից հետո Ռուսաստանի և Իրանի միջև Կասպիցի կարգավիճակի բանակցություններում կտրուկ աճեցին տարաձայնությունները, որոնք բանակցային գործընթացը դանդաղեցրին, և աշխատանքային խմբերի հանդիպումները դարձան սակավաթիվ:

Ընդհանրապես՝ այս պայմանագրի կնքումը տարբեր մեկնաբանությունների առիթ տվեց: Ռուսաստանի շատ փորձագետներ (Աիմեդ Բուտաեւ, Յուրի Բարսեղով⁵⁴ և այլք) պայմանագիրը գնահատեցին որպես Ռուսաստանի ազգային շահերից լուրջ հետընթաց ծովի կարգավիճակի որոշման հարցում: Նրանք նշում էին նաեւ, որ այս պայմանավորվածությունները ոչ մի կերպ չեն ազդում ծովի կարգավիճակի բանակցային գործընթացի վրա: Իսկ ադրբեջանցի քաղաքագետ Ռուստամ Մամեդովը պնդում էր, թե «ռուս-ղազախական պայմանագրի

⁵³ Стu «Собрание Законодательства Российской Федерации» (<http://www.ecolex.org/ecolex/ledge/view/RecordDetails;DIDPFDSIjsessionid=90A29AC7731B563687B323CF1267AD30?id=TRE-150144&index=treaties>):

⁵⁴ Стu Ю. Г. Барсегов. Каспий в международном праве и мировой политике. М.: ИМЭМО РАН, 1998:

կնքմամբ փաստորեն դադարում է գործել 1940թ. խորհրդա-իրանական պայմանագիրը»⁵⁵:

Կողմերն այդ պայմանագիրը չէին դիտարկում որպես ծովի սեկտորային (հատվածային) բաժանման սկզբունք: Ռուսաստանը 1998թ. դեկտեմբերին Մոսկվայում հրավիրեց աշխատանքային խմբերի խորհրդակցություն, որի ժամանակ պետք է հարթվեին իրանա-ռուսական հակասությունները, որոնք առաջացել էին վերը նշված պայմանագրի կնքումից հետո:

Խորհրդաժողովը, սակայն, ցույց տվեց, որ ափամերձ երկրների մեծ մասը այնուամենայնիվ հանգում է ծովի տարածքային բաժանման սկզբունքին, ինչը ոչ մի կերպ ձեռնտու չէր պաշտոնական Թեհրանին: Իրանը առաջարկեց ծովը բաժանել 5 հավասար հատվածների՝ ափամերձ ամեն երկրի 20 տոկոս «մասնաբաժնով»: Բաժանման այս առաջարկը՝ 20-ական տոկոս, չարժանացավ կողմերի հավանությանը Կասպիցի «տարածքային բաժանման» սկզբունքը այդ շրջանում դառնում էր գերակշռող:

Կասպից ծովի բաժանման հատվածային (սեկտորային) սկզբունքը, սակայն, սկսեց «նահանջել», երբ Ռուսաստանում իշխանության եկավ Վլադիմիր Պուտինը: Նա հայտարարեց, որ Կասպից ծովի ավազանը Ռուսաստանի համար հատուկ հետաքրքրությունների գոտի է: 2000թ. ապրիլի 21-ին Ռուսաստանի նախագահին կից Ազգային անվտանգության խորհրդում քննարկվեց երկրի քաղաքականությունը այդ տարածաշրջանի վերաբերյալ: Արտգործնախարար Իգոր Իվանովը հայտարարեց. «Կասպիցը Ռուսաստանի ազգային հետաքրքրությունների անվանդական գոտի է»⁵⁶, ինչը նշանակում էր, որ Ռուսաստանը սկսում է

⁵⁵ *P. Мамедов*. Современный международно-правовой статус Каспийского моря: ... (<http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772>).

⁵⁶ *Stu E. Тесемникова*. Россия смещает акценты. В Москве предлагают отложить определение статуса Каспия на неопределенный срок. «Независимая газета», 6 октября 2000 г.:

փոխել իր դիրքորոշումը Կասպիցի բանակցային գործընթացի նկատմամբ:

Որոշում ընդունվեց ստեղծել Կասպից ծովի հարցով Ռուսաստանի նախագահի հատուկ ներկայացուցչի պաշտոն, որը զբաղեցրեց Վիկտոր Կալյուժնին: Նա մինչ այդ ղեկավարում էր Ռուսաստանի «Գազպրոմ» ընկերությունը⁵⁷: Վիկտոր Կալյուժնին փորձելով ճշտել ափամերձ պետություններ մոտեցումները առաջարկում էր քննարկել ոչ թե Կասպիցի կարգավիճակի հարցը, այլ այն տարրերը, որոնց շուրջը կողմերին չի հաջողվում գալ ընդհանուր հայտարարի: Ռուսաստանի համար հատկապես կարեւոր էր ընդհանուր հայտարարի գալ Իրանի հետ, քանի որ Մոսկվայի եւ Աստանայի սեպարատ պայմանագիրը Թեհրանը ցավագին էր ընդունել՝ գնահատելով որպես հարված իր կենսական շահերին:

2001թ. մարտի 12-ին, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Իրանի նախագահ Մոհամադ Խաթամիի հանդիպման ժամանակ, ստորագրվեց մի հայտարարություն, որում ասվում էր.

«ա) Կողմերը ճանաչում են 1921թ. փետրվարի 26-ի ՌԽՍՖՅ-ի ու Իրանի միջեւ եւ 1940թ. մարտի 25-ի ԽՍՀՄ-ի ու Իրանի միջեւ կնքված պայմանագրերը որպես իրավական հիմք, որը ներկա պահին կարգավորում է գործունեությունը Կասպից ծովում: Կողմերը մինչեւ նոր իրավական կարգավիճակի հաստատումը պաշտոնապես չեն ճանաչում եւ ոչ մի սահման:

բ) Բոլոր որոշումները եւ պայմանավորվածությունները, որոնք կառնչվեն Կասպից ծովի իրավական կարգավիճակին, ուժ կունենան միայն այն դեպքում, եթե ընդունվեն բոլոր հիևգ երկրների համաձայնությամբ»⁵⁸:

Իրանի հետ համատեղ հայտարարությունը հաստատեց, որ Կասպից ծովի կարգավիճակի հարցը կարող է որոշվել միմիայն մերձկաս-

⁵⁷ Stu *Yusin Lee*. *Toward a New International Regime ...*, PP. 37-48:

⁵⁸ Stu «Совместное заявление Российской Федерации и Исламской Республики Иран по правовому статусу Каспийского Моря», 12 марта 2001 г. (http://news.kremlin.ru/ref_notes/3289):

այսան բոլոր երկրների համաձայնությամբ: Իսկ Ռուսաստանը առայժմ հարեւան երկրների հետ փորձում է որոշել միմյանց տնտեսական հետաքրքրության գոտիները:

Ռուսաստանը, ունենալով Ղազախստանի հետ պայմանագիր եւ հստակեցնելով իր հարաբերությունները Իրանի հետ, սկսեց որոշակիորեն կարելուրել նաեւ հարաբերությունները Ադրբեջանի հետ: Վիկտոր Կալյուժնու՝ Բաքու կատարած մի քանի այցերից հետո՝ 2001թ. հունվարին «ծնվեց» Կասպիցի բաժանման սկզբունքների մասին ռուս-ադրբեջանական համագործակցության պայմանագիրը, որը երկու երկրների նախագահները կնքեցին 2001թ. հունվարի 10-ին⁵⁹:

Այս պայմանագրում առաջ քաշվեց ծովի բաժանման ռուսական սկզբունքը՝ «հատակը բաժանում ենք, իսկ ջուրը ընդհանուր է»: Սա ամբողջությամբ հակասում էր Ադրբեջանի իշխանությունների մինչ այդ հայտարարած ազգային հատվածային (սեկտորային) բաժանման սկզբունքին, նաեւ այդ երկրի սահմանադրությանը, համաձայն որի՝ վերջինս փաստորեն արդեն «սեփականաշնորհել» էր Կասպիցի ափամերձ իր տարածքը: Այս պայմանավորվածությամբ վիճարկելի նավթահանքերը կողմերը շահագործելու են 50/50 սկզբունքով: Բաժանման նման սկզբունքը, ըստ Վիկտոր Կալյուժնիի, «կողմերին տալիս է իրական դիվիդենտներ»⁶⁰: Այսպիսի առաջարկ ռուսական կողմը արեց նաեւ իրանցիներին, սակայն վերջիններս մերժեցին: Բաժանման նման տարբերակին դեմ արտահայտվեց նաեւ պաշտոնական Աշգաբադը⁶¹:

Սակայն ՌԴ-ն շարունակում էր առաջ մղել ծովի բաժանման իր սկզբունքը: Այդ սկզբունքով 2001թ. նոյեմբերի 18-ին Մոսկվայում՝ ԱՊՀ-ի հորեյանական՝ 10-րդ տարեդարձի տոնակատարության ժամանակ

⁵⁹ Տե՛ս «Совместное заявление Российской Федерации и Азербайджанской Республики о принципах сотрудничества на Каспийском море», 9-10 января 2001, Баку (<http://archive.kremlin.ru/events/articles/2001/01/130538/133273.shtml>):

⁶⁰ Տե՛ս *Yusin Lee*. *Toward a New International Regime ...*, PP. 37-48:

⁶¹ Տե՛ս *Б. Виноградов*. Туркменбаши оказался неуступчивым. Ашхабад отверг позицию Москвы по статусу Каспия. «Известия», 20 июля 2000 г.:

կնքվեց ադրբեջանա-ղազախական պայմանագիրը⁶²: Այսինքն՝ չկարողանալով ընդհանուր հայտարարի գալ Կասպից ծովի կարգավիճակի հարցում, Ռուսաստանն սկսեց ծովի այսպես կոչված տնտեսական բաժանման գործընթացը, որի նպատակն էր ակտիվացնել ծովի ընդերքի շահագործման աշխատանքները: Ռուսաստանի այս քաղաքականության հետեւանքով Կասպից ծովի ավազանում ձեւավորվեցին երկու ուժեր, մի կողմում՝ Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան, մյուս կողմում՝ Թուրքմենստան եւ Իրան: Նման բաժանմանը նպաստում էր նաեւ Թուրքմենստանի եւ Ադրբեջանի միջեւ՝ Կասպից ծովի կենտրոնում գտնվող մի քանի նավթահանքերի պատկանելության վեճերի պատճառով առաջացած լարվածությունը:

Պաշտոնական Ազգաբաղի դիրքորոշումը կտրուկ փոխվեց, երբ կնքվեց ռուս-ղազախական (1998թ.) հայտնի պայմանագիրը: Թուրքմենստանի նախագահ Սափարմուրադ Նիյազովը հրապարակեց N-3467 որոշումը՝ «Կասպից ծովի ափամերձ շրջանի թուրքմենական հատվածի ելակետային գծերի որոշման աշխարհագրական կոորդինատների հաստատման մասին»⁶³: Այս որոշմամբ Թուրքմենբաշին ընդունեց ծովի հատվածային բաժանման սկզբունքը, սակայն մեկ պայմանով, որ ծովի կենտրոնական մասի բաժանման գծի որոշման ժամանակ հաշվի չառնվի Ապշերոնյան թերակղզու գործոնը, քանի որ Կասպիցի մեջ խորացած Ապշերոնը այդ գիծը ընդհուպ մոտեցնում էր Թուրքմենստանի ափին:

Բաժանման հենց այս սկզբունքն է լուրջ տարածայնություններ առաջացնում երկու երկրների միջեւ: Ադրբեջանի օրինակով «սեփականաշնորհելով» ծովի ափամերձ շրջանը՝ Թուրքմենստանի նախագահը կոչեց իր անունով: Այդ նոր շրջանի մեջ հայտնվեցին Քյափազ (Նիյազովը վերանվանեց Սարդար), Ազերի (թուրքմենական տարբերակով՝

⁶² Стu «Соглашение между Республикой Казахстан и Азербайджанской Республикой о разграничении дна Каспийского моря между Республикой Казахстан и Азербайджанской Республикой», 29 ноября 2001 г. (http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=3996):

⁶³ Стu *D. Yergin*. The Quest: Energy, Security and the Remaking of the Modern World. New York, 2011:

Օսման) եւ Չիրաք (Խազար) նավթահորերը: Նշված նավթահանքերը ավելի մոտ են թուրքմենական, քան ադրբեջանական ափին, սակայն դեռ Խորհրդային Միության տարիներին հանձնվել էին ադրբեջանական կողմին:

Ելնելով ստեղծված քաղաքական իրավիճակից՝ պաշտոնական Աշգաբադը կտրուկ փոփոխություն կատարեց իր քաղաքականության մեջ եւ հրաժարվելով ծովի համատեղ օգտագործման (կոնդոմինիումի) գաղափարից՝ որոշեց հաստատել իր հատվածը հետագա շահագործման համար: Այս իրավիճակը հատկապես սրեց հարաբերությունները Ադրբեջանի հետ, որն արդեն սկսել էր վերը նշված հանքահորերի հետախուզումը եւ նույնիսկ որոշակի պայմանավորվածություններ ուներ միջազգային մի քանի ընկերությունների հետ:

Սեպարատ պայմանավորվածությունները Իրանի եւ Թուրքմենստանի ղեկավարությունների դժգոհությունն առաջացրին, 1998թ. հուլիսի 8-ին երկու երկրների նախագահները, ռուս-ղազախական պայմանագրի կնքումից անմիջապես հետո, հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ նշեցին. «Ափամերձ երկրների միջեւ ծովի հատվածային (սեկտորային) բաժանման դեպքում որպես հիմք պետք է հանդես գա Կասպիցի պաշարների արդար եւ հավասար բաժանման սկզբունքը»⁶⁴: Փաստորեն, ոչ ուղղակիորեն, բայց համաձայնելով ծովի հատվածային բաժանման սկզբունքին, Իրանը նույնպես ձեռնամուխ եղավ իր ափամերձ շրջաններում հետախուզական եւ արդյունահանման լուրջ քայլեր կատարելու: Սակայն իրանական «հատվածային» բաժանման հիմքում ընկած էր ծովը ափամերձ երկրների միջեւ հավասար՝ 20-ական տոկոսով բաժանման սկզբունքը:

Թուրքմենստանը, համաձայնելով Կասպիցի հատակի բաժանման գաղափարին, միաժամանակ դեմ էր ջրային հատվածի բաժանմանը: 2001թ. Թուրքմենստանի նախագահը հայտարարեց. «Ինչ վերաբերում է ջրային հատվածին, ապա Աշգաբադը առաջարկում է, որ ափամերձ

⁶⁴ Տես «Собрание Законодательства Российской Федерации» (<http://www.ecolex.org/ecolex/ledge/view/RecordDetails;DIDPFDSIjsessionid=90A29AC7731B563687B323CF1267AD30?id=TRE-150144&index=treaties>):

երկրներն ունենան 12-միլոնանոց ավիամերձ շրջան, գումարած 35 միլոն տնտեսական հետաքրքրության գոտի: Այսպիսով՝ 47-միլոնանոց գոտին դառնում է ավիամերձ բոլոր երկրների հետաքրքրության գոտի, իսկ ծովի մնացած մասը դառնում է ընդհանուր՝ նավարկության համար»⁶⁵: Ադրբեջանը, իր հերթին, Թուրքմենստանի ղեկավարի նման դիրքորոշումը համարում էր կոշտ եւ անընդունելի: Ըստ նրա՝ Թուրքմենստանի որդեգրած «սկզբում՝ Կասպիցի կարգավիճակը, միայն հետո՝ մյուս հարցերը, այդ թվում՝ վիճելի հանքավայրերի բաժանումը»⁶⁶ դիրքորոշումը նշանակում է, որ Աշգաբադը դեմ է՝ Բաքվի հետ լուծելու վիճելի հանքավայրերի շուրջն առաջացած խնդիրները:

Ադրբեջանա-թուրքմենական լարվող հարաբերությունների պայմաններում պաշտոնական Բաքուն կարելոթում էր Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի դիրքորոշումը: Այդ ժամանակաշրջանում արդեն կնքված էր Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման պայմանագիրը, եւ Վաշինգտոնը ուղղակի հետաքրքրություններ ուներ տարածաշրջանում: 2003-2004թթ. Ադրբեջանը ԱՄՆ-ի աջակցությամբ երկու ռազմածովային զորավարժություններ իրականացրեց Կասպից ծովում, ինչը առաջացրեց ավիամերձ մյուս երկրների եւ հատկապես Ռուսաստանի, Իրանի, Թուրքմենստանի դժգոհությունը:

3. Սպառազինությունների մրցավազքը Կասպից ծովում

Կասպից ծովի անվտանգության նոր ճարտարապետության ձեւավորումը աշխարհառազմավարական կարելոթություն ունի թե՛ Ռուսաստանի եւ թե՛ Արեւմուտքի համար: Ինչպես նշում է ԱՄՆ-ի նախագահի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Չբիգնեւ Բժեգինսկին, Կենտրոնական Ասիայի վերահսկումը աշխարհառազմավարական նշանակություն ունի ԱՄՆ-ի համար, իսկ դա կարելի է իրա-

⁶⁵ Տես *D. Yergin*. The Quest: Energy, Security and the ...:

⁶⁶ Տես *М. Переплесин, Е. Яшин*. Испытание морем. На Каспий делят не только нефть, но и политическое влияние. «Независимая газета», 24 октября 2000 г.:

կանացնել Կասպից ծովի ավազանի եւ հատկապես Ադրբեջանի վերահսկման միջոցով, քանի որ այդ երկիրը կարելուր կապող օդակ է Արեւմուտքի եւ Կենտրոնական Ասիայի միջեւ⁶⁷ :

Տարածայնությունների ու տարածքային փոխադարձ հավակնությունների պայմաններում Կասպից ծովի ավազանի երկրները շարունակում էին զինվել՝ ստեղծելով իրենց ռազմական նավատորմերը: Ծովային նավատորմը ուժեղացնում էր նաեւ չեզոքության մասին հայտարարած Թուրքմենստանը, որը Ուկրաինայից գնել էր «Կալականով» եւ «Գրիֆ» կոչվող ռազմական տասը մոտորանավակներ ու ավելացնելու էր ռազմածովային ուժերում ծառայող նավաստիների թիվը՝ հասցնելով մինչեւ 3 հազարի⁶⁸:

2001թ. արդեն մեկ անգամ ռազմածովային առճակատում էր տեղի ունեցել Կասպից ծովում, երբ իրանական ռազմածովային ուժերը ստիպել էին Ադրբեջանի դրոշի տակ երկրաբանական-հետախուզական աշխատանքներ կատարող «Բրիթիշ փեթրոլիում» ընկերության նավին՝ հեռանալ վիճարկելի ջրային տարածքներից⁶⁹: Այդ միջադեպը հնարավոր եղավ հարթել, սակայն սկսված նոր մրցակցությունը կարող է մեծացնել լարվածությունը Կասպից ծովի ավազանում, հատկապես որ, ի պատասխան Ռուսաստանի որոշման, Իրանն ու ափամերձ մյուս երկրները նույնպես սկսում են ընդլայնել եւ հզորացնել իրենց ռազմածովային ուժերը:

Կասպից ծովում մեծությամբ երկրորդ ռազմածովային նավատորմը Իրանի Իսլամական Հանրապետությանն է: Վերջինս արդեն հայտարարել է, որ եղած 90 նավերին պատրաստվում է ավելացնել եւս 75-ը, որ-

⁶⁷ Տես 3. *Бжезинский*. Великая шахматная доска. «Международные отношения». М., 2006, с. 146:

⁶⁸ Տես *Yusin Lee*. Toward a New International Regime ..., PP. 37-48:

⁶⁹ Տես *M. Eaton*. Major trends in military expenditure and arms acquisitions by the states of the Caspian region. «The Security of the Caspian Sea Region». New York: SIPRI, 2001, PP. 83-119:

պեսզի կարողանա վերահսկել ծովի 20 տոկոս՝ իր համար կենսական նշանակություն ունեցող տարածքը⁷⁰:

Ռազմական մրցակցությանը մեծապես նպաստում էր ԱՄՆ-ն, որն ակտիվորեն ֆինանսավորում էր օգնում էր ոչ միայն Ադրբեջանին, այլև Ղազախստանին⁷¹: Սակայն Կասպից ծովում ամենամեծ ռազմական նավատորմը մինչ օրս Ռուսաստանինն է, որն այս հարցում մեծ առավելություն ունի ավիամերձ մյուս երկրների նկատմամբ, եւ վերջիններս դժվար թե մոտ ապագայում կարողանան մրցակցել ռուսական նավատորմի հետ: Կասպից ծովում սկսված ռազմական մրցավազքը լրջորեն ազդում է ծովի կարգավիճակի բանակցային գործընթացի վրա: Սա նաեւ որոշակի կասկածամտություն եւ անվստահություն է առաջացնում ավիամերձ երկրներում, հատկապես Իրանի Իսլամական Հանրապետությունում, որն ավելի է կոշտացնում իր դիրքորոշումը՝ դեմ հանդես գալով ծովի ընդերքով խողովակաշարերի հնարավոր կառուցման ծրագրերին: Այս մասին մասնավորապես հայտնեց Ղազախստանում Իրանի դեսպան Ռամին Մեհմանպարաստը՝ նշելով. «Այս հարցը ուղղակիորեն կախված է Կասպիցի կարգավիճակի անորոշությունից եւ բնապահպանության բնագավառում գոյություն ունեցող խնդիրներից»⁷²:

Իրանը Կասպից ծովի Նեկա նավահանգստում սկսեց կառուցել նավթային հորատող առաջին պլատֆորմը, որը շահագործման էր հանձնելու 2006թ.⁷³: Բացի նավթի արդյունահանումից՝ Իրանը նաեւ սկսեց ակտիվորեն զբաղվել Կասպից ծովում սեփական ռազմական նավատորմի ստեղծմամբ: 2003թ. նոյեմբերին Իրանը Պարսից ծոցից

⁷⁰ Տես *С. Расов*. Милитаризация Каспия продолжается, 26.04.2012 (<http://www.ru-journal-neo.com/node/15737>):

⁷¹ Տես նույն տեղում:

⁷² Տես «Тегерану не нравится проект прокладки морского нефтепровода». ИА «REGNUM», 15.05.2006 (<http://www.regnum.ru/news/640243.html>):

⁷³ Տես «Иран начинает бурение скважин в Каспийском море». ИА «REGNUM», 12.05.2006 (<http://www.regnum.ru/news/638640.html>):

Կասպից ծով փոխադրեց մի քանի ռազմանավ, այդ թվում՝ հրթիռակիր մի նավ: Յենց այդ շրջանում Կասպիցի ընդերքի նավթով հարուստ մի շարք շրջանների շուրջը լրջորեն լարվեցին հարաբերությունները Իրանի եւ Ադրբեջանի միջեւ: Թե՛ Բաքուն, թե՛ Թեհրանը իրենց հավակնություններն էին ներկայացնում Ալով-Շարք-Արագ կոչվող հանքադաշտի նկատմամբ: Իրենց հերթին՝ Ռուսաստանը, Ղազախստանը եւ Ադրբեջանը որոշակի տարածայնություններ ունեին Կասպից ծովի «կենտրոնական» կոչվող տարածքների պատճառով, որոնք, ըստ երկրաբանների, կարող են հարուստ լինել էներգապաշարներով⁷⁴: Միայն այս շրջանները չեն, որոնց պատկանելության շուրջը կան լուրջ տարածայնություններ մերձկասպյան երկրների միջեւ, այս ցուցակը դեռ երկար կարելի է շարունակել:

Ադրբեջանը գազի իր պաշարներով ռազմավարական հետաքրքրություն չի ներկայացնում Եվրամիության գազի շուկայի համար, որն աշխարհում ամենամեծերից մեկն է*: Սակայն Ադրբեջանը կարող է տարանցիկ երկիր դառնալ Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա հոսող գազի համար, դա արդեն իսկ ռազմավարական հնարավորություն է տալիս պաշտոնական Բաքվին՝ կարելուր տեղ զբաղեցնելու Եվրամիության էներգետիկ անվտանգության համակարգում: Կենտրոնական Ասիայի գազի ապացուցված պաշարները կազմում են համաշխարհայինի 9,8%-ը, ինչը հեռանկարային է Եվրամիության համար: Էներգետիկ նոր ռազմավարության իրականացման համար Բոյուսելին անհրաժեշտ է հնարավորինս արագ սկսել Թուրքմենստան-Ադրբեջան

⁷⁴ Sten A. *Бумаев*. Проблема политико-правового статуса Каспийского моря. Журнал «Мировая энергетическая политика», 04.06.2002:

* Ադրբեջանի գազի ապացուցված պաշարները կազմում են 0,9 տրիլիոն խմ կամ աշխարհում գազի պաշարների 0,5%-ը, իսկ Եվրամիության տարեկան պահանջարկը 450-500 մլրդ խմ է եւ շարունակաբար աճում է (տես «BP Statistical Review of World Energy», June 2013 (https://www.bp.com/content/dam/bp/pdf/statistical-review/statistical_review_of_world_energy_2013.pdf):

գազամուղի կառուցումը Կասպից ծովի հատակով*։ Հենց այս գազամուղի կառուցման մրցակցությունն էլ կթելադրի Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ ափամերձ երկրների բանակցությունների տրամաբանությունը։

Ափամերձ երկրների միջև անդրկասպյան գազամուղի շուրջը սրվող դիվանագիտական պայքարը նոր ձեւեր է ընդունում՝ վերածվելով նաեւ սպառազինության մրցավազքի եւ բարդացնելով ծովի կարգավիճակի բանակցությունները։

Ռուսաստանի Դաշնությունը 2011թ. մայիսին արդեն հայտարարել է Կասպից ծովում գործող ռազմական նավատորմի արդիականացման եւ ափամերձ տարածքներում հրթիռային հզոր համակարգերի տեղադրման մասին⁷⁵։ Այս հայտարարությունը փաստում է, որ Կասպից ծովի ավազանում սկիզբ է առնում ռազմական նոր մրցակցությունը, որին ԱՄՆ-ի ակտիվ աջակցությամբ մասնակցում են նաեւ Ադրբեջանը եւ Ղազախստանը⁷⁶։

Թուրքմենստանը 2011թ. 52 մլն դոլարի լրացուցիչ գումար է տրամադրել ռազմածովային ուժերը հզորացնելու համար եւ երեք արագընթաց կատերների կառուցման պատվեր է տվել Ռուսաստանին, իսկ ԱՄՆ-ի հետ համագործակցության շրջանակներում նրանից ստացել Point Jackson տիպի պարեկային մոտորանավակ։ Նմանատիպ օգնություն ԱՄՆ-ը տրամադրում է նաեւ Ադրբեջանին եւ Ղազախստանին։ Ի-

* 2011թ. հունվարի 13-ին Ադրբեջանի եւ Եվրահանձաժողովի նախագահներ Ի. Ալիևը եւ Մ. Բառոզուն ստորագրեցին հռչակագիր՝ իրենց աջակցությունը հայտնելով «Հարավային միջանցք» Էներգետիկ նախագծին, այս նախագծին իր աջակցության եւ ծովի ընդերքով գազամուղի կառուցման հնարավորության մասին հայտարարեց նաեւ Թուրքմենստանի նախագահ Բերդիմուհամմեդովը։

⁷⁵ Տես *Андрей Шерихов*. Каспий как арена новой войны, 17.06.2011 (<http://www.casfactor.com/rus/analytic/338.html>):

⁷⁶ Տես «Баку заинтересован в расширении стратегического сотрудничества с США в сфере безопасности». ИА «REGNUM», 24.06.2011 (<http://www.regnum.ru/news/1418865.html>):

րանը իր նավատորմի ի հզորացման համար շարունակում է Պարսից ծոցից նավեր տեղափոխել Կասպից ծով⁷⁷:

Մոսկվայի ջանքերով 2010թ. նոյեմբերի 18-ին Բաքվում տեղի ունեցած ափամերձ երկրների նախագահների գլխավորությամբ գագաթաժողովում կողմերի միջև ստորագրվեց Կասպից ծովի անվտանգության ոլորտում համագործակցության համաձայնագիրը, որով ծովի անվտանգության հիմնախնդիրը հռչակվում է ափամերձ երկրների մենաշնորհը⁷⁸: Հատուկ շեշտվում էր, որ համաձայնագիրը չի կարող մեկնաբանվել որպես ծովի կարգավիճակը սահմանող փաստաթուղթ: Սակայն այս համաձայնագիրը կարելու էր Կասպից ծովի անվտանգության հարցում համագործակցության կազմակերպման համար: Ռուսաստանը այսպիսով ցանկանում էր կանխել անվտանգության եւ համագործակցության անվան տակ այլ երկրների մուտքը Կասպից ծովի ավազան: Մյուս երկրները հույս ունեին նվազեցնել ծովում ձեռավորվող ռազմական նոր լարվածությունը եւ կանխել սպառնալիցության հնարավոր մրցավազքը:

2011թ. հունիսի 11-ին Ռուսաստանի նախագահը այս փաստաթուղթը ներկայացրեց Պետական դումայի վավերացմանը⁷⁹: Սա Կասպից ծովի անվտանգությունը կարգավորող միակ փաստաթուղթն է, որը ստորագրել են ափամերձ բոլոր հինգ երկրները: Սակայն չենք կարող ասել, թե սա լուրջ հաջողություն էր ափամերձ երկրների համար համագործակցության հարցում, քանի որ հետագա իրադարձությունները

⁷⁷ Stu *Kaweh Sadegh-Zadeh*. Iran's Strategy in the South Caucasus. «Caucasian Review of International Affairs», Winter, 2008, Vol. 2(1) (http://www.cria-online.org/Journal/2/Iran's%20Strategy%20in%20the%20South%20Caucasus%20by%20Kaweh%20SadegZadeh_done.pdf):

⁷⁸ Stu «Соглашение о сотрудничестве в сфере безопасности на Каспийском море», 18 ноября 2010 г. (<http://xn--90aqlh7c4a.xn--d1abbgf6aiiy.xn--p1ai/%D1%81%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%BA%D0%B8/785>):

⁷⁹ Stu «Дмитрий Медведев внес на ратификацию в Госдуму Соглашение о сотрудничестве в сфере безопасности на Каспийском море», 21 июля 2011 (<http://www.kremlin.ru/news/12055>):

ցույց տվեցին՝ Ադրբեյջանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը ակտիվորեն օգտվում են երրորդ երկրների օգնությունից՝ ծովում իրենց նավատորմերի հզորացման համար, եւ փաստորեն հնարավորություն են տալիս այլ երկրների՝ մուտք գործելու ծովի անվտանգության համակարգ:

Կասպից ծովի կարգավիճակի շուրջը սրվող մրցակցությունը ստիպում է Ռուսաստանին եւ Իրանին, որոնք հանդես են գալիս ծովի ընդերքով գազամուղի կառուցման դեմ, այս հարցում կոշտացնել եւ մոտեցնել իրենց դիրքորոշումները: Այդ մասին 2011թ. օգոստոսի 17-ի համատեղ ասուլիսի ժամանակ հայտարարել են Ռուսաստանի եւ Իրանի արտգործնախարարները⁸⁰:

Կասպից ծովում, Էներգետիկ գործոնով պայմանավորված, սկիզբ առնող ռազմածովային սպառազինության նոր մրցակցությունը, ինչպես նաեւ ծովի կարգավիճակի բանակցություններում Ռուսաստանի եւ Իրանի դիրքորոշումների մոտեցումը լարվածության նոր օջախ են ստեղծում ծովի ավազանում:

Ադրբեյջանը ներկայումս ստիպված է ավելի մեծ ուշադրություն դարձնել կասպյան նավատորմիղի հզորացմանը: Սա նաեւ դրդում է վերջինիս՝ մեծացնել համագործակցությունը ԱՄՆ-ի հետ, որն ավելացնում է իր ներկայությունը Ադրբեյջանի կասպյան անվտանգության համակարգում⁸¹:

Ծովի կարգավիճակի անորոշությունը եւ ռազմական մրցակցությունը ափամերձ մյուս պետություններին ստիպում են լրացուցիչ ծախսեր կատարել՝ մեծացնելով ռազմական բյուջեն կամ դրա մի մասն

⁸⁰ Տես «Foreign Minister Sergey Lavrov makes remarks and answers questions at joint press conference following talks with Iranian Foreign Minister Ali Akbar Salehi». Moscow, August 17, 2011 (http://www.mid.ru/brp_4.nsf/0/45314C5A70B009F4C32578F00038421C):

⁸¹ Տես *Jim Nichol*. Armenia, Azerbaijan and Georgia: Political Developments and Implications for U.S. Interests. Congressional Research Service. Prepared for Members and Committees of Congress 7-5700, April 15, 2011 (<http://fpc.state.gov/documents/organization/161573.pdf>):

ուղղորդելով ռազմաճովային ուժերի արդիականացմանը և հզորացմանը:

Այս պայքարին միացել է նաև Չինաստանը, որի համար Կենտրոնական Ասիայի էներգետիկ պաշարները ռազմավարական նշանակություն ունեն: Դեռ 2001թ. փորձագետները նշում էին, որ այդ երկրի աճող տնտեսության համար կարելի էր վերականգնել և գազի գործոնը, հետևաբար՝ տարածաշրջանից գազի արտահանման փորձերը սպառնում են նաև այդ երկրի կենսական շահերին⁸²:

4. Մերձկասպյան երկրների տարածայնությունները Կասպից ծովի կարգավիճակի հարցում (ամփոփում)

Կասպից ծովի կարգավիճակի շուրջ երկու տասնամյակից ավելի ձգվող բանակցություններում այդպես էլ էական տեղաշարժ չի գրանցվել: Թեև ժամանակ առ ժամանակ հայտնվում են տարբեր տեղեկություններ համաձայնությունների մասին⁸³, իրական առաջընթաց այդպես էլ չկա: Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ տարածայնությունները ի հայտ եկան, հենց որ այդ հարցը հայտնվեց մերձկասպյան երկրների օրակարգում, և նման իրավիճակը կարելի է բացատրել երկու հիմնական հանգամանքով.

առաջին՝ մերձկասպյան երկրների ռազմաքաղաքական և տնտեսաքաղաքական շահերի իրարամերժությամբ,

երկրորդ՝ երրորդ երկրների ակտիվ միջամտությամբ բանակցային գործընթացին:

Ընդհանրապես՝ Կասպից ծովի շուրջը ընթացող պայքարը կարելի է բնութագրել որպես աշխարհաքաղաքական շահերի հակասություն-

⁸² Տես «The Caspian Basin and Asian Energy Markets». «Brookings Conference Report», September 2001, N 8 (http://www.brookings.edu/~media/Files/rc/papers/2001/09globaleconomics_hill/cr08.pdf):

⁸³ Տես «Конвенция по статусу Каспийского моря согласована на 70%, но сопротивление сторон возрастает». ИА «REGNUM», 15.03.2007 (<http://www.regnum.ru/news/797095.html>):

ներ, երբ պետությունների մի խմբի համար (Ռուսաստան, Իրան) այդ տարածաշրջանը կարելու է որպես սեփական քաղաքական եւ անվտանգային ազդեցության պահպանման գոտի, մյուսների համար (Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան) Կասպից ծովը առաջին հերթին կարելու է իր տնտեսաքաղաքական բաղադրիչով, որի շահագործումը հնարավորություն է տալիս պետությունների վերնախավին՝ պահպանելու սեփական իշխանությունը:

Մոտեցումների այս տարբերությամբ էլ պայմանավորված էր այն տրամաբանությունը, որով առաջնորդվում էին այդ պետություններն իրենց շահերն առաջ մղելիս:

Ռուս որոշ վերլուծաբաններ Ռուսաստանի համար այդ շրջանը գնահատում են որպես հարցի նկատմամբ «հետկայսերական» դիրքորոշման ժամանակաշրջան⁸⁴: Այս մոտեցումն էր պատճառը, որ Ռուսաստանը, առաջնային համարելով Կասպիցի միջազգային իրավական կարգավիճակը, դեմ էր ծովում նավթարդյունահանման ամեն մի աշխատանքի՝ հասկանալով, որ նորանկախ պետությունները նավթի շահագործման աշխատանքներում ներգրավելու են հիմնականում արեւմտյան վերազգային ընկերություններին, դա համարելով սպառնալիք իր ազգային շահերին Կասպից ծովի ավազանում: 1990-ական թվականների առաջին կեսին Ռուսաստանն առաջ էր քաշում հետեւյալ տեսակետը՝ նախ լուծենք վիճելի բոլոր հարցերը եւ նոր միայն սկսենք նավթ արդյունահանել:

Իրանը, որը նույնպես անհանգստացած էր Կասպից ծովում Արեւմուտքի հնարավոր ազդեցությամբ, հանդես էր գալիս ընդդեմ ցանկացած աշխատանքի մինչեւ կարգավիճակի հարցի լուծումը: Հակառակ սրան՝ նորանկախ պետությունները չէին ցանկանում եւ չէին կարող սպասել կարգավիճակի լուծմանը, քանի որ բանակցությունների ձգձգումը նորանկախ պետությունների քաղաքական էլիտայի համար սեփական իշխանությունը պահպանելու խնդիրներ էր ստեղծում:

⁸⁴ Տե՛ս *А. Конопляник, А. Лобжанидзе. Каспийская нефть на Евразийском перекрестке. Предварительный анализ экономических перспектив. М., 1998* (<http://www.enippf.ru/material/material.htm>):

Նավթադուլարներից սպասվող եկամուտները կարող էին ամրապնդել այդ երկրների քաղաքական վարչակարգերի գոյությունը: Այսպիսով՝ մերձկասպյան պետությունների շահերի հակասությունների վրա էլ հիմնված էր Կասպիցի կարգավիճակի բանակցային գործընթացի ողջ տրամաբանությունը 90-ական թվականների առաջին կեսին:

1990-ական թվականների երկրորդ կեսին Ռուսաստանի համար պարզ դարձավ, որ ծովի կարգավիճակի բանակցությունների ձգձգումը Նորանկախ պետությունների ու Նրանց վարչակարգերի համար չի կարող արգելք լինել Կասպից ծովի նավթային հարստությունների շահագործումը սկսելու համար: Ղազախստանում եւ Ադրբեջանում արեւմտյան մի քանի վերազգային նավթային ընկերությունների հետ կնքած պայմանագրերը ցույց տվեցին, որ ծովի նկատմամբ ռուսական մենաշնորհի ժամանակներն անցել են, եւ Մոսկվան ստիպված է համակերպվել ծովում ոչ ռուսական ընկերությունների գոյությանը: Այս պայմաններում Ռուսաստանը ստիպված էր հարեւան պետությունների հետ սեպարատ պայմանագրեր կնքել:

Քաղաքականության նման կտրուկ փոփոխությունը միանշանակ չընդունեցին ռուսական փորձագիտական շրջանակները: Որոշ մասնագետներ (Ա.Բուտաեւ, Յու.Բարսեղով) այս փոփոխությունը գնահատեցին որպէս հետքայլ, մինչդեռ մյուսները (Ա.Կոնոպյանիկ, Ա.Լորժանիձե) նման քաղաքականությունը համարում էին իրատեսական: Այս գնահատականը համընկնում էր նաեւ արեւմտյան որոշ հեղինակների (Ռ.Ֆորսայթ, Ա.Զոհեն, Յ.Լի եւ այլք) կարծիքին, որոնք նշում են, որ հատկապէս չեչենական պատերազմի անհաջողությունից հետո փոխվեց նաեւ ռուսական քաղաքականությունը այդ տարածաշրջաններում, եւ Ռուսաստանը, ունենալով ֆինանսական ու տեխնիկական որոշակի ինդիքներ, արդէն ինքն էր շահագրգռված համագործակցելու արեւմտյան նավթային ընկերությունների հետ⁸⁵:

⁸⁵ Տե՛ս *R. Forsythe. The Politics of Oil in the Caucasus and Central Asia. Adelphi, Paper N 300. London: IISS and Oxford University Press, 1996* (<http://www.treemedia.com/cfrlibrary/library/background/forsythe.html>):

Սա նշանակում էր, որ Ռուսաստանը պատրաստ էր նաեւ բաժանելու Կասպից ծովի ափամերձ շրջանները հարեւան պետությունների հետ եւ ընդունելու ստեղծված իրողությունը: Կասպից ծովի կարգավիճակի բանակցությունների այս շրջանում, կարելի է ասել, Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Ղազախստանի շահերը համընկնում էին: Այսինքն՝ կարելորվում էր ոչ այնքան ծովի միջազգային կարգավիճակը, որքան Կասպիցի ընդերքի հարստությունների շահագործումը, եւ քանի որ կարգավիճակի անորոշությունը խանգարում էր դրան, երեք երկրները (Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան) որոշում ընդունեցին նախ եւ առաջ ճշտել միմյանց տնտեսական սահմանները:

Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը պատմական այդ ընթացքում, կարող ենք ասել, հետին պլան էին մղված, առաջնային էր դարձել նավթ ստանալու այսրոպեական շահը: Իսկ արդեն Վլադիմիր Պուտինի նախագահության ժամանակաշրջանում Մոսկվան փորձեց համատեղել եւ տարածաշրջանային քաղաքական, եւ նավթ արդյունահանելու հարցերը:

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական կուրսը, ի տարբերություն Ռուսաստանի, համեմատաբար ավելի կայուն է, Իրանի համար մինչ օրս էլ Կասպիցն առաջնային է իր քաղաքական շահերի տեսանկյունից, եւ միայն երկրորդ հերթին՝ ծովի նավթային հարստության արդյունահանման, թեեւ վերջին տարիներին այս խնդիրը եւս կարելորվում է: Պաշտոնական Թեհրանը մինչ օրս էլ համոզված է, որ Կասպից ծովը պետք է համարվի ափամերձ երկրների ընդհանուր օգտագործման տարածք, այսինքն՝ պաշտպանում է այսպես կոչված կոնդոմինիումումի գաղափարը: Իրանի մոտեցման որոշակի փոփոխությունն այն է, որ վերջին տարիներին համաձայնել է ազգային հատվածների բաժանման գաղափարին, սակայն բոլորի համար հավասար 20 տոկոս մասնաբաժնով, մի տարբերակ, որին դեմ են ափամերձ մյուս երկրները:

Կասպիցի հարցում Ղազախստանի եւ Ադրբեջանի քաղաքականությունների նմանությունը բացատրվում է նրանց քաղաքական շահերի եւ պետությունների ներսում ստեղծված քաղաքական իրավիճակների նմանությամբ: Երկուսի համար էլ Կասպից ծովը նախ եւ առաջ հարս-

տության հիմնական աղբյուրն է, երկու երկրներում էլ իշխանության եկած քաղաքական վարչակարգերը հասկանում էին, որ ինչքան շուտ սկսվեն նավթի արդյունահանումը եւ արտահանումը, այնքան կմեծանա իշխանությունը պահելու իրենց ֆինանսատնտեսական հնարավորությունը:

Նավթից ստացվող դուլարները հնարավորություն են տալիս ոչ միայն պահպանելու իշխանությունները, այլև տնտեսական ու քաղաքական հարաբերությունների մեջ մտնելու արեւմտյան «սպառողների» հետ, որոնք էլ դառնում են այդ քաղաքական վարչակարգերի նկատմամբ ավելի լոյալ:

Թուրքմենստանի մոտեցումն այս հարցում էականորեն տարբերվում էր նորանկախ մյուս պետություններից: Սա բացատրվում է նրանով, որ Սափարմուրադ Նիյազովը, ի տարբերություն մյուսների, չունեւ ներքին քաղաքական հարցեր լուծելու հոգս, պետությունը ղեկավարում էր ընդդիմության լիակատար բացակայության պայմաններում: Նա նաեւ, ի տարբերություն Ղազախստանի եւ Ադրբեջանի, մեծ կախվածություն չունեւ նավթի արտահանման ծավալներից: Թուրքմենբաշու տնտեսության համար կարեւորը գազն էր, որը չի արդյունահանվում Կասպից ծովի ափամերձ շրջանից: Նիյազովը սեփական քաղաքական վարչակարգը պահպանելու համար նաեւ Արեւմուտքի աջակցության կարիքը չունեւ: Նրա միակ խնդիրը Ռուսաստանն էր, որի տարածքով էր 1990-ականների առաջին կեսին անցնում միջազգային շուկայի հետ կապող թուրքմենական գազի տարանցիկ հիմնական խողովակաշարը:

Արեւմուտքից հենց այս որոշակի ազատությունն էլ Թուրքմենբաշուն հնարավորություն էր տալիս իրեն ավելի ազատ զգալու եւ չտրվելու այլ պետություններից թելադրվող մերձկասպյան խաղերին: Սակայն, հաշվի առնելով Ռուսաստանից նրա կախվածությունը, չենք կարող ասել, թե Նիյազովը ամբողջովին ազատ էր իր գործողությունների մեջ: Իրավիճակը որոշակիորեն փոխվեց Թուրքմենբաշու իրավահաջորդ Ղուրբանաղուլի Բերդիմուհամեդովի օրոք, երբ վերջինս սկսեց ճա-

նապարհի հարթել դեպի Արեւմուտք՝ փորձելով կարգավորել իր հարաբերությունները Եվրամիության ու ԱՄՆ-ի հետ:

Միաժամանակ, Թուրքմենստան-Չինաստան գազամուղի կառուցմամբ, Թուրքմենստանը նվազեցրեց իր կախվածությունը Ռուսաստան գազի առաքումներից:

Կասպից ծովի հիմնահարցում քաղաքական վերը նշված տարբերություններով էլ պայմանավորված են բանակցություններում առկա հակասությունները եւ գործընթացի շարունակական ձգձգումը: Գործընթացի վրա, ինչպես արդեն նշել ենք, որոշակի բացասական ազդեցություն էր թողնում երրորդ երկրների՝ ԱՄՆ-ի, Եվրամիության եւ Չինաստանի ակտիվությունը: Վերջիններս, նշված տարածաշրջանում ունենալով աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական հետաքրքրություններ, ցանկանում էին այս կամ այն կերպ ազդել բանակցային գործընթացի վրա:

Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ ափամերձ երկրների երկու տասնամյակից ավելի տեւող բանակցությունները այդպես էլ էական առաջընթաց չեն գրանցել, եւ տեսանելի ապագայում հավանաբար չենք էլ տեսնի ափամերձ 5 պետությունների ստորագրություններով վերջնական մի փաստաթուղթ, որը հստակորեն որոշի ծովի կարգավիճակը, նրա բաժանման եւ ընդերքի ու ջրային հատվածի շահագործման ընդհանուր մեխանիզմները:

Վերջին հանդիպումները եւ բանակցությունները, որոնք տեղի են ունեցել 2012-2013թթ, հուշում են, որ հնարավոր է կկնքվի միջանկյալ պայմանագիր, որն ամբողջության մեջ չի սահմանի Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակը: Ծովի կենտրոնում առկա նավթադաշտերի պատճառով Թուրքմենստան-Ադրբեջան լարվող հարաբերությունները, ծովի հատակով գազամուղի կառուցման հարցում Ռուսաստանի եւ Իրանի կոշտ բացասական դիրքորոշումը, թափ հավաքող ռազմական մրցավազքը թույլ են տալիս գնահատել, որ տեսանելի ապագայում ափամերձ պետություններին դժվար կլինի գալ ընդհանուր հայտարարի ծովի միջազգային կարգավիճակի հարցում:

Ներքաղաքական, ներտարածաշրջանային եւ միջազգային քաղաքական ու տնտեսական շահերը, մերձկասպյան, ծովի ավազանի եւ

տերությունների աշխարհաքաղաքական հետաքրքրությունները, ինչպես նաև անվտանգային խնդիրների կարգավորման տարաբնույթ մոտեցումներն ազդում են Կասպից ծովի կարգավիճակի լուծման հիմնահարցի վրա՝ շարունակաբար ձգձգելով եւ ավելի բարդացնելով հիմնախնդրի լուծումը:

**ԳԼՈՒԽ II. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԿՈՎԿԱՍ-ԿԱՍՊՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԳԱԶԱՍՈՒՂՆԵՐԸ
ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Կասպից ծովի ավազանի նավթի եւ գազի պաշարների գնահատումը ռազմավարական-անվտանգային նշանակություն ունի տարածաշրջանի պետությունների համար: Այս հարցը կարելու է նաեւ իրենց ազդեցության տարածման համար պայքարող տերությունների համար: Առաջինների համար այս հարցը կարելու է պետության զարգացման հեռանկարի եւ գործող վարչակարգերի գոյատեւման, իսկ երկրորդների համար՝ տարածաշրջանի Էներգետիկ կարելությունը գնահատելու եւ իրենց աշխարհաքաղաքական ազդեցությունը հաստատելու տեսանկյունից:

Հարավային Կովկասն իր աշխարհագրական դիրքով խաչմերուկ լինելով Եվրոպայի եւ Ասիայի միջեւ՝ Արեւմուտքի համար մուտք է նաեւ դեպի նավթով եւ գազով հարուստ Կասպից ծովի ավազան: Կենտրոնական Ասիան իր աշխարհագրական դիրքով եւ Էներգետիկ պաշարներով հետաքրքրում է ԱՄՆ-ին, քանի որ միակ տարածաշրջանն է, որը սահմանակից է նրա համար տարածաշրջանային մրցակիցներ հանդիսացող պետություններին՝ Չինաստանին, Ռուսաստանին, Հնդկաստանին եւ Իրանին:

Արեւմուտքի համար Հարավային Կովկասը այն «ճանապարհն» է, որը, շրջանցելով Ռուսաստանը եւ Իրանը, հնարավորություն է տալիս կապվելու Կասպից ծովին ու Կենտրոնական Ասիային:

Կասպից ծովի ավազանի հանդեպ տնտեսական եւ քաղաքական հետաքրքրությունը բխում է այնտեղ եղած նավթի եւ գազի պաշարների քանակից:

Այս հարցի շուրջը երկար տարիներ տարբեր կարծիքներ են եղել տարածաշրջանի երկրաբանական հետազոտությունների արդյունքների գաղտնիության եւ շատ դեպքերում դրանց բացակայության պատճառով:

1. Էներգետիկ պաշարների գնահատման ևոր ժամանակաշրջանը

ԽՍՀՄ-ի քայքայումից եւ ևորանկախ պետությունների ստեղծումից հետո այս հարցը ռազմավարական բնույթ ստացավ, քանի որ դրա պատասխանից էր կախված, թե ինչքանով են միջազգային նավթային ընկերությունները շահագրգռված՝ ներդրումներ իրականացնելու տարածաշրջանում: Ադրբեջանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը, տարածաշրջանը միջազգային նավթային ընկերությունների համար գրավիչ դարձնելու համար, տարբեր տեղեկություններ էին տարածում Էներգակիրների պաշարների մասին՝ տարածաշրջանը կոչելով «Նոր Պարսից ծոց», հայտարարելով, թե այդ ծովի ընդերքում է կենտրոնացած համաշխարհային նավթի մոտ 15%-ը՝⁸⁶ փորձելով մրցակցել Պարսից ծոցի երկրների հետ:

Թեեւ սկզբնական շրջանում այս հարցին հստակ պատասխան չկար, մի շարք նավթային ընկերություններ արդեն աշխատում էին նավթով հարուստ շրջաններում: Օրինակ՝ ամերիկյան «Շելոն» (Chevron) ընկերության գործունեությունը Ղազախստանի Թենգիզ նավթային հանքավայրում սկսվել էր դեռ Խորհրդային Միության տարիներին՝ 1990թ.: ԽՍՀՄ-ի քայքայումից հետո դա շարունակվեց, եւ 3 տարի անց՝ 1993թ. ստեղծվեց տարածաշրջանում առաջին նավթային

⁸⁶ Տե՛ս «География бизнеса: Северный Каспий». Журнал «Морские и нефтегазовые проекты», 2006, № 2 (http://www.mnpglobal.com/journal/2006_2/34):

համատեղ ձեռնարկությունը «Շելրոնի» (Chevron) եւ Ղազախստանի կառավարության համագործակցությամբ⁸⁷: Ստորագրված գործարքը ամենամեծն էր այն ժամանակաշրջանի համար եւ կազմում էր մոտ 20 մլրդ դոլար:

Թենգիզ նավթային շրջանը, որը հայտնաբերվել էր դեռ 1970-ականներին, ըստ մասնագետների, 6-9 մլրդ բարել նավթ էր պարունակում, եւ, համաձայն Ղազախստան-Chevron պայմանագրի, 40 տարով հանձնվում էր այդ ընկերությանը՝ համատեղ շահագործման համար⁸⁸: Չնայած ղազախների այս հաջողությանը՝ միջազգային նավթային ընկերությունները զգուշությամբ էին վերաբերվում տարածաշրջանին՝ չչտապելով ներդրումներ կատարել: Նման իրավիճակը բացատրվում էր 1990-ականներին ընթացող բազմաթիվ հակամարտություններով, Էներգակիրների փոխադրման խնդիրներով, Ռուսաստանի ազդեցությամբ, նաեւ լիովին հասկանալի չէր, թե Էներգետիկ ինչ պաշարներ են կենտրոնացած Կասպից ծովի ավազանում:

Գնահատականները Կասպից ծովի ավազանում նավթի եւ ընդհանրապես Էներգակիրների առկայության մասին բավականին տարբեր էին: Օրինակ՝ 70-ական թվականներին կար կարծիք, որ նավթի պաշարները այդ տարածաշրջանում չեն գերազանցում 10-11 մլրդ բարելը⁸⁹, ինչը կազմում էր համաշխարհային նավթային ծավալի մոտ 1 տոկոսը: Ըստ ԽՍՀՄ-ի երկրաբանության մինիստրության եւ պաշարների պետական հանձնաժողովի տվյալների՝ Կասպից ծովի նավթի պաշարները կազմում էին մոտ 4,5 մլրդ տոննա, իսկ գազի պաշարները՝ մոտ 6,8 տրիլիոն⁹⁰: Համարվում էր, որ այս պաշարները հիմնականում կու-

⁸⁷ Տես *R. Forsythe*. The Politics of Oil in the Caucasus and Central Asia (<http://www.treemedia.com/cfrlibrary/library/background/forsythe.html>):

⁸⁸ Տես «Energy Information Administration. Caspian Sea Region: Survey of Key Oil and Gas Statistics and Forecasts», July 2006 (www.eia.doe.gov):

⁸⁹ Տես *R.H. Dokmejian, H.H. Simonian*. Troubled waters. The Geopolitics of The Caspian region, P. 29:

⁹⁰ Տես *Л. Левуцкый*. Каспий: удастся ли России сохранить влияние на «русском море»? (http://www.russia-today.ru/2001/no_12/12_investigation_1.htm):

տակված են Ղազախստանի եւ Թուրքմենստանի ավիամերձ շրջաններում:

Ադրբեջանի նավթային պաշարների հիմնական մասը կենտրոնացած է Ազերի-Չիրաք-Գյունեշլի նավթադաշտում, որը հայտնաբերվել էր անցած դարի 80-ական թվականներին: Ըստ ԽՍՀՄ Պետպլանի՝ այս նավթահորերը պետք է շահագործվեին 2010-2020թթ.⁹¹:

Նավթի շահագործման տեսակետից Ադրբեջանը առաջ էր հարեւան երկրներից⁹²: Կասպից ծովի ավիամերձ մյուս երկրներում, ի տարբերություն Ադրբեջանի, նավթարդյունաբերությունը ուշ է սկսել զարգանալ, հետեւաբար՝ այդ երկրների պաշարները, ըստ փորձագետների, ավելի հեռանկարային են: Հայտնի է, որ Ադրբեջանում, նավթի արդյունաբերության ողջ պատմության ընթացքում, արդյունահանվել են մոտ 1 մլրդ 462 մլն տոննա նավթ եւ 380 մլրդ խորանարդ մետր գազ⁹³: Հավանաբար նավթի ու գազի նման աննախադեպ շահագործմամբ է բացատրվում, որ թեեւ վերջին տարիներին Կասպից ծովի ադրբեջանական հատվածում ներդրվել է մոտ 15-20 մլրդ դոլար, նավթային նոր պաշարներ այդպես էլ չի հաջողվել հայտնաբերել: Այստեղ բացառություն է թերեւս Շահ-Ղենիզ գազի հանքավայրը, որն անկախ Ադրբեջանի պատմության ընթացքում հայտնաբերված միակ հեռանկարային հանքավայրն է⁹⁴:

Ըստ ռուսական աղբյուրների՝ Կասպից ծովի ադրբեջանական հատվածում կենտրոնացած են 850-870 միլիոն տոննա նավթ եւ մոտ 4,15 տրիլիոն խորանարդ մետր գազ, Ղազախստանի ավիամերձ շրջանում համապատասխանաբար կազմում են 2 միլիարդ 150 միլիոն տոննա

⁹¹ Տես Լույն տեղում:

⁹² Տես *Խ. Ղաղայան*, Հայերը եւ Բաքուն (1850-ական թթ. - 1920թ.): Ե., «ՆՈՐԱՎԱՆԸ» Գիտակրթական Հիմնադրամ, 2006:

⁹³ Տես *D. Yergin*. The Quest: Energy, Security and the ...:

⁹⁴ Տես *A. Cohen*. Energy Security in the Caspian Basin, PP. 109-128:

նավթ եւ 1,455 տրիլիոն խորանարդ մետր գազ⁹⁵: Ղազախստանի նավթային հիմնական պաշարները կենտրոնացած են Թենգիզ-Կորոլէւսկոյէ եւ Կարաչիգանսկ կոչվող նավթադաշտերում, հեռանկարային են համարվում եւս 13 հանքավայրեր, որոնք գտնվում են Կզիլորդիսկի եւ Ժեսկանգանսի շրջաններում:

Կասպից ծովի ռուսական հատվածի կանխատեսելի պաշարները, ըստ փորձագետ Յու.Ալեքսանդրովի, որը իր հերթին հենվում է «Լուկոյլ» ընկերության տվյալների վրա, կազմում են մոտ 1,6 մլրդ տոննա նավթ եւ 3,08 տրիլիոն խորանարդ մետր գազ⁹⁶: Ըստ Յու.Ալեքսանդրովի՝ արդեն 2004-2005թթ. արդյունահանվել են 4 մլն տոննա նավթ ու 10 մլրդ խորանարդ մետր գազ, եւ արդյունահանման այս տեմպերը հնարավոր կլինի պահպանել մոտակա 15-20 տարիներին, իսկ 2016-2018թթ. նավթի արդյունահանման ծավալները հնարավոր կլինի հասցնել տարեկան 50 մլն տոննայի: Սակայն Ռուսաստանի Դաշնության տնտեսության զարգացման նախարարությունը չի ընդունում «Լուկոյլի» նման լավատեսությունը՝ այդ թվերը համարելով չափազանցած⁹⁷:

Ռուս տնտեսագետ Յուրի Ալեքսանդրովի կարծիքով, չնայած տարբեր հրապարակումներին, Կասպից ծովի դազախական, ռուսական, ադրբեջանական, թուրքմենական եւ իրանական հատվածներում նավթի առկայության մասին վերջնական եւ հավաստի տվյալներ գոյություն չունեն: Յու.Ալեքսանդրովը կարծում է, որ քիչ թե շատ պարզ է իրավիճակը Ղազախստանի ափամերձ շրջանում, որտեղ հիմնականում վերջին տասնամյակում հայտնաբերվել են նավթի եւ գազի նորանոր հանքավայրեր:

⁹⁵ Տես *Ю. Александров*. Каспий как незрелое яблоко раздора. Нефтяная геополитика (http://www.politcom.ru/2002/p_neft19.php):

⁹⁶ Տես *Ю. Александров*. Каспий как незрелое яблоко раздора. Нефтяная геополитика (http://www.politcom.ru/2002/p_neft19.php):

⁹⁷ Տես նույն տեղում:

Ղազախստանի ափամերձ շրջանում հայտնաբերված նավթի ամենախոշոր հանքավայրերից մեկը Կաշագանյան կոչվող հանքավայրն է, որն իր ծավալներով գիշում է միայն Սաուդյան Արաբիային պատկանող մի քանի հանքավայրերի, իսկ ընդհանրապես համարվում է վերջին 30 տարիներին աշխարհում հայտնաբերված ամենամեծ նավթահանքավայրը⁹⁸:

1-1. Ղազախստանի Հանրապետություն

Առանձին անդրադարձը Ղազախստանի էներգետիկ պաշարներին, հատկապես Կաշագանյան հանքավայրին, նպատակաուղղված է ցույց տալու նավթի արդյունահանման այն կենտրոնը, որը հետագայում ուրուշակի «քաղաքական» ազդեցություն ձեռք բերեց, կարելորեց տարածաշրջանը որպես նավթային կենտրոն եւ էական դեր կատարեց թե՛ Բաքու-Ջեյհան, թե՛ մյուս նավթամուղների կառուցման գործում:

Հետազոտությունները Ղազախստանի ափամերձ շրջաններում սկսվեցին 1997թ., երբ արտասահմանյան նավթային մի շարք ընկերություններ կնքեցին նոր կոնսորցիումի ստեղծման պայմանագիր, որը սկզբում կոչվում էր OKIOC (Offshore Kazakhstan International Operating Company - Ղազախստանի ափամերձ միջազգային օպերացիոն ընկերություն), սակայն ավելի ուշ վերանվանվեց Agip KCO (Agip Kazakhstan North Caspian Operating Company)⁹⁹:

Ղազախստանի կառավարությունը Agip KCO-ին արտոնագիր տրամադրեց՝ 40 տարվա ընթացքում հետազոտություններ կատարելու եւ շահագործելու հեռանկարային համարվող Կասպից ծովի ափամերձ մի քանի շրջաններում: Agip KCO կոնսորցիումի մեջ մտնում են Total, ExxonMobil եւ Shell ընկերությունները, որոնց ձեռքում է ընկերության բաժնետոմսերի ամենամեծ մասնաբաժինը՝ 18,52-ական տոկոս: Իրենց

⁹⁸ Տես «География Бизнеса: Каспий». Журнал «Морские и нефтегазовые проекты», 2006, № 1 (http://www.mnpglobal.com/journal/2006_1/9):

⁹⁹ Տես «О компании Аджип ККО» (<http://www.agipkco.com/wps/wcm/connect/agip+kco/AgipKCO+RUS/!!42/>):

մասնաբաժիններն ունեն նաեւ ConocoPhillips-ը (9,26%), Inpex-ը (8,33%) եւ «Կազմունայգազ» (8,33%) ղազախական պետական նավթային ընկերությունը¹⁰⁰: Առաջին իսկ նախնական հետազոտական հորատումները ցույց տվեցին, որ հայտնագործվել է վերջին մի քանի տասնամյակների ամենախոշոր նավթահանքը: Ըստ Agip KCO կոնսորցիումի առաջին պաշտոնական հաղորդագրության՝ նավթահորի պաշարները կազմում են 7-9 մլրդ բարել կամ մոտավորապես 0,96-1,23 մլրդ տոննա նավթ:

Հավանական պաշարը, ըստ կոնսորցիումի, մոտ 36 մլրդ բարել նավթ է, ինչը կազմում է 4,92 մլրդ տոննա: Ղազախ երկրաբանները մի փոքր այլ տվյալներ են հաղորդում. Կաշագանի ենթադրվող պաշարները ավելի քիչ են՝ 21,6-23,4 մլրդ բարել (2,95-3,21 մլրդ տոննա)¹⁰¹: Հենց այս նավթահանքի հայտնագործմամբ էր նաեւ մասամբ պայմանավորված Սպիտակ տան կողմից Բաքու-Ջեյհան խողովակաշարի հովանավորումը:

Կաշագանի նավթահանքի հայտնաբերումը Ղազախստանի համար աշխարհառազմավարական նշանակություն ունեցավ. վերջինս որպես նավթով հարուստ պետություն հայտնվեց տարածաշրջանի նկատմամբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքական հետաքրքրությունների կենտրոնում: Եվ եթե մինչ այդ Բաքու-Ջեյհանին տնտեսական գրավչություն տալու համար մտածում էին Թուրքմենստանին ներգրավել այս ծրագրում, ապա այժմ կենտրոնական դերը նախատեսվում էր Ղազախստանի Հանրապետության համար: Աստանան շահագրգռված էր նավթահանքի շուտափույթ շահագործմամբ, քանի որ դա ոչ միայն առաջ կմղեր նրան որպես տարածաշրջանի նավթային պետության, այլև կարեւորագույն հաղթաթուղթ էր Նազարբաեւի համար Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ վարած իր բազմաբարդ քաղաքականության մեջ:

¹⁰⁰ Stu *Thomas H. Johnson*. Central Asia: energy resources, politics and security. «Energy Security and Global Politics: The militarization of resource management». Ed. by Daniel Moran and James A. Russell, PP. 135-154:

¹⁰¹ Stu «География Бизнеса: Каспий» (http://www.mnpglobal.com/journal/2006_1/9):

Կաշագանյան նավթի արդյունահանումը սկսվեց 2008թ.: Նախատեսվում է, որ Կաշագանը շահագործման իր հզորությանը՝ 22,5 մլն տոննա տարեկան նավթի եւ 4,4 մլրդ խորանարդ մետր տարեկան գազի արդյունահանման, կհասնի 2016թ.¹⁰², իսկ ընդհանուր առմամբ Կաշագանի նավթային շրջանում Agip KCO-ի կողմից պետք է ներդրվի 30 մլրդ դոլար: Սպասվում է, որ Ղազախստանը 2015թ. նավթի արդյունահանման ծավալը կհասցնի օրական 3 մլն բարելի, ինչը մի փոքր էր զիջելու Ռուսաստանի արտահանման այն ժամանակվա հզորություններին: 2013թ. Ռուսաստանը օրական արդյունահանել է մոտ 10.778 մլն բարել նավթ¹⁰³: Կաշագանի նավթադաշտի շահագործման օրինական իրավունք ունեցող Agip KCO-ի պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ 40 տարում 60 մլրդ դոլար եկամուտ է ակնկալվում այդ նավթահանքից: 2009թ. Ղազախստանի կառավարությունը հանձնիս «Կազմունայգազի» ENI, Shell, ExxonMobil, Total, CNPC, Inpex ընկերությունների հետ միսին ստեղծեց Յյուսիսային կասպյան օպերացիոն ընկերությունը (North Caspian Operating Company B.V), որն իր վրա վերցրեց Agip KCO-ի պարտավորությունները¹⁰⁴:

Այսպիսով՝ Ղազախստանի նավթի ու գազի պաշարները ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կշիռ են տալիս այդ պետությանը՝ կարելուրելով նրա դերը տարածաշրջանում եւ նրա նկատմամբ նկրտումներ ունեցող Արեւմուտքի ու հատկապես ԱՄՆ-ի քաղաքականության համար: Ղազախստանի նավթով շահագործված է նաեւ Եվրոպան, որը դրա սպառման հիմնական շուկան է:

Ղազախստանի էներգետիկ պաշարների նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերում Չինաստանը, որը շարունակաբար ուժեղացնում է իր դիրքերը տարածաշրջանում: Ռուսաստանը եւս չէր կարող հետ մնալ այս գործընթացներից՝ ցանկանալով իր վերահսկողության տակ պահել տարածաշրջանի էներգակիրների շուրջն ընթացող զարգա-

¹⁰² Stu *Thomas H. Johnson*. Central Asia: energy resources, ..., PP. 135-154:

¹⁰³ BP Statistical Review of World Energy, June 2014, bp.com/statisticalreview

¹⁰⁴ North Caspian Operating Company B.V, <http://www.ncoc.kz/en/ncoc/history.aspx>

ցումները: Կաշազանի նավթահանքի հայտնաբերումը նաեւ Նազարբաեւների կլանի պահպանման կարեւոր գրավականներից է ներքաղաքական հնարավոր ոչ բարենպաստ զարգացումների դեպքում:

Ըստ անգլո-ամերիկյան British Petroleum ընկերության տարեկան զեկույցի, 2013թ. տվյալներով, Ղազախստանի ապացուցված նավթի պաշարները կազմում են 30 մլրդ բարել կամ 3,9 մլրդ տոննա, որոնք, արդյունահանման ներկա տեմպերը պահպանելիս, Ղազախստանին կբավարարեն եւս 44 տարի¹⁰⁵: Սա կազմում է համաշխարհային նավթի պաշարների 1,8%-ը: Գազի պաշարները Ղազախստանում գնահատվում են մոտ 1,9 տրիլիոն խորանարդ մետր կամ համաշխարհային գազի պաշարների 0,9%-ը: Կասպից ծովի ափամերձ շրջանում նավթի իր պաշարներով Ղազախստանը թիվ մեկ երկիրն է, իսկ գազի պաշարներով զիջում է միայն Թուրքմենստանին:

1-2. Ադրբեջանական Հանրապետություն

1990թ. Ադրբեջանական ԽՍՀ-ն Մոսկվայից թույլտվություն ստացավ Կասպից ծովի Ադրբեջանի ափամերձ նավթաբեր շրջանները արտասահմանյան ընկերությունների հետ շահագործելու համար: Հենց այդ տարվա աշնանը Բաքվում տեղի ունեցավ առաջին միջազգային մրցույթը, որին մասնակցեցին մի քանի ընկերություններ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից եւ այլ երկրներից: Մրցույթում հաղթող ճանաչվեց ամերիկյան «Ամոկո-Եվրասիա» (Amoco Eurasian Petroleum Co.¹⁰⁶) ընկերությունը, որի հետ էլ Ադրբեջանի նավթային պետական ընկերությունը սկսեց համատեղ աշխատանքներ ծավալել¹⁰⁷: Այս պայմանագրով 1990-91թթ. ամերիկյան ընկերությունը պետք է մասնակցեր միայն

¹⁰⁵ Стu BP Statistical Review of World Energy, June 2014, bp.com/statisticalreview

¹⁰⁶ Стu «AMOCO EurAsian Petroleum» (<http://catalogfirm.sitebase.ru/s0/ob0/r82852/f75486.htm>):

¹⁰⁷ Стu А. Муталибов. «Черное золото» так и не превратилось в «нефтедолларовый дождь». Журнал «Мировая энергетическая политика», 14 мая 2002 (http://www.opec.ru/expert.asp?ex_no=57):

մեկ նավթահանքի մշակման աշխատանքներին, սակայն հետագայում նրան թույլատրեցին զբաղվել նաեւ այլ նավթահորերի շահագործմամբ:

«Ամոկոյի» մասնաբաժինը ադրբեջանական նավթային առաջին գործարքում կազմում էր 40%, եւս 40% պատկանում էր ԽՍՀՄ-ին, Ադրբեջանական ԽՍՀ-ի մասը այս գործարքում 20% էր¹⁰⁸: Նավթի արդյունահանման հարցը ավելի հրատապ դարձավ ԽՍՀՄ-ի քայքայումից հետո: 1991թ. Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մուլթալիբովը որոշում է մերժել Ռուսաստանի մասնակցությունը ադրբեջանական նավթային առաջին գործարքին¹⁰⁹:

Այազ Մուլթալիբովին փոխարինած Աբուլֆազ Էլչիբեյի թիմը նույնպէս դեմ էր Ռուսաստանի ակտիվ մասնակցությանը ադրբեջանական նավթային պայմանագրերին: Գալով իշխանության՝ Աբուլֆազ Էլչիբեյը նավթի արդյունահանման հարցում առաջնությունը տալիս էր ամերիկյան, բրիտանական, նորվեգական եւ թուրքական նավթային ընկերություններին՝ այս ցանկից դուրս մղելով ռուսականներին: Հիմնական դերակատարումը տրվում էր British Petroleum եւ Statoil ընկերություններին, սակայն Էլչիբեյը չհասցրեց ավարտել պայմանագրերի կնքումը այս ընկերությունների հետ: Ղարաբաղյան ճակատում հայկական զորքերի հաջողությունը նպաստեց Էլչիբեյի իշխանության տապալմանը, Լոնդոնում նավթային նոր պայմանագրի կնքումից ընդամենը 2 շաբաթ առաջ նա պաշտոնանկ արվեց¹¹⁰: Իշխանության եկավ Ադրբեջանի ամենափորձառու քաղաքական գործիչը՝ Յեյդար Ալիեւը:

1991-94թթ. ընթացող ղարաբաղյան պատերազմը թույլ չէր տալիս Ադրբեջանին զբաղվել նավթի խնդրով եւ լուրջ ներդրումներ ակնկալել: Ղարաբաղյան պատերազմում լիակատար պարտություն կրած Ադրբեջանը 1994թ. մայիսին ստիպված կնքեց Բիշքեկյան զինադադարը, ո-

¹⁰⁸ Տե՛ս «Кавказская нефть». Аналитическое агентство «Намакон» (<http://www.whoiswho.ru/russian/Free/51998/oilr.htm>):

¹⁰⁹ Տե՛ս *D. Yergin*. The Quest: Energy, Security and the ...:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում:

րից 5 ամիս անց, 1994թ. սեպտեմբերին, Ալիեևին հաջողվեց կնքել այսպես կոչված «Դարի պայմանագիրը»¹¹¹, համաձայն որի ստեղծվեց Ադրբեջանական միջազգային օպերացիոն ընկերությունը (ԱՄՕԸ, Azerbaijan International Operating Company - AIOC), որը պետք է զբաղվեր դեռ անցյալ դարի 80-ականներին հայտնաբերված Ազերի, Չիրաք եւ Գյունեշլի հանքավայրերի հետախուզմամբ ու շահագործմամբ: Այս նորաստեղծ կոնսորցիումի հիմնական բաժնետերեր դարձան միջազգային 9 խոշոր նավթային ընկերություններ՝ British Petroleum (BP) - 34,1%, Unocal - 10,3%, Lukoil - 10%, SOCAR (Ադրբեջանի պետական նավթային ընկերություն) - 10%, Statoil - 8,6%, ExxonMobil - 8%, TPAO - 6,7%, Pennzoil - 3,6%, ITOCHU - 3,9%, Delta/Hess - 2,7%¹¹²:

Ընկերության կառավարիչ-օպերատոր դարձավ հիմնական բաժնետեր British Petroleum ընկերությունը: Այս պայմանագիրը ռազմավարական կարելուր նշանակություն ունեցավ Ադրբեջանի զարգացման հետագա ողջ ընթացքի համար՝ մատնանշելով պետության տնտեսական զարգացման միակ հնարավոր ու այլընտրանք չունեցող էներգետիկ ուղղությունը եւ ամրապնդեց Ալիեևների կլանի իշխանական մեկնաշնորհը Ադրբեջանում:

«Դարի պայմանագիրը» ոչ միայն տնտեսական, այլև ընդգծված քաղաքական բնույթ էր կրում. Ադրբեջանը, իր նավթային ոլորտը ամբողջությամբ հանձնելով արեւմտյան նավթային ընկերություններին, պարտադրված էր արտաքին քաղաքականության մեջ զարգացման հենց այդ ուղղությունը որդեգրել:

Ալիեևներն իրենց հսկողության տակ վերցրեցին նաեւ դեռեւս 1992թ. սեպտեմբերի 13-ին նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հրամանով ստեղծված Ադրբեջանի Հանրապետության նավթային պետական ընկերությունը (ԱՅՆՊԸ, State Oil Company of Azerbaijan Republic -

¹¹¹ Stu Y. Kalyuzhnova. Economics of the Caspian Oil and Gas Wealth. Companies, Governments, Policies. Centre for Euro-Asian Studies, 2008, P. 16:

¹¹² Stu A. Муталибов. «Черное золото» так и не превратилось ... (http://www.opec.ru/expert.asp?ex_no=57):

SOCAR)¹¹³: Այս ընկերության տնօրինությանն էր տրված նավթի արդյունահանումը երկրի ցամաքային եւ ծովային շրջաններում, նրան էին պատկանում նավթի ու գազի արդյունաբերական բոլոր հզորությունները եւ նավթի արտահանման, ինչպես նաեւ երկրաբանական-հետախուզական աշխատանքների մենաշնորհը:

Ադրբեջանի պետական նավթային այդ հսկան՝ ԱՅՆՊԸ-SOCAR -ը, վերահսկում է 6800 նավթահոր ցամաքում եւ 1400-ը ծովում, ընկերության նավատորմի լը կազմված է 300 փոքր եւ միջին չափերի նավթատարներից, ընկերությունում ընդհանուր առմամբ աշխատում մոտ 77 հազար մարդ¹¹⁴: Իր ստեղծման առաջին տարիներին ընկերությունը չէր տիրապետում համապատասխան ֆինանսական միջոցների՝ նավթի արդյունահանմամբ ինքնուրույն զբաղվելու համար, Բաքվի իշխանությունները ստիպված էին ներգրավել արտասահմանյան նավթային ընկերություններին՝ ֆինանսական միջոցներ ստանալու եւ համատեղ ծրագրեր իրականացնելու:

«Ղարի պայմանագրից» հետո թերեւս հաջողված գործարքը Շահ-դենիզ հանքավայրի պայմանագիրն էր, որտեղ հայտնաբերվել էր մոտ 1 տրիլիոն խորանարդ մետր ծավալի գազ¹¹⁵: Այս հանքավայրը կարելուր նշանակություն ունի Բաքու-Էրզրում գազամուղի կառուցման գործում, որն, ըստ դրա հեղինակների, պետք է հետագայում դառնար ոչ միայն ադրբեջանական գազի, այլեւ միջինասիական երկրների՝ Թուրքմենստանի, Ուզբեկստանի եւ Ղազախստանի գազի առաքման հիմնական ուղի:

1990-ական թվականների առաջին կեսին այս երկրներում, բացառությամբ Թուրքմենստանի, գազի արդյունահանումը եւ շահագործու-

¹¹³ Stu *D. Yergin*. *The Quest: Energy, Security and the Remaking ...*, P. 110:

¹¹⁴ Stu նույն տեղում:

¹¹⁵ Stu *Y. Kalyuzhnova*. *Economics of the Caspian Oil and Gas Wealth. ...*, P. 16:

մը բավականին ցածր մակարդակի վրա էին, ինչը նույնիսկ չէր բավարարում սեփական կարիքները հոգալու համար*:

Թե՛ հորհրդային Միության տարիներին, թե՛ 90-ական թվականներին Ադրբեջանը շատ չնչին քանակությամբ գազ էր արդյունահանում եւ ստիպված էր ներմուծել Ռուսաստանից, Թուրքմենստանից եւ Իրանից: 1999թ. Ադրբեջանը արդյունահանում էր ընդամենը 750 մլն խորանարդ մետր գազ, ինչը մոտ 25 տոկոսով պակաս էր, քան 1992թ.: 1999թ. հաստատվեց, որ Շահդենիզում կա մոտ 1 տրիլիոն խորանարդ մետր գազ, ինչը, 1978թ. սկսած, աշխարհում գազի հայտնաբերված ամենամեծ հանքավայրից մեկն էր¹¹⁶:

Այս հանքավայրի հայտնաբերումը եականորեն փոխեց Ադրբեջանի դերը տարածաշրջանում՝ գազ ներկրող պետությունից դարձնելով գազ արտահանող: Յենց այս շրջանում ակտիվացան Կասպից ծովում նոր գազամուղի կառուցման բանակցությունները:

Ըստ British Petroleum ընկերության տարեկան զեկույցի, 2011թ. տվյալներով, Ադրբեջանի ապացուցված նավթի պաշարները կազմում են մոտ 7 մլրդ բարել կամ 1 մլրդ տոննա, ինչը համաշխարհային նավթի պաշարների 0,4%-ն է եւ շահագործման ներկա տեմպերի պահպանման պայմաններում կբավարարի առավելագույնը 20 տարի: Գազի պաշարը, որը հիմնականում կենտրոնացած է Շահդենիզ հանքավայրում, 1,3 տրիլիոն խորանարդ մետր է, ինչը կազմում է համաշխարհային գազի պաշարների 0,6%-ը¹¹⁷:

* Ըստ 2012թ. հրապարակված Statistical Review of World Energy-ի՝ Ադրբեջանի գազի պաշարները կազմում են 1,3 տրիլիոն խմ, Թուրքմենստանինը՝ 24,3, Ղազախստանինը՝ 1,9, Ուզբեկստանինը՝ 1,6 տրիլիոն խմ:

¹¹⁶ Stu «Energy Information Administration. Caspian Sea Region», February 2002 (<http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian2.html>):

¹¹⁷ Stu «BP Statistical Review of World Energy», June 2012 (<http://bp.com/statisticalreview>):

1-3. Թուրքմենստանի Հանրապետություն

1992թ. Թուրքմենստանը արդյունահանում էր 7,2 միլիարդ խորանարդ մետր գազ, Ադրբեջանը՝ ընդամենը 1 մլրդ, Ղազախստանը՝ 1,1 մլրդ, Ուզբեկստանը՝ 5,3 միլիարդ խորանարդ մետր¹¹⁸: Եթե այս թվերը համեմատենք ԽՍՀՄ-ի տարիների գազի արդյունահանման հետ, կտեսնենք, որ Նորանկախ պետություններում սկսվել էր գազի արդյունահանման լուրջ անկում, որը դեռ որոշ ժամանակ շարունակվեց:

Անկման պատճառներից էին առաքման դժվարությունները: Ռուսական գազի մենաշնորհատեր «Գազպրոմ» ընկերությունը, որն ամբողջովին վերահսկում էր Կենտրոնական Ասիայի գազի խողովակաշարերը, 90-ական թվականներին թույլ չէր տալիս կասպյան եւ միջինասիական գազի մեծաքանակ առաքում, ինչը ձեռնտու չէր միջազգային շուկայում գազի ցածր գների պայմաններում, իսկ այդ տարածաշրջաններից գազի առաքման բոլոր ուղիները անցնում էին Ռուսաստանի տարածքով: Այս քաղաքականության հետեւանքով գազի արտահանումը տարածաշրջանի թիվ մեկ գազ արտադրող երկրից՝ Թուրքմենստանից նվազեց 5 անգամ՝ 1998թ. կազմելով ընդամենը 1,664 միլիարդ խորանարդ մետր: 1999թ. գազի եւ ընդհանրապես էներգակիրների գների բարձրացման պայմաններում Ռուսաստանը եւ Թուրքմենստանը ստորագրեցին Նոր պայմանագիր, որով Աշգաբադը կարողացավ արտահանման հզորությունը հասցնել 2,8 մլրդ խորանարդ մետրի, 2000թ. այս թիվը հասավ արդեն տարեկան 5,9 մլրդ խորանարդ մետրի¹¹⁹:

Ռուսական գազի մենաշնորհային դիրքերի թուլացման համար դեռ 1996թ. Թուրքմենստանը շահագործման հանձնեց դեպի Իրան ձգվող առաջին գազամուղը, որը նրան հնարավորություն էր տալիս տարե-

¹¹⁸ Stu «Energy Information Administration. Caspian Sea Region: ...», July 2006 (www.eia.doe.gov):

¹¹⁹ Stu «Energy Information Administration. Caspian Sea Region», February 2002 (<http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian2.html>):

կան մինչեւ 8 մլրդ խորանարդ մետր գազ արտահանելու¹²⁰: Դեպի Իրան ձգվող երկրորդ խողովակաշարը սկսեց գործել արդեն 2010թ. հունվարի 6-ից, ինչը պաշտոնական Աշգաբադին հնարավորություն էր տալիս կրկնապատկելու արտահանվող գազի ծավալը¹²¹: Գազի արտահանման հաջորդ ուղղությունը, որով հետաքրքրվում էր Թուրքմենստանը, Չինաստանն էր:

1990-ականներին առաջ քաշվեց գազի այլընտրանքային խողովակաշարի՝ անդրկասպյան գազամուղի կառուցման հարցը: Այս ծրագիրն արժանացավ ԱՄՆ-ի եւ Եվրամիության հավանությանը:

Ըստ British Petroleum ընկերության տարեկան զեկույցի, 2011թ. տվյալներով, Թուրքմենստանի գազի պաշարները կազմում են 24,3 տրիլիոն խորանարդ մետր կամ համաշխարհային գազի պաշարների 11,7%-ը¹²²: Գազի պաշարներով Թուրքմենստանը աշխարհի 4-րդ երկիրն է, զիջում է միայն Ռուսաստանին, Իրանին եւ Զաթարին: Նավթի պաշարները Թուրքմենստանում չկան եւ՝ մոտ 600 մլն բարել կամ 100 մլն տոննայից քիչ: Այս երկրի տնտեսությունը հիմնականում աշխատում է գազի արդյունահանման եւ արտահանման ուղղությամբ:

1-4. Ուզբեկստանի Հանրապետություն

Կենտրոնական Ասիայում գազով հարուստ պետություններից է Ուզբեկստանը, որը նույնպես լուրջ խնդիրներ ուներ գազի արդյունահանման եւ արտահանման հարցում: 1992-2000թթ. Ուզբեկստանին հաջողվեց ավելացնել գազի արդյունահանման ծավալները՝ տարեկան հասցնելով մոտ 7 մլրդ խորանարդ մետրի: 1990-ական թվականներին պաշտոնական Տաշքենդը, ցանկանալով նվազեցնել իր կախվածու-

¹²⁰ Տե՛ս *Christopher Boucek*. Maintaining Gazpromistan: The politics of Turkmen gas exports. «Energy Security and Global Politics: The militarization of resource management», 2009, pp. 155-174:

¹²¹ Տե՛ս «Бердымухамедов и Ахмадинежад вместе запустили новую ветку газопровода Туркменистан - Иран», 06.01.2010 (<http://www.centrasia.ru/newsA.php?st=1262791440>):

¹²² Տե՛ս «BP Statistical Review of World Energy», June 2012 (<http://bp.com/statisticalreview>):

թյունը ռուսական գազամուղներից, սահմանափակում էր իր գազի արտահանումը Ռուսաստանի տարածքով՝ փորձելով դա փոխհատուցել տարածաշրջանի երկրներին էներգակիրների մատակարարմամբ: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ Կենտրոնական Ասիայում գազի նոր շուկա ստեղծելու Տաշքենդի փորձերը դատապարտված էին ձախողման տարածաշրջանի երկրների բնակչության աղքատության եւ ցածր վճարունակության պատճառով:

Ուզբեկստանը, որի ապացուցված գազի պաշարները մոտ 1,6 տրիլիոն խորանարդ մետր են կամ համաշխարհային գազի պաշարների 0,8%-ը¹²³, կախված է ռուսական «Գազպրոմ» ընկերությունից, որը մինչ Թուրքմենստան-Չինաստան գազամուղի շահագործումը այդ երկրից գազի միակ գնորդ միջազգային ընկերությունն էր: 2010թ. հունիսին Չինաստանը եւ Ուզբեկստանը ստորագրեցին պայմանագիր տարեկան 10 մլրդ խորանարդ մետր գազի առաքման մասին: Այդ գազը Թուրքմենստան-Չինաստան գազամուղով, որի մի հատվածը՝ մոտ 525 կմ, անցնում է Ուզբեկստանի տարածքով, պետք է արտահանվի դեպի Չինաստան¹²⁴: Ուզբեկստանը տիրապետում է նաեւ նավթի ոչ մեծ պաշարների՝ մոտ 600 մլն բարել կամ 100 մլն տոննա: Ռուսական եւ չինական ընկերությունները որոշակի հետաքրքրություն են ցուցաբերում Ուզբեկստանի նավթային հատվածի նկատմամբ եւ պատրաստակամություն են հայտնել ներդրումներ կատարելու հեռանկարային հանքավայրերում: Սակայն Ուզբեկստանի նախագահ Իսլամ Զարիմովի ոչ կայուն քաղաքականության պատճառով՝ վերջինիս հեռացումը ՅԱՊԿ-ից, արեւմտամետ դիրքորոշումը, կարող են պատճառ հանդիսանալ, որ Ռուսաստանը հրաժարվի այդ երկրի նավթահանքերում ներդրումների նախկինում ստորագրված իր պայմանագրերից:

¹²³ Տես նույն տեղում:

¹²⁴ Տես Ա. Մարտիրոսյան, Գ. Մարտիրոսյան, Չինաստանի էներգետիկ անվտանգության..., էջ 120:

2. Գազամուղների շուրջը ընթացող միջազգային պայքարը. Արեւելյան ուղղություն

Կասպից ծովից գազի արտահանման այլընտրանքային ուղու կառուցման գաղափարը ակտիվորեն առաջ էին մղում ԱՄՆ-ը եւ Եվրամիության անդամ երկրները: Եթե ԱՄՆ-ի համար այս հարցը զուտ քաղաքական նշանակություն ուներ, այսինքն՝ թուլացնել տարածաշրջանի երկրների կախվածությունը ռուսական խողովակաշարերից, ապա Եվրամիության համար նաեւ տնտեսական խնդիր էր, քանի որ Եվրոպական գազի շուկան լուրջ կախվածություն ունի ռուսական գազի առաքումներից:

«Գազպրոմը» վերահսկում է Եվրոպական գազի շուկայի 25%-30%-ը, եւ այդ վերահսկողությունը նաեւ Կենտրոնական Ասիայի գազի շնորհիվ է, որի միակ գնորդը երկար ժամանակ միայն «Գազպրոմ» ընկերությունն էր, որը, գազը գնելով բավականին էժան, կրկնակի թանկ վաճառում էր Եվրոպային¹²⁵: 1999թ. Ադրբեյջանի Շահդենիզ հանքավայրում գազի պաշարների հաստատումից հետո պարզ դարձավ, որ Կասպից ծովի ավազանից գազամուղի կառուցումը տնտեսական հիմք է ստանում:

1999թ. ԱՄՆ-ի առեւտրի եւ զարգացման գործակալությունը 750 հազար դոլար հատկացրեց ամերիկյան «Էներոն» (Enron) ընկերությանը, որը պետք է ուսումնասիրեր Թուրքմենստանից Ադրբեյջանի տարածքով այլընտրանքային գազամուղի կառուցման հնարավորությունը¹²⁶: Հետագայում, երբ «Էներոն» ընկերությունը սնանկացավ (2001թ.¹²⁷), այս աշխատանքները ավարտեց ամերիկյան նավթային մեկ այլ հսկա՝

¹²⁵ Stu F. Umbach. Europe can defy Russia's threat to cut gas supplies (<http://www.worldreview.info/content/europe-can-defy-russia-s-threat-cut-gas-supplies>):

¹²⁶ Stu «Energy Information Administration. Caspian Sea Region», February 2002 (<http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian2.html>):

¹²⁷ Stu «1985: Founding years, Enron's dramatic expansion and rise to international prominence» (http://news.bbc.co.uk/hi/english/static/in_depth/business/2002/enron/timeline/1.stm):

«Յունոքըլ» (Unocal) ընկերությունը, որը Կենտրոնական Ասիայում աշխատանքի որոշակի փորձ արդեն ուներ:

«Յունոքըլ» ընկերությունը Սպիտակ տան ակտիվ աջակցությամբ մշակել էր Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան գազամուղի կառուցման նախագիծը¹²⁸: Այս ծրագիրը չիրականացավ, սակայն «Յունոքըլի» փորձը հետագայում օգտագործեցին արդեն Ադրբեջանով դեպի Թուրքիա նոր գազամուղի կառուցման համար, որտեղ վճռորոշ պետք է լիներ Թուրքմենստանից եւ ընդհանրապես Կենտրոնական Ասիայից հոսող գազը: 1999թ. մայիսի 21-ին Թուրքմենստանի եւ Թուրքիայի միջեւ կնքվեց համաձայնագիր, որով պաշտոնական Աշգաբադը պարտավորվում էր 30 տարվա ընթացքում Թուրքիա արտահանել տարեկան մոտ 20 մլրդ խորանարդ մետր գազ, որի մի մասը հետագայում պետք է առաքվեր դեպի Եվրոպա¹²⁹:

1999թ. նոյեմբերի 18-ին Ադրբեջանը, Վրաստանը, Թուրքիան եւ Թուրքմենստանը ստորագրեցին միջկառավարական հռչակագիր՝ ձեւավորելու համար անդրկասպյան գազամուղի կառուցման նախագիծը¹³⁰: Այս հռչակագրի համաձայն՝ գազամուղը Թուրքմենստանից Ադրբեջանի եւ Վրաստանի տարածքով պետք է ձգվեր դեպի Թուրքիա: Անդրկասպյան գազամուղը, որի երկարությունը պետք է կազմեր մոտ 2000 կմ, գնահատվում էր 2-3 մլրդ դոլար, սակայն այլ հետազոտողներ կարծում էին, որ ծրագրի ընդհանուր արժեքը կհասնի մինչեւ 9 մլրդ դոլարի¹³¹:

Բանակցությունների ընթացքում կողմերի միջեւ լուրջ խնդիրներ առաջացան: Ադրբեջանը եւ Թուրքմենստանը չէին կարողանում համա-

¹²⁸ Stu A. Pashid. Талибан: ислам, нефть и новая большая игра в Центральной Азии, часть 2, 08.01.2005 (www.centrasia.ru/newsA.php4?st=1105948320):

¹²⁹ Stu «United States Energy Information Administration. Turkey», August 2000 (<http://www.nuce.boun.edu.tr/eia.html>):

¹³⁰ Stu «Energy Information Administration. Caspian Sea Region», February 2002 (<http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian2.html>):

¹³¹ Տես նույն տեղում:

ձայնության գալ, թե որ երկիրը ինչ չափով պետք է գազ մղի դեպի նշված գազամուղը: Այս հակասությունները այն աստիճան խորացան, որ ծրագրի իրականացման հիմնական համակարգող, Եվրոպայի խոշորագույն՝ անգլո-հոլանդական «Ռոյալ Դաչ/Շել» (Royal Dutch/Shell) ընկերությունը 2000թ. հոկտեմբերին ստիպված էր նույնիսկ փակել իր գրասենյակը Աշգաբադում¹³²:

Հակասություններն առաջացան, երբ Ադրբեջանի ափամերձ տարածքում՝ Շահդենիզում հայտնաբերվեցին գազի պաշարներ, եւ եթե պաշտոնական Բաքուն սկզբում համաձայն էր, որ խողովակաշարով հոսող գազի միայն 30 տոկոսը կազմի ադրբեջանականը, ապա հետագայում պահանջեց, որ իր մասնաբաժինը հասնի մինչեւ 50 տոկոսի: Նման փոփոխությունը առաջացրեց Թուրքմենստանի նախագահի դժգոհությունը, բանակցությունները փաստորեն դադարեցին, պայմանավորվածությունները մնացին թղթի վրա:

Երբ հայտնի դարձավ, որ Շահդենիզի հանքավայրում գազի պաշարները հասնում են մոտ 1 տրիլիոն խորանարդ մետրի, Ադրբեջանը սկսեց ակտիվ բանակցություններ վարել Թուրքիայի հետ՝ գազի մատակարարման եւ նոր գազամուղի կառուցման համար: Այդ շրջանում Ադրբեջանի ղեկավարությունը համոզված էր, որ 2002-2003թթ. արդեն կհաջողվի շահագործել Շահդենիզի հանքավայրը¹³³, սակայն արդյունահանումը սկսվեց 2007թ.: Ըստ ադրբեջանցի փորձագետ Փ.Ալիզադեի՝ թուրքմենական գազից հրաժարումը ձեռնտու չէր Ադրբեջանին, քանի որ զրկվում էր միջինասիական գազը Արեւմուտք արտահանելու համար տարանցիկ երկիր դառնալու հնարավորությունից եւ դրանից բխող տնտեսական ու քաղաքական օգուտներից¹³⁴:

¹³² Տես նույն տեղում:

¹³³ Տես Փ. Ալիզադե. В России и Турции газовый праздник. Газета «Зеркало», 22 ноября 2005 г.:

¹³⁴ Տես նույն տեղում:

2001թ. հոկտեմբերին Թուրքմենստանը եւ Ադրբեջանը վերսկսեցին բանակցել գազամուղի կառուցման հարցի շուրջը¹³⁵: Մինչ այդ, նույն թվականի մարտին, Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ նոր խողովակաշարի՝ Բաքու-Էրզրում գազամուղի կառուցման համաձայնագիր էր ստորագրվել: Ադրբեջանը ցանկանում էր սեփական գազը Թուրքիա եւ Եվրոպա արտահանել՝ նվազեցնելով Թուրքմենստանի ազդեցությունը, բացի դրանից՝ համոզված էր, որ Կասպից ծովի ընդերքում գազամուղ կառուցելը քիչ հավանական է: Նման կարծիքը պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Նախ՝ գոյություն չունեւր Կասպից ծովի իրավական կարգավիճակի միջազգային պայմանագիր տարածաշրջանի երկրների միջեւ, եւ հետո՝ այս ծրագրի դեմ (ծովի հատակով գազամուղի կառուցման) հանդես էին գալիս Ռուսաստանը եւ Իրանը:

Այս կապակցությամբ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը նույնիսկ հանդես եկավ հայտարարությամբ՝ գազամուղի կառուցման ծրագիրը գնահատելով որպես «չմտածված» քայլ, որը կարող է վտանգել ծովի բնապահպանական վիճակը, եւ կոչ արեց հետաձգել նախագծի իրականացումը, մինչեւ ծովի կարգավիճակի բանակցություններն ավարտվեն¹³⁶:

Իրանը, ընդդիմանալով ծրագրին, հույս ուներ, որ կողմերը կվերադառնան Թուրքմենստան-Իրան-Թուրքիա գազամուղի կառուցման գաղափարին, ինչի շուրջը նախկինում երկարատեւ բանակցություններ են ընթացել: Ռուսաստանը դեմ էր այս նախագծին նաեւ այն պատճառով, որ ցանկանում էր իր սեփական գազը մատակարարել Թուրքիային, առաջ քաշելով «Երկնագույն հոսք»՝ Սեւ ծովի հատակով գազամուղի կառուցման ծրագիրը, որի բանակցությունները սկսվել էին դեռ 1997թ.:

Ռուսաստան-Թուրքիա մոտ 1213 կմ երկարությամբ գազամուղով (այս գազամուղի 400-կիլոմետրանոց հատվածը անցնելու էր Սեւ ծովի

¹³⁵ Stu «Energy Information Administration. Caspian Sea Region», February 2002 (<http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian2.html>):

¹³⁶ Stu *N. Lubin*. Energy Wealth, Development and Stability in Turkmenistan. «Energy, Wealth and Development in Central Asia and the Caucasus». NBR Analysis, August 1999, Vol. 10, N 3, P. 64:

հատակով) Ռուսաստանը պարտավորվել էր տարեկան 16 մլրդ խորանարդ մետր գազ մատակարարել Թուրքիային¹³⁷: Մինչև Անկարա ձգվող այս գազամուղով «Գազպրոմը» պետք է 25 տարում 365 մլրդ խորանարդ մետր գազ մատակարարի թուրքական ԲՈԹԱՍ (BOTAS)՝ գազի առաքմամբ եւ մատակարարմամբ զբաղվող ընկերությանը:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ելույթ ունենալով գազամուղի բացման արարողությանը, հայտարարեց. «Չնարավոր է նաեւ գազամուղի երկրորդ ճյուղի կառուցումը Սեւ ծովի հատակով, ինչը լրացուցիչ հնարավորություն կտա ռուսական գազը հասցնելու մինչև Իտալիա, Չարավային Եվրոպա եւ Իսրայել»¹³⁸:

Ռուսաստանը հետագայում հրաժարվեց Թուրքիայի տարածքով գազի երկրորդ ճյուղի կառուցման գաղափարից, իսկ պաշտոնական Անկարան շարունակում էր աջակցել Կասպից ծովի ավազանից իր տարածքով խողովակաշարերի կառուցմանը, մանավանդ որ 90-ական թվականների վերջին այս հարցում ուներ ԱՄՆ-ի նախագահ Բիլ Զլինթոնի վարչակազմի աջակցությունը:

Ըստ ամերիկյան որոշ հեղինակների՝ անդրկասպյան գազամուղի կառուցման հարցում ամերիկյան աջակցության դեմ ակտիվ կերպով հանդես էին գալիս Վաշինգտոնում գործող ամերիկահայկական եւ ամերիկահունական լոբբիստական կառույցները¹³⁹: Չնայած անդրկասպյան գազամուղը այն ժամանակ այդպես էլ չկառուցվեց, սակայն այդ գաղափարը մինչ օրս շրջանառվում է, եւ ԱՄՆ-ի աջակցությամբ ժամանակ առ ժամանակ բանակցությունները վերսկսվում են:

2006թ. Բաքու կատարած իր այցի ժամանակ Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդետ Սեզերը հերթական անգամ քննարկել է թուրքմենական

¹³⁷ Տե՛ս Փ. Ալիզադե. В России и Турции газовый праздник:

¹³⁸ Տե՛ս В. Кузьмин. Голубая мечта стала потоком. Владимир Путин встретился с премьер-министрами Италии и Турции. «Российская газета», Федеральный выпуск, 18 ноября 2005 г., № 3929:

¹³⁹ Տե՛ս N. Lubin. Energy Wealth, Development and Stability in Turkmenistan, P. 65:

գազը Թուրքիայի տարածքով Եվրոպա հասցնելու գաղափարը¹⁴⁰: Ըստ Սեզերի՝ արդեն կառուցված Բաքու-Էրզրում գազամուղը կնպաստի այս ծրագրի արագ իրագործմանը:

Մինչ անդրկասպյան գազամուղի կառուցման հարցի շուրջը իրավիճակը անորոշ էր, Ռուսաստանը արագորեն ձեռնամուխ եղավ նոր գազամուղի կառուցման բանակցություններին: Արդյունքները երկար սպասել չտվեցին: 2007թ. մայիսի 11-ին երեք երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի եւ Թուրքմենստանի նախագահները ստորագրեցին նոր մերձկասպյան գազամուղի կառուցման համաձայնագիրը¹⁴¹: Երեք երկրների ղեկավարներն իրենց կառավարություններին հանձնարարական տվեցին՝ մինչեւ 2007թ. սեպտեմբերի 1-ը մերձկասպյան գազամուղի կառուցման շուրջը վերջնական համաձայնության գալ եւ ստորագրել համապատասխան փաստաթուղթ:

Ըստ ստորագրված համաձայնագրի՝ կողմերը որոշել են Կասպից ծովի ափամերձ շրջանով նոր գազամուղ կառուցել, որը Թուրքմենստանից պետք է հասնի Ղազախստան եւ միանա արդեն գոյություն ունեցող Միջին Ասիա-Կենտրոն կոչվող ռուս-ղազախական գազամուղին: Բացի դրանից՝ այս համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է նորացնել դեռ 1967թ. գործող գազամուղը, որով թուրքմենական գազը հասնում է Ռուսաստան: Համաձայնագրի կնքման ժամանակ Վլադիմիր Պուտինը նաեւ հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է ոչ միայն ֆինանսավորել գազի տեղափոխման ծրագրերը, այլև ներդրումներ կատարել՝ Թուրքմենստանի մերձկասպյան շրջաններում գազի արդյունահանման ծրագրերի իրականացման համար¹⁴²:

Կենտրոնական Ասիայի գազի համար մղած պայքարում Ռուսաստանը նոր, լրացուցիչ խաղաթուղթ կարող էր ձեռք բերել հանձին

¹⁴⁰ Տես «Алиев и Сезер намерены реанимировать идею строительства Транскаспийского газопровода». ИА «REGNUM», 12.01.2006 (<http://www.regnum.ru/news/571130.html>):

¹⁴¹ Տես «Россия, Казахстан и Туркменистан договорились о строительстве прикаспийского газопровода». ИА «REGNUM», 12.05.2007 (<http://www.regnum.ru/news/826354.html>):

¹⁴² Տես *Christopher Boucek*. Maintaining Gazpromistan: ..., PP. 155-174:

մերձկասպյան գազամուղի: Հասկանալի է, որ դեպքերի նման զարգացումը ոչ մի կերպ չի կարող բավարարել անդրկասպյան գազամուղի գլխավոր հովանավորներից մեկին՝ ԱՄՆ-ին, որի ներկայացուցիչը՝ Էներգետիկայի նախարար Սամուել Բոդմանը, համաձայնագրի կնքումից 3 օր անց հայտարարեց. «Թուրքմենստանի եւ Ռուսաստանի միջեւ հնարավոր կառուցվելիք գազամուղը լավագույն որոշումը չէ Եվրոպայի համար»¹⁴³:

Եռակողմ համաձայնագիրը՝ Վլադիմիր Պուտինի, Նուրսուլթան Նազարբաևի եւ Ղուրբանդուլի Բերդիմուհամեդովի միջեւ, չէր համապատասխանում նաեւ ԵՄ-ի շահերին: Վերջինիս համար կարելու է գազի մատակարարման ուղղությունների բազմազանեցումը, այսինքն՝ գազի մատակարարման այլընտրանքային ուղղությունների ստեղծումը, ինչը հնարավորինս կկրճատի Եվրոպայի կախվածությունը ռուսական մատակարարումներից: Ռուսաստանը ապահովում է Եվրոպացիների գազի պահանջարկի 1/3-ը՝ այդպիսով Էներգետիկ լծակ ունենալով իր ձեռքում:

Թուրքմենստանում գործող քաղաքական վարչակազմի համար կապը Ռուսաստանի հետ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կարելու նշանակություն ունի, որովհետեւ թուրքմենական վարչակազմը գործում էր «Գազպրոմին» վաճառած գազից ստացվող ֆինանսների հաշվին: Այդ շրջանում ռուսական ուղղությունից հրաժարվելը թուրքմենական իշխանության համար սպառնում էր քաղաքական ու տնտեսական ճգնաժամով:

Թուրքմենստանը մինչեւ 2009թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ռուսական ուղղությամբ տարեկան արտահանում էր 40-50 մլրդ խորանարդ մետր գազ: Թուրքմենստանի նախագահ Սափարմուրադ Նիյազովի երկարատեւ բանակցություններով «Գազպրոմը» համաձայնեց 2009թ. թուրքմենական գազը ձեռք բերել 1000 խորանարդ մետրը 100 դոլարով՝ նախկին 65-ի փոխարեն¹⁴⁴: Ռուսաստանը համա-

¹⁴³ Տես «США не довольны решением о строительстве прикаспийского газопровода». ИА «REGNUM», 14.05.2007 (<http://www.regnum.ru/news/827155.html>):

¹⁴⁴ Տես *Е. Арсюхин*. Связанный одним газом. «Российская газета», 22 декабря 2006 г.:

ձայնեց գազի համար վճարել նման գին միայն այն բանից հետո, երբ Թուրքմենբաշին հրաժարվեց այլընտրանքային՝ Ռուսաստանը շրջանցող գազամուղի կառուցման ծրագրերից, այդպիսով հարվածի տակ դնելով Թուրքմենստանից ու ընդհանրապես Կենտրոնական Ասիայից Կասպից ծովի հատակով գազի արտահանման անդրկասպյան գազամուղի կառուցման նախագիծը:

Թուրքմենբաշու մահից հետո այս քաղաքականության մեջ սկզբնական շրջանում էական փոփոխություններ տեղի չունեցան, քանի որ գործող քաղաքական ռեժիմը ուղղակի կախվածություն ունի «Գազպրոմ» ընկերությունից, որը վերահսկում էր գազի առաքման հիմնական ուղին եւ հանդիսանում հիմնական ֆինանսավորողը: Այստեղ թերեւս բացառություն է չինական ուղղությունը, որի պայմանավորվածությունն ուներ դեռ նախագահ Նիյազովը: Նա ռուսական կողմին հավաստիացնում էր, որ դեպի Չինաստան գազամուղի կառուցումը ոչ մի կերպ չի անդրադառնա Ռուսաստանի եւ Թուրքմենստանի կնքած պայմանագրերի կատարմանը:

Թուրքմենբաշու սկսած գործը ավարտին հասցրեց նրա հաջորդը՝ Ղուրբանղուլի Բերդիմուլիամետովը, որը 2007թ. հուլիսին Պեկինում բազմամիլիարդանոց պայմանագիր կնքեց նոր գազամուղի կառուցման համար¹⁴⁵:

Նոր նախագծի իրականացումը նշանակում էր, որ Թուրքմենստանը կունենա առաջին ռազմավարական նշանակության գազամուղը, որը շրջանցում է Ռուսաստանը: Չինաստանի հետ Թուրքմենստանի նախագահի կնքած պայմանագիրը լրջորեն անհանգստացրել էր պաշտոնական Մոսկվային: Պայմանագրի իրականացումը կամրապնդի Աշգաբադի ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական դիրքերը: «Գազպրոմը» փաստորեն կկորցի է իր մենաշնորհը՝ Թուրքմենստանի վրա ազդելու հնարավորությունը:

¹⁴⁵ Steu A. *Габуев*. Президент Туркмении расписался за Туркменбаши на договоре с Китаем о строительстве газопровода. «Коммерсант», 19 июля 2007 г.:

2003թ. Ռուսաստանի եւ Թուրքմենստանի միջեւ կնքված պայմանագրով Ազգաբաղը պարտավորվել էր մինչեւ 2028թ. տարեկան 70-90 մլրդ խորանարդ մետր գազ մատակարարել «Գազպրոմին»: Պեկինի հետ կնքած պայմանագրով դեպի Չինաստան պետք է տարեկան հոսի 30 մլրդ խորանարդ մետր, մինչդեռ 2007թ. Թուրքմենստանի արդյունահանման հզորությունները հազիվ հասնում էին 70 մլրդ խորանարդ մետրի¹⁴⁶: Թուրքմենները այդ պայմանագրերի կատարման համար լուրջ խնդիրներ ունեն:

ԱՄՆ-ի եւ ընդհանրապես Արեւմուտքի կողմից հովանավորվող անդրկասպյան գազամուղը լուրջ հակառակորդներ ունի ոչ միայն ի դեմս Ռուսաստանի եւ Իրանի, այլեւ Չինաստանի, որի դանդաղ, բայց համառ ներխուժումը Կասպից ծովի Էներգետիկ շուկա լուրջ խնդիրներ է առաջացնում Արեւմուտքի համար: Չինաստանի ազգային նավթագազային կորպորացիան (CNPC) մի քանի տասնյակ միլիարդի ներդրումներ է կատարելու Թուրքմենստանի գազի Նորաբաց հանքերում, որտեղից էլ արդեն 2009թ. գազը հոսեց դեպի Չինաստան:

Եվրոպան փոփոխվող պայմաններում չէր կարող լուրջ ակնկալիքներ ունենալ Թուրքմենստանից գազի առաքման առումով: Բանակցություններն այդ երկրի նախագահի հետ շարունակվում են. վերջինս Արեւմուտքին հավաստիացնում է, որ ինքը ցանկանում է Ադրբեջանով գազ առաքել Եվրոպա¹⁴⁷, սակայն Ռուսաստանի եւ Չինաստանի հետ կնքած պայմանագրերը կաշկանդում են պաշտոնական Ազգաբաղի գործողությունները: Այս իրավիճակը այդ ժամանակաշրջանում, որոշակիորեն ձեռնտու էր Ադրբեջանին, որը սկսելով Շահդենիզի գազի հանքավայրի շահագործումը՝ փորձում է կազմակերպել դրա առաքումը Եվրոպա:

Ադրբեջանը փորձում է օգտագործել գազի իր պաշարները՝ դեպի Եվրոպա գազի մատակարարման հարցում Ռուսաստանին «այլընտ-

¹⁴⁶ Տես *Christopher Boucek*. Maintaining Gazpromistan: ..., PP. 155-174:

¹⁴⁷ Տես «Туркмения намерена экспортировать нефть и газ через Азербайджан и Турцию». ИА «REGNUM», 21.09.2007 (<http://www.regnum.ru/news/888463.html>):

րանք» դառնալու համար¹⁴⁸: Թեպետ Ադրբեջանը չունի համապատասխան քանակությամբ գազ, սակայն նրա համար կարելի է եվրոպական գազի շուկայում իր, թեկուզ եւ փոքր, հաստատուն մասնաբաժին ունենալ, ինչը կարող է բերել տնտեսական եւ քաղաքական օգուտներ: Սա էր պատճառը, որ Ադրբեջանը մեծ հետաքրքրություն էր դրսևորում NABUCCO նախագծի նկատմամբ:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող այս ծրագրով պետք է գազամուղ կառուցվի Միջին Արեւելքից գազը Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա առաքելու համար: Ադրբեջանի նպատակն էր միանալ այս նախագծին եւ դեպի այդ խողովակաշարն ուղղել նաեւ իր գազը: Այս գազամուղի կառուցման նախնական համաձայնագիրը ստորագրվել է 2007թ. Վիեննայում՝ Թուրքիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ռումինիայի եւ Ավստրիայի էներգետիկայի նախարարների միջեւ¹⁴⁹:

2007թ. ձմռանը «Բրիթիշ փերոլիում» եւ «Սթաթոյլ» ընկերությունները հայտարարեցին Շահդենիզից գազի արդյունահանումը սկսելու մասին¹⁵⁰: Սպասվում էր, որ շահագործման առաջին շրջանում հնարավոր կլինի օրական ստանալ մինչ 5,6 մլն խորանարդ մետր գազ: «Շահդենիզ հանքավայրի պայմանագիր» կոնսորցիումի մասնաբաժնի անդամներ են «Բրիթիշ փերոլիումը»՝ 25,5%, որը նաեւ այս կոնսորցիումի օպերատորն է, «Սթաթոյլը»՝ 25,5%, Ադրբեջանի նավթային պետական ընկերությունը՝ 10%, «Լուկոյլը»՝ 10%, «Նիկոն»՝ 10%, «Տոտալը»՝ 10% եւ ԹՊԱՕ՝ 10%¹⁵¹:

Ադրբեջանական գազը միջազգային շուկա դուրս բերելու համար կառուցվել է Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Այս գազամուղը շահագործում է «Հարավկովկասյան խողովակաշար» կոչվող ընկերու-

¹⁴⁸ Stu D. *Yergin*. The Quest: Energy, Security and the Remaking ..., P. 22:

¹⁴⁹ Stu «Строительство газопровода NABUCCO начнется в 2008 году». ИА «REGNUM», 27.06.2006 (www.regnum.ru/news/663612.html):

¹⁵⁰ Stu «BP и «Статойл» объявили о начале добычи коммерческого газа на «Шахдениз» (Азербайджан)». ИА «REGNUM» (<http://www.regnum.ru/news/>):

¹⁵¹ Stu նույն տեղում:

թյունը, որի հիմնական բաժնետերը բրիտանական «Բրիթիշ փեթրոլեումս» է, նա վերահսկում է այս ընկերության բաժնետոմսերի 25,5%-ը, նախագծի երկրորդ օպերատորը՝ «Սթաթոյլը» պատասխանատու է ծրագրի առեւտրային կողմի համար եւ նույնպես ունի բաժնետոմսերի 25,5%-ը, իսկ Ադրբեջանի Հանրապետության նավթային պետական ընկերությանը (ԱՅՆՊԸ) պատկանում է այս խողովակաշարի մասնաբաժնի միայն 10%-ը¹⁵² (2013թ. դեկտեմբերին «Սթաթոյլը» վաճառեց իր բաժնետիրերի 10%-ը «Բրիթիշ փեթրոլիումին» եւ ԱՅՆՊԸ-ին, ներկայումս ադրբեջանական ընկերությունը 16,6% բաժնեմասով երկրորդն է):

Այսպիսով՝ բրիտանական «Բրիթիշ փեթրոլիումը» եւ նորվեգական «Սթաթոյլը» վերահսկում էին ոչ միայն Շահդենիզի հանքավայրը, այլեւ այն խողովակաշարը, որով ադրբեջանական գազը պետք է հոսի դեպի Թուրքիա եւ ապա՝ Եվրոպա: Շահագործման հանձնելով հարավկովկասյան գազամուղը՝ Ադրբեջանը մտադիր է ակտիվացնել գազի առաքումը ոչ միայն Թուրքիա, այլեւ Եվրոպա եւ այս նպատակով բանակցություններ է վարում մի շարք երկրների հետ, որպեսզի նրանց տարածքով գազը հասցնի Արեւմուտք: Ծրագրի նկատմամբ հետաքրքրություն ուներ նաեւ Իսրայելը՝ փորձելով համոզել, որ հարավկովկասյան գազամուղը Երզրումից հասնի մինչեւ Ջեյհան նավահանգիստ, ինչը նրան հնարավորություն կտա օգտվելու կասպյան գազից¹⁵³:

3. «Հարավային միջանցք» նախագիծը եւ խողովակաշարային պայքարի նոր շրջանը

2011թ. հունիսի 8-ին Թուրքիայի Կայսերի քաղաքում NABUCCO ընկերության եւ 5 պետությունների՝ Ավստրիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի եւ Թուրքիայի համապատասխան գերատեսչու-

¹⁵² Stu A. Cohen. Energy Security in the Caspian Basin, PP. 109-128:

¹⁵³ Stu «Израиль стремится повысить интерес Азербайджана и Турции к продолжению газопровода Баку - Тбилиси - Эрзурум до Джейхана». ИА «REGNUM», 14.05.2007 (<http://www.regnum.ru/news/827179.html>):

թյունների միջև կնքվեց պայմանագիր, որով NABUCCO գազամուղի կառուցման ծրագիրը կարծես թե իրական ուրվագծեր էր ստանում¹⁵⁴: Հայտնի էին ոչ միայն այն պետությունները, որոնց տարածքով պետք է անցներ այդ խողովակաշարը, այլև թե որ ընկերությունները կկառուցեն գազամուղը եւ ինչ ժամանակահատվածում: Նախատեսված էր, որ մոտ 9 մլրդ եվրո արժողության խողովակաշարը կսկսի գործել 2017թ.:

NABUCCO գազամուղը մաս էր կազմում Եվրամիության Էներգետիկ Նոր ռազմավարության, որի «Հարավային միջանցք» նախագիծը եվրոպական գազի շուկան պետք է սնուցի Նոր աղբյուրներից, այդ հարցում կարելուրվում են Մերձավոր Արեւելքը եւ Կասպից ծովի ավազանը¹⁵⁵: Նախատեսվում էր, որ մինչեւ 2020թ. այս տարածաշրջաններից Եվրամիությունը կստանա իրեն անհրաժեշտ գազի 10-20%-ը:

Հարավային Կովկասով անցնող բոլոր խողովակաշարերն ընդգծված քաղաքական երանգ ունեն, ինչն ազդում է ոչ միայն այդ նախագծերին առնչվող գործընթացների, այլև ամբողջ տարածաշրջանի վրա: Այդ գործընթացների քաղաքականացման հիմնական ջատագովն Ադրբեջանն է, որը փորձում է որոշակի դիվիդենտներ շահել տարածաշրջանում եւ հատկապես դարաբաղյան հարցում իր դիրքերն ամրապնդելու համար:

Ժամանակին հնարավորինս քաղաքականացվում էր Բաքու-Ջեյհան նավթամուղը, հետագայում փորձում էին քաղաքական երանգ հաղորդել Բաքու - Էրզրում գազամուղին, իսկ ավելի ուշ՝ NABUCCO նախագծին:

Բաքվում հասկանում են, որ Կասպից ծովի ավազանից գազի առաքման հարցում Եվրամիությունն ունի Ադրբեջանի աջակցության կարիքը, եւ փորձում են շահագործել մարտավարական իրենց առավելությունը: Սակայն NABUCCO ծրագիրը ամբողջ հզորությամբ կկարո-

¹⁵⁴ Տես «Project Support Agreements to be signed on 8 June in Kayseri, Turkey» (<http://portal.nabucco-pipeline.com/portal/page/portal/en/NewsEdit/A4A2CD4575D8419CE040A8C00201776C>):

¹⁵⁵ Տես «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» (http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf):

ղանա աշխատել, եթե Կասպից ծովի հատակով կառուցվի Թուրքմենստան-Ադրբեջան գազամուղ: Այս հարցում արդեն խաչվել են Արեւմուտքի եւ Ռուսաստանի շահերը: ԱՄՆ-ը եւ Եվրամիությունը զբաղվում են անդրկասպյան գազամուղի կառուցման լոբբինգով՝ այս հարցում բազմաթիվ հանդիպումներ անցկացնելով Բաքվում եւ Աշգաբադում:

2011թ. հունվարի 13-ին Եվրահանձնաժողովի եւ Ադրբեջանի նախագահներ ժոզե Մանուել Բարոզուն եւ Իլհամ Ալիևը ստորագրեցին հռչակագիր՝ աջակցություն հայտնելով «Չարավային միջանցք» նախագծին¹⁵⁶: Այս գործընթացին ի պատասխան՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության Եվրասիայի Էներգետիկ հարցերով հատուկ ներկայացուցիչ Ռիչարդ Մորնինգսթարը հայտարարեց, որ ծովի հատակով գազամուղի կառուցման համար բավարար է միայն Ադրբեջանի եւ Թուրքմենստանի համաձայնությունը¹⁵⁷:

Այսինքն՝ NABUCCO նախագիծը, դեռ չիրականացած, արդեն լարվածության տարրեր էր պարունակում. պատճառը ծովի հատակով խողովակաշարի կառուցման հարցն է եւ այդ խնդրում ավամերձ մյուս երկրների վերաբերմունքը: ԱՄՆ-ը եւ Եվրամիությունը, Ադրբեջանին եւ Թուրքմենստանին խրախուսելով անդրկասպյան գազամուղը կառուցելու, փաստորեն հրահրում են նոր առճակատում, որին արդեն հասցրել է արձագանքել Ռուսաստանը՝ 2011թ. մայիսին հայտարարելով Կասպից ծովում իր ռազմական նավատորմի իզորացման մասին¹⁵⁸: Ռուսաստանի փոխվարչապետ Սերգեյ Իվանովը հայտարարեց, որ Ռուսաստանը կասպյան նավատորմը կհամալրի 16 նոր նավերով, հրթիռակիրներով, կուժեղացվի նաեւ ծովի օդուժը: Ռուսաստանը Կասպից ծովում տիրապետում է ամենամեծ ռազմածովային ուժին, հե-

¹⁵⁶ Տես «Joint Declaration on the Southern Gas Corridor» (http://ec.europa.eu/energy/infrastructure/strategy/doc/2011_01_13_joint_declaration_southern_corridor.pdf):

¹⁵⁷ Տես «США поддерживают идею Транскаспийского газопровода, Ричард Морнингстар», 16 ноября, 2011 (<http://www.kursiv.kz/1195216143-ssha-podderzhivayut-ideyu-transkaspiskogo-gazoprovoda-richard-morningstar.html>):

¹⁵⁸ Տես С. Расов. Милитаризация Каспия продолжается, 26.04.2012 (<http://www.ru.journal-neo.com/node/15737>):

տեւաբար դրա նոր հզորացման միտումը կարելի է գնահատել որպէս ռազմական նոր մրցակցության սկիզբ եւ պատասխան Արեւմուտքի՝ ծովի հատակով գազամուղ կառուցելու փորձերին:

4. Անդրկասպյան գազամուղի համար սրվող պայքարի նոր շրջանը եւ միջպետական հարաբերությունները

Դեպի Եվրոպա գազի առաքման հարցի շուրջը առկա տարածայնությունները հանգեցնում էին NABUCCO գազամուղի կառուցման աշխատանքների հետաձգմանը, լարում հարաբերությունները Եվրամիության եւ Ռուսաստանի միջեւ:

Պաշտոնական Մոսկվայի կոշտ դիրքորոշմանը հետեւել է Եվրահանձնաժողովի Էներգետիկ հարցերով հանձնակատար Գյունտեր Օթինգերի պատասխանը, որ Եվրամիությունն այսօր խոսում է «մեկ ձայնով», եւ որ նա գազամուղի կառուցման կողմ է¹⁵⁹: Օթինգերի այս պատասխանից շատ չանցած՝ Եվրամիության մայրաքաղաքներում սկսվել է «Գազպրոմի» եւ նրա դուստր ձեռնարկությունների գրասենյակների խուզարկում¹⁶⁰:

Թուրքմենստանը, որ գազի պաշարներով աշխարհում 4-րդ երկիրն է, Էներգակիրների արտահանման եւ վաճառքի լուրջ խնդիրներ ունի: Եթէ դեռ 2009թ. ռուսական «Գազպրոմը» տարեկան 40 մլրդ խմ գազ էր գնում Թուրքմենստանից, ապա 2010թ. սկսած այդ ցուցանիշը, պայմանավորված համաշխարհային ֆինանսական ճգնաժամով եւ Եվրոպայում գազի սպառման ծավալների անկումով, նվազել է մինչեւ

¹⁵⁹ Տես «Iran, Russia oppose cross-border», September 20, 2011 (<http://menasassociates.blogspot.com/2011/09/iran-russia-oppose-cross-border.html>):

¹⁶⁰ Տես «Россия и Запад начали битву за Каспий». ИА «REGNUM», 17.10.2011 (<http://www.regnum.ru/news/1456528.html>):

10 մլրդ խորանարդ մետրի¹⁶¹: Թուրքմենստանը գազ է առաքում նաև դեպի Իրան՝ 5 մլրդ խմ, եւ Չինաստան՝ 27 մլրդ խմ տարեկան¹⁶²:

Թուրքմենստանի արտահանման հնարավորությունները առնվազն 2 անգամ ավելի են, եւ այդ թիվը հետագայում նույնպես կարող է աճել: Այսինքն՝ Թուրքմենստանին պետք է եվրոպական գազի շուկան, որն աշխարհում ամենամեծերից մեկն է, եւ Աշգաբադը ցանկանում է այդպիսով լուծել իր համար ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ դուրս գալ դեռ նախկին նախագահ Սափարմուրադ Նիյազովի ժամանակ սկսված միջազգային-քաղաքական մեկուսացումից եւ ընդունելի ու լեգիտիմ լինել Արեւմուտքի համար:

Ստեղծված իրավիճակը պաշտոնական Աշգաբադին հնարավորություն էր տալիս լայն կապեր հաստատելու Արեւմուտքի հետ, ինչը նախկինում չէր հաջողվում, քանի որ թուրքմենական քաղաքական ռեժիմը Արեւմուտքում ընկալվում էր որպես բռնատիրական: Փոփոխվող քաղաքական իրավիճակը եւ Եվրոպայի Էներգետիկ կարիքները բավարարելու Թուրքմենստանի հնարավորությունները ներկա իշխանություններին թույլ են տալիս փոխել իրենց իմիջի միջազգային ընկալումները եւ դառնալ ավելի ընդունելի Արեւմուտքի համար, ինչը կարող է նոր ներդրումներ ապահովել տնտեսության Էներգետիկ հատվածում:

Էներգետիկ ոլորտի եկամուտները Թուրքմենստանի իշխանություններին հնարավորություն են տալիս ոչ միայն ամրացնելու իրենց դիրքերը երկրի ներսում, այլեւ դուրս գալու ներկա լուսանցքային վիճակից եւ «կարելորդ» դեր ստանձնելու Եվրոպայի Էներգետիկ անվտանգության համակարգում:

2011թ. սեպտեմբերի 18-ին այդ երկրի արտգործնախարարության տարածած հայտարարությունը Ռուսաստանին մեղադրում է Թուրքմենստան-Ադրբեյջան գազամուղի կառուցմանը խոչընդոտելու փորձի

¹⁶¹ Տե՛ս *А. Гривач*. Визит был полезным. Россия и Туркменистан остались по газу при своих. «Время новостей», 25.10.2010 (<http://www.centrasia.ru/newsA.php?st=1287984360>):

¹⁶² Տե՛ս «BP Statistical Review of World Energy», June 2014 (<http://bp.com/statisticalreview>):

մեջ եւ կոչ անում սկսելու բաց երկխոսություն՝ առկա խնդիրները հարթելու համար¹⁶³: Այդ հայտարարությունում ոչինչ չի ասվում Իրանի մասին, որը նույնպես դեմ է ծովի հատակով գազամուղի կառուցմանը:

Թուրքմենստանի ԱԳՆ-ի հայտարարությունը հրապարակվեց Բաքու եւ Ազգաբաղ Ավստրիայի Նախագահ Յայնգ Ֆիշերի այցից հետո¹⁶⁴: Ավստրիան NABUCCO Նախագծի գլխավոր հովանավորներից էր եւ տարածաշրջանի երկրներին ակտիվորեն մղում էր դեպի վերը նշված ծրագրի իրականացմանը: Պաշտոնական Վիեննան հետաքրքրված էր այդ Նախագծով, քանի որ NABUCCO գազամուղի վերջնակետը լինելու է հենց Ավստրիան: Իսկ NABUCCO-ն Եվրամիության Էներգետիկ Նոր ռազմավարության «Յարավային հոսք» Նախագծի առանցքային ծրագրերից մեկն է, որը պետք է թուլացնի Եվրամիության կախվածությունը ռուսական գազից:

Լարվող քաղաքական իրավիճակում պարզորոշ ուրվագծվում էր Կասպից ծովի շուրջը բաժանարար Նոր առանցքի ձեւավորումը, որի մի կողմում Ռուսաստանն ու Իրանն են, իսկ մյուսում՝ Ադրբեջանն ու Թուրքմենստանը: Որոշակի չեզոքություն է պահպանում Ղազախստանը, որը թեեւ շահագրգռված է ծրագրի իրականացմամբ, սակայն չի ցանկանում բարդացնել հարաբերությունները ո՛չ Ռուսաստանի, ո՛չ էլ Իրանի հետ:

ԱՄՆ-ը եւ Եվրամիությունը շարունակում են իրենց քաղաքական գիծը առաջ տանել՝ պնդելով, որ գազամուղի կառուցումն ինքնիշխան երկու պետությունների՝ Ադրբեջանի եւ Թուրքմենստանի իրավունքն է: Սակայն վերջիններս քայլեր չէին իրականացնի ընդդեմ Ռուսաստանի եւ Իրանի՝ չունենալով Բրյուսելի եւ Վաշինգտոնի ամբողջական աջակցությունը:

¹⁶³ Stu «Туркмения обвинила Россию в неадекватности и промолчала об Иране: Ашхабад открыл «газовые» карты». ИА «REGNUM», 19.10.2011 (<http://www.regnum.ru/news/1457464.html>):

¹⁶⁴ Stu «Баку - Ашхабад: президент Австрии совершает турне по маршруту NABUCCO». ИА «REGNUM», 12.10.2011 (<http://www.regnum.ru/news/1455184.html>):

Իրավիճակը սրվեց, երբ 2011թ. սեպտեմբերի 12-ին Եվրամիությունը լիազորեց Եվրահանձնաժողովին՝ իր անունից բանակցություններ սկսել Թուրքմենստանի եւ Ադրբեջանի հետ Կասպից ծովի հատակով անդրկասպյան գազամուղի կառուցման հարցով¹⁶⁵: Եվրամիությունը այդ որոշումը ընդունեց նախօրեին Եվրահանձնաժողովի մեկ այլ՝ «ԵՄ-ի Էներգետիկ քաղաքականություն. արտասահմանյան գործընկերների ներգրավում»¹⁶⁶ որոշման շրջանակներում, որի համաձայն՝ Եվրոպան պետք է ակտիվացնի իր գործունեությունը Էներգետիկ համագործակցության բնագավառում նոր գործընկերներ ձեռք բերելու եւ այլ աղբյուրներից օգտվելու համար:

Եվրամիության որոշումը՝ Եվրահանձնաժողովին լիազորել միջնորդելու այդ երկու երկրների միջեւ բանակցություններ սկսելու համար, ոչ միանշանակ է ընդունվել տարածաշրջանում: Եթե Թուրքմենստանի եւ Ադրբեջանի դրական արձագանքին է արժանացել, ապա Ռուսաստանը եւ Իրանը, ինչպես եւ սպասվում էր, դժգոհություն են հայտնել: Մասնավորապես՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը իր հայտարարության մեջ զարմանք է հայտնել, որ դեպի Կասպից ծով ելք չունեցող միության ղեկավարությունը որոշել է միջնորդել մերձկասպյան երկու երկրների բանակցային գործընթացում¹⁶⁷:

Մոսկվայում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մահմուդ Ռեզա Սաջադին հայտարարել է. «Իրանը հասկանում է Ռուսաստանի անհանգստությունը Կասպից ծովում գազամուղ կառուցելու Եվ-

¹⁶⁵ Տես «EU starts negotiations on Caspian pipeline to bring gas to Europe». European Commission - Press release (<http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=IP/11/1023&format=HTML&aged=0&language=EN&guiLanguage=en>):

¹⁶⁶ Տես «Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions. On security of energy supply and international cooperation». «The EU Energy Policy: Engaging with Partners beyond Our Borders». European Commission. Brussels, 7.9.2011 (http://ec.europa.eu/energy/international/security_of_supply/doc/com_2011_0539.pdf):

¹⁶⁷ Տես «Брифинг официального представителя МИД России А. К. Лукашевича», 13 октября 2011 (http://www.mid.ru/brp_4.nsf/briefview/910E04B6F6CE1305C3257928003971EA):

րամիության ծրագրերից»¹⁶⁸: Չնայած Ռուսաստանի եւ Իրանի կոշտ դիրքորոշմանը՝ Եվրամիությունը հաստատակամ էր իր որոշման մեջ, եւ սպասվում էր, որ արդեն 2011թ. հոկտեմբերին Եվրոպայի միջնորդությամբ Թուրքմենստանի եւ Ադրբեջանի միջեւ կսկսվեն բանակցություններ անդրկասպյան գազամուղի կառուցման հարցով: Ադրբեջանում Եվրամիության ներկայացուցիչ Ռուլան Կոբիան Gas Infrastructure World Caspian-2011 միջազգային համաժողովում հայտարարել է. «Այդ խողովակաշարը կանցնի Թուրքմենստանի եւ Ադրբեջանի ջրային տարածքներով, եւ միայն այդ երկրներն ու Եվրամիությունը կարող են պարզություն մտցնել գազամուղի կառուցման հարցում»¹⁶⁹:

Կասպից ծովում Եվրամիության ակտիվությունն էլ ավելի է լարում իրավիճակը՝ պայքարի մեջ ներքաշելով նաեւ ոչ ավամերձ պետություններ ԱՄՆ-ին ու Չինաստանին, որոնք այս հարցում ունեն հակադիր կարծիքներ: Լարվածությունը կողմերին թույլ չի տա Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակի շուրջը երկու տասնամյակից ավելի տեւող բանակցություններում ընդհանուր հայտարարի գալ:

5. Նոր դիմակայություն Եվրամիություն-Ռուսաստան Էներգետիկ հարաբերություններում

Առիթ ունեցել ենք նշելու, որ անդրկասպյան գազամուղի կառուցման հարցի զարգացումներից լարվածությունը Կասպից ծովում ավելի կսրվի: 2011թ. սեպտեմբերին անդրկասպյան գազամուղի շուրջը տեղի ունեցող զարգացումները հաստատում են, որ դիմակայությունը ոչ միայն աճում էր, այլեւ ձեռք էր բերում նոր երանգներ: Այս պայմաններում

¹⁶⁸ Stu «Islamic Republic News Agency reported that Iran is opposed to the European Union's attempts to transfer energy resources from the Caspian Sea to Western countries» (http://www.steelguru.com/middle_east_news/Iran_opposes_transfer_energy_resources_by_EU_from_Caspian_Sea/225950.html):

¹⁶⁹ Stu «Евросоюз призвал Россию и Иран «не создавать ажиотаж» вокруг Транскаспийского газопровода». ИА «REGNUM», 21.09.2011 (<http://www.regnum.ru/news/1447668.html>):

րում Ռուսաստանի համար ռազմավարական նշանակություն են ստանում դեպի Եվրոպա գազի առաքման նոր, այլընտրանքային ուղիների նախագծումը եւ իրականացումը:

2011թ. սեպտեմբերի 6-ին ռուսական գազի մենաշնորհատեր «Գազպրոմ» ընկերությունը հայտարարեց Բալթիկ ծովի հատակով Ռուսաստան-Գերմանիա «Յյուսիսային հոսք» (Nord Stream) կոչվող գազամուղի առաջին ճյուղի աշխատանքների ավարտի մասին¹⁷⁰: Այդ գազամուղը ռազմավարական նշանակություն ունի Ռուսաստանի համար, քանի որ շրջանցում է Ուկրաինան եւ թուլացնում կախվածությունը ուկրաինական տարանցումից, ինչպես նաեւ գազի առաքման սակագնի վերաբերյալ Ռուսաստան-Ուկրաինա անվերջանալի թվացող վեճերից:

2011թ. սեպտեմբերի 6-ից սկսվեց խողովակաշարը տեխնիկական գազով լցնելու գործընթացը, ինչը ավարտվեց 4 շաբաթից, իսկ գազամուղի առաջին հատվածը ողջ հզորությամբ սկսեց գործել նույն թվականի հոկտեմբերից: Այդ ժամանակ մոտ 60 տոկոսով պատրաստ էր նաեւ Nord Stream-ի 2-րդ գիծը, որի շահագործումը Ռուսաստանին հնարավորություն կտա տարեկան մինչեւ 55 մլրդ խորանարդ մետր գազ առաքելու Գերմանիա¹⁷¹: Հիշեցնենք՝ գազամուղի հիմնական բաժնետերերն են «Գազպրոմ» ընկերությունը՝ 51% մասնաբաժնով, գերմանական E.ON Ruhrgas եւ BASF-Wintershall ընկերությունները յուրաքանչյուրը՝ 15,5%, 9-ական տոկոս ունեն հոլանդական Gasunie եւ ֆրանսիական Gaz de France Suez ընկերությունները¹⁷² (սկար 5):

Ելույթ ունենալով գազամուղի բացման արարողության ժամանակ՝ Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը շեշտեց. «Այսպիսով մենք ազատվում ենք տարանցման երկրների թելադրանքից»¹⁷³: Պու-

¹⁷⁰ Տես «Russia's Putin launches Nord Stream pipeline». Topic: Nord Stream pipeline project, «RIA Novosti», 06.09.2011 (<http://en.rian.ru/russia/20110906/166471821.html>):

¹⁷¹ Տես նույն տեղում:

¹⁷² Տես նույն տեղում:

¹⁷³ Տես ««Газпром» начал заполнение газом Северного потока», 06 сентября 2011 (<http://gorod48.ru/news/47584/>):

տինը հատկապես նկատի ունեն Ուկրաինան, որը, ըստ ռուս փորձագետների, փորձում է չարաշահել տարանցման իր մենաշնորհը գազի գնի շուրջը Ռուսաստանի հետ տարվող բանակցություններում (դեպի Եվրոպա ռուսական գազի տարանցման 80%-ը՝ մոտ 100-120 մլրդ խմ տարեկան, բաժին է ընկնում ուկրաինական ուղղությանը):

2011թ. նոյեմբերի 8-ին արդեն Գերմանիայում, մասնակցությամբ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի, Ֆրանսիայի և Նիդեռլանդների վարչապետների, ինչպես նաև Եվրամիության Էներգետիկ հարցերով հանձնակատար Գյունտեր Օթինգերի, տեղի ունեցավ Nord Stream խողովակաշարի պաշտոնական գործարկման երկրորդ արարողությունը: 1224 կմ երկարությամբ խողովակաշարը, որի մի հատվածը անցնում է Բալթիկ ծովի հատակով, ամբողջ հզորությամբ սկսեց գործել 2012թ.՝ դեպի Գերմանիա տարեկան մղելով մինչև 55 մլրդ խմ գազ: Խողովակաշարը նախատեսված է 50 տարվա անընդմեջ աշխատանքի համար¹⁷⁴:

«Յյուսիսային հոսքի» առաջին հատվածի գործարկման մասին հայտարարությունից անմիջապես հետո պաշտոնական Մոսկվան ձեռնամուխ եղավ կնքելու «Չարավային հոսք» (South Stream) գազամուղի կառուցման պայմանագրերը:

Այսպիսով՝ «Չարավային հոսքում» «Գազպրոմը» շարունակում է տիրապետել բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթի 50%-ին, իտալական ENI-ն՝ 20%, գերմանական Wintershall Holding-ը և ֆրանսիական EDF-ը՝ 15-ական %¹⁷⁵: Եվրոպական այդ ընկերությունների մուտքը ռուսական այս նախագիծ վկայում է, որ South Stream-ը Nord Stream-ի կառուցումից հետո ավելի իրական էր դառնում և վայելում է եվրոպական խոշոր Էներգետիկ ընկերությունների աջակցությունը: Բացի դրանից՝ «Չարավային» և «Յյուսիսային» հոսքերի նախագծերի իրականացման

¹⁷⁴ Տես «Nord Stream Pipeline Inaugurated - Major Milestone for European Energy Security» (<http://www.nord-stream.com/press-info/press-releases/nord-stream-pipeline-inaugurated-major-milestone-for-european-energy-security-388/>):

¹⁷⁵ Տես «В Южный поток вошли новые акционеры из Германии и Франции», 16.09.2011 (<http://www.gazprom.ru/press/news/2011/september/article119253/>):

դեպքում Ռուսաստանը կկարողանա տարեկան մինչեւ 115 մլրդ խմ գազ առաքել դեպի Եվրոպա՝ կտրուկ նվազեցնելով Ուկրաինայի եւ Բելառուսի տարածքով իր առաքումների ծավալները՝ վերջիններիս զրկելով ոչ միայն Էներգետիկ նշանակության լծակներից, այլեւ եկամուտներից:

Ռուսաստանը դեպի Եվրոպա գազի առաքման հարցում շարունակում է իր ռազմավարությունը՝ դուրս մղելով միջնորդ երկրներին եւ բարձրացնելով Էներգետիկ առաքումների անվտանգությունը: Ռուսաստանի այս քայլերը, սակայն չեն փոխում Եվրամիության Էներգետիկ նոր ռազմավարության սկզբունքները, որոնց հիմքում այլընտրանքային, նոր աղբյուրից սնվող գազամուղի կառուցման տրամաբանությունն է: Այսինքն՝ անհիմաստ է ակնկալելը, թե NABUCCO գազամուղը կամ դրան փոխարինող մեկ այլ խողովակաշար չի կառուցվի ընդհանրապես, քանի որ Եվրամիությունը քայլեր էր ձեռնարկում ոչ միայն այդ գազամուղի, այլեւ Թուրքմենստանի եւ Ադրբեջանի միջեւ Կասպից ծովի հատակով խողովակաշարի կառուցման համար:

Ինչպես նշել ենք, 2011թ. սեպտեմբերի 12-ին Եվրամիությունը լիազորեց Եվրահանձնաժողովին՝ իր անունից բանակցություններ սկսելու Թուրքմենստանի եւ Ադրբեջանի հետ՝ Կասպից ծովի ընդերքով գազամուղի կառուցման հարցով: Այս որոշման կապակցությամբ Ռուսաստանի արտգործնախարարությունը հիշեցրել է, որ 2010թ. հոկտեմբերի 16-ին ափամերձ երկրների միջեւ ստորագրված համատեղ հռչակագրում շեշտվում է. «Կասպից ծովի հետ կապված բոլոր հիմնական որոշումներն ընդունվում են բացառապես ափամերձ հինգ երկրների համատեղ պայմանագրերով»¹⁷⁶: Իրանի դիրքորոշումը, ինչպես եւ սպասվում էր, ամբողջովին համընկնում է Ռուսաստանի դիրքորոշմանը:

Պաշտոնական Մոսկվայի եւ Բրյուսելի միջեւ ձեւավորվում է հարաբերությունների մի ձեւաչափ, երբ Եվրոպան ամեն կերպ ձգտում է ա-

¹⁷⁶ Ств «МИД РФ удивило решение ЕС по Каспию, «к берегам которого ни одно из государств ЕС не выходит». ИА «REGNUM», 13.09.2011 (<http://www.regnum.ru/news/fd-abroad/georgia/1445027.html>):

գատվել ռուսական էներգետիկ կախվածությունից, իսկ Ռուսաստանը ցանկանում է դա պահպանել: Այս պայմաններում երկկողմ հարաբերությունները լարվում են ոչ միայն Եվրոպայի գազի շուկայում, որտեղ ցանկանում են թուլացնել Ռուսաստանի դիրքերը, այլև Կենտրոնական Ասիայում, որտեղ ցանկանում է իր դիրքերը ուժեղացնել Եվրամիությունը՝ ունենալով ԱՄՆ-ի աջակցությունը:

6. Եվրամիության էներգետիկ սոր ռազմավարությունը եւ դրա ազդեցությունը տարածաշրջանի երկրների վրա

Եվրամիությունը մշակել է էներգետիկ սոր ռազմավարություն, որի նպատակն է՝ ձեւավորել Եվրոպայի էներգետիկ միասնական շուկա, ինչի առկայությամբ Եվրահանձնաժողովը կկարողանա էներգակիրներ մատակարարող երկրների հետ բանակցություններ վարել ամբողջ Եվրոպայի անունից: Սոր համաեվրոպական էներգետիկ ռազմավարության եւ ընդհանուր քաղաքականության մշակումները սկսվել են դեռ 2006թ., եւ արդեն հայտնի են այն հիմնական սկզբունքները, որոնք կձեւավորեն Եվրոպական ընդհանուր էներգետիկ շուկան ու սոր քաղաքականությունը ամբողջ աշխարհում:

Այս ռազմավարության համար հիմք են ծառայել դեռ 2010թ. նոյեմբերին Եվրախորհրդի ընդունած «Էներգետիկա՝ 2020: Մրցունակ, կայուն եւ անվտանգ էներգիայի ռազմավարություն» (Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy)¹⁷⁷ եւ «Էներգետիկ ենթակառուցվածքի առաջնահերթությունները 2020թ. եւ հետո - միասնական Եվրոպայի էներգետիկ ցանցի նախագիծ» (Energy Infrastructure priorities for 2020 and beyond - A Blueprint for an integrated European energy network)¹⁷⁸ որոշումները, սրանք էլ իրենց հերթին

¹⁷⁷ Տես «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» (http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf):

¹⁷⁸ Տես «Priorities for 2020 and beyond — a blueprint for an integrated european energy network» (http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy_infrastructure_en.pdf):

հիմք են ծառայել «Էներգետիկա-ճանապարհային քարտեզ 2050» փաստաթղթի ձեւավորմանը: Այս փաստաթղթերը Եվրամիության Էներգետիկ նոր ռազմավարության եւ մարտավարության հիմնական ուղղություններն են, որոնց հիման վրա Եվրամիությունը ձեւավորելու է իր քաղաքականությունը Էներգետիկ ոլորտում մոտակա 10 տարիների համար: Ըստ այս փաստաթղթերի՝ պաշտոնական Բոյուսելը կարելորում է.

- Էներգաարդյունավետ Եվրոպայի ստեղծումը,
- համաեվրոպական Էներգետիկ շուկայի ձեւավորումը,
- գնորդների դիրքերի ուժեղացմամբ անվտանգության եւ հուսալիության բարձր մակարդակի հասնելը,
- Էներգետիկ տեխնոլոգիաների եւ ինովացիաների բնագավառում Եվրոպայի դիրքերի ուժեղացումը,
- ԵՄ-ի Էներգետիկ շուկայի արտաքին բաղադրիչի չափման ուժեղացումը:

Եվրամիությունը նշված բոլոր կետերով մշակել է գործողությունների մանրակրկիտ ծրագրեր:

«Էներգետիկ ենթակառուցվածքի առաջնահերթությունները 2020թ. եւ հետո - միասնական Եվրոպայի Էներգետիկ ցանցի նախագիծ» փաստաթղթում մանրամասն ներկայացված են ներեվրոպական Էներգետիկ ռազմավարության հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ Եվրոպական Էներգետիկ ընդհանուր շուկայի ձեւավորմանը եւ Էներգետիկ անվտանգության նոր համակարգի ձեւավորմանը (Energy Security and Infrastructure Instrument) ուղղված քայլերը¹⁷⁹:

Այս փաստաթղթի ընդունմամբ կփոխարինվի մինչ օրս գործող Զամաեվրոպական Էներգետիկ ցանցի (Trans-European energy network - TEN) նախագիծը, որով նախատեսված էր մոտ 300 ծրագրի իրականացում: Նոր նախագծով նախատեսվում է առաջնությունը տալ մի շարք ծրագրերի, որոնք կբազմազանեցնեն ոչ միայն Էներգակիրների մա-

¹⁷⁹ Տես «European Energy Infrastructure Package» (http://ec.europa.eu/governance/impact/planned_ia/docs/19_ener_energy_infrastructure_package_en.pdf):

տակարարման ուղիները, այլեւ աղբյուրները: Մասնավորապես՝ Եվրոպա գազի մատակարարման հիմնական 3 աղբյուրներին՝ Ռուսաստան, Նորվեգիա, Ալժիր, առաջարկվում է ավելացնել այսպես կոչված «Հարավային միջանցք» ծրագիրը:

Գազի մատակարարման հարցում Նոր այլընտրանքային ուղու ստեղծման որոշում Եվրոպական խորհուրդը ընդունեց 2010թ. դեկտեմբերի 2-ին: Այս որոշմամբ մասնավորապես պահանջվում էր, որ ԵՄ-ի անդամ բոլոր երկրները գազի ներմուծման հարցում ունենան այլընտրանքային աղբյուրներ:

«Հարավային միջանցքի» գաղափարը Եվրահանձնաժողովը բացատրում է հետեւյալ կերպ. Եվրոպական էներգետիկ շուկան ուղղակիորեն պետք է կապվի Կասպից ծովի ավազանի եւ Մերձավոր Արեւելքի գազի աղբյուրներին: Նախատեսվում է, որ մինչեւ 2020թ. «Հարավային միջանցքը» կապահովի ԵՄ-ի գազի պահանջարկի 10%-20%-ը՝ մոտ 45-90 մլրդ խորանարդ մետր գազ:

Ըստ Եվրոպական Նոր ռազմավարության՝ «Հարավային միջանցքի» շրջանակներում դիտարկվում են հետեւյալ նախագծերը՝ NABUCCO (Թուրքիա-Բուլղարիա-Ռումինիա-Հունգարիա-Ավստրիա), ITGI (Թուրքիա-Հունաստան-Իտալիա), TAP (Հունաստան-Ալբանիա-Ադրիատիկ ծով-Իտալիա), White Stream (Վրաստան-Սեւ ծով-Ուկրաինա-Ռումինիա): Այս նախագծերից առաջնությունը տրվում էր NABUCCO եւ ITGI ծրագրերին, որոնց Նույնիսկ տրվել է «Եվրոպական հետաքրքրությունների» հատուկ կարգավիճակ:

Այս ծրագրերը Նույնիսկ նախնական ֆինանսական աջակցություն էին ստացել Եվրամիության կողմից վերականգնողական էներգետիկայի ծրագրի շրջանակներում (Energy Recovery Plan), որը ընդունվել էր դեռ 2009թ.¹⁸⁰: NABUCCO ծրագիրն առաջ մղելու համար 2009թ. Եվրահանձնաժողովը կնքեց միջազգային պայմանագիր 50 տարով, որով տարանցման եւ ներդրումների համար համապատասխան երաշխիքներ ու գրավչություն էին տրվում նախագծին:

¹⁸⁰ Տես «European Energy Programme for Recovery» (http://ec.europa.eu/energy/eepri/index_en.htm):

Բացի այդ ծրագրերից՝ տարածաշրջանի երկրները քննարկում են գազի մատակարարման այլընտրանքային ծրագրեր, մասնավորապես՝ 2010թ. սեպտեմբերի 14-ին Բաքվում Ռումինիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Տրայան Բասեսկուն, Միխեիլ Սաակաշվիլին եւ Իլհամ Ալիևը, ինչպես նաեւ Յունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբան ստորագրել են համաձայնագիր, որով քաղաքական աջակցություն են հայտնել AGRI (Azerbaijan-Georgia-Romania Interconnector) ծրագրին¹⁸¹: Այս նախագծի համաձայն՝ ադրբեջանական գազը Վրաստանի նավահանգիստներում պետք է վերածվի հեղուկ վիճակի եւ նավերով տեղափոխվի ռումինական Կոնստանցա նավահանգիստ, որտեղ նորից պետք է վերածվի գազային վիճակի ու մղվի գազամուղ՝ մատակարարելու Ռումինիային եւ Յունգարիային:

Սակայն ԵՄ-ի համար ռազմավարական նշանակություն ուներ NABUCCO նախագծին անդրկասպյան գազամուղի միանալու հարցը, քանի որ միայն այդ դեպքում «Յարավային միջանցքը» կսկսեր մասամբ գործել: Իրանից եւ Իրաքից գազի մատակարարման խնդիրը ավելի բարդ է՝ հաշվի առնելով այդ երկրներում ընթացող զարգացումները եւ հարաբերությունները Արեւմուտքի հետ:

Կասպից ծովի հատակով Թուրքմենստան-Ադրբեջան գազամուղի կառուցումը զգալիորեն կավելացնի Ադրբեջանի ռազմավարական ներուժը: Տարածաշրջանում գործող եւ նախագծվող ոչ մի խողովակաշար չի ունենա քաղաքական այնպիսի ազդեցություն, ինչպիսին անդրկասպյան գազամուղը, ինչը պաշտոնական Բաքվին հնարավորություն կտա ազդեցություն ձեռք բերելու երկու տարածաշրջանում՝ Եվրամիությունում եւ Կենտրոնական Ասիայում:

Ինչպես նշել ենք, այս նախագծին դեմ են Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը, որոնք պատրաստ են խոչընդոտելու անդրկասպյան գազամուղի կառուցմանը՝ սեփական շահերից ելնելով:

Չինաստանը, որը նոր է մուտք գործել այդ տարածաշրջանի հումքային շուկա, հանձին եվրոպական շուկայի կունենա շատ լուրջ մրցա-

¹⁸¹ Stu «Azerbaijan-Georgia-Romania-Hungary Interconnector or the necessary LNG project within the Southern Corridor» (<http://www.agrilng.com/agrilng/Home/Istoric>):

կից, հետեւաբար շահագրգռված է ամեն գնով խոչընդոտելու Կասպից ծովի հատակով գազամուղի կառուցմանը:

Իրանը կարեւորում է Կասպից ծովի ավազանում իր ազդեցության պահպանումը եւ նմանատիպ նախագծերը ընկալում է որպէս իր կենսական շահերի նկատմամբ ոտնձգություն, առավել եւս, որ դրանցում ներգրավված են ոչ հարեւան երկրները:

Եվրամիության համար կենսական նշանակություն է ստացել Ռուսաստանից իր էներգետիկ կախվածությունը թուլացնելը, հետեւաբար շարունակելու է ներդրումները թերթաքարային գազի հետախուզման եւ արդյունահանման գործում՝ շարունակելով անդրկասպյան գազամուղի նախագծի իրականացման աշխատանքները:

7. Ադրբեջանա-թուրքական նոր գազամուղը. TANAP-ի սկիզբը եւ NABUCCO-ի ավարտը

2011թ. սեպտեմբերի 25-ին Թուրքիայում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի ներկայությամբ կնքվեց ադրբեջանական գազի տարանցման եւ գնման պայմանագիր: Պայմանագիրը կնքեցին Ադրբեջանի նավթի պետական ընկերության (SOCAR) նախագահ Ռովնագ Աբդուլաեւը եւ Թուրքիայի պետական նավթային ընկերության (BOTAS) նախագահ Ֆազիլ Շենելը: Իսկ ադրբեջանական գազի տարանցման պայմանագիրը թուրքական BOTAS ընկերության հետ կնքեց Ադրբեջանում գործող BP Exploration (Shah-deniz) Ltd-ի նախագահ Ռաշիդ Ջաֆանշիրը: Էներգետիկ համագործակցության երկկողմ պայմանագիրը ստորագրեցին նաեւ Ադրբեջանի էներգետիկայի նախարար Նաթիկ Ալիեւը եւ Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յւլդըզը¹⁸²:

Կնքված պայմանագրերի մանրամասների մասին ոչինչ չհայտնեցին, սակայն, ըստ որոշ աղբյուրների, սեպտեմբերի 25-ին կնքված

¹⁸² Ств «Турция впустила Азербайджан на европейский газовый рынок». ИА «REGNUM», 26.10.2011 (<http://www.regnum.ru/news/1460077.html>):

ադրբեջանա-թուրքական գազի պայմանագրի համաձայն, ադրբեջանական գազի գինը մինչև 2018թ., այսինքն՝ մինչև Շահդենիզ-2-ի շահագործման սկիզբը, չի փոխվելու Թուրքիայի համար¹⁸³: Պայմանագրի ֆինանսական մասը գաղտնի է պահվում, սակայն, ըստ «Ռեզնում» գործակալության, ադրբեջանական գազի գինը Թուրքիայի համար կկազմի 230-250 դոլար 1000 խմ-ի համար¹⁸⁴:

Սեպտեմբերի 25-ին Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքված պայմանագիրը էականորեն փոխում է տարածաշրջանի էներգետիկ իրավիճակը և մի շարք հարցերի հստակ պատասխան տալիս: Նախ՝ Ադրբեջանն այսպիսով «հայտարարում» է, որ պատրաստ է մաս կազմելու դեպի Եվրոպա գազի առաքման Եվրամիության նոր ռազմավարությանը և փորձում է ինքնուրույն խաղացող դառնալ այդ դաշտում: Համաձայն այդ պայմանագրի՝ Ադրբեջանը փորձելու է անձամբ վաճառել իր գազը Եվրոպային, իսկ Թուրքիան լինելու է միայն տարանցման երկիր, որին կվճարեն դրա համար:

Որոշվել է, որ կառուցվելու է մինչև Թուրքիա ձգվող նոր գազամուղ, որով մինչև 16 մլրդ խորանարդ մետր գազ է տեղափոխվելու: Սա նշանակում է, որ Թուրքիան իր հերթին ցանկանում է ուժեղացնել դեպի Եվրոպա գազի տարանցման պետության իր կարգավիճակը, ինչի համար կրճատում է Ռուսաստանից և Իրանից գազի ներմուծումը՝ առաջնությունը տալով ադրբեջանական գազին:

Նոր ադրբեջանա-թուրքական գազամուղը կկոչվի Անդրանատոլիական՝ Trans Anadolu Pipeline (TANAP). այս մասին հայտարարել է SOCAR ընկերության նախագահ Ռովնազ Աբդուլաեւը¹⁸⁵: Նախատեսվում էր, որ նոր գազամուղի կառուցումը կսկսվի 2012թ. և կավարտվի 2017թ., երբ շահագործման կհանձնվի Շահդենիզ-2 գազահորը: Թուր-

¹⁸³ Stu «Azerbaijan, Turkey agree on gas prices until 2018», November 1, 2011 (<http://en.trend.az/capital/energy/1952154.html>):

¹⁸⁴ Stu «Цены на азербайджанский газ останутся неизменными для Турции до 2018 года». ИА «REGNUM», 01.11.2011 (<http://www.regnum.ru/news/1462254.html>):

¹⁸⁵ Stu «Новый азербайджано-турецкий газопровод будет называться Trans Anadolu». ИА «REGNUM», 18.11.2011 (<http://www.regnum.ru/news/1469065.html>):

քիայի Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Թաներ Յլոզըզը հայտարարեց, որ նոր գազամուղի կառուցման նպատակներից է՝ նվազեցնել Եվրամիության համար ռազմավարական նշանակություն ունեցող «Չարավային Էներգետիկ միջանցք» ծրագրի իրականացման ծախսերը: Նրա խոսքերով՝ NABUCCO, ITGI, TAP գազամուղների իրականացումը ավելի իրական դարձավ թուրք-ադրբեջանական պայմանագրի կնքումից հետո: Հիշեցնենք, որ վերը նշված գազամուղներով գազը պետք է հասցվի Թուրքիա, Յուսաստան եւ Ավստրիա:

Այսինքն՝ փորձ է արվում ստեղծելու «գազային» նոր տանդեմ՝ հանձնելու Թուրքիայի եւ Ադրբեջանի, որոնց համար 2011թ. սեպտեմբերի 25-ին կնքված պայմանագիրը ռազմավարական կարեւորություն ունի, Ադրբեջանի նշանակությունը Թուրքիայի Էներգետիկ քաղաքականության մեջ ավելի է աճում, ու մեծանում է Թուրքիայի կախվածությունը ադրբեջանական Էներգակիրներից:

Ադրբեջանա-թուրքական այս պայմանագրի կնքումը հնարավորություն էր տալիս պնդելու, որ կողմերը առանձնապես չեն հավատում անդրկասպյան գազամուղի կառուցման հեռանկարին եւ փորձում են սկսել ինքնուրույն Էներգետիկ քաղաքականություն՝ առանց սպասելու այդ հարցի հանգուցալուծմանը:

Կնքված պայմանագիրը որոշ առումներով բխում է Եվրամիության Էներգետիկ նոր ռազմավարության տրամաբանությունից, հետեւաբար վայելում է պաշտոնական Բրյուսելի եւ Վաշինգտոնի ակտիվ աջակցությունը: Միաժամանակ պայմանագիրը Էներգետիկ նոր մրցակցություն է ստեղծում Իրանի եւ Ռուսաստանի հետ, քանի որ դրա կնքման համար Թուրքիան նվազեցնելու է գազի ներմուծումը թե՛ Իրանից, թե՛ Ռուսաստանից՝ հասցնելով 10 մլրդ խմ-ի նախկին 16 մլրդ խմ-ի փոխարեն:

Փաստորեն, Ռուսաստան-Ադրբեջան հարաբերություններում նոր Էներգետիկ լարվածություն է առաջացել: Անդրանատոլիական (TANAP) կոչվող գազամուղը նոր խաղաթուղթ է Ադրբեջանի ձեռքում՝ Արեւմուտքին եւ Թուրքիային իր քաղաքական հավակնությունները շեշտելու եւ տարածաշրջանում դիրքերն ամրապնդելու համար:

ԱՄՆ-ի պետքարտուղարի հատուկ հարցերով հանձնակատար Ռիչարդ Մորնինգսթարը, 2011թ. նոյեմբերի 14-ին ժամանելով Բաքու, հայտարարեց, որ ԱՄՆ-ը պատրաստ է աջակցելու Էներգետիկ ամեն մի ծրագրի, որը կիրականացվի «Հարավային միջանցքի» շրջանակներում: Նա նաեւ շեշտեց, որ ամերիկյան EximBank-ը կֆինանսավորի NABUCCO նախագիծը, երբ դրա շինարարությունը սկսվի¹⁸⁶:

Այս նախագծի շրջանակներում Թուրքիան կոչ է արել Իրաքի կառավարությանը՝ միանալ ադրբեջանա-թուրքական գազամուղին: Պաշտոնական Անկարան հայտարարել է, որ Իրաքի միացումը այս ծրագրին կարելուր նշանակություն կունենա, քանի որ աշխարհում տարեցտարի աճում է գազի պահանջարկը, իսկ Իրաքը, որը գազի մեծ պաշարներ ունի, կարող է օգտվել այդ գազամուղից¹⁸⁷:

Իր հերթին Եվրամիության ներկայացուցիչ Ռոլանդ Կորիան հայտարարել է, որ ողջունում են Թուրքիայի եւ Ադրբեջանի կնքած գազի առաքման եւ տարանցման պայմանագիրը: Հիշեցնենք, պայմանագրի համաձայն, Ադրբեջանը 2017թ. Թուրքիայի տարածքով Շահդենիզ հանքավայրից տարեկան մինչեւ 10 մլրդ խմ ծավալով գազ է արտահանելու Եվրոպա¹⁸⁸:

Ադրբեջանա-թուրքական պայմանագրի կնքումից մեկ տարի անց՝ 2012թ. հունիսի 26-ին Ստամբուլում երկու երկրների ղեկավարներ Էլհամ Ալիեւը եւ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ստորագրեցին միջպետական պայմանագիր «Տրանսանատոլու» (TANAP) գազամուղի իրականաց-

¹⁸⁶ Տես «Спецпредставитель госсекретаря США прибыл в Баку для обсуждения Транскаспийского газопровода?». ИА «REGNUM», 14.11.2011 (<http://www.regnum.ru/news/1467009.html>):

¹⁸⁷ Տես «Турция призывает Ирак присоединиться к строительству нового азербайджано-турецкого газопровода». ИА «REGNUM», 14.11.2011 (<http://www.regnum.ru/news/1466831.html>):

¹⁸⁸ Տես *M. Champion, J. Parkinson*. Prospects Appear to Dim for EU-Backed Gas Pipeline, November 19, 2011 (<http://online.wsj.com/news/articles/SB10001424052970204517204577046131042602316>):

ման մասին¹⁸⁹: Գազամուղի նախնական գինը 7 մլրդ դոլար է, եւ նախատեսված է, որ կկառուցվի 5 տարում: TANAP-ի բաժնետոմսերի 80%-ը պատկանում էր Ադրբեջանի պետական նավթային ընկերությանը՝ SOCAR-ին, 20%-ը՝ Թուրքիայի նավթի տարանցման պետական ընկերությանը՝ BOTAS-ին:

Այդ շրջանում քննարկվում էր, որ Եվրոպա տարանցման համար, TANAP-ը միանա NABUCCO-ի կրճատված՝ NABUCCO-West գազամուղի տարբերակին, որը, սկսվելով Թուրքիա-Բուլղարիա սահմանից, պետք է ձգվի մինչեւ Ավստրիա: 2012թ. մայիսին Ստամբուլում ընթացող Յամաշխարհային տնտեսական գազաթափողվի ժամանակ քննարկվեց NABUCCO նախագծի վերանայման անհրաժեշտությունը, միաժամանակ շեշտվեց, որ կարող է փոխել իր ձեւը եւ ասունը, բայց ոչ նպատակը: Գազամուղը պետք է կասպյան գազը մատակարարի Եվրոպային¹⁹⁰:

Ստեղծված նոր իրողությունների պատճառով, երբ պարզ դարձավ, որ Իրանի դեմ պատժամիջոցների, Իրաքում շարունակվող անհանգստությունների, Կասպից ծովի ընդերքով գազամուղի կառուցման անհնարինության պայմաններում գազի միակ կայուն մատակարարը կարող է հանդիսանալ Ադրբեջանը, NABUCCO ընկերությունը առաջարկեց նախկին նախագծի ավելի կարճ եւ համեստ տարբերակը՝ NABUCCO-West-ը¹⁹¹: Նոր նախագիծը, ի տարբերություն նախկինի, սկիզբ էր առնելու ոչ թե թուրք-վրացական սահմանից, այլ՝ թուրք-բուլղարական: Երկարությունը կազմելու էր ընդամենը 1300 կմ եւ անցնելու էր Բուլղարիայի (412 կմ), Ռումինիայի (469 կմ), Յունգարիայի (384 կմ) եւ Ավստրիայի (47 կմ) տարածքով: Ավստրիայի մայրաքաղաք Վի-

¹⁸⁹ Տե՛ս «Баку и Анкара подписали соглашение по реализации проекта Трансанатолийского газопровода». ИА «REGNUM», 27.06.2012 (<http://www.regnum.ru/news/1545643.html>):

¹⁹⁰ Տե՛ս «Проект NABUCCO может изменить название или форму, но не цель». ИА «REGNUM», 05.06.2012 (<http://www.regnum.ru/news/1538856.html>):

¹⁹¹ Տե՛ս «Nabucco West Scenario» (<http://www.nabucco-pipeline.com/portal/page/portal/en/press/Nabucco%20West%20Scenario>):

ենևայի մոտ միանալու էր գազի փոխանցման հատուկ կայանին, որի միջոցով կասպյան գազը կտարածվի ողջ Եվրոպայի տարածքով:

Հիշեցնենք, որ դեռ 2009թ. հուլիսին NABUCCO գազամուղի աջակցման մասին կնքվել էր միջպետական պայմանագիր Թուրքիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի և Ավստրիայի մասնակցությամբ, և այս պայմանագիրը ուժի մեջ է առաջիկա 50 տարիներին: Հետեւաբար կողմերը ստիպված էին, թեկուզ և կրճատված տարբերակով, կատարել այդ պայմանագիրը՝ կառուցելով նոր գազամուղ: Ի տարբերություն նախկինի, որի խողովակի տրամագիծը 1400 մմ էր և նախատեսված էր տարեկան մինչև 31 մլրդ խմ գազի տարանցման համար, NABUCCO-West-ը շատ ավելի համեստ տվյալներ ունի: Նոր խողովակաշարի տրամագիծը պետք է լինի ընդամենը 1200 մմ է և նախատեսված է մինչև 23 մլրդ խմ գազի տարանցման համար¹⁹²:

Սակայն, չնայած այս փոփոխություններին և NABUCCO գազամուղի կառուցման հարցում կնքված բազմաթիվ պայմանագրերին, Շահ-դենիզ հանքավայրի հիմնական բաժնետերեր «Բրիթիշ փեթրոլիում» և «Սթաթոյլ» ընկերությունները նախընտրեցին «Տրանսսադրիատիկ» (TAP) գազամուղը, որը ավելի կարճ և ավելի էժան տարբերակ էր ի տարբերություն NABUCCO-ի¹⁹³: Այսինքն՝ Ադրբեջանը ստիպված էր իր աշխարհաքաղաքական նկրտումները նվազեցնել և դառնալ Եվրոպա տարեկան ընդամենը մինչև 10 մլրդ խմ գազ առաքող պետություն, իսկ գազի նման ծավալով քիչ հավանական է ռազմավարական նշանակություն ձեռք բերել Եվրամիության Էներգետիկ շուկայում: Սա նաև նշանակում է, որ անդրկասպյան գազամուղի կառուցման շուրջը աշխարհաքաղաքական պայքարի այս շրջանում Ռուսաստանը ցույց տվեց իր առավելությունը Կասպից ծովի ավազանում:

Սակայն Եվրամիությունը և ԱՄՆ-ը, հավատարիմ իրենց Էներգետիկ ռազմավարությանը, ցանկանում են բազմազանեցնել Էներգետիկ

¹⁹² Տես նույն տեղում:

¹⁹³ Տես ««Южный газовый коридор» из Каспия в Европу открыт: в экономичном варианте и без Туркмении». ИА «REGNUM», 28.06.2013 (<http://www.regnum.ru/news/1677655.html>):

հոսքերը դեպի Եվրոպա: Այս տեսանկյունից անդրկասպյան գազամուղի կառուցման գաղափարը տնտեսական եւ Էներգետիկ անվտանգության առումով շարունակում է ռազմավարական նշանակություն ունենալ Եվրոպայի համար: Եվրամիությունը եւ ԱՄՆ-ը ցանկանում են հասնել կասպյան ավազանի եւ հատկապես Կենտրոնական Ասիայի երկրների համար կարելորագույն՝ Էներգետիկ հատվածի վերահսկողության հաստատմանը: Իրենց հերթին տարածաշրջանի երկրները այս գազամուղով կկարողանան թուլացնել ռուսական գազի մենաշնորհատեր «Գազպրոմի» դիրքերը:

Այսպիսով՝ անդրկասպյան նախագծի շուրջը Արեւմուտք-Ռուսաստան դիմակայությունը էլ ավելի է սրվում՝ ներքաշելով նաեւ տարածաշրջանային երկրներին: Հետեւաբար՝ Կասպից ծովի կարգավիճակի հարցը գազամուղի կառուցման հարցում առայժմ միակ «դիվանագիտական խոչընդոտն» է:

«Տրանսանատոլու» (TANAP) գազամուղի իրականացման դեպքում տարածաշրջանի Էներգետիկ քաղաքականության մեջ որոշակիորեն ուժեղանում է Ադրբեջանի դերը, որը ստեղծում է կասպյան Էներգակիրների տարհանման սեփական խողովակաշարը: Մինչ այդ կառուցված բոլոր խողովակաշարերը, որպես կանոն, գտնվել են միջազգային տարբեր ընկերությունների՝ «Բրիթիշ փեթրոլիումի» կամ «Սթաթոյլի» վերահսկողության ներքո: Նոր խողովակաշարը ամբողջությամբ ադրբեջանա-թուրքական է, եւ պաշտոնական Բաքուն, հանձին SOCAR-ի, այդ խողովակաշարի հիմնական բաժնետերն է եւ հնարավորություն է ստեղծում գազի տարանցման համար կրճատելու կախվածությունը վերազգային Էներգետիկ ընկերություններից: Այս խողովակաշարով Ադրբեջանը ցանկանում է հանդես գալ որպես տարածաշրջանում ինքնուրույն խաղացող՝ ամրացնելով իր ազդեցությունը Թուրքիայի Էներգետիկ հատվածում, իսկ հետագայում, երբ հնարավոր լինի կառուցել անդրկասպյան գազամուղը, Կենտրոնական Ասիայի երկրներին կապել իր կողմից վերահսկվող խողովակաշարին:

Անդրանատոլիական (TANAP) գազամուղի կառուցման ծրագիրը հուշում է Ադրբեջանի աճող տնտեսական եւ քաղաքական հավակնու-

թյունների մասին, որ ցանկանում է կայուն տեղ զբաղեցնել Եվրամիության էներգետիկ անվտանգության համակարգում՝ Ալիենների քաղաքական կլանի ամրացման միտումով, ինչպես նաև ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Սակայն այս քաղաքականությունը թելադրված է նաև Ադրբեջանի տնտեսության մեջ նավթի գործոնի դերի նվազմամբ, ինչպես հայտնի է՝ 2011, 2012 եւ 2013թթ. նավթի արդյունահանման ծավալները կրճատվել են, եւ միայն գազը կարող է մասամբ փոխարինել Ադրբեջանի նավթային կրճատվող եկամուտները եւ բարձրացնել նրա քաղաքական նշանակությունը:

2013թ. դեկտեմբերի 17-ին Բաքվում ստորագրվեց դեպի Եվրամիություն ադրբեջանական գազի արտահանումը կանոնակարգող պայմանագիրը, որը նախատեսում է տարեկան շուրջ 10 միլիարդ խորանարդ մետր գազի արտահանում Եվրամիություն՝ Յունաստան, Բուլղարիա, Իտալիա, եւս 6 միլիարդ խորանարդ մետր գազի արտահանում Թուրքիա: Պայմանագիրը նախատեսում է գործող Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի ընդլայնում, այդ թվում՝ Ադրբեջանի տարածքում շուրջ 350 կիլոմետր եւ Վրաստանի տարածքում 55 կիլոմետր երկարությամբ նոր գազամուղների կառուցում, ինչպես նաև Վրաստանում նոր կոմպրեսորների տեղադրում, Էրզրումից մինչեւ Թուրքիա-Յունաստան սահման ձգվող Անդրասատոլիական գազամուղի (Trans-Anatolian gas pipeline (TANAP)) եւ Թուրքիա-Յունաստան սահմանից մինչեւ Իտալիա ձգվող Անդրադրիատիկ գազամուղի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ 40 միլիարդ դոլար: Պայմանագրի համաձայն՝ գազի մատակարարումները Թուրքիա կիրականացվեն 2018թ. վերջին, իսկ Եվրամիություն ադրբեջանական գազը կհասնի 2019 թ.:

2013թ. դեկտեմբերի 17-ի պայմանագրով «Շահդենիզ կոնսորցիումի» մաս կազմող նորվեգական «Սթաթոյլ» ընկերությունն իր 25,5% բաժնետոմսերի 10%-ը վաճառեց ԱՅՊՆԸ-ին (SOCAR) եւ «Բրիթիշ փեթրոլիումին»: Ներկայումս «Շահդենիզ կոնսորցիումի» բաժնետերերն են՝ «Բրիթիշ փեթրոլիումը» (28,8%), ԱՅՊՆԸ-ն (SOCAR) (16,7%), «Սթա-

թօյլը» (15,5%), «Տոտալը» (10%), «Լուկօյլը» (10%), «Նիկոն» (10%) եւ «ՏՊԱՕ»-ն (9%)¹⁹⁴:

Դեռ 2012թ. դեկտեմբերի 18-ին «Բրիթիշ փեթրոլիումի» եւ ԱՅՊՆԸ-ի (SOCAR) միջեւ կնքվեց մի պայմանագիր, որով Հարավկովկասյան Բաքու-Էրզրում գազամուղով կհոսի մինչեւ 25 մլրդ խորանարդ մետր գազ, եւ միայն դրանից ավելի գազի ծավալները «կտրվեն» ԱՅՊՆԸ-ի տնօրինմանը¹⁹⁵: Գործող գազամուղին զուգահեռ կառուցվող խողովակաշարի հզորությունը կկազմի տարեկան մոտ 17 մլրդ խմ, եւ, հաշվի առնելով ներկա գազամուղի 8 մլրդ խմ հզորությունը, կարելի է հաշվարկել, որ տարեկան 25 մլրդ խմ. գազի արտահանման իրավունքը պատկանելու է «Բրիթիշ փեթրոլիումին», ընդամին նման թողունակությամբ գազամուղը հնարավոր կլինի լցնել ամբողջովին ադրբեջանական գազով:

Այս պայմանագրի կնքմամբ «Բրիթիշ փեթրոլիումը» մեկ անգամ եւս ցույց տվեց, որ ուժեղացնում է իր վերահսկողությունը Ադրբեջանի գազի հատվածի նկատմամբ եւ վճռական ձայնի իրավունք ունի այդ պետության արտաքին քաղաքական, հատկապես էներգետիկ, կողմնորոշումների վրա ազդելու համար: Միայն այս պայմաններով է «Բրիթիշ փեթրոլիումը» համաձայնել մասնակցել Ադրբեջանի համար ռազմավարական նշանակություն ունեցող Անդրանատոլիական գազամուղի կառուցմանը՝ գնելով այդ գազամուղի բաժնետոմսերի 12%-ը¹⁹⁶:

Անդրանատոլիական գազամուղը (TANAP), ի տարբերություն տարածաշրջանի մյուս խողովակաշարերի, կառավարելու է Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային ընկերությունը, որին պատ-

¹⁹⁴ Տես «Shah Deniz Final Investment Decision Paves Way for Southern Corridor Gas Link with Europe», December 17, 2013 (<http://www.bp.com/en/global/corporate/press/press-releases/shah-deniz-final-investment-decision-paves-way.html>):

¹⁹⁵ Տես «Азербайджан получил под свой контроль часть Южнокавказского газопровода до границ ЕС». ИА «REGNUM», 23.01.2013 (www.regnum.ru/news/1616485.html):

¹⁹⁶ Տես «Shah Deniz Final Investment Decision Paves Way ...» (<http://www.bp.com/en/global/corporate/press/press-releases/shah-deniz-final-investment-decision-paves-way.html>):

կանում է վերահսկիչ փաթեթը (68%), ինչը հակասում է արեւմտյան Էներգետիկ անվտանգության առանցքային սկզբունքներին: Անդրանատոլիական գազամուղի նախագծի շեշտված քաղաքական ուղղվածությունը եւ թանկությունը հանգեցրին այն բանին, որ տարածաշրջանում կարելու էրակատարություն ունեցող միջազգային նավթային ընկերություններ «Սթաթոյլը» եւ «Տոտալը» հրաժարվեցին այս ծրագրին մասնակցելուց¹⁹⁷, փոխարենը Անկարան պաշտոնապես դիմեց Բաքվին՝ խնդրելով խողովակաշարում թուրքական պետական ԲՈԹԱՍ (BOTAS) ընկերության մասնաբաժինը 20%-ից հասցնել 30%-ի¹⁹⁸:

Սակայն նույնիսկ այս ծրագրի իրականացման դեպքում գազի արտահանումը եւ դրանից ստացվող եկամուտները չեն կարող փոխարինել նավթի արդյունահանման կրճատմամբ Ադրբեջանի կրած ֆինանսական կորուստներին: Յետեւաբար՝ առաջիկա 6-7 տարիներին Էներգակիրների արտահանումից սպասվող եկամուտների նվազումն էլ կկողմնորոշի Ադրբեջանում ընթացող զարգացումները եւ նրա դիրքորոշումը տարածաշրջանային գործընթացների նկատմամբ:

¹⁹⁷ Տես «Для строительства трубопровода TANAP требуется \$12 млрд». ИА «REGNUM», 20.12.2013 (www.regnum.ru/news/1747999.html):

¹⁹⁸ Տես «Азербайджан увеличил долю Турции в проекте TANAP». ИА «REGNUM», 24.12.2013 (www.regnum.ru/news/1749191.html):

ԳԼՈՒԽ III. ԿԱՍՊՅԱՆ ՆԱՎԹԱՍՈՒՂՆԵՐԸ՝ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ ԿՈՎԿԱՍ-ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Յետխորհրդային շրջանում՝ Կովկաս-կասպյան տարածաշրջանում նավթամուղների կառուցման մրցակցությունը շատ վերլուծաբաններ եւ քաղաքագետներ որակեցին խողովակաշարերի պատերազմ¹⁹⁹: Ժամանակակից քաղաքագիտության մեջ տարածված «խողովակաշարերի պատերազմ» տերմինը տարաբնույթ մեկնաբանությունների պատճառ է հանդիսանում, սակայն կարծում եմ, այն կարելի է բնութագրել հետեւյալ կերպ.

ա) պայքար գործող խողովակաշարերի նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար,

բ) նոր խողովակաշարերի կառուցմամբ նոր տարանցիկ ուղիների ստեղծում՝ նախկին ուղիները եւ դրանք վերահսկող պետությունների ու ընկերությունների ազդեցությունը թուլացնելու միտումով,

գ) Էներգակիրների հոսքի ուղղում դեպի այլընտրանքային շուկաներ:

Խողովակաշարերի նկատմամբ վերահսկողության հաստատումը նշանակում է՝ վերահսկել ոչ միայն նավթի կամ գազի հոսքը, այլեւ ազդեցություն ձեռք բերել այն պետությունների նկատմամբ, որոնք նավթ են արդյունահանում կամ տարանցիկ ու սպառող պետություններ են:

Էներգետիկ հոսքերի վերահսկողությունը ռազմավարական նշանակության խնդիր է Արեւմուտքի համար, որի գերնպատակն է՝ թույլ չտալ

¹⁹⁹ .Cohen, Ariel. The "New Great Game": Pipeline Politics in Eurasia. "Caspian Crossroads" Magazine. Spring-Summer 1996, Vol. 2, Issue 1.

Նավթային էմբարգոների կրկնությունը*։ Ռազմավարական նշանակություն է ստանում էներգակիրներով հարուստ նոր տարածաշրջանների նկատմամբ վերահսկողության հաստատումը նոր նավթամուղներ կառուցելով։

ԽՍՀՄ-ի փլուզումը նոր հնարավորություններ բացեց ԱՄՆ-ի համար՝ Կովկաս-կասպյան տարածաշրջանում ընթացող ազդեցության պայքարում սեփական դերը բարձրացնելու համար։ Եվ այդ ազդեցության տարածման լավագույն ձեւը էներգակիրների վերահսկողության հաստատումն է։ Քանի որ տարածաշրջանից սկիզբ առնող բոլոր խողովակաշարերը անցնում էին Ռուսաստանի տարածքով, գերնպատակ դրվեց այլընտրանքային ծրագրերով սկսելու նոր՝ Արեւմուտքի կողմից վերահսկելի եւ Ռուսաստանը շրջանցող նավթամուղի կառուցումը։ Նոր ձեւավորվող քաղաքական այս պայքարը արեւմտյան քաղաքագիտական շրջանները կոչեցին «Նոր մեծ խաղ» (New Great Game), որի նպատակն է՝ ռազմաքաղաքական ազդեցություն եւ վերահսկողություն սահմանել աշխարհաքաղաքական կարեւոր նշանակություն ունեցող Կովկաս-կասպյան տարածաշրջանի նկատմամբ։

Արդեն 90-ական թվականների առաջին կեսին Արեւմուտքում եւ հատկապես ԱՄՆ-ում ձեւավորվեց այն կարծիքը, թե ով վերահսկի նավթի առաքումը Կասպից ծովի տարածաշրջանից, կվերահսկի նաեւ Հարավային Կովկասը եւ Կենտրոնական Ասիան։ Նման կարծիքի պատճառը ոչ միայն տարածաշրջանում ձեւավորված քաղաքական իրավիճակն էր, երբ նավթ ունեցող բոլոր երկրները ցանկանում էին դուրս գալ ռուսական ազդեցությունից, այլեւ, այն որ այդ երկրների արդյունաբերությունը ամբողջովին հիմնված էր էներգակիրների արդյունահանման եւ արտահանման վրա։ Հետեւաբար՝ այդ երկրները գտնվում էին Ռուսաստանի տնտեսական եւ քաղաքական ազդեցության ներքո։

* Խոսքը 1973թ. հայտնի նավթային էմբարգոյի մասին է, որից հետո Արեւմուտքի 27 պետություններ ստեղծեցին էներգետիկայի միջազգային գործակալությունը (International Energy Agency-IEA), որը եւ սկսեց մշակել էներգետիկ անվտանգության առաջին համակարգերը։

Այդ պետություններում կառավարող ռեժիմների անվտանգությունը եւ գոյության երկարատեւությունն ուղղակիորեն կախված էին այն հարցի պատասխանից, թե ինչքա՞ն նավթ կամ գազ կարող են վաճառել եւ ստացված եկամուտներն ինչպե՞ս կարող են օգտագործել՝ սեփական վարչակազմը եւ բանակը պահելու:

Տարածաշրջանի համար ընթացող պայքարում ԱՄՆ-ի ակտիվացումը բխում էր նոր ձեւավորվող պետությունների շահերից, քանի որ նրանք հնարավորություն էին ստանում խուսանավելու Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ՝ սեփական քաղաքական իշխանությունը պահպանելու համար: Իսկ որ Ռուսաստանը կարող էր փոխել իշխանությունը նորանկախ պետություններում, երեւաց Ադրբեջանում եւ Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններից, երբ, ըստ ամերիկահայ փորձագետներ Յ.Դոքմեյանի եւ Յ.Սիմոնյանի, Կրեմլին հաջողվեց Բաքվում իշխանության բերել Ալիեւին, իսկ Թբիլիսիում՝ Շեւարդնաձեին²⁰⁰: Սակայն հենց այս քաղաքական գործիչները սկսեցին վարել արեւմտամետ քաղաքականություն՝ նվազեցնելու Մոսկվայի ազդեցությունը տարածաշրջանում: Նրանք վախենում էին, որ իրենց «իշխանության բերած» Մոսկվան կարող է հակառակ քայլը կատարել՝ հեռացնելով իրենց իշխանությունից, եւ փորձում էին փնտրել նոր հենարան: Իսկ նման հենարան եւ հովանավոր կարող էր լինել միմիայն Վաշինգտոնը:

Սպիտակ տունը կարեւորում էր տարածաշրջանը եւ հատկապես նավթով հարուստ Կասպից ծովի ավազանը, մանավանդ որ նրան հարկավոր էին այլընտրանքային նավթ եւ նոր, Ռուսաստանի կողմից չվերահսկվող նավթային ուղի: 1995թ. Սպիտակ տանը արդեն ձեւավորվել էր այն հաստատուն կարծիքը, որ նոր՝ այլընտրանքային նավթամուղի կառուցումը, որին «կցված» կլինեն տարածաշրջանի նավթով հարուստ բոլոր երկրները, ուղղակիորեն բխում է ԱՄՆ-ի ազգային անվտանգության շահերից: Այդ շահերի իրականացման համար Սպիտակ տանը ստեղծվեց խումբ, որի մեջ մտան պետքարտուղարության, Էներգետիկայի եւ առեւտրի նախարարությունների, Կենտրոնական

²⁰⁰ Տե՛ս *R.H. Dokmejian, H.H. Simonian. Troubled waters. The Geopolitics of The Caspian region:*

հետախուզական վարչության եւ ԱՄՆ-ի նախագահին կից ազգային անվտանգության խորհրդի փորձագետները²⁰¹: Այսինքն՝ ձեւավորվել էր քաղաքական անհրաժեշտություն՝ կառուցելու նոր նավթամուղ, որը պետք է ծառայեր նաեւ ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական շահերին՝ տարածաշրջանում սեփական ազդեցության հզորացման համար:

1. Կասպյան նոր նավթամուղները ու Ադրբեջանի, Ղազախստանի եւ Ռուսաստանի շահերը

Ադրբեջանի Զանրապետություն. Կասպից ծովի ադրբեջանական հատվածից նոր խողովակաշարի կառուցման գաղափարը, ըստ ադրբեջանական աղբյուրների, առաջ քաշվեց դեռ 1991թ.: Այն ժամանակ միջազգային մի քանի նավթային ընկերություններ JP Kelly կոչվող ընկերությանը պատվիրեցին ուսումնասիրել նոր նավթամուղի կառուցման հնարավորությունները եւ դրա հնարավոր ուղղությունները²⁰², Բաքու-Նովոռոսիյսկ, Բաքու-Փոթի, Բաքու-Ձեյհան, Բաքու-Պարսից ծոց եւ այլն: JP Kelly-ն չէր քննել թերեւս Բաքու-Սուփսա ուղղությունը (այս ուղղությամբ կար կիսակառույց նավթամուղ), որով հետագայում կառուցվեց Ռուսաստանը շրջանցող եւ Կասպից ծովը միջազգային շուկային կապող առաջին, կարելի է ասել, անկախ նավթամուղը:

Ըստ այդ հետազոտությունների արդյունքների՝ վերը նշված բոլոր ուղղություններից վատագույնը եւ ամենաթանկը Բաքու-Ձեյհանն էր²⁰³: Սակայն հետագայում հենց այս ուղղությունը դարձավ առաջնային թե՛ Ադրբեջանի, թե՛ Թուրքիայի, թե՛ ԱՄՆ-ի համար: Նկատենք.

²⁰¹ Stu *Ian Rutledge*. *Addicted to Oil: America's Relentless Drive for Energy Security*. New York: I.B.Tauris & Co Ltd, 2005:

²⁰² Stu X. *Исмаїлова*. Сага о хитрой трубе. История Баку-Джейхан: от аферы к афере (азербайджанская версия). Газета «Эхо», 24 сентября 2002 г. (<http://www.centrasia.ru/newsA.php?st=1032841800>):

²⁰³ Stu *Ian Rutledge*. *Addicted to Oil: America's Relentless Drive for Energy Security*. New York: I.B.Tauris & Co Ltd, 2005:

որ իրանական ուղղությունը դեռ երկար ժամանակ կհամարվի ամենա-
 ձեռնառու երթուղին՝ ոչ միայն Բաքվից, այլև Դազախստանից եւ Թուրք-
 մենստանից դեպի Պարսից ծոց նավթամուղներ կառուցելու համար:
 Չնայած թանկությանը, Բաքու-Ջեյհանը կողմերի համար ամենաընդու-
 նելի ծրագիրն էր, քանի որ այն ուներ ԱՄՆ-ի քաղաքական աջակցու-
 թյունը, իսկ առանց Վաշինգտոնի մասնակցության անիմաստ էր խոսել
 նոր նավթամուղի կառուցման մասին:

Բաքու-Ջեյհանի նախնական երթուղին պետք է անցներ Իրանի տա-
 րածքով: Ադրբեջանական կողմը առաջարկում էր, որ Բաքվից սկիզբ
 առնող նավթամուղը գնա ոչ թե դեպի հյուսիս՝ Վրաստան, այլ դեպի
 հարավ՝ Իրան, ապա, հատելով Իրան-Նախիջեւան սահմանը, Նախի-
 ջեւանի տարածքով մտնի Թուրքիա եւ հասնի Ջեյհան նավահան-
 գիստ²⁰⁴:

Այս ծրագրով ադրբեջանական կողմը ցանկանում էր միանգամից
 մի քանի հարց լուծել. նախ՝ նավթամթերքով ապահովել Նախիջեւանը,
 կապ ստեղծել Իրանի հյուսիսային՝ ադրբեջանաբնակ շրջանների հետ,
 ապա, շրջանցելով Ռուսաստանը, նավթը հասցնել թուրքական Ջեյհան
 նավահանգիստ: Այս ծրագրի իրականացման համար Բաքվից
 նույնիսկ պատվիրակություններ մեկնեցին Անկարա եւ Թեհրան՝ բա-
 նակցություններ վարելու²⁰⁵:

Սակայն Բաքու-Ջեյհանի այս տարբերակը անիրագործելի էր մի
 քանի պատճառով. նախ՝ հակասում էր ԱՄՆ-ի տարածաշրջանային
 շահերին, վերջինս ցանկանում էր միջազգային բոլոր ծրագրերից Իրա-
 նին դուրս մղել, երկրորդ՝ նավթամուղը պետք է անցներ քրդաբնակ
 անհանգիստ շրջաններով, եւ դժվար կլիներ խողովակաշարի անվ-
 տանգությունը ապահովել:

²⁰⁴ Տես *Mehrdad M. Mohsenin*. The evolving security role of Iran in the Caspian region. «The Security of the Caspian Sea Region». Ed. by Gennady Chufirin. Stockholm International Peace Research Institute, 2001, PP. 166-177:

²⁰⁵ Տես *Ա. Մանվելյան*, Պայքար կասպյան նավթի արտահանման ուղիների վերահսկման համար: ԳԱԱ, «Լրաբեր», ապրիլ 2006, հմ. 4:

1993թ. մայիսին թուրքական իշխանությունները նույնիսկ փորձեցին կազմակերպել շրջայց ապագա նավթամուղի կառուցման տարածքներում, ինչը, ըստ նրանց, պետք է նպաստեր նավթամուղը հենց այդ ուղղությամբ կառուցելուն: Սակայն, իմանալով այդ ճանապարհորդության մասին՝ Թուրքիայի քրդաբնակ շրջաններում հուզումներ սկսվեցին:

Եվ մինչ Թուրքիայի իշխանությունները զբաղված էին խռովության ճնշմամբ, Բաքվում իշխանափոխություն տեղի ունեցավ²⁰⁶: Ապստամբած գնդապետ Սուրեթ Յուսեյնովի ջոկատները մտան Բաքու, Էլչիբեյը ստիպված էր հեռանալ: Այսպես ավարտվեց Ադրբեջանի ժողճակատի իշխանության կարճաժամկետ շրջանը, իսկ իշխանությունից Էլչիբեյի հեռացման հետ նաեւ մոռացվեց Բաքու-Ջեյհանի կառուցման իրանական ուղղության տարբերակը:

Սուրեթ Յուսեյնովը Նախիջեւանից Բաքու հրավիրեց Յեյդար Ալիեւին: 1993թ. օգոստոսի հանրաքվեով օրինականացվեց Էլչիբեյի վտարումը նախագահի պաշտոնից, իսկ հոկտեմբերին տեղի ունեցած նախագահական ընտրություններում հաղթանակ տոնեց Յեյդար Ալիեւը՝ ստանալով ձայների 98,9%-ը²⁰⁷:

Բիշքեկյան զինադադարից 5 ամիս անց, 1994թ. սեպտեմբերի 20-ին, Ալիեւին հաջողվեց կնքել «Դարի պայմանագիրը», համաձայն որի արդեն 1995թ. ստեղծվեց Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերությունը (Azerbaijan International Operating Company - AIOC), որը պետք է զբաղվեր Ազերի-Չիրաք-Գյունեշլի հանքավայրերի հետախուզմամբ եւ շահագործմամբ²⁰⁸: Նորաստեղծ ընկերության ամենամեծ բաժնետեր դարձավ անգլո-ամերիկյան «Բրիթիշ փեթրոլիում» ընկերությունը, որին պատկանում է AIOC-ի բաժնետոմսերի 34,1%-ը, Ադրբեջանական

²⁰⁶ Տես *Sabit Bagirov*. Azerbaijan's strategic choice in the Caspian region. «The Security of the Caspian Sea Region». Ed. by Gennady Chufrin. Stockholm International Peace Research Institute, 2001, PP. 178-194:

²⁰⁷ Տես նույն տեղում:

²⁰⁸ Տես «Azerbaijan Oil Contracts» (http://www.azer.com/aiweb/categories/magazine/62_folder/62_articles/62_socar_aioc.html):

Նավթային պետական ընկերությանը՝ 15%-ը: Կոնսորցիումի ստեղծմանը մասնակցեցին միջազգային 10 այլ ընկերություններ եւս, այդ թվում՝ ռուսական «Լուկոյլը», որին սկզբնական շրջանում պատկանում էր AIOC-ի մասնաբաժնի 10%-ը, սակայն հետագայում Մոսկվայի քաղաքական հետաքրքրությունը նախագծի նկատմամբ փոխվեց, եւ «Լուկոյլը» ստիպված էր հեռանալ այս ծրագրից՝ վաճառելով իր բաժնետոմսերը:

«Ղարի պայմանագրից» հետո կնքվեցին հանքավայրերի շահագործման եւս 20 պայմանագրեր՝ «Շահդենիզ», «Ղարաբաղ», «Աշրաֆի-Դան Ուլուդզու», «Լենքորան-Դենիզ», «Թալիշ-Դենիզ», «Նախչիվան», «Ապշերոն», «Օղուզ», «Կյուրդաշի», «Ինամ» եւ այլն²⁰⁹: Յետագայում այս ծրագրերի ճշող մեծամասնությունը ձախողվեց՝ նավթի արդյունաբերական ծավալների բացակայության պատճառով, ինչը շատ ընկերությունների ստիպեց հեռանալ Ադրբեջանից, իսկ նավթային ոլորտի մասնագետների բառապաշարում նոր տերմին հայտնվեց՝ «ադրբեջանական սինդրոմ», որը նշանակում էր ձախողված նավթային ծրագիր:

Այսպիսով՝ Ալիեւը լայնորեն բացեց Ադրբեջանի դռները միջազգային նավթային տարբեր ընկերությունների առաջ՝ ակնկալելով նավթի արդյունահանումը նոր մակարդակի հասցնել՝ դրանից բխող տնտեսական եւ քաղաքական օգուտներով: 1994-95թթ. այս ծրագրերը նոր հնարավորություններ եւ ներդրումների մեծ դաշտ էին ստեղծում Ադրբեջանի համար:

Այս պայմանագրերը կարող էին իրականացվել միայն նավթի արտահանման ուղիների առկայությամբ, իսկ գործող խողովակաշարեր այդ շրջանում չկային: Իշխանության եկած նոր կառավարությունը՝ Յեյդար Ալիեւի գլխավորությամբ, սկսեց նավթամուղի կառուցման նոր տարբերակներ քննարկել՝ փորձելով գործարկել արդեն եղած Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարը: Իրականում խողովակաշարը Նովոռոսիյսկ-Բաքու ուղղությամբ էր, որը դեռ ԽՍՀՄ-ի տարիներին, կապված

²⁰⁹ *Stu Ian Rutledge. Addicted to Oil: America's Relentless Drive for Energy Security:*

լինելով Ռուսաստանի խողովակաշարային ցանցին, նավթ էր մատակարարում Ադրբեջանի նավթավերամշակման գործարանին: Այդ նավթամուղը առանց մեծ ներդրումների կարելի էր «շրջել», եւ նավթը կհոսեր արդեն Բաքվից դեպի ռուսական Նովոռոսիյսկ նավահանգիստ: Այս տարբերակը, ի տարբերություն Էլչիբեյյան Բաքու-Նախիջեւան-Ջեյհանի, ավելի իրատեսական էր, սակայն չէր լուծում ԱՄՆ-ի համար գլխավոր խնդիրը՝ չէր թուլացնում Ադրբեջանի կախվածությունը ռուսական ուղուց:

ԱՄՆ-ին հարկավոր էր նոր խողովակաշար, որը կբացառեր ռուսական ուղղությունը: Հասկանալի էր նաեւ, որ Բաքու-Նովոռոսիյսկ ծրագրի նկատմամբ մեծ շահագրգռվածություն ուներ պաշտոնական Մոսկվան՝ ցանկանալով ակտիվացնել սեւծովյան իր Նովոռոսիյսկ նավահանգիստը, որին կկապվեր ոչ միայն ադրբեջանական, այլեւ դազախական նավթը: 1995թ. սկսեց գործել Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղը, ինչն այդ պահին Կասպից ծովի ավազանից դեպի միջազգային շուկա ձգվող միակ գործող նավթամուղն էր:

Ղազախստանի Հանրապետություն. Կասպից ծովի շուրջը ծավալվող «Նոր մեծ խաղի» (New Great Game) ընթացքում, ինչպես արդեն նշեցինք, ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը մեծ ուշադրություն էին դարձնում տարածաշրջանում նավթով հարուստ ամենամեծ երկրին՝ Ղազախստանին: Կենտրոնական Ասիայում գտնվող այս երկիրը թե՛ իր աշխարհագրական դիրքով, թե՛ իր հարեւանությամբ ԱՄՆ-ի համար հնարավոր մրցակից երկրների՝ Չինաստանի եւ Ռուսաստանի հետ, թե՛ ելքով դեպի Կասպից ծով ուղղակի անփոխարինելի էր: Հետեւաբար Վաշինգտոնի համար ազդեցության տարածումը ԽՍՀՄ-ի նախկին հանրապետության վրա ռազմավարական նշանակություն էր ստանում:

2 միլիոն 717 հազար քառակուսի կիլոմետր տարածքով այս երկիրը, որն ունի մոտ 16 մլն բնակիչ, սահմանակից է նաեւ Ռուսաստանին, Թուրքմենստանին ու Ղրղզստանին²¹⁰: Եթե Վաշինգտոնին հաջողվեր

²¹⁰ Տե՛ս «CIA World Factbook» (<https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/kz.html>):

վերահսկողություն հաստատել այս երկրում, ապա կարող էր վերահսկել ողջ Կենտրոնական Ասիան, Կասպից ծովի ավազանի հյուսիսարեւելյան սահմանները եւ մոտենալ Ռուսաստանի ու, որ ամենակարեւորն է, Չինաստանի սահմաններին: Ղազախստանը ռազմավարական նշանակություն ունի նաեւ Ռուսաստանի համար, որի հարավային սահմանների ամենամեծ հատվածը հենց ռուս-ղազախական սահմանագիծն է: Յետեւաբար՝ պաշտոնական Մոսկվան չէր կարող թույլ տալ այլ քաղաքական ուժի հաստատումը այդ երկրում: Եվ այս պայքարում Ռուսաստանը ուներ կարեւորագույն լծակ հանձինս տեղի ռուս բնակչության, որը 1990-ականների սկզբին կազմում էր մոտ 50 տոկոսը²¹¹:

1989թ. Ղազախստանում իշխող Նուրսուլթան Նազարբաեւը կարողացավ խուսափել երկրում ռուս-ղազախական լուրջ բախումներից եւ ամրապնդեց իր իշխանությունը²¹²: Իշխանությունն ամրապնդելուն զուգահեռ՝ Նազարբաեւը նաեւ աշխատում էր միջազգային նավթային ընկերությունների հետ: Իսկ նավթի արդյունահանման եւ արտահանման ծավալները ավելացնելու համար հարկավոր էր նոր նավթամուղ:

Երկարատեւ բանակցություններից հետո որոշվեց նավթամուղը կառուցել նավթով հարուստ Թենգիզի շրջանից դեպի Նովոռոսիյսկ: Այս որոշումը պայմանավորված էր փաստով, որ դեռ ԽՍՀՄ-ի տարիներին սկսվել էր այդ նավթամուղի կառուցումը եւ այն կարել էր վերականգնել, ոչ մեծ ներդրումներով: Սա նշանակում էր, որ Ռուսաստանը փոխում է իր քաղաքականությունը եւ նորանկախ պետությունների հետ նավթի արտահանման հարցում համագործակցություն է սկսում: Նախկինում պաշտոնական Մոսկվան՝ միջազգային շուկայում նավթի ցածր գնի պայմաններում, դիմում էր տարբեր քայլերի՝ կրճատելու Ղազախստանից նավթի առաքման ծավալները: Նախկին ԽՍՀՄ-ի նավթով հա-

²¹¹ Стu «Национальный состав, вероисповедание и владения языками в Республике Казахстан, итоги национальной переписи населения 2009 года в Республике Казахстан» (http://www.stat.kz/p_perepis/Pages/default.aspx):

²¹² Стu К. *Syroezhkin*. Kazakhstan's security policy in the Caspian Sea region. «The Security of the Caspian Sea Region». Ed. by Gennady Chufurin. Stockholm International Peace Research Institute, 2001, PP. 212-230:

րուստ երկրորդ երկիրը, Ռուսաստանից հետո, նավթի առաքման լուրջ խնդիրներ ունեն։ Նրա տարածքում կար մոտ 6 հազար կմ երկարությամբ նավթամուղների ցանց, որն այդ երկիրը կապում էր Ռուսաստանի նավթամուղային ցանցին։

Ատիրաու (Ղազախստան)-Սամարա (Ռուսաստան) նավթամուղը, որը գործում էր դեռ ԽՍՀՄ-ի տարիներին, Ղազախստանը կապում էր ռուսական Սամարա քաղաքով անցնող եւ դեպի Եվրոպա ձգվող «Դրուժբա» նավթամուղին։ Սա միակ ճանապարհն էր, որով այդ երկիրը կարող էր իր նավթը առաքել միջազգային շուկա։ Եվ այս պայմաններում պաշտոնական Աստանան ռուսական ուղու այլընտրանք էր փնտրում։

1993թ. ապրիլի 6-ին Ալմա Աթայում Ն.Նազարբաեւը «Շելրոն» (Chevron) նավթային ընկերության նախագահ Կ.Դերիի հետ կնքեց ԱՊՀ տարածքում ամենամեծ նավթային համատեղ ընկերության ստեղծման պայմանագիրը։ Թենգիզի նավթադաշտի շահագործման համար ստեղծվեց «Թենգիզչեոյլ» ընկերությունը, որի հիմնական բաժնետերերը, բացի «Շելրոնից», դարձան «Կազախոյլը», «Մոբիլը» (Mobil) եւ «Լուկոյլը», վերջինիս հասավ բաժնետոմսերի 5%-ը²¹³։ Այս պայմանագիրը Ռուսաստանը գնահատեց որպես հարված սեփական շահերին եւ սկսեց կրճատել Ղազախստանից դեպի Սամարա հոսող նավթի չափը։

Ռուսական արգելքը հաղթահարելու համար «Շելրոնը» սկսեց նավթի մի մասն ուղղել դեպի Ակտաու եւ Թուրքմենբաշի նավահանգիստներ, իսկ այնտեղից նավթատարներով՝ Բաքու։ Ադրբեջանում այդ նավթը երկաթուղային ցիստեռններով ուղղում էին դեպի Բաթումի նավահանգստի նավթային տերմինալներ։ Այս բարդ սխեմայով «Շելրոնին» հաջողվում էր ղազախական նավթն ուղղել միջազգային շուկա։ 1997թ. այս ճանապարհով Կրաստանի սեւծովյան նավահանգիստ էր ուղարկ-

²¹³ Стu «История тенгизского нефтяного месторождения» (http://www.tengizchevroil.com/ru/about/tco_history.asp):

վել մոտ 3,7 մլն տոննա դազախական նավթ, ինչն ավելին էր, քան դեպի Սամարա ուղղվող նավթը²¹⁴:

Այդ ընթացքում Ղազախստանի և Ռուսաստանի միջև բանակցություններ էին ընթանում նոր նավթամուղի՝ Թենգիզ-Նովոռոսիյսկ խողովակաշարի կառուցման շուրջը: Համաձայնագիր երկու երկրների միջև, Օմանի Սուլթանության մասնակցությամբ, կնքվել էր դեռ 1992թ. հունիսի 17-ին, սակայն իրական, գործող պայմանագրի վերածվեց շատ ավելի ուշ՝ 1996թ.: Նման պայմանագրի կնքմանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ նավթամուղի (Թենգիզից մինչև Նովոռոսիյսկ) կառուցումը սկսվել էր դեռ խորհրդային տարիներին, և այդ խողովակաշարը, կարելի է ասել, մասամբ գոյություն ուներ:

1996թ. ապրիլին կնքվեց համապատասխան պայմանագիր Ռուսաստանի և Ղազախստանի միջև²¹⁵: Մոտ 1600 կմ երկարությամբ և 2 մլրդ դոլար արժողության նավթամուղը պետք է օրական մղեր մինչև 500 հազար բարել նավթ դեպի Սեյ ծովի ռուսական ափի Նովոռոսիյսկ նավահանգստի նավթային տերմինալները (նկար 6):

Պաշտոնական Մոսկվան շտապում էր իր դիրքերը ամրապնդել Կասպից ծովի ափերին, և այդ նավթամուղը, ըստ նրա, պետք է ամրապնդեր Ռուսաստանի գերակայությունը տարածաշրջանում ու հատկապես Կասպից ծովի ավազանում: Խողովակաշարի կառուցման համար Ռուսաստանի նախաձեռնությամբ, Ղազախստանի և Օմանի մասնակցությամբ, ստեղծվեց «Կասպյան խողովակաշարային կոնսորցիումը», որին, բացի երեք պետություններից, մասնակցում էին նավթային այլ ընկերություններ:

1996թ. ապրիլի 27-ին Մոսկվայում, Բորիս Ելցինի և Նուրսուլթան Նազարբաևի ներկայությամբ, կնքվեց նավթամուղի կառուցման պայմանագիրը, որտեղ Մոսկվան ուներ ամենամեծ մասնաբաժինը²¹⁶:

²¹⁴ Տես *K. Syroezhkin*. Kazakhstan's security policy in the Caspian Sea region, PP. 212-230:

²¹⁵ Տես նույն տեղում:

²¹⁶ Տես «Caspian Pipeline, Kazakhstan» (<http://www.hydrocarbons-technology.com/projects/caspian/caspian2.html>):

Նորաստեղծ կոնսորցիումում Ռուսաստանին պատկանում էր բաժնետոմսերի 24 տոկոսը, 19 տոկոսը Ղազախստանի հսկողության տակ էր, իսկ Օմանի Սուլթանությունը ստացավ մասնաբաժնի 7 տոկոսը: Ամերիկյան նավթային «Շելրոն» (Chevron) ընկերությունը իր ձեռքում կենտրոնացրեց բաժնետոմսերի 15 տոկոսը, ռուսական «Լուկոյլը» (Lukoil)՝ 12,5%-ը, «Մոբիլը» (Mobil, ԱՄՆ)՝ 7,5%-ը, «Ռոսնեֆտը»՝ 7,5%-ը, «Ագիպ Սպա»-ն (Agip Spa, Իտալիա)՝ 2%-ը, «Բրիթիշ գազը» (British Gaz, Մեծ Բրիտանիա)՝ 2%-ը, «Օրիքսը» (Oryx, ԱՄՆ)՝ 1,75%-ը եւ ղազախական «Մունայգազը» (Munaigaz)՝ 1,75%-ը²¹⁷:

2001թ. օգոստոսին ավարտվեց խողովակաշարի կառուցումը, եւ նավթը սկսեց հոսել դեպի Նովոռոսիյսկ: Նավթամուղի բացման պաշտոնական արարողությունը կայացավ 2001թ. նոյեմբերի 27-ին, Նովոռոսիյսկից դուրս եկավ առաջին նավթատարը՝ ղազախական «Թենգիզ» (Tengiz) կոչվող նավթով բեռնված²¹⁸: Սկզբնական շրջանում խողովակաշարով հոսում էր տարեկան մինչեւ 8 մլն տոննա նավթ, հետագայում հասավ 28 մլն տոննայի: Այդ շրջանում Ղազախստանը տարեկան արտահանում էր մոտ 60 մլն տոննա նավթ, որից 28 մլն տոննան՝ Նովոռոսիյսկի, 15 մլն տոննան՝ Սամարայի ուղղությամբ: Այս խողովակաշարի շահագործմամբ ավելի ուժեղացավ Ղազախստանի տնտեսական կախվածությունը Ռուսաստանի տարածքով անցնող եւ նրա կողմից վերահսկվող խողովակաշարային ցանցից:

Ռուսաստանի դաշնություն. Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը 1994թ. հուլիսի 21-ին ստորագրեց արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւի եւ Անվտանգության դաշնային ծառայության տնօրեն Եվգենի

²¹⁷ Stu R. Forsythe. The Politics of Oil in the Caucasus and Central Asia (<http://www.treemedia.com/cfrlibrary/library/background/forsythe.html>):

²¹⁸ Stu K. Syroezhkin. Kazakhstan's security policy in the Caspian Sea region, PP. 212-230:

Պրիմակովի պատրաստած փաստաթուղթը՝ «Կասպից ծովի ավազանում Ռուսաստանի Դաշնության շահերի պաշտպանության մասին»²¹⁹:

Այս փաստաթղթի հրապարակումից հետո Ռուսաստանը հստակեցնում է իր արտաքին քաղաքական եւ անվտանգային շահերը տարածաշրջանում եւ ակտիվացնում նավթային քաղաքականությունը՝ արագորեն ձեռնամուխ լինելով Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղի վերագործարկմանն ու Թենգիզ-Նովոռոսիյսկի կառուցմանը²²⁰:

Նավթամուղների շահագործումը գնահատվեց որպես ռուսական քաղաքականության հաղթանակ Կովկաս-կասպյան տարածաշրջանում՝ լրջորեն անհանգստացնելով Վաշինգտոնին, որի համար կապերի ամրապնդումը Կասպից ծովի ավազանի նավթով ամենահարուստ երկու երկրների՝ Ղազախստանի եւ Ադրբեջանի հետ ռազմավարական բնույթ էր ստանում: Ազդեցությունների պայքարում նավթի դերի կարեւորումը ԱՄՆ-ին դրդեց նոր քայլեր ձեռնարկել:

1997թ. Վաշինգտոնը առաջ քաշեց նոր նավթամուղի կառուցման գաղափարը, որը պետք է շրջանցեր թե՛ Ռուսաստանը, թե՛ Իրանը եւ Կրասստանի տարածքով դուրս գար Սեւ ծովի ափ: 1997թ. նոյեմբերին Բաքվում ԱՄՆ-ի Էներգետիկայի նախարար Ռիկարդո Փենը քննարկեց նոր նավթամուղի կառուցման հարցը²²¹:

Այդ շրջանում նաեւ որոշակի խնդիրներ կային Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարի պատճառով, պատերազմող Չեչնիայի տարածքում նավթամուղը պարբերաբար հարձակումների էր ենթարկվում: Այնպես որ, նոր նավթամուղի կառուցումը բխում էր նաեւ Բաքվի տնտեսական շահերից: Չնայած Ռուսաստանը հետագայում արագորեն շտկեց իրա-

²¹⁹ Տե՛ս *E. Полухов*. Контракт века (Проблема в исторической ретроспективе). «Кавказские Региональные Исследования». Международная ассоциация кавказских региональных исследований, 1997, т. 2, вып. 1 (<http://poli.vub.ac.be/publi/crs/rus/R02-005.html>):

²²⁰ Տե՛ս *R. V. Barylski*. Russia, the West and the Caspian Energy Hub. «Middle East Journal», Spring, 1995, Vol. 49, N 2:

²²¹ Տե՛ս *R. Forsythe*. The Politics of Oil in the Caucasus and Central Asia (<http://www.treemedia.com/cfrlibrary/library/background/forsythe.html>):

վիճակը, եւ Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղը շրջանցեց Չեչնիայի տարածքը, սակայն Ռուսաստանը շրջանցող նոր նավթամուղի կառուցման հարցին լուրջ քաղաքական նշանակություն էին տալիս Սպիտակ տանը: Առաջ քաշվեց Բաքու-Սուփսա (Վրաստան) խողովակաշարի կառուցման գաղափարը:

830 կմ երկարություն ունեցող նոր նավթամուղը մոտ երկու անգամ կարճ էր, քան ռուս-ղազախական Թենգիզ-Նովոռոսիյսկը, եւ ավելի է-ժան՝ մոտ 560 մլն դոլար*։ Նոր նավթամուղը կառուցվեց Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերության (ԱՍՕԸ-ԱՊՕԸ), մասամբ նաեւ Ադրբեջանի կառավարության ֆինանսավորմամբ եւ մեկ տարի անց՝ 1998թ. դեկտեմբերին, շահագործման հանձնվեց²²²:

Նավթը այս խողովակաշարով հոսեց 1999թ. ապրիլի 16-ին, տեղափոխման գինը արժեք 0,43 դոլար մեկ բարելի դիմաց²²³: Բաքու-Սուփսայով օրական մղվում էր 105 հազար բարել նավթ, հետագայում հասավ 150 հազարի (սկար 7):

Այսպիսով՝ տարածաշրջանի համար մղվող նավթային պայքարում ԱՄՆ-ը կատարեց կարեւորագույն քայլ՝ կառուցելով Ռուսաստանը շրջանցող նավթամուղ, թուլացնելով Ադրբեջանի եւ Կասպյան տարածաշրջանի երկրների կախվածությունը ռուսական ուղուց:

Սա նաեւ պարզորոշ մատնանշում էր, որ տարածաշրջանում սկսվում է քաղաքական զարգացումների նոր շրջան, երբ թուլանում է նավթը միջազգային շուկա դուրս բերելու ռուսական մենաշնորհը:

Եթե Բաքու-Նովոռոսիյսկ եւ Թենգիզ-Նովոռոսիյսկ նավթամուղների կառուցմամբ Ռուսաստանը կարողացավ պահպանել իր դիրքերը Կովկաս-կասպյան տարածաշրջանում ապա Բաքու-Սուփսա խողովակաշարի շահագործմամբ սկսում էր թուլանալ Ռուսաստանի ազդեցու-

* Բաքու-Սուփսա նախագծի սկզբնական արժեքը 315 մլն դոլար էր, հետագայում ԱՊՕԸ-ն ու Ադրբեջանի կառավարությունը վիճում էին, թե ով պետք է վճարի ավելի կատարված ծախսերի համար:

²²² Stu R. Forsythe. The Politics of Oil in the Caucasus and Central Asia (<http://www.treemedia.com/cfrlibrary/library/background/forsythe.html>):

²²³ Stu Stu Sabit Bagirov. Azerbaijan's strategic choice in the Caspian region, PP. 178-194:

թյունը: Սա խողովակաշարային պատերազմի միայն սկիզբն էր, եւ Վաշինգտոնի պաշտոնական շրջանակները առաջ էին քաշում ռազմավարական նշանակության նոր նավթամուղի կառուցման գաղափարը, որը Կասպից ծովի ավազանը կկապի Միջերկրական ծովին եւ իր հզորությամբ կբավարարի տարածաշրջանի երկրների արտահանման պահանջարկի զգալի մասը: Այս քայլը պետք է ուղղված լիներ ռուսական խողովակաշարային մենաշնորհը Կասպից ծովի ավազանում եւ ողջ տարածաշրջանում վերջնականապես թուլացնելուն: Խողովակաշարը պետք է կառուցվեր՝ սպասարկելու առաջին հերթին Արեւմուտքի Էներգետիկ շուկան եւ հզորացնելու Արեւմուտքի տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում:

2. Չինաստան-Ղազախստան, Ղազախստան-Իրան Նավթային ծրագրերը

ԽՍՀՄ-ի քայքայումից հետո ուժեղացավ Չինաստանի հետաքրքրությունը Էներգակիրներով հարուստ Կասպից ծովի նկատմամբ, եւ եթե 90-ականների առաջին կեսին այդ երկրի ակտիվությունը նկատելի չէր, ապա երկրորդ կեսին իրավիճակը կտրուկ փոխվեց: Չինաստանը, որի տնտեսությունը ինտենսիվ քայլերով առաջ է շարժվում, Էներգակիրների նորանոր խմբաքանակի պահանջ ունի: Տնտեսության զարգացմանը զուգահեռ Պեկինը նույնիսկ ստիպված էր դադարեցնել նավթի արտահանումը, քանի որ տեղական հումքը չէր հերիքում ներքին սպառման համար: Այդ պատճառով Չինաստանը իր ուշադրությունը սկսեց դարձնել նաեւ Կասպից ծովի ավազանի կողմը եւ հատկապես դեպի Ղազախստան, որի ափամերձ շրջաններում են հիմնականում կենտրոնացած կասպյան նավթի պաշարները:

Չինաստանի հետաքրքրությունը համընկնում էր նաեւ Ղազախստանի տնտեսական եւ քաղաքական շահերին: Նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը քաղաքական կուրս էր վերցրել բազմազանեցնելու ղազախական նավթի արտահանման ուղղությունները: Արեւմուտքը ա-

ջակցում էր Ղազախստանի նախագահին՝ առաջ քաշելով Բաքու-Ջեյհանի գաղափարը, սակայն չինական ուղղությունը չէր մտնում ԱՄՆ-ի աշխարհառազմավարական ծրագրերի մեջ:

Ղազախստան-Չինաստան բանակցությունների առաջին արդյունքը գրանցվեց 1997թ. սեպտեմբերին, երբ պաշտոնական այցով Աստանայում գտնվող Չինաստանի վարչապետ Լի Պենը ստորագրեց համաձայնագիր ղազախ-չինական նավթամուղի կառուցման մասին²²⁴: 3200 կմ երկարությամբ եւ տարեկան մոտ 20 մլն տոննա թողունակությամբ նավթամուղը, որի արժեքը գնահատվում էր 9,5 մլրդ դոլար, պետք է սկիզբ առներ ղազախական Ատիրաուից եւ ավարտվեր չինական Ալաշանկոու քաղաքում: Ծրագրի ֆինանսավորումը ամբողջովին ստանձնեց չինական կողմը:

2003թ. հունիսին Չինաստանի նախագահ Յու Չզինթաոյի՝ Ղազախստան կատարած այցի ժամանակ Չինաստանի ազգային նավթային ընկերությունը Ղազախստանի դեկավարության հետ կնքեց ղազախ-չինական (Ատասու-Ալաշանկոու) նավթամուղի կառուցման պայմանագիրը²²⁵: Այդ պայմանագրով Չինաստանը սկսում էր լուրջ ներդրումներ կատարել Ղազախստանի նավթային ոլորտում, ինչն ուժեղացնում էր նրա ներկայությունը Կենտրոնական Ասիայում եւ Կասպից ծովի ավազանում: Չնայած Ռուսաստանի եւ Արեւմուտքի, հատկապես ԱՄՆ-ի ջանքերին՝ խոչընդոտելու այս նավթամուղի կառուցմանը, 2006թ. մայիսին Ղազախստան-Չինաստան նավթամուղը գործարկվեց. բացման պաշտոնական արարողությունը կատարվեց նույն թվականի դեկտեմբերի 15-ին²²⁶:

Այս նավթամուղը դեպի Չինաստան կարող էր մղել տարեկան մոտ 20 մլն տոննա նավթ: Այսպիսով՝ Ղազախստանը կառուցեց առաջին

²²⁴ Stu «Kazakhstan's pipeline to prosperity». «The Economist», October 9, 1997 (<http://www.economist.com/node/102176>):

²²⁵ Տես Ա. Մարտիրոսյան, Գ. Մարտիրոսյան, Չինաստանի էներգետիկ անվտանգության..., էջ 118:

²²⁶ Տես I. MacWilliam. Kazakh-China oil pipeline opens. «BBC News», February 23, 2004 (<http://news.bbc.co.uk/2/hi/business/3514925.stm>):

Նավթամուղը, որը, շրջանցելով Ռուսաստանը, նավթ էր մատակարարում Չինաստանին:

Ղազախ-չինական նավթամուղի կառուցումը կարելու էր նշանակություն ունեցավ Ղազախստանի համար: Վերջինս այսպիսով մուտք էր գործում իր համար կարելու ու հեռանկարային շուկա, թուլացնում էր իր կախվածությունը Ռուսաստանից եւ վերջապես կառուցում էր նավթամուղ, որն ամբողջովին անցնում էր իր տարածքով մինչեւ սպառողը: Նավթամուղի շահագործման համար ստեղծվեց «Ղազախստան-Չինաստան խողովակաշար» համատեղ ընկերությունը, որտեղ հավասար իրավունքներով կառավարում էին Չինաստանի եւ Ղազախստանի պետական նավթային ընկերությունները²²⁷:

Չինաստանը եւ Ղազախստանը պայմանավորվեցին նմանատիպ մեկ այլ խողովակաշար՝ գազամուղ կառուցել, որը իրականացվեց ավելի ուշ՝ 2010թ: 2006թ. նավթամուղի շահագործումը, սակայն, միայն մասամբ թուլացրեց Ղազախստանի կախվածությունը Ռուսաստանից: Սա էր նաեւ պատճառը, որ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, բացի չինական ուղղությունից, կարելու էր իրանականը. բանակցություններ էին վարում ղազախական նավթը նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով դեպի միջազգային շուկա տեղափոխելու վերաբերյալ:

Իրանի Իսլամական Հանրապետություն. Կասպից ծովի նշանակությունը Իրանի համար կտրուկ փոխվեց ԽՍՀՄ-ի քայքայումից հետո: Եթե մինչ այդ Կասպից ծովը ԽՍՀՄ-ի հետ սահմանակից փակ ջրային ավազան էր, որն Իրանի համար ավելի շուտ ձկնաբուծական հետաքրքրություն ուներ, ապա խորհրդային կայսրության քայքայումից հետո ծովը քաղաքական եւ ռազմավարական այլ նշանակություն ստացավ նրա համար: Իրանն արդեն սահմանակցում էր միանգամից 4 երկրների, բացի դրանից՝ Կասպից ծովի փակ ջրային կարգավիճակը փաստորեն փոխվեց, երբ այստեղ հայտնվեցին արեւմտյան մի շարք նավթային ընկերություններ, որոնցից շատերը ներկայացնում էին Իրանի

²²⁷ Stu D. Kosyrev. Kazakh-Chinese oil pipeline a new reality of global politics. «RIA Novosti», 31. 05. 2006 (<http://en.rian.ru/analysis/20060531/48867896-print.html>):

հիմնական թշնամու՝ ԱՄՆ-ի քաղաքական ու տնտեսական շահերը: Այսպիսով՝ 90-ական թվականներից պաշտոնական Թեհրանի ուշադրությունը Կասպից ծովի հանդեպ կտրուկ ավելացավ:

Մինչեւ 90-ականները Իրանը Կասպից ծովի ափամերձ շրջաններում նավթի որոնողական աշխատանքներ չէր կատարում, սակայն քաղաքական փոփոխությունը ստիպեց Իրանի պետական նավթային ընկերությանը (National Iranian Oil Company - NIOC) զբաղվել նաեւ Կասպից ծովով: Այդ շրջանում պաշտոնական Թեհրանը ծովի նավթային եւ գազի պաշարների ուսումնասիրման համար պայմանագիր կնքեց շվեդական GVA Consultants ընկերության հետ, իսկ նավթային ընկերություններ «Շելլ» (Shell) եւ «Լասմո» (Lasmo) Կասպից ծովի ափամերձ շրջաններում սկսեցին զբաղվել հետախուզաորոնողական աշխատանքներով²²⁸:

Իրանն առաջին քայլերն էր կատարում ծովի էներգետիկ պաշարների շահագործման համար՝ համոզված, որ այնտեղ նավթի եւ գազի պաշարներ են կուտակված: Իրանի նավթի նախարարը նույնիսկ հայտարարեց, որ Իրան-Ադրբեջան սահմանամերձ շրջաններում մինչեւ 3 մլրդ տոննա նավթի պաշարներ կան²²⁹: Բացի զուտ նավթով ու գազով հարուստ տարածքից՝ Կասպից ծովը կարելու է Իրանի համար նաեւ որպես տրանսպորտային ուղի, ինչպես նաեւ արտահանման կարելու ապրանքներից՝ խավիարի արդյունաբերական արտադրության շրջան:

Պաշտոնական Թեհրանը ակտիվ քաղաքականություն էր վարում, որպեսզի դեպի միջազգային էներգետիկ շուկա դուրս գալու համար առանցքային միջանցք դառնա ավազանի երկրների համար: Այս ծրագրի իրագործման համար Իրանը առաջ քաշեց նավթի փոխանակման սկզբունքը. Կասպից ծովի ավազանի երկրները նրան նավթ են հանձնում ծովի իրանական նավահանգիստներում, նրանց գնորդները նույն

²²⁸ Տե՛ս *John Roberts*. Energy reserves, pipeline routes and the legal regime in the Caspian Sea. «The Security of the Caspian Sea Region». Ed. by Gennady Chufrin. Stockholm International Peace Research Institute, 2001, PP. 33-68:

²²⁹ Տե՛ս նույն տեղում:

քանակի նավթ ստանում են Պարսից ծոցի իրանական նավթամբարներից: Նման ծրագրի առավելությունն այն է, որ Ղազախստանին կամ Թուրքմենստանին այլևս պետք չէր սեփական նավթը հասցնել միջազգային շուկա, եւ կարող էին միանգամից վաճառել Պարսից ծոցի նավահանգիստներից:

Նախագծի իրականացման համար ստեղծվեց նավթի փոխանակման CROS (Caspian Sea Republic's Oil Swap - Կասպից ծովի հանրապետությունների նավթի փոխանակում) ծրագիրը²³⁰: 2004թ. գարնանը ծրագիրը սկսեց գործել, եւ ավազանիերկրներից Ղազախստանը եւ Թուրքմենստանը դեպի Կասպից ծովի իրանական Նեկա նավահանգիստ ուղղեցին նավթի առաջին խմբաքանակը: Իրանը ձեռնամուխ եղավ նաեւ Նեկայից դեպի Թեհրանի մոտ գտնվող Ռեյ քաղաքի նավթավերամշակման գործարան նավթամուղի կառուցմանը: Խողովակաշարը շահագործման հանձնվեց 2004թ. ապրիլին²³¹:

Փոխանակման այդ ծրագրով Նեկա-Ռեյ խողովակաշարը սկզբնական շրջանում ստանում էր օրական մինչեւ 120 հազար բարել նավթ, իրանական կողմը մտադիր էր այս թիվը եռապատկել՝ հասցնելով 360 հազար բարելի²³²: Բացի փոխանակման ծրագրից՝ Իրանը բանակցություններ էր վարում ավազանի երկրների հետ դեպի իր տարածք ձգվող նավթամուղների կառուցման վերաբերյալ: Նմանատիպ բանակցություններ տարվում էին հատկապես Ղազախստանի հետ, որն այս ծրագրի իրականացումը դիտարկում էր որպես իր նավթային ուղիների բազմապատկման քաղաքականության մաս:

Ծրագիրը տնտեսական առումով ձեռնտու էր ոչ միայն Աստանային, այլև ավազանի մյուս երկրներին, այդ թվում՝ Ադրբեջանին, սակայն ծրագրի լիարժեք իրականացման համար կար քաղաքական խոչըն-

²³⁰ Տես *В.В. Арсенов*. Энергетическая стратегия Ирана в Каспийском регионе. «Институт Ближнего Востока» (<http://www.iimes.ru/rus/stat/2005/09-11-05a.htm>):

²³¹ Տես *Л. Воронеев*. Нежелательный маршрут. Газета «СНГ», 08 июня 2004 г. (<https://ca-news.info/2004/06/08/27>):

²³² Տես *John Roberts*. Energy reserves, pipeline routes and the legal regime ..., PP. 33-68:

դրոտ ԱՄՆ-ը դեմ էր դրան²³³: Ադրբեջանն իր հերթին էր դեմ, քանի որ կառուցում էր Բաքու-Ջեյհան նավթամուղը եւ Նեկա-Ռեյ խողովակաշարը համարում էր մրցակից իր քաղաքական ու տնտեսական շահերին, քանի որ հուսով էր, որ այդ խողովակաշարով կհոսի նաեւ դազախական եւ թուրքմենական նավթը: Այս ծրագրին՝ CROS-ին աջակցություն հայտնեց Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը: «Ֆայնենշլ թայմս» (Financial Times) թերթին տված հարցազրույցում նա նշում էր, որ ծրագիրը ձեռնառու է իր երկրին, եւ պատրաստվում է օգտվել դրանից²³⁴: Զննարկվում էր նաեւ Ղազախստանից դեպի Իրան նավթամուղի կառուցման հարցը: Ըստ այդ ծրագրի՝ դազախական նավթը Կասպից ծովի ափից, Թուրքմենստանի եւ Իրանի տարածքով, պետք է հասներ Պարսից ծոց:

Ծրագրի գլխավոր հովանավորն էր ֆրանսիական «Տոտալ» (Total) նավթային ընկերությունը: Ֆրանսիացիների համար սա տնտեսական ծրագիր էր, որը կարող էր մեծ եկամուտներ բերել, սակայն հաշվի չէր առնված հարցի քաղաքական կողմը: Ինչպես եւ սպասվում էր՝ ծրագրերի դեմ հանդես էր գալիս ԱՄՆ-ը, եւ Կասպյան տարածաշրջանի Էներգետիկ հարցերով պատասխանատու Սթիվեն Մանը պաշտոնական Վաշինգտոնի այդ դժգոհությունը հաղորդեց Ղազախստանի ղեկավարությանը²³⁵: Վերջինս նախընտրեց դադարեցնել Ղազախստան-Թուրքմենստան-Իրան նավթամուղի հարցի հետագա քննարկումը:

Նեկա-Ռեյ նավթամուղի նկատմամբ հետաքրքրություն ունեն նաեւ Կասպից ծովի ռուսական հատվածում գործող որոշ ընկերություններ: Դեռ 2002թ. ռուսական «Տրանսնեֆտ» (Транснефть) ընկերության նա-

²³³ Տես Ա. Մանվելյան, ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում 90-ականներին: «Գլոբուս Էներգետիկա» ամսագիր, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2008, հմ. 1:

²³⁴ Տես «Назарбаев хочет строить нефтепровод через Иран к Персидскому заливу («The Financial Times», Великобритания). Нефтепровод к Персидскому заливу станет главным маршрутом экспорта казахской нефти», 26.05.2004 (<http://www.inosmi.ru/world/20040526/209868.html#ixzz2HCB7BT8G>):

²³⁵ Տես Լ. Воропаева. Нежелательный маршрут (<https://ca-news.info/2004/06/08/27>):

խագահ Սեմյոն Վայնշտոկը հայտարարեց, որ իրանական ուղղությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ռուսական նավթի համար, եւ որ պատրաստ է մինչեւ 5 մլն տոննա տարեկան նավթ մղել այդ ուղղությամբ²³⁶:

Սակայն Իրանը չէր պատրաստվում բավարարվել միայն Նեկա - Ռեյ նավթամուղով, պաշտոնական Թեհրանի նպատակն էր՝ կառուցել Նոր նավթամուղ, որով կասպյան նավթն ուղղակիորեն կհասցվի Պարսից ծոց, ինչը կշահագրգռի տարածաշրջանի երկրներին՝ ավելի ակտիվորեն ներգրավվելու իրանական ծրագրերում: Իրանական պետական նավթային ընկերության ներկայացուցիչ Ամին Եսկանդերը Բաքվում կազմակերպված «Նավթատրանսպորտային» երկրորդ համաժողովում, հայտարարեց, որ Թեհրանը պատրաստվում է հզորացնել Նեկա նավահանգստի հնարավորությունները եւ կառուցել Նեկա-Ջասկ 1560 կմ երկարություն ունեցող նավթամուղը, որը Կասպից ծովը ուղղակիորեն կկապի Իրանի հարավին՝ Օմանի ծոցին²³⁷:

1 մլն բարել նավթ օրական թողունակություն ունեցող խողովակաշարով նավթի մղումը, ըստ Եսկանդերի, կարժենա ընդամենը 45 դոլար մեկ տոննայի համար, երբ Բաքու-Ջեյհանով 1 տոննա նավթի մղումը արժե 75 դոլար, իսկ Թենգիզ-Նովոռոսիյսկով (KTK)՝ 55 դոլար²³⁸: Այս նավթամուղի շահագործման դեպքում Իրանը լուրջ հայտ կներկայացներ՝ սպառնալով ԱՄՆ-ի կողմից հովանավորվող Բաքու-Ջեյհան նավթամուղի հնարավոր գործարկմանը*:

Կասպյան նավթի արդյունահանումը Իրանի համար տնտեսական քաղաքականության առումով կարեւոր նշանակություն չունի, սակայն

²³⁶ Stu «Компания «Транснефть» планирует поставки по маршруту Россия-Казakhstan-Туркменистан-Иран», 18 июля 2002 (http://www.turkmenistan.ru/?page_id=3&lang_id=ru&elem_id=1417&type=event&layout=print&sort=date_desc):

²³⁷ Stu «Иран намерен конкурировать с Азербайджаном в транспортировке каспийской нефти». ИА «REGNUM», 25.04.2008 (<http://www.regnum.ru/news/992686.html>):

²³⁸ Stu K. *Syroezhkin*. Kazakhstan's security policy in the Caspian Sea region, PP. 212-230:

* Չնայած խոստումներին՝ Իրանը մինչեւ օրս ձեռնամուխ չի եղել այս խողովակաշարի կառուցմանը, իսկ տնտեսական ճգնաժամը դա հետաձգեց երկար ժամանակով:

աշխարհաքաղաքական նոր փոփոխությունների պայմաններում պաշտոնական Թեհրանը սկսում է կարելորել տարածաշրջանից նավթի առաքման հնարավորությունները՝ որպես քաղաքական նոր լծակ: Իրանը ցանկանում էր ուժեղացնել իր դիրքերը նավթի տարանցման գործում եւ այս ուղղությամբ քայլեր է ձեռնարկում: Այս հարցում բախվում էին Իրանի ու հարեւան Ադրբեջանի եւ հատկապես Բաքու-Ջեյհանի գլխավոր հովանավոր ԱՄՆ-ի քաղաքական եւ տնտեսական շահերը: Իրան-Ադրբեջան հակասություններն արդեն իսկ սրված էին Կասպից ծովի կարգավիճակի հարցով երկու երկրների միջեւ առկա տարածայնությունների պատճառով: Այս հակասությունները ավելի խորացան նավթի առաքման ուղղության շուրջը երկու երկրների միջեւ սկիզբ առնող նոր մրցակցության պատճառով:

3. Ադրբեջանական ուղղության կարելորումը Արեւմուտքի կողմից

1990-ականների երկրորդ կեսին արդեն ակտիվորեն քննարկվում էր Ադրբեջանից դեպի Միջերկրական ծով նոր նավթամուղի կառուցման հարցը: 1996թ. Համաշխարհային բանկը նոր նավթամուղի կառուցման նախագծի ուսումնասիրության համար 12,5 մլն դոլար հատկացրեց թուրքական ԲՈԹԱՍ (BOTAS) ընկերությանը²³⁹: Թուրքերի «ուսումնասիրություններով», ինչպես եւ սպասվում էր, նպատակահարմար համարվեց կառուցել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, որը, ըստ նրանց, տնտեսապես արդարացված է:

Այդ շրջանում նավթի գները ցածր էին, եւ տնտեսապես ձեռնատու չէր նոր նավթամուղի կառուցումը: Նույնիսկ նավթամուղի գլխավոր օպերատոր «Բրիթիշ փետրոլիում» (British Petroleum) միջազգային ընկերության նախագահ լորդ Ջոն Բրաունը մի առիթով հայտարարեց, որ Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցումը հնարավոր կլինի, եթե ավելացվի Ադրբեջանի ապացուցված նավթի քանակը կամ եթե Բաքուն

²³⁹ Stu John Roberts. Energy reserves, pipeline routes and the legal regime ..., PP. 33-68:

«ազատ փողեր» գտնի²⁴⁰: Ըստ Բրաունի՝ գործող Բաքու-Սուփաս նավթամուղը, մոտ 300 հազար բարել օրական նավթի արտամղման հզորությամբ, լիովին բավարար է ադրբեջանական նավթի առաքման համար:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ նույնիսկ նավթամուղով զբաղվող «Բրիթիշ փեթրոլիում» (British Petroleum) ընկերության ղեկավարությունը համոզված էր դրա տնտեսական արդյունավետության հարցում: Ծրագրի նկատմամբ միանշանակ էր նաեւ ԱՍՕԸ-ի (AIOC-Azerbaijan International Operating Company) մեջ մտնող նավթային խոշոր ընկերությունների կարծիքը, օրինակ՝ «Էքսոնմոբիլի» (ExxonMobil) նախագահ Թ. Կունցի կարծիքով՝ «ծրագիրը պետք է տնտեսապես արդարացված լինի եւ հիմնվի նավթային իրական պաշարների վրա, որոնց գոյության հարցում մենք առայժմ համոզված չենք»²⁴¹:

Նոր նավթամուղի երկարությունը 1767 կմ էր (443 կմ Ադրբեջանի տարածքով, 248 կմ՝ Վրաստանի, 1076 կմ՝ Թուրքիայի): Նավթամուղի թողունակությունը պետք է կազմեր 50 մլն տոննա տարեկան, նախնական արժեքը՝ 2,4-2,9 մլրդ դոլար: 1997թ. ծրագրով շահագրգիռ կողմերը Թուրքիայի ջանքերով եւ նրա թիկունքում կանգնած ԱՄՆ-ի աջակցությամբ խորհրդակցություններ էին կազմակերպում Ստամբուլում՝ այնտեղ հրավիրելով նաեւ Կասպից ծովի ավազանի երկրների ներկայացուցիչներին²⁴²:

Այդ խորհրդակցություններին հրավիրվում էր նաեւ Ռուսաստանը, որը, որպես կանոն, չէր մասնակցում: Նավթամուղի կառուցման գաղափարին կողմ էին ոչ միայն կասպյան ավազանի երկրները, այլեւ Կենտ-

²⁴⁰ Տես *James M. Dorsey*. Oil companies rejecting US-Turkish plans to bypass Iran for pipeline to transport Caspian oil. «Washington Report on Middle East Affairs», January/February 1999, P. 49, 91 (<http://www.wrmea.com/backissues/0199/9901049.html>):

²⁴¹ Տես *Vitaly Naumkin*. Russia's national security interests in the Caspian region. «The Security of the Caspian Sea Region». Ed. by Gennady Chufrin. Stockholm International Peace Research Institute, 2001, PP. 119-135:

²⁴² Տես «Caspian oil pipeline routes discussed in Istanbul». «BBC World Service», March 1, 1998 (news.bbc.co.uk/hi/english/world/s/w_asia/newsid_61000/61075.stm):

րոնական Ասիայի նավթով հարուստ պետությունները, օրինակ՝ Ուզբեկստանը: Վերջինիս վարչապետ Ուտկար Սուլթանովը Վաշինգտոնում իր երկրի անունից աջակցություն հայտնեց Բաքու-Ջեյհան նախագծին²⁴³:

1990-ականների վերջին ԱՄՆ-ի եւ տարածաշրջանի երկրների՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի քաղաքական շահերը համընկնում էին՝ կառուցել նոր նավթամուղ, որը կշրջանցի Ռուսաստանը: Թեեւ այս հարցում նշված երկրների քաղաքական շահերի համընկման պատճառները տարբեր էին, սակայն պարզ էր, որ նավթամուղի կառուցման համար կար ընդհանուր համաձայնություն:

Նոր նավթամուղի կառուցման գաղափարը ոչ միայն հասունացել էր Կասպից ծովի ավազանի երկրներում, այլեւ արդյունք էր ԱՄՆ-ի քաղաքականության սկիզբ առած փոփոխության: ԱՄՆ-ի պետքարտուղարության Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի գծով պատասխանատու Սթրոուբ Թելթոթը 1997թ. հուլիսի 21-ին հայտարարեց, որ Սպիտակ տան համար ռազմավարական նշանակություն ունի դեպի Կենտրոնական Ասիայի էներգետիկ պաշարներ մուտք ապահովելը²⁴⁴: Սա նշանակում էր, որ նոր, Ռուսաստանը շրջանցող նավթամուղի կառուցման համար արդեն կար քաղաքական համաձայնություն: Այս հայտարարությունից մեկ տարի անց սենատոր Սեմ Բրաունբեկը, որը համարվում էր Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի ակտիվ քաղաքականության կողմնակից, հայտարարեց. «Ածխաջրածին մղելու անդրկասպյան տարբերակը, Բաքվից դեպի թուրքական Ջեյհան նա-

²⁴³ Stu «Caspian oil: Uzbekistan wants to bypass Russia». «BBC», November 26, 1997 (http://news.bbc.co.uk/2/hi/world/west_asia/34845.stm):

²⁴⁴ Stu *Lena Jonson*. The new geopolitical situation in the Caspian region. «The Security of the Caspian Sea Region». Ed. by Gennady Chufirin. Stockholm International Peace Research Institute, 2001, PP. 11-32:

վահանգիստ, արդեն հայտարարված է որպես նավթի եւ գազի արտահանման կարելորագույն ուղղություն»²⁴⁵:

1998թ. մայիսին Ստամբուլում տեղի ունեցած «Յամաշխարհային խաչմերուկ» միջազգային համաժողովում ԱՄՆ-ի Էներգետիկայի նախարար Ֆեդերիկո Պենյան հայտարարեց, որ կասպյան նավթի առաքման Բաքու-Ջեյհան տարբերակը ամենաընդունելին է: Նույն տարվա մարտին Ստամբուլում հանդիպեցին Թուրքիայի, Ադրբեջանի, Թուրքմենստանի, Ղազախստանի, Վրաստանի արտաքին գործերի նախարարները եւ քննարկեցին նոր նավթամուղի կառուցման ծրագիրը: Ադրբեջանը եւ Թուրքիան հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որ իրենք աջակցում են Բաքվից դեպի թուրքական Ջեյհան նավահանգիստ նոր նավթամուղի կառուցման ծրագրին: Երկար քննարկումներից հետո հավաքին մասնակից մյուս արտգործնախարարները նույնպես հայտարարեցին իրենց աջակցությունը Ռուսաստանը շրջանցող նոր նավթամուղի կառուցմանը²⁴⁶:

1998թ. հուլիսին ամերիկյան պետական «Էքսիմբանկը» պատրաստակամություն հայտնեց ֆինանսավորելու Բաքու-Ջեյհան նախագիծը²⁴⁷: Որ նախագիծը այդ շրջանում տնտեսապես արդարացված չէր եւ կրում էր միմիայն քաղաքական բնույթ, չէին թաքցնում նաեւ ամերիկացի պետական պաշտոնյաները: Բաքվում ԱՄՆ-ի դեսպան Սթենլի Էսկուդերոն ադրբեջանական «Էխո» թերթին տված հարցազրույցում հաստատում է այս փաստը՝ նշելով, որ 1998թ. Ստամբուլի հավաքին մասնակցում էին այս հարցով շահագրգիռ 3 երկրների (Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի) դեսպանները, բարձրաստիճան դիվանագետներ եւ ԱՄՆ-ի ֆինանսական դեպարտամենտի ներկայացուցիչներ,

²⁴⁵ Stu A. Kohen. США, страны Центральной Азии и Кавказа: проблемы и перспективы взаимоотношений (<http://www.ca-c.org/journal/cac-08-2000/05.kohen.shtml>):

²⁴⁶ Stu «Caspian oil pipeline routes discussed in Istanbul» (news.bbc.co.uk/hi/english/world/s/w_asia/newsid_61000/61075.stm):

²⁴⁷ Տես նույն տեղում:

որոնք էլ փաստորեն որոշեցին Բաքու-Ջեյհանի ճակատագիրը²⁴⁸: Այս որոշումից հետո Սպիտակ տան աջակցությամբ ծրագրի իրականացման համար եռանդուն աշխատանք սկսվեց:

1999թ. նոյեմբերի 18-ին Ստամբուլում շահագրգիռ կողմերը՝ Ադրբեյջանը, Ղազախստանը, Վրաստանը, Ուզբեկստանը եւ Թուրքիան, համատեղ հռչակագրով հաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ աջակցելու Բաքու-Ջեյհանի կառուցմանը: Ելույթ ունենալով հռչակագրի ստորագրումից հետո՝ Ադրբեյջանի նախագահ Ջեյդար Ալիևը հայտարարեց. «Այս հռչակագիրը արտահայտում է ստորագրած ղեկավարների կամքը, որը հիմք կծառայի Բաքու-Ջեյհանի իրականացման համար»²⁴⁹:

1998թ. դեկտեմբերին «Մոբիլ» (Mobil), «Շելրոն» (Chevron) եւ «Շել» (Shell) ընկերությունները Ղազախստանի իշխանությունների հետ Կասպիցի հատակով դեպի Ադրբեյջան նավթամուղի կառուցման տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ կատարելու պայմանագիր կնքեցին²⁵⁰: Սա նույնպես հիմք դարձավ, որ Բաքու-Ջեյհան նավթամուղը ներկայացվի որպես տնտեսապես արդարացված ծրագիր: Արդեն այն ժամանակ հասկանալի էր, որ Բաքու-Ջեյհանը կառուցվում էր ոչ միայն ադրբեյջանական «հում նավթի» առաքման, այլև ավազանի մյուս երկրների եւ հատկապես Ղազախստանի նավթը դեպի իրեն «ծագելու» համար, ինչը հնարավորություն կտար կապելու տարածաշրջանի երկրները ամերիկացիների կողմից վերահսկվող Բաքու-Ջեյհան նավթամուղին:

Նավթամուղի կառուցման հռեռեսական մոտեցումը պայմանավորված էր նավթի ցածր գներով. 1999թ. Նյու Յորքի հումքային բորսա-

²⁴⁸ Տես X. *Исмаїлова*. Сага о хитрой трубе. История Баку-Джейхан: ... (<http://www.centrasia.ru/newsA.php?st=1032841800>):

²⁴⁹ Տես *Amy Myers Jaffe, Ronald Soligo*. Energy security: the Russian connection. «Energy Security and Global Politics: The militarization of resource management», 2009, PP. 112-134:

²⁵⁰ Տես նույն տեղում:

յում WTI* կոչվող նավթի միջին գինը 16 դոլար էր, ինչը վերջին տասնամյակի համար աննախադեպ ցածր էր:

Լոնդոնի բորսայում վաճառվող «Բրենթ» (Brent)** կոչվող նավթի մեկ բարելի միջին արժեքը 15 դոլար էր²⁵¹: Սակայն, ինչպես նշեցինք, խողովակաշարի կառուցման հարցում Վաշինգտոնը եւ Անկարան ունեին լուրջ քաղաքական հետաքրքրություններ եւ անթաքույց ճնշումներ էին գործադրում նավթային ընկերությունների վրա՝ ստանալու նրանց համաձայնությունը նավթամուղի կառուցման համար: Եվ որպես առաջին քայլ՝ Անկարան որոշում ընդունեց սահմանափակելու նավթատարների անցումը Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներով:

Կասպյան նավթի 70 տոկոսը հասնում էր ռուսական Նովոռոսիյսկ նավահանգիստ, որտեղից նավթատարներով ուղղվում էր դեպի միջազգային շուկա: Սակայն երբ հայտարարվեց Բաքու-Ջեյհան նավթամուղի առաջնայնության մասին, բնապահպանական իրավիճակի վերաբերյալ պատճառաբանությամբ Թուրքիան սկսեց սահմանափակել նավթատարների անցումը նեղուցներով: Ըստ ռուսական աղբյուրների՝ Թուրքիայի այս քաղաքականության հետեւանքով մի քանի տարում Ռուսաստանի ֆինանսական վնասները կազմել են 500 մլն դոլար²⁵²:

2005թ. հոկտեմբերի 12-ին, ելույթ ունենալով Թբիլիսիում, Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեզդեթ Սեզերը հայտարարեց, որ պաշտո-

* WTI (West Texas Intermediate) - Նյու Յորքի հումքային սակարանում վաճառքի հանվող նավթի տեսակ: Թարգմանաբար նշանակում է «արեւմտյան տեխասյան միջանկյալ», սա Տեխասի նահանգում արդյունահանվող նավթի խառնուրդ է, որն ընդունվում է որպես չափորոշիչ Նյու Յորքի հումքային սակարանում այլ տիպի նավթի միջին գինը որոշելու համար (հեղ.):

** Brent (Brent Crude) - նավթի տեսակ, արդյունահանվում է Գյուսիսային ծովի համանուն նավթահորից, որը հայտնաբերվել է 1970թ.: Այս տեսակի նավթը համարվում է չափորոշիչային Լոնդոնի նավթային բորսայում սակարկումների ժամանակ: Նավթի մյուս տեսակների գինը որոշվում է Brent տեսակի հետ նրանց խտության եւ մաքրության համեմատությամբ:

²⁵¹ Տես «Как росли цены на нефть с 1999 г.» (<http://www.rb.ru/inform/50787.html>):

²⁵² Տես А. Багиров. Джейхан против Новороссийска?, 14.10.2005 (<http://www.gazetasng.ru/>):

նական Անկարան մտադիր է հետագայում էլ կրճատել Բոսֆորի եւ Դարդանեյի նեղուցներով նավթի առաքման ծավալները²⁵³: Այս քաղաքականությունը վարվում էր, որպեսզի սահմանափակվի Կասպյան խողովակաշարային կոնսորցիումով (Թենզիզ-Նովոռոսիյսկ) նավթի առաքումը: Այս ծրագիրը համահունչ էր նաեւ ԱՄՆ-ի կասպյան քաղաքականությանը՝ այսպիսով ճնշում գործադրել Ղազախստանի վրա, որպեսզի վերջինիս նավթը հոսի Բաքու-Ձեյհան խողովակաշարով:

Բաքու-Ձեյհանի կառուցման երկարատեւ բանակցությունները, կարելի է ասել, դրական հանգուցալուծման հասան 2002թ. օգոստոսի 1-ին, երբ շահագրգիռ կողմերը կնքեցին Նոր ընկերության ստեղծման պայմանագիրը²⁵⁴: Լոնդոնում ստեղծվեց «Բաքու-Թբիլիսի-Ձեյհան ընկերություն» (BTC Co.) կոչվող վերագալստանի մի կառույց, որը պետք է կառուցեր եւ շահագործեր նավթամուղը: Նոր ընկերության հիմնական բաժնետերերը անգլո-ամերիկյան «Բրիթիշ փեթրոլիում» (British Petroleum) ընկերությունն էր, որին պատկանում է ընկերության վերահսկիչ փաթեթը՝ բաժնետոմսերի 30,1%-ը, ապա հետեւում են Ադրբեյջանի նավթային պետական ընկերությունը (SOCAR)՝ 25%, ամերիկյան «Յունոքըլ» (Unocal)՝ 8,90%, Նորվեգական «Սթաթոյլը» (Statoil)՝ 8,71%, թուրքական ԹՊԱՕ-ն (TPAO)՝ 6,53%, իտալական «Էնի/Ագիփը» (Eni/Agip)՝ 5%, ֆրանսիական «Տոտալը» (Total)՝ 5%, ճապոնական «Իթոչուն» (Itochu)՝ 3,4% եւ ամերիկյան երկու ընկերություններ՝ «Զոնոքոֆիլիպսը» (ConocoPhillips)՝ 2,5% ու «Ամերադա Հեսը» (Amerada Hess)՝ 2,36%²⁵⁵:

Նորաստեղծ ընկերությունը պետք է կառուցեր 1737 կմ երկարությամբ նավթամուղ, որի հզորությունը օրական կազմելու էր մինչեւ 1 մլն բարել: Տարեկան դա լինում էր մոտ 50 մլն տոննա: Նավթամուղը

²⁵³ Տե՛ս *Amy Myers Jaffe*. Ronald Soligo, Energy security: ..., PP. 112-134:

²⁵⁴ Տե՛ս «Baku-Tbilisi-Ceyhan Pipeline Company founded», «Alexander's Gaz & Oil Connection», Vol. 7, Issue 18, September 19, 2002 (<http://www.gasandoil.com/goc/company/cnc23849.htm>):

²⁵⁵ Տե՛ս նույն տեղում:

կազմված է 12-մետրանոց 150 հազար խողովակներից, իսկ քաշը մոտ 655 հազար տոննա է²⁵⁶:

Ընկերության ստեղծման մասին Լոնդոնում կնքված պայմանագրից հետո խողովակաշարի կառուցման համար կային ոչ միայն քաղաքական, այլև անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ: Պայմանագրի կնքումից մեկ ամիս անց սկսվեցին շինարարական աշխատանքները: Ինչպես այդ օրերին գրում էր բրիտանական BBC-ն՝ «կասպյան երազանքը իրականություն դարձավ»²⁵⁷:

2002թ. սեպտեմբերի 17-ին, Բաքվից ոչ շատ հեռու, Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի նախագահների մասնակցությամբ պաշտոնապես բացվեց շինարարությունը, ներկա էր նաեւ ԱՄՆ-ի Էներգետիկայի նախարարը²⁵⁸:

Որ այս նախագիծը որոշակիորեն հակառուսական էր, հասկանում էին նաեւ Մոսկվայում եւ չէին թաքցնում իրենց դժգոհությունը այս ծրագրի իրագործումից: Ռուսաստանի Պետդումայի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Կոնստանտին Կոսաչովը հայտարարեց. «Պարզ է, որ այս ծրագիրը լույս աշխարհ է եկել քաղաքական, այլ ոչ թե տնտեսական շարժառիթներով: Ծրագրի նպատակն է՝ կառուցել Ռուսաստանը եւ Իրանը շրջանցող նավթամուղ, որը տարածաշրջանի Էներգետիկ պաշարները կկապի Արեւմուտքին»²⁵⁹:

Բաքու-Ջեյհանի կառուցմամբ պաշտոնական Բաքուն ցանկանում էր գործել Արեւմուտքի Էներգետիկ ռազմավարությանը համահունչ, ինչը, ըստ նրա, Ադրբեջանի անվտանգության կարեւորագույն երաշխիքը կարող է լինել եւ նպաստել այդ պետության դիրքերի ամրապնդմանը Ջարավային Կովկասում:

²⁵⁶ Տես նույն տեղում:

²⁵⁷ Տես «Caspian pipeline dream becomes reality». «BBC World Service», September 17, 2002 (<http://news.bbc.co.uk/2/hi/europe/2263611.stm>):

²⁵⁸ Տես նույն տեղում:

²⁵⁹ Տես «Самый политический проект в истории мировой «нефтянки» Нефтепровод, рожденный политикой» (<http://neftegaz.ru/analysis/view/505/>):

4. Բաքու-Ձեյհանի քաղաքական եւ տնտեսական բաղկացուցիչը

Բաքու-Ձեյհան նավթամուղի կառուցման համար ակտիվորեն ներգրավվում էին տարբեր ֆինանսական կազմակերպություններ: Ըստ նախագծի՝ խողովակաշարի սկզբնական արժեքը պետք է կազմեր 2,95 մլրդ դոլար, սակայն վերջնահաշվարկով 3,6 մլրդ դոլար էր²⁶⁰: Այս գումարի մոտ 800 մլն դոլարը տրամադրել էին նավթամուղի բաժնետերերը, իսկ 2,6 մլրդ դոլարը ֆինանսական տարբեր կառույցների վարկերն էին:

Որպես նախագծի հիմնական ֆինանսավորող հանդես եկան միջազգային մի քանի կառույցներ, որոնք ուղղակի կախվածություն ունեին ԱՄՆ-ից եւ Եվրամիությունից: Առաջինը Համաշխարհային բանկի հովանու ներքո գործող Միջազգային ֆինանսական կորպորացիան էր, երկրորդը՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը²⁶¹: Բացի սրանցից՝ վարկեր տրամադրեցին (1,2 մլրդ դոլարի չափով) 15 մասնավոր բանկերից բաղկացած սինդիկատը, խողովակաշարի խոշոր բաժնետերերը՝ «Բրիթիշ փետրոլիումը» (BP), «Սթաթօյլը» (Statoil), «Տոտալ» (Total) եւ «Զոնոքոֆիլիպսը» (ConocoPhillips), ինչպես նշեցինք, մոտ 800 մլն դոլարի չափով:

Այս ծրագրի իրագործման համար ԱՄՆ-ի պետդեպարտամենտի կասպյան հարցերով խորհրդական Սթիվեն Մանը բանակցություններ էր վարում Աստանայում՝ փորձելով համոզել, որ ծրագրին միանալը Ղազախստանին ձեռնտու է եւ՝ տնտեսական, եւ՝ քաղաքական նկատառումներով²⁶²: 2005թ. մայիսի 25-ին պաշտոնական Բաքուն հայտարարեց Բաքու-Ձեյհանի ադրբեջանական հատվածի կառուցման ավարտի եւ նավթամուղը փորձարկելու մասին:

²⁶⁰ Տես «Проект Баку-Тбилиси-Джейхан: экономические сомнения и финансовые проблемы». ИА «REGNUM», 28.12.2004 (<http://www.regnum.ru/news/384129.html>):

²⁶¹ Տես *D. Yergin*. The Quest: Energy, Security and the ...:

²⁶² Տես *Ian Rutledge*. Addicted to Oil: America's Relentless Drive for Energy Security:

Այդ արարողությանը մասնակցեցին 4 երկրների՝ Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի եւ Ղազախստանի նախագահները: Ի տարբերություն 2002թ.՝ արարողությանը Վրաստանից Շեւարդնաձեի փոխարեն մասնակցում էր Միխեիլ Սաակաշվիլին, Ադրբեջանից՝ Իլհամ Ալիևը: Յեյդար Ալիևն արդեն մահացել էր, հին խմբից մնացել էր միայն Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը, ավելացել էր Նուրսուլթան Նազարբաևը, որը լքջորեն էր հետեւում խողովակաշարի շուրջը ծավալվող զարգացումներին եւ չէր թաքցնում իր հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ: Միջոցառմանը, ինչպես եւ 2002թ., մասնակցում էր ԱՄՆ-ի Էներգետիկայի նախարարը՝ Սամուել Բոդմանը²⁶³: Ելույթ ունենալով լրագրողների առաջ՝ Բոդմանը նշեց, որ Վաշինգտոնը բավարարված է այս նավթամուղի հեռանկարով «ոչ միայն այն պատճառով, որ Բաքու-Ջեյհան խողովակաշարով հոսող լրացուցիչ նավթի շնորհիվ կմեղմվի համաշխարհային շուկայում առկա լարվածությունը, այլեւ այն պատճառով, որ այն Ադրբեջանի եւ տարածաշրջանի երկրների համար նոր տնտեսական հնարավորություններ կբացի, կբարձրացնի նրանց Էներգետիկ անկախությունը»²⁶⁴: Բոդմանը նշեց նաեւ, որ Կասպից ծովի ավազանում ԱՄՆ-ը «մեծ հետաքրքրություններ ունի», եւ այդ հետաքրքրությունները դեռ երկար ժամանակ «այստեղ կմնան»:

Մոտ 1760 կմ երկարություն ունեցող նավթամուղից շահագործման պատրաստ էր միայն ադրբեջանական 440 կմ հատվածը ամբողջությամբ, իսկ վրացական 244 կմ եւ թուրքական 1070 կմ հատվածները պատրաստ էին միայն մասամբ: Այսինքն՝ չնայած բացման, շահագործման ու նույնիսկ խողովակաշարը փորձարկելու պաշտոնական հայտարարություններին՝ նավթամուղը դեռ լիովին պատրաստ չէր, եւ դրա թուրքական հատվածում աշխատանքներ էին ընթանում:

Բաքվում տեղի ունեցած պաշտոնական բացումից մեկ տարի անց նմանատիպ բացում կատարվեց Թուրքիայում՝ Ջեյհան նավահանգս-

²⁶³ Տես *С. Мамедов. Ильхам Алиев принимает гостей. По трубопроводу Баку-Тбилиси-Джейхан пойдут первые тонны нефти. «Независимая газета», 25 мая 2005 г.:*

²⁶⁴ Տես նույն տեղում:

տում, դարձյալ Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի եւ Ղազախստանի նախագահների մասնակցությամբ: 2006թ. հուլիսի 13-ին Թուրքիայում տեղի ունեցած վերջնական բացման արարողությանը մասնակցելու պաշտոնական հրավեր էր ուղարկվել նաեւ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին, որը, սակայն, չժամանեց:

2006թ. մայիսի 28-ին Բաքու-Ջեյհան խողովակաշարով առաջին նավթը հասավ թուրքական նավահանգիստ եւ լցվեց Յեյդար Ալիեւի անվան տերմինալը, այստեղից էլ BP-ին պատկանող «Բրիթիշ Հոֆթորն» (British Hawthorn) կոչվող նավթատարով ուղղվեց դեպի Իտալիա²⁶⁵: Մինչեւ խողովակաշարի պաշտոնական բացումը առաջին փորձնական նավթը՝ մոտ 600 հազար բարել, միջազգային շուկա հանվեց: Սակայն նավթի համակարգված առաքումներն սկսվեցին 2006թ. հուլիսից:

Ադրբեջանական նավթի սպառողներից մեկն էլ Իսրայելն էր, ուր պարբերաբար սկսեցին լողալ Բաքու-Ջեյհանի նավթով լեցուն նավթատարները²⁶⁶: Պաշտոնական Թել Ավիվը միշտ շահագրգռված է եղել այս ծրագրով՝ որպես արաբական նավթի այլընտրանք: Սրանով էր բացատրվում նաեւ, որ հրեական լոբբիստական կառույցները ակտիվ աշխատանքներ էին տանում խողովակաշարի ծրագրի իրականացման համար: 1990-ական թվականներից պարզ էր, որ նավթի արտահանման հարցում Իսրայելի եւ Ադրբեջանի շահերը համընկնում են: Միջերկրածովյան Ջեյհան նավահանգիստը Իսրայելը համարում էր իր էներգետիկ անվտանգության կարեւորագույն բաղկացուցիչ:

Իսրայել-Ադրբեջան նավթային ընդհանուր շահերն էլ հետագայում հիմք դարձան երկկողմ հարաբերությունների խորացման համար, այդ թվում նաեւ ռազմական ոլորտում: Այս գործընթացի առաջին շրջանում ԱՄՆ-ի հրեական լոբբիստական կազմակերպությունները Իսրայելի անվտանգային շահերն առաջ մղելու գործում կարեւորում էին Բաքու-

²⁶⁵ Տես «Израиль получил первую партию азербайджанской нефти». ИА «REGNUM», 10.07.2006 (<http://www.regnum.ru/news/670923.html>):

²⁶⁶ Տես նույն տեղում:

Ջեյհան խողովակաշարի կառուցումը, եւ այս աջակցությունն էր նաեւ պատճառը, որ Սպիտակ տունը համաձայնեց ակտիվ դերակատարություն ստանձնել խողովակաշարի կառուցման գործում:

2006թ. հուլիսի 20-ի տվյալներով՝ Բաքու-Ջեյհան խողովակաշարով Ազերի-Չիրաք-Գյունեշլի նավթադաշտից արդեն մղվել էր «Ազերի լայթ» (Azeri Light) տեսակի մոտ 2 մլն 440 հազար 887 տոննա նավթ²⁶⁷: Այսինքն՝ 2006թ. հուլիսից սկսեց աշխատել Կասպից ծովը միջազգային նավթի շուկային կապող խողովակաշարը, որի կառուցման համար այդ նավթամուղով շահագրգիռ կողմերը ծախսել էին մոտ 10 տարի եւ 3,6 մլրդ դոլար:

Ծրագրի իրականացումն առաջին հերթին ձեռնտու էր Ադրբեջանին, որը լուծում էր մի քանի ռազմավարական խնդիրներ. նախ՝ թուլացնում էր իր կախվածությունը Ռուսաստանից, երկրորդ՝ դառնում էր դեպի Եվրոպա նավթ մղող պետություն, միաժամանակ Արեւմուտքի համար ռազմավարական նշանակություն ունեցող նավթամուղի համասեփականատերը: Ադրբեջանի նպատակն էր՝ տեղ զբաղեցնել Արեւմուտքի էներգետիկ անվտանգության համակարգում, ինչը կապահովի այդ երկրի անվտանգությունը եւ կամրապնդի դիրքերը Կովկաս-կասպյան տարածաշրջանում:

Դառնալով Արեւմուտքի նավթարտահանող պետություն Ալիեւների կլանը լուծում էր իր համար կարեւորագույն խնդիր՝ օրինականացնում էր իշխանությունը եւ այդ հարցում Արեւմուտքի չեզոքությունը: Ժամանակը ցույց տվեց, որ քաղաքական այս հաշվարկը իրեն մասամբ արդարացրել է, արեւմտյան պաշտոնական շրջանակները մինչ օրս էլ որոշակի վերապահումով են մոտենում այն ամենին, ինչ վերաբերում է Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակին՝ խոսքի ազատությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, քաղաքական հետապնդումներին, ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարմանը, ընտրակեղծիքներին, գործող կոռուպցիոն ու կլանային համակարգին:

²⁶⁷ Ств «Из Джейхана отправлено 8 танкеров азербайджанской нефти». ИА «REGNUM», 21.07.2006 (<http://www.regnum.ru/news/677178.html>):

Բաքու-Չեյխանի շահագործումից հետո պաշտոնական Բաքուն սվազեցրեց նավթի առաքումը Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղով, իսկ 2007թ. հունվարից այդ նավթամուղը ընդհանրապես դադարեց գործելու²⁶⁸: Սա պայմանավորված էր ոչ միայն քաղաքական դրդապատճառներով, այլև այն հանգամանքով, որ Ադրբեջանն ամեն գնով պետք է լցնի Բաքու-Չեյխանը, մինչդեռ չունի համապատասխան քանակությամբ նավթ՝ միաժամանակ սպասարկելու 3 նավթամուղ:

Բացի դրանից՝ պաշտոնական Բաքուն ձգտում էր դառնալ տարանցիկ երկիր միջինասիական նավթի համար, իսկ ԱՄՆ-ը առաջին հերթին հենց այս նկատառումներով էր սկսել Բաքու-Չեյխանի նախագիծը: Ինչպես, Բաքու-Չեյխանի շահագործումը հարվածեց նաև Բաքու-Սուփսա նախագծին, որով նույնպես դադարեց նավթի հոսքը²⁶⁹: Ու չնայած հնչող տարբեր խոստումներին, թե նավթի ծավալների աճի դեպքում կապահովվի նաև այդ ուղղությունը, Բաքու-Սուփսա խողովակաշարով նավթի առաքումը այդպես էլ կայուն չդարձավ:

5. Նավթամուղների ազդեցությունը Կովկաս-կասպյան տարածաշրջանում (ամփոփում)

ԽՍՀՄ-ի քայքայումից հետո Կասպից ծովի շրջանում սկսվեց նավթամուղների կառուցման մի շրջան, որի ավարտը կարելի է համարել 2006թ., երբ շահագործման հանձնվեց Բաքու-Չեյխան նավթամուղը: Նավթամուղների կառուցման այս մրցակցության մեջ ներգրավված էին տարբեր պետություններ եւ վերազգային ընկերություններ, որոնք տնտեսական ու քաղաքական տարբեր նպատակներ էին հետապնդում: Կասպյան խողովակաշարերի կառուցման միջազգային սուր

²⁶⁸ Տե՛ս «Госнефтекомпания Азербайджана не собирается возобновлять экспорт нефти по трубопроводу Баку-Новороссийск». ИА «REGNUM», 16.03.2007 (<http://www.regnum.ru/news/797574.html>):

²⁶⁹ Տե՛ս *Ali Tekin, Paul Andrew Williams*. Geo-Politics of the Euro-Asia Energy Nexus: The European Union, Russia and Turkey, 2011, P.126:

պայքարում այդ ուժերի նպատակները եւ քաղաքական շահերը շատ դժպքերում խաչվում էին՝ բախվում կամ համընկնում:

1991-2006թթ. վերանորոգվեցին եւ կառուցվեցին 7 նոր նավթամուղներ, որոնցից երեքը Ադրբեջանից էին սկիզբ առնում՝ Բաքու-Նովոռոսիյսկ, Բաքու-Սուփսա, Բաքու-Ջեյհան խողովակաշարերը, երեքը՝ Ղազախստանից՝ Թենգիզ-Նովոռոսիյսկ, Ատիրաու-Սամարա (Ռուսաստան), Ատասու-Ալաշանկոու (Չինաստան) նավթամուղները, յոթերորդը կառուցվեց Իրանում՝ Նեկա-Ռեյ (նկար 8):

Այսպիսով՝ վերջին 2 տասնամյակում Կասպից ծովի շուրջը սկսեցին գործել 7 նոր նավթամուղներ, չհաշված գազամուղները, որոնք, գտնվելով այս կամ այն երկրի քաղաքական ու տնտեսական ազդեցության տակ, լուրջ գործոն էին Կասպից ծովի ու նրա ընդերքի համար մղվող պայքարում:

Խողովակաշարային այս մրցակցության մեջ ներգրավված ափամերձ պետությունների թիվ մեկ խնդիրը նոր՝ այլընտրանքային ուղիների ստեղծումն էր՝ սեփական նավթը Արեւմուտքի եւ ապա Արեւելքի շուկաներ արտահանելու: Այս խողովակաշարերը նորանկախ պետությունների համար կենսական նշանակություն ունեին, նրանք միայն նավթ եւ գազ կարող էին առաջարկել միջազգային շուկային եւ դրա եկամտով ապահովել իրենց պետությունների գոյությունը: Բացի դրանից՝ նավթային եկամուտները նպաստում էին իշխող քաղաքական վարչակարգերի երկարատեւությանը, իբրեւ այդ վարչակարգերի գոյության ֆինանսավորման միակ աղբյուր՝ շատ արագ հայտնվում էին նրանց վերահսկողության ներքո: Նավթամուղների կառուցումը կարելու էր նորանկախ պետությունների վարչակարգերի համար, քանի որ դրանց օգնությամբ ցանկանում էին նաեւ տեղ զբաղեցնել մեծ տերությունների արտաքին քաղաքականության օրակարգում՝ ապահովելով իրենց պետությունների անվտանգությունը եւ լեգիտիմություն հաղորդելով իշխող քաղաքական խմբավորումներին:

Մեծ տերությունները կառուցվող խողովակաշարերի վերահսկողությամբ նպատակ էին հետապնդում՝ ազդեցություն ձեռք բերել իրենց համար կենսական նշանակություն ունեցող տարածաշրջանի պետությունների նկատմամբ: Եվ ազդեցություն հաստատելու հնարավորու-

թյուններից մեկն էլ Նոր Նավթամուղների կառուցումն էր, որով Արեւմուտքը լուծում էր երկու հարց՝ դուրս էր բերում այդ պետությունները Ռուսաստանի ազդեցությունից, թուլացնում էր ռուսական գործոնը տարածաշրջանում, միաժամանակ մեծացնում սեփական դերակատարումը Նորանկախ պետությունների քաղաքական ու տնտեսական համակարգում:

Այս պայքարի մեջ ներքաշված հիմնական «խաղացողները»՝ Ռուսաստանը, Չինաստանը, ԱՄՆ-ը եւ Եվրամիությունը, տարբեր նպատակներ էին հետապնդում, սակայն Նրանց գործողությունները շատ նման էին, բոլորն էլ ցանկանում էին վերահսկել տարածաշրջանը՝ կառուցելով Նոր Նավթամուղներ, որոնք, ըստ Նրանց, հիմնականը կլինեն Նավթի արտահանման համար: Այդ տերությունները գործում էին իրենց քաղաքական ու տնտեսական հնարավորությունների սահմաններում: Ռուսական ակտիվությանը եկավ փոխարինելու ամերիկյան ռազմավարությունը, որից հետո տարածաշրջանում «լուռ համառոթամբ» սկսեց դիրքերն ամրապնդել Չինաստանը:

Կովկաս-կասպյան տարածաշրջանում ընթացող էներգետիկ աշխարհաքաղաքական պայքարին հետեւող Իրանը փորձում էր իր դերակատարությունը իրականացնել սեփական Նավթամուղը կառուցելով, ցանկանալով կարելու տեղ զբաղեցնել Կասպից ծովի ավազանից Նավթի արտահանման գործում եւ իր Նավթամուղին «կապել» տարածաշրջանի պետություններին: Նավթի փոխանակման Իրանի առաջարկած ծրագիրը կոմերցիոն առումով ձեռնտու էր տարածաշրջանի Նավթ արտահանող բոլոր երկրներին: Իրանը իր Նեկա-Ռեյ Նավթամուղով որոշակի դեր ստանձնեց տարածաշրջանում՝ սկզբնական շրջանում մասամբ նաեւ նվազեցնելով Բաքու-Ջեյհան Նախագծի հնարավորությունները:

Չասկանալի կերպով Իրանի ակտիվությունը չէր ողջունվում ԱՄՆ-ի կողմից, իսկ Չինաստանը եւ Ռուսաստանը փորձում էին այդ ակտիվությունը օգտագործել սեփական դիրքերի ամրապնդման համար: Ռուսաստանը, որի համար Կասպից ծովի ավազանը նախ եւ առաջ իր ազդեցության եւ անվտանգության համար աշխարհառազմավարական

Նշանակության տարածք էր, փորձում էր շարունակել Էներգակիրների տարանցման հիմնական երկրի դերակատարությունը՝ վերականգնելով եւ կառուցելով Թենզիզ (Ղազախստան)-Նովոռոսիյսկ եւ Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղները: Ռուսաստանի հաջողությունը ժամանակավոր էր, քանի որ Արեւմուտքը Կովկաս-կասպյան տարածաշրջանի համար ընթացող պայքարում նախ եւ առաջ Ռուսաստանին էր ցանկանում գրկել տարանցման հիմնական պետության կարգավիճակից:

Չինաստանը իր հերթին կարելուորում է ակտիվ դերակատարությունը Կասպից ծովի ավազանում՝ այդ տարածաշրջանի Էներգակիրները դիտարկելով որպես իր համար կենսական նշանակության ռազմավարական պաշար: Պաշտոնական Պեկինի քաղաքական շահերը տարածաշրջանի Էներգետիկ պաշարների համար ընթացող մեծ խաղում բախվում էին թե՛ Ռուսաստանի, թե՛ Արեւմուտքի շահերին: Չինաստանը իր գործողություններով Ռուսաստանին նույնպես գրկում էր մենաշնորհային դիրքից եւ տարածաշրջանի նավթը, հետագայում նաեւ գազը ուղղում իր շուկա:

Խողովակաշարային այս պատերազմում ԱՄՆ-ը հատկապես կարելուորում էր Բաքու-Ջեյհան նավթամուղի գործոնը՝ կոչելով հիմնական ուղղություն, որով, ըստ Սպիտակ տան, պետք է հոսի կասպյան եւ միջինասիական նավթը: Արագորեն ձեռնամուխ լինելով Բաքու-Ջեյհանի կառուցմանը՝ ԱՄՆ-ը նպատակ էր հետապնդում, բացի ռուսական ազդեցության նվազեցումից Իրանի դիրքերի թուլացումը տարածաշրջանում:

ԱՄՆ-ի համար առաջնային է նաեւ Չինաստանի ակտիվությունը տարածաշրջանում կանխելը՝ թույլ չտալու նավթի հնարավոր հոսքը դեպի այդ պետություն: Բաքու-Ջեյհանին «կապելով» տարածաշրջանի նավթով հարուստերկրներին՝ պաշտոնական Վաշինգտոնը ուժեղացնում էր իր դերը այդ պետությունների թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության օրակարգում:

Ադրբեջանի համար նավթամուղը ռազմավարական նշանակություն ուներ, քանի որ դեռ ժամանակին Յեյդար Ալիեւը Բաքու-Ջեյհանի ծրագրի պայմանավորվածություններից հետո հայտարարեց. «Այս խողովակաշարով ոչ միայն նավթ է հոսելու, այլեւ քաղաքականու-

թյուն»²⁷⁰: Ալիեւները ընդհանրապես ցանկանում էին, որ Ադրբեջանը կարելուրագույն տեղ զբաղեցնի Արեւելք-Արեւմուտք Էներգետիկ եւ տրանսպորտային միջանցքում, ինչը նրանց օգտին էր թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական տեսանկյունից: Հետոյս Ալիեւի համար կարելուր էր Արեւմուտքի քաղաքական գործընկերը դառնալու հեռանկարը, առավել եւս՝ դեպի Արեւմուտք կասպյան նավթը ուղղորդող գլխավոր պետության կարգավիճակ ստանալը, ինչը, ըստ նրա, օրինականացնում էր նաեւ իր քաղաքական իշխանությունը եւ դրա ժառանգականությունը: Սակայն Բաքու-Ջեյհան նախագիծը Ադրբեջանին միաժամանակ կանգնեցնում էր հարեւան երկրների՝ Ռուսաստանի եւ Իրանի հետ հարաբերությունների սրման ուղու վրա: Իսկ Չինաստանի հետագա ակտիվացումը եւ Կենտրոնական Ասիայից Էներգակիրների ուղղումը իր շուկա որոշակիորեն հակասություն էին ստեղծում նաեւ Ադրբեջանի հետ:

Կարող ենք ամփոփել, որ նավթամուղային այս պայքարում հաղթողներ այդպես էլ ի հայտ չեկան: Ռուսաստանի մենաշնորհը վերջականապես վերացավ, սակայն ԱՄՆ-ին էլ չհաջողվեց ստեղծել նավթի արտահանման հիմնական խողովակաշար: Բաքու-Ջեյհան նավթամուղով մինչ օրս էլ հիմնականում հոսում է Ադրբեջանական նավթը, հետեւաբար՝ այդ խողովակաշարը տարածաշրջանային նշանակություն, ինչպես նախագծում էին վաշինգտոնյան ռազմավարագետները, այդպես էլ ձեռք չբերեց: Իրանին մինչեւ օրս հաջողվում է Ղազախստանից նավթ ստանալ իր «փոխանակման» ծրագրով եւ աշխատեցնել Նեկա-Ռեյ նավթամուղը:

Չինաստանի ակտիվ մուտքը Ղազախստան եւ նոր նավթամուղի կառուցումը Բաքու-Ջեյհանին ընդհանրապես զրկեցին տարածաշրջանային կոչվելու հավակնություններից, ինչը հարված էր նաեւ ԱՄՆ-ի ու Եվրամիության քաղաքական եւ տնտեսական շահերին: Չինացիների ծրագրերը վերջականապես զրկեցին Ռուսաստանին տարածաշրջանի նավթի, հետագայում նաեւ գազի արտահանման մենաշնորհային ի-

²⁷⁰ Տե՛ս «По БТД будет течь не только нефть, но и политика: Армения – «третья лишняя»». ИА «REGNUM», 26.05.2005 (<http://www.regnum.ru/news/460480.html>):

րավունքներից: Չինաստանի ակտիվացող դերը Կովկաս-կասպյան տարածաշրջանում նոր իրողություն է, որի հետ ստիպված են հաշվի նստել թե՛ Ռուսաստանը, թե՛ ԱՄՆ-ն և թե Եվրամիությունը:

Ռուսաստանը, սակայն, նույնիսկ այս պայմաններում շարունակում է ակտիվ դերակատարությունը տարածաշրջանի էներգակիրների արտահանման շուկայում: Այսօր Ռուսաստանը, Չինաստանը և Արեւմուտքը նավթի արտահանման հարցում ուժային որոշակի հավասարակշռություն են ստեղծել Կովկաս-կասպյան տարածաշրջանում: Նավթամուղային այս հավասարակշռությամբ, կարելի է ասել, Կասպից ծովի ավազանից դուրս եկող խողովակաշարերը գրկվել են տարածաշրջանային կոչվելու հավակնություններից, հետեւաբար՝ **նավթի արտահանման հիմնական խողովակաշար կառուցելու Արեւմուտքի նախագիծը կարելի է ձախողված համարել:**

**ԳԼՈՒԽ IV. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

Հարավային Կովկասում ընթացող Էներգետիկ աշխարհաքաղաքական պայքարի ուսումնասիրությունը կարելու պայման է՝ հասկանալու տարածաշրջանի անվտանգային միջավայրը եւ դրա զարգացման դինամիկան՝ պայմանավորված Էներգետիկ գործոնի ազդեցության փոփոխմամբ: Տարածաշրջանում ձեւավորվող Էներգետիկ անվտանգության համակարգերը փոխկապակցված են ոչ միայն Հարավային Կովկասի եւ Կասպից ծովի ավազանի երկրներում գործող ու միմյանց կապված Էներգետիկ համակարգերով, այլեւ տարածաշրջանով հետաքրքրված տերությունների աշխարհաքաղաքական շահերով: Տարածաշրջանի պետությունների մրցակցությունը, պայմանավորված հակամարտությունների գոյությամբ եւ միջպետական շահերի միջեւ առկա տարածայնություններով, սրում է իրավիճակը Հարավային Կովկասում:

Հիմնականում հենց տարածաշրջանով հետաքրքրված դերակատարների՝ ԱՄՆ, Եվրամիություն, Ռուսաստան եւ Չինաստան, Էներգետիկ աշխարհաքաղաքական մրցակցությունն է շատ դեպքերում վերածվում սուր հակամարտության եւ ազդում տարածաշրջանի անվտանգային միջավայրի վրա՝ տեղի պետություններին ստիպելով իրենց Էներգետիկ քաղաքականությունը համահունչ դարձնել առաջինների շահերին: Այդ դերակատարների մրցակցությունը Կովկաս-կասպյան տարածաշրջանում բացասաբար է ազդում ոչ միայն անվտանգության

միջավայրի վրա ընդհանրապես, այլևս Էներգետիկ անվտանգության համակարգերի վրա մասնավորապես:

Արեւմուտքի Էներգետիկ անվտանգության հիմնական սկզբունքը՝ Էներգետիկ բոլոր աղբյուրների մատչելիության կիրառումը գործում է, երբ նավթի քիչ թե շատ պաշար ունեցող ամեն մի երկրից նավթի ու գազի արդյունահանումը եւ արտահանումը դառնում են վերահսկելի, թափանցիկ ու մատչելի վերազգային նավթային գերհսկա ընկերությունների համար: Հենց այս դիտանկյունից է Արեւմուտքը վերաբերվում Կովկաս-կասպյան տարածաշրջանին՝ որպես մատչելի նավթի ու գազի հերթական տարածքի, որի գոյությունը ամրապնդում է միջազգային շուկայում արեւմտյան սպառողների դիրքերը՝ թույլ չտալով որեւէ մեկին դոմինանտ դեր ստանձնել այնտեղ:

Այսինքն՝ համաշխարհային Էներգետիկ շուկայի ազատականացման գործընթացում կամ, այլ կերպ ասած, բոլոր աղբյուրների մատչելիության համակարգի՝ խմբի ստեղծման գործում Կովկաս-կասպյան տարածաշրջանը ընդամենը մեկ օղակ է, որը թեեւ վճռորոշ դեր չի կատարում այդ համակարգի գործունեության մեջ, սակայն անհրաժեշտ պայման է Էներգետիկ անվտանգության գլոբալ համակարգի լիարժեքության համար:

Տարածաշրջանի նշանակությունը գլոբալ Էներգետիկ անվտանգության համակարգում մեծ չէ, սակայն նաեւ թերագնահատելու կարիք չկա, քանի որ Արեւմուտքը շարունակում է կարելորել նավթի ու գազի արտահանման յուրաքանչյուր լրացուցիչ հնարավորությունը: Հենց այս տեսանկյունից էլ պետք է դիտարկել Հարավային Կովկասի Էներգետիկ նշանակությունը՝ որպես Արեւմուտքի կողմից ձեւավորվող գլոբալ Էներգետիկ անվտանգության մի մաս, որտեղից նավթի ու գազի արդյունահանումը եւ արտահանումը ամրապնդում են անվտանգային այդ համակարգի կայունությունը եւ հուսալիությունը: Հետեւաբար՝ Էներգետիկ անվտանգության արեւմտյան մոդելի գործունեության շրջանակում էլ պետք է դիտարկել նաեւ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դերակատարությունը՝ որպես տարածաշրջանում ծավալվող Էներգետիկ աշխարհա-

քաղաքական մրցակցության եւ Էներգետիկ միջանցքի անվտանգության պահպանման կարելոր ու ազդեցիկ մասնակիցների:

Հայաստանի Հանրապետությունը ուրույն դեր ունի տարածաշրջանային անվտանգային միջավայրի կայունության պահպանման, հետեւաբար՝ Էներգետիկ անվտանգության համակարգերի գործունեության մեջ: Այս տեսակետը ժամանակի ընթացքում ավելի հասկանալի եւ ընկալելի է դառնում այն տերությունների համար, որոնք շահագրգռված են Հարավային Կովկասի Էներգետիկ միջանցքի կայուն գործունեությամբ: Վճռորոշ է դառնում կարծիքը, որ տարածաշրջանի կայունությունը եւ Էներգետիկ միջանցքի գործունեությունը կախված են Հայաստանի Հանրապետության դիրքորոշումից եւ ներգրավվածությունից տարածաշրջանի անվտանգային միջավայրի բարելավման գործընթացի մեջ: Սա է նաեւ պատճառներից մեկը, որ Լեռնային Ղարաբաղի խնդրում ստատուս քվոյի, այսինքն՝ անվտանգության ներկա իրավիճակի պահպանումը Էներգետիկ անվտանգության գլոբալ հակարազի կայունությամբ շահագրգիռ դերակատարների համար դառնում է կարելոր պայման՝ տարածաշրջանից Էներգետիկ անխափան հոսքերն ապահովելու գործում:

Հարավային Կովկասի հակամարտությունների, հատկապես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի սրումը կարող է պատճառ դառնալ անկայունության եւ Էներգետիկ հոսքերի երկարատեւ ընդհատման: 2008թ. Հարավային Օսիայի պատճառով սկսված ռուս-վրացական հայտնի ճգնաժամը մեկ անգամ եւս ապացուցեց, որ հակամարտությունների սրումը ուղղակիորեն ազդում է Էներգակիրների արտահանման վրա՝ ընդհատելով խողովակաշարերի աշխատանքը, խոցելի դարձնելով տարանցման ուղին:

Ժամանակի ընթացքում Արեւմուտքի համար ընկալելի է դառնում, որ առանց Հայաստանի ներգրավման տարածաշրջանային անվտանգության մասին ընդհանրապես եւ Էներգետիկ հոսքերի կայունության մասին մասնավորապես խոսելն անիմաստ է: ՀՀ-ն պետք է ամրացնի իր դիրքերը՝ Արեւմուտքին ցուցադրելով, որ տարածաշրջանում կայունության պահպանման գլխավոր գործոնն է, ադրբեջանական ագրեսիան զսպող հիմնական ուժը, հետեւաբար՝ Հարավային Կովկասից Էներ-

գակիրների տարանցման անվտանգության հիմնական երաշխավորներից մեկը, առանց որի շահերը հաշվի առնելու չի կարելի խոսել Հարավային Կովկասի կայունության, առավել եւս՝ Էներգակիրների հուսալի տարանցման մասին:

1. Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները Էներգետիկ անվտանգության ոլորտում

Էներգետիկ անվտանգության հիմնախնդիրն ուղղակիորեն առնչվում է ամեն մի պետության ազգային անվտանգությանը, որը չի կարող արդյունավետ գործել առանց Էներգետիկ անվտանգության ժամանակակից համակարգերի: Այս իրողության մեջ համոզվեցինք դեռ անցյալ դարի 90-ականներին՝ այսպես կոչված «մութ ու ցուրտ» տարիներին, երբ երկրում ստեղծված Էներգետիկ ճգնաժամի պատճառով ոչ այնքան դարաբաղյան պատերազմն էր, որքան Էներգետիկ անվտանգության ռազմավարության մշակման հարցում գիտելիքների պակասը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Էներգետիկ ճգնաժամը նորանկախ Հայաստանում հնարավոր, բայց ոչ պարտադիր պայման էր: Եթե լինեք պետության ազգային անվտանգության եւ մասնավորապես Էներգետիկ անվտանգության մասին գիտելիքահեն մոտեցում, ապա Հայաստանի Հանրապետությունը կկարողանար խուսափել Էներգետիկ երկարատեւ ճգնաժամից:

Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անվտանգության համակարգը թե՛ ԽՍՀՄ-ի գոյության տարիներին, թե՛ այսօր հիմնականում կապված է Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերություններից, քանի որ նա է մինչ օրս Էներգակիրների հիմնական մատակարարը: Ներմուծվող գազի 80% եւ միջուկային վառելիքի 100% մատակարարումները մինչ օրս կատարվում են Ռուսաստանից:

Հայաստան-Ռուսաստան քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների նորագույն շրջանը սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ տասնամյակներ շարունակ ստեղծված տնտեսական կապերի զանգ-

վածային խզումներով: Պատճառներից մեկը Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակն էր՝ պատերազմը Լեռնային Ղարաբաղում, Աբխազիայում եւ Հարավային Օսիայում:

Փոփոխված քաղաքական իրավիճակը եւ խզված կապերը Ռուսաստան-Հայաստան տնտեսական հարաբերություններում խոր ճգնաժամի հանգեցրին: ԽՍՀՄ-ի փլուզումը բացասաբար ազդեց բոլոր հանրապետությունների վրա, սակայն Հայաստանի Հանրապետության վրա այդ ազդեցությունն ավելի մեծ էր, քանի որ մեր երկիրը հայտնվեց տնտեսական եւ էներգետիկ շրջափակման մեջ:

Հայաստան արդյունաբերական հումքի եւ գազի ներկրման ընդհատումը հանգեցրեց տնտեսական եւ հատկապես էներգետիկ համակարգի փլուզմանը: Ներքին համախառն արդյունքը կրճատվեց 10 անգամ, ինչն աննախադեպ էր ԱՊՀ ողջ տարածքում:

1991թ. հետո Հայաստանը եւ Ռուսաստանը սկսեցին կառուցել նոր հարաբերություններ, ինչի համար վերջին 2 տասնամյակում Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ, ընդհանուր առմամբ, կնքվել են մոտ 170 միջպետական, միջկառավարական եւ միջգերատեսչական պայմանագրեր:

Միջպետական առաջին պայմանագրերից մեկը, որը կարգավորում էր երկուստեք հարաբերությունները, ստորագրվեց դեռ 1992թ. փետրվարի 28-ին եւ կոչվում էր «ՀՀ կառավարության եւ ՌԴ կառավարության միջեւ ազատ առևտրի վերաբերյալ»²⁷¹ համաձայնագիր:

Երկու պետությունների տնտեսական հարաբերություններն ավելի ակտիվացան, երբ 2000թ. հոկտեմբերի 20-ին կնքվեց երկուստեք կարգավորման բազային երկրորդ պայմանագիրը Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ՝ համատեղ առևտրի ժամանակ ոչ

²⁷¹ Տես «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ ազատ առևտրի վերաբերյալ», 28 փետրվարի 1992 թ. (<http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>):

ուղղակի հարկերի հավաքման մասին²⁷²: Տնտեսական հարաբերությունների կարգավորման համար ռազմավարական նշանակություն ունի նաեւ 2001թ. սեպտեմբերի 15-ին «ՀՀ-ի եւ ՌԴ-ի միջեւ մինչեւ 2010թ. տնտեսական երկարատեւ համագործակցության մասին պայմանագրի»²⁷³ կնքումը:

Կարող ենք ասել, որ 90-ականների տնտեսական համագործակցության ցածր մակարդակին փոխարինելու եկավ 2000-ականների ակտիվ երկկողմ համագործակցությունը:

Հայաստանի Հանրապետության շրջափակումից հատկապես տուժեց տնտեսության էներգետիկ հատվածը: 1989թ. Մեծամորի ատոմակայանի չմտածված փակման եւ գազի ներմուծման անկանոնության պայմաններում Հայաստանը էներգետիկ խոր ճգնաժամի մեջ հայտնվեց: Գազի մատակարարման ընդհատումների հետեւանքով Երեւանի եւ Հրազդանի ջերմակայանները չէին աշխատում, ինչը հանգեցրել էր էլեկտրաէներգիայի պակասության:

Ստեղծված իրավիճակի հաղթահարման համար իրականացվեց հայկական աէլի վերագործարկման բավականին բարդ ծրագիրը, ինչն աննախադեպ էր ատոմային կայանների շահագործման պատմության ընթացքում: 90-ականների երկրորդ կեսից կանոնավորվեց նաեւ գազի մատակարարումը Ռուսաստանի Դաշնությունից:

Մեծամորի աէլի վառելիքը մատակարարվում էր Ռուսաստանից, եւ հիմնականում ատոմային վառելիքի մատակարարման պարտքն էր (մոտ 100 մլն դոլար) պատճառը, որ Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարությունները իրականացրին «Գույք՝ պարտքի դիմաց» ծրագիրը:

²⁷² Տես «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ փոխադարձ առեւտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին», 20 հոկտեմբերի 2000թ., ք. Մոսկվա (<http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>):

²⁷³ Տես «Պայմանագիր Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ մինչեւ 2010թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին», 15 սեպտեմբերի 2001թ., ք. Երեւան (<http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>):

րը, ինչը իր ձեւի մեջ նույնպէս աննախադէպ էր համաշխարհային պրակտիկայում:

Այս համաձայնագրի շրջանակներում որոշվեց 5 տարով Մեծամորի աւելի ֆինանսական կառավարումը հանձնել Ռուսաստանին: Սակայն հայ-ռուսական էներգետիկ ոլորտում ամենամեծ եւ հաջողված գործարքը կարելի է համարել 1997թ. «Հայռուսգազարդ» հայ-ռուսական համատեղ ընկերության ստեղծումը²⁷⁴: Այս համատեղ ձեռնարկությանն են պատկանում Հայաստանում գազի շուկայի ճնշող մեծամասնությունը եւ երկրի գազաբաշխման ողջ համակարգը (2013թ. Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց «Գազպրոմին» վաճառել «Հայռուսգազարդի» բաժնետոմսերի՝ պետությանը պատկանող վերջին 20%-ը) եւ Հրազդան ջէկ-ի 5-րդ էներգաբլոկը²⁷⁵:

Ռուսաստանի Դաշնությունը տիրապետում է համաշխարհային գազի պաշարների 17,6%-ին, ինչը երկրորդն է աշխարհում, առաջին տեղում է մեր հարավային հարեւանը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ մոտ 18%, ԱՊՀ տարածքում գազի զգալի պաշարներ ունի Նաեւ Թուրքմենստանը՝ 9,3%, Ուզբեկստանը եւ Ղազախստանը տիրապետում են ապացուցված գազի պաշարների համապատասխանաբար 0,6 եւ 0,7%-ին, իսկ Ադրբեջանը՝ 0,5%-ին²⁷⁶:

Հետագայում Հայաստանի Հանրապետությունը, էներգակիրների ներմուծման բազմազանեցման քաղաքականության տրամաբանությունից ելնելով, ակտիվ բանակցություններ սկսեց վարել Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Կողմերը 2004թ. սեպտեմբերի 8-ին ստորագրեցին Իրան-Հայաստան գազամուղի կառուցման պայմանագիր²⁷⁷: Համաձայն կնքված պայմանագրի՝ իրանական կողմը պետք է

²⁷⁴ Տես «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կայքը (<http://www.armrusgasprom.am/am/home/arg/>):

²⁷⁵ Տես "Հայռուսգազարդ"-ի ղեկավարը դժգոհ չէ 5-րդ էներգաբլոկի գործարքից, 22 մայիսի 2006, <http://armenia-am.gazprom.com/press/about-company/2006/05/96/>

²⁷⁶ Տես «BP Statistical Review of World Energy», June 2013 (http://www.bp.com/content/dam/bp/pdf/statistical-review/statistical_review_of_world_energy_2013.pdf):

²⁷⁷ Տես «Իրան-Հայաստան գազատարի կառուցման պայմանագիր», 2004թ. (<http://www.mfa.am/hy/country-by-country/ir/>):

Հայաստանի Հանրապետությանը 20 տարվա ընթացքում մատակարարի մոտ 36 մլրդ խորանարդ մետր գազ:

Հայաստանի էներգետիկ անվտանգության համար ռազմավարական նշանակության այս խողովակաշարի կառուցման նկատմամբ ռուսական կողմը սկզբնական շրջանում զգուշավոր վերաբերմունք ուներ, հնչում էին կարծիքներ, թե հայ-իրանական խողովակաշարը կարող է նույնիսկ մրցակից լինել ռուս-թուրքական «Երկնագույն հոսք» կոչվող գազամուղին: Հետագայում «Գազպրոմը» հայտարարեց, որ հետաքրքրված է ծրագրով եւ պատրաստ է մասնակցել խողովակաշարի կառուցմանը: Այս փաստը 2005թ. հաստատեց նաեւ Հայաստանի Հանրապետություն ժամանած Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Սերգեյ Լավրովը²⁷⁸:

Հայաստան-Իրան գազամուղը ոչ միայն այլընտրանքային գազ է ապահովում Հայաստանի Հանրապետությանը եւ հնարավոր ճգնաժամի՝ Ռուսաստանից գազի մատակարարման խափանման դեպքում կարող է այլընտրանք լինել, այլեւ որոշ չափով զսպում է գազի գնի բարձրացումը «Գազպրոմի» կողմից՝ ռուսական գազը միշտ «ստիպված» է ավելի էժան լինել, քան իրանականը:

Մինչեւ 2013թ. գարունը, ըստ պաշտոնական աղբյուրների, ԱՊՀ տարածաշրջանում «Գազպրոմը» Հայաստանին գազը վաճառում էր 180\$ 1000 խորանարդ մետրի համար, Բելառուսի համար այդ գինը 2013թ. կազմել է 186\$, իսկ Ուկրաինայի համար ռուսական գազի միջին տարեկան գինը 2013թ. եղել է 426\$, եվրոպական երկրներին վաճառվող ռուսական գազի գինը տատանվում էր 350\$-550\$-ի սահմաններում²⁷⁹:

²⁷⁸ Տես «Ռուսաստանը ողջունում է Իրան-Հայաստան գազամուղի շինարարության համաձայնագիրը», 18 փետրվարի 2005 (<http://www.panarmenian.net/arm/world/news/12151/>):

²⁷⁹ Տես «Кто сколько платит за российский газ (долларов за 1 тыс. куб. м)» (<http://sobesednik.ru/rassledovanie/20140406-gazovaya-dubina-rossii-kak-izmenitsya-stoimost-gaza-iz-za-k>):

«Գազ՝ Էլեկտրականության դիմաց» ծրագրով Իրանից առաքվող գազի մոտավոր գինը 2006-2010թթ. 1000 խորանարդ մետրի համար 215\$-230\$ էր: Ինչպես նշեցինք, Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանից գազը մինչև 2013թ. ստանում էր 180\$-ով, իսկ 2013թ. գարնանից գինը բարձրացավ՝ հասնելով 270\$-ի 1000 խորանարդ մետրի համար: Ռուսաստանի Դաշնության կողմից գազի գնի նման անսահման բարձրացումը Հայաստանի Հանրապետության համար միջազգային շուկայում վերջին տարիներին գազի գնի թանկացման հետևանք էր: Սակայն նաև պարզ դարձավ, որ գազի գնի իրական բարձրացում եղել էր դեռ 2011թ. եւ կուտակված պարտքերի (մոտ 300 մլն դոլար) դիմաց Հայաստանի կառավարությունը ստիպված էր վաճառել «Հայռուսգազարդի» բաժնետոմսերի 20%-ը²⁸⁰:

2013թ սեպտեմբերի 3-ի՝ Մաքսային միություն մտնելու մասին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի համատեղ հայտարարությունից հետո երկկողմ բանակցություններով կնքված նոր պայմանագրով ՀՀ-ում գազի գնի ձեւավորումը կապվեց ներուսաստանյան գներին²⁸¹: Գազի գինը ՀՀ-ի համար կազմեց 189\$:

2010թ. աճել է նաև Իրանից արտահանվող գազի գինը, Իրան-Թուրքիա սահմանին 350 դոլար է 1000 խորանարդ մետրի համար: Գազի գինը բարձրացրել է նաև Ադրբեջանը, որը 2011թ. գազը Թուրքիային՝ վրաց-թուրքական սահմանում, վաճառում է 290 դոլարով: Իրանից գազի ներմուծումը եւ ընդհանրապես գազամուղի առկայությունը, կարելի է ասել, ամրապնդում են Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անվտանգությունը՝ բարձրացնելով նոր մակար-

²⁸⁰ Տես Գազի մասին համաձայնագիրը լուրջ եւ կարեւոր գործարք է Հայաստանի համար. Էկոնոմիկայի նախարար, http://arka.am/am/news/economy/_gazhamacaynagir176/#_sthash.Ojar6dCi.dpuf

²⁸¹ Տես «ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել են համատեղ հայտարարություններ» (<http://www.president.am/hy/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/>):

դակի: Հասկանալի է, որ տարածաշրջանում նոր ճգնաժամերի եւ հատկապես ռազմական բախման դեպքում Իրան-Հայաստան գազամուղը լիովին կարող է կատարել իր դերը՝ որպես այլընտրանքային աղբյուր ՀՀ գազ ներմուծելու համար:

Գնային այս պայքարում Հայաստանը համեմատաբար ցածր գնով գազ ստանալ երկար ժամանակ չէր կարող, եւ ռուսական գազի գնի աճը շարունակական կլինի, իսկ թե ինչքանով կհամաձայնի մեզ գազ վաճառել Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ այս հարցի պատասխանը հնարավոր կլինի ստանալ, երբ կայանան երկկողմ բանակցություններ:

Հայ-ռուսական էներգետիկ համագործակցության կարելուր ուղղություններից է նաեւ Մեծամորի ատոմակայանի նոր էներգաբլոկի կառուցումը: Հայկական աէլը ապահովում է Հայաստանի էլեկտրաէներգիայի պահանջարկի մինչեւ 42%-ը, հետեւաբար՝ ատոմակայանի աշխատանքը ռազմավարական նշանակություն ունի: Սակայն Եվրամիությունը պահանջում է փակել Մեծամորի աէլը՝ դրա համար ժամկետ սահմանելով 2016թ.:

Փակման հարցը դրված է նաեւ Եվրամիության «Եվրանեստ» նոր քաղաքականության օրակարգում²⁸²: Սակայն աէլի փակումը Հայաստանի էներգահամակարգը նոր դժվարությունների առաջ կկանգնեցնի, հետեւաբար՝ կարելուրվում է փոխարինող նոր հզորությունների ստեղծումը: Վերջին տարիներին, Երեւանի եւ Հրազդանի ջեկերի վերագինմամբ հզորացել են այդ կայանների հնարավորությունները, սակայն աէլը ոչ միայն էներգետիկ, այլեւ Հայաստանի անվտանգային քաղաքականության կարելուրագույն բաղկացուցիչներից մեկն է, որի փակումը, նույնիսկ այլընտրանքային էներգիայի առկայության դեպքում, չի բխում Հայաստանի Հանրապետության շահերից:

²⁸² Տես «Communication from the commission to the European parliament and the council. Eastern Partnership» {COM(2008) 823}. Commission staff working document. Commission of the European communities, Brussels, SEC(2008) 2974/3 (http://eeas.europa.eu/eastern/docs/sec08_2974_en.pdf):

Ինչպես նշեցինք, ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի 42%-ը ապահովում է Մեծամորի ատոմակայանը, որի փակումը կնվազեցնի ՀՀ էներգետիկ շուկայի ինքնաբավության մակարդակը՝ սպառնալով պետության էներգետիկ անվտանգությանը: ՀՀ կառավարությունը որոշել է Հայաստանի ատոմային էլեկտրակայանի 2-րդ բլոկը շահագործումից հանելուց հետո փոխարինել այլ արտադրական հզորություններով²⁸³: Ըստ մասնագետների՝ 2-րդ բլոկը նվազագույն ծախսերով փոխարինելու նախընտրելի տարբերակն ատոմային նոր բլոկի կառուցումն է²⁸⁴:

«Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման մասին» 2009թ. հոկտեմբերի 27-ին ընդունված ՀՀ օրենքի համաձայն՝ կառավարությունը որոշել է կառուցել նոր միջուկային էներգաբլոկ՝ մինչև 1200 մեգավատ ընդհանուր հզորությամբ²⁸⁵:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն իրականացնելու նպատակով հիմնվել է «Մեծամորէներգատոմ» ՓԲԸ, որը, որպես սեփականատեր եւ շահագործող ընկերություն, նոր միջուկային էներգաբլոկի նախագիծը մշակողն է²⁸⁶: Նոր էներգաբլոկի կառուցման համար «Մեծամորէներգատոմ» ՓԲԸ-ն առաջարկել է ռուսական 1060 ՄՎտ հզորության աէկ-92 մոդելը, որը ՁՋԷՌ-1000 տիպի ռեակտորի բարելավված տարբերակն է՝ համալրված անվտանգության լրացուցիչ՝

²⁸³ Տես ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված ՀՀ էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին», հմ. 1296-Ն որոշումը (<http://www.dpf.am/uploads/MoEn%20NSS.pdf>):

²⁸⁴ Տես նույն տեղում:

²⁸⁵ Տես «Հայաստանի Հանրապետության նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման մասին» օրենքը (<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=3201&Reading=2>):

²⁸⁶ Տես ՀՀ կառավարության «Մեծամորէներգատոմ» փակ բաժնետիրական ընկերության ստեղծման հիմնադիր պայմանագրին եւ կանոնադրությանը հավանություն տալու մասին» որոշումը (<http://www.gov.am/files/meetings/2009/4406.pdf>):

պասիվ եւ ակտիվ համակարգերով, որոնք համատեղում են անվտանգ եւ բնականոն շահագործման գործառնությունները²⁸⁷:

Սակայն, ըստ շատ մասնագետների, Էներգաբլոկի կառուցման ռուսական նախագիծը ՀՀ-ում Էներգետիկ սպառման փոքր շուկայի, Էներգաբլոկի բարձր գնի (4-5 մլրդ դոլար) եւ ՀՀ-ի տարածք նման հզորության միջուկային Էներգաբլոկի սարքավորումներ տեղափոխելու տեխնիկական դժվարությունների պատճառով կոմերցիոն տեսանկյունից շահավետ չէ, ինչն էլ խոչընդոտ է ներդրումների ներգրավման եւ Էներգաբլոկի կառուցման համար:

Ներկայումս աշխատում է Մեծամորի կայանի միայն մեկ Էներգաբլոկը՝ մոտ 407,5 մեգավատտ հզորությամբ: Ռուսական կողմը հայտարարում է, որ նոր Էներգաբլոկի մոտավոր արժեքը կկազմի 4-5 մլրդ դոլար: Նոր ատոմակայանի գինը թերեւս որոշակի հարցեր է առաջացնում փորձագիտական շրջանակներում, քանի որ պարզ չէ, թե ինչու հենց այդ գինն է նշվում, երբ նմանատիպ աէլի համար Հնդկաստանից «Ռոսատոմը» պահանջել է ընդամենը 3 մլրդ դոլար գումար²⁸⁸:

Ծրագրի իրականացումը կբարձրացնի Հայաստանի Էներգամատակարարության մակարդակը, Հայաստանը կկարողանա մեծացնել Էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորությունները, իսկ արտահանման համար, գոնե առայժմ, մենք միայն մեկ ուղղություն ունենք՝ Իրանի Իսլամական Հանրապետություն:

Ռուսական կողմը հայտարարել է, որ պատրաստ է իրականացնել այս ծրագիրը եւ ներդնել գնի 20%-25%-ը՝ մոտ 1 մլրդ դոլար, սակայն ատոմակայանի կառուցման համար հայտարարված միջազգային տենդերներն այդպես էլ անարձագանք մնացին այլ ներդրողների կող-

²⁸⁷ Տես «Հայաստանի նոր միջուկային Էներգաբլոկի բնապահպանական (շրջակա միջավայրի վրա ազդեցության) հաշվետվություն» (<http://www.minenergy.am/hy/en/atomhashvetvut>):

²⁸⁸ Տես «Nuclear Power in India» (<http://www.world-nuclear.org/info/Country-Profiles/Countries-G-N/India/#.UmK1LvIHLA0>):

մից²⁸⁹: Վերջիններս չեն շտապում գումարներ տրամադրել այս ծրագրին, քանի որ չեն տեսնում նոր ատոմակայանի բիզնես հեռանկարը, բացի դրանից՝ շատ ներդրողներ չեն ցանկանում աշխատել ռուսական կողմի հետ: Հետեւաբար՝ նոր ԱԷԿ-ի կառուցումը հնարավոր կլինի, եթե Ռուսաստանը ընդունի քաղաքական որոշում եւ ամբողջովին ֆինանսավորի կայանի կառուցումը, քանի որ տնտեսական շահույթ այս ծրագրից ակնկալել, գոնե առաջիկա մի քանի տարիների համար, դժվար կլինի:

Այնուամենայնիվ, չնայած առկա խնդիրներին, հայ-ռուսական էներգետիկ խոսույթունը բավականին բարձր մակարդակի վրա է, եւ քաղաքական ու տնտեսական փոփոխություններով Հայաստանը կարող է ռազմավարական հարաբերություններն ավելի բարձր մակարդակի հասցնել նոր աէկի կառուցման միջոցով:

Սակայն ժամանակն է, որ Հայաստանի Հանրապետությունը էներգահամակարգի ուժեղացման, նոր ներդրումների ապահովման եւ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման համար սկսի բանակցություններ վարել այլ տերությունների հետ, որոնք տիրապետում են միջուկային նորագույն տեխնոլոգիաների եւ պատրաստ են նոր էներգաբլոկի կառուցման համար ներդրումներ կատարել: Կարելի է նաեւ, որ այդ տերությունները աշխարհառազմավարական հետաքրքրություններ ունենան Հարավային Կովկասի եւ ընդհանրապես Մեծ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում:

2. Էներգետիկ անվտանգության համակարգերի առանձնահատկությունները

Էներգետիկ անվտանգությունը ժամանակակից աշխարհաքաղաքականության մասնագետների հետաքրքրության կարելորագույն ուղ-

²⁸⁹ Տես «Ռուսաստանը կմասնակցի Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման մրցույթին», 6 փետրվարի 2008 (<http://www.ecolur.org/hy/news/nuclear-energy/russia-participates-in-power-station-tender/20/>):

ղություններից մեկն է: Կա կարծիք, որ Էներգաանվտանգության լիարժեք համակարգ գոյություն չունի, Էներգակիր թե՛ ներմուծող, թե՛ արտահանող երկրները հավասարապես խոցելի են այս առումով:

Այսինքն՝ Էներգետիկ անվտանգության համակարգը հավասարապես անհրաժեշտ է ոչ միայն ներմուծող, այլև արտահանող պետություններին: Եթե առաջիններն առանց Էներգետիկ ներմուծման կայուն համակարգի չեն կարող զարգացնել իրենց տնտեսությունները, ապա երկրորդները չեն կարող ընդհանրապես գոյատևել առանց Էներգակիրների կայուն արտահանման ու վաճառքի: Յետևաբար՝ հարկավոր է խորքային առումով ուսումնասիրել Էներգետիկ անվտանգություն հասկացության տեսական եւ գործնական հիմքերը՝ հասկանալու համար այդ գործոնից կախման մեջ գտնվող պետությունների վրա դրա ազդեցության աստիճանը:

Էներգաանվտանգության արեւմտյան մոդելը բաղկացած է մի շարք հիմնական սկզբունքներից, որոնցից կարելի է առանձնացնել թերեւս 2-ը.

1. մատչելիությունը՝ ամբողջ աշխարհում ապահովել Էներգիայի բոլոր աղբյուրների հասանելիությունը՝ ներառյալ ածուխ, նավթ եւ գազ, մինչեւ արդյունահանվող վառելիքի ժամանակաշրջանի ավարտը,
2. Էներգախնայողությունը՝ հնարավորինս քիչ Էներգիայի օգտագործմամբ նվազեցնել Էներգետիկ կորուստները եւ ապահովել պահանջարկը:

Էներգետիկ անվտանգության նշված սկզբունքները ձեւավորվել են դեռ անցյալ դարի 70-ական թվականներին՝ 1973թ. նավթային հայտնի էմբարգոյից հետո, երբ Արեւմուտքը որոշեց նվազեցնել իր կախվածությունը արաբական նավթից, որպեսզի վերջինիս զրկի ճնշում գործադրելու Էներգետիկ լծակից:

Էներգետիկ՝ անխտիր բոլոր աղբյուրների հասանելիության տրամաբանությունը դրված է նաեւ Եվրամիության նոր ռազմավարության հիմքում, եւ պաշտոնական Բրյուսելը առաջ է մղում «Յարավային միջանցք» Էներգետիկ նախագիծը, որի առանցքային ծրագրերից են

NABUCCO, TAP եւ այս տիպի այլ գազամուղները²⁹⁰: Նշված տրամաբանությամբ է շարժվում նաեւ ԱՄՆ-ը, որը փորձում է հնարավորինս հասանելի դարձնել գազի ու նավթի բոլոր պաշարները՝ փորձելով ազդել Էներգակիրների համաշխարհային շուկայի եւ գների ձեւավորման քաղաքականության վրա:

Էներգետիկ բոլոր աղբյուրների հասանելիության սկզբունքը թերեւս այս մոդելի առանցքն է, եւ սա էր պատճառներից մեկը, որ Արեւմուտքն իր ուշադրությունը դարձրեց նաեւ դեպի Հարավային Կովկաս եւ Կենտրոնական Ասիա, թեեւ այդ տարածաշրջանները միասին իրենց Էներգետիկ հնարավորություններով համեմատելի չեն ոչ թե Պարսից ծոցի, այլ այնպիսի փոքր պետությունների հետ, ինչպիսիք են Զուվեյթն ու Զաբարը: Չնայած դրան, հասանելիության սկզբունքից ելնելով, Արեւմուտքը Էներգետիկ հաղորդակցության սուր համակարգերի նախագծման եւ կառուցման աշխատանքներ սկսեց, եւ տարածաշրջանում շահագործման հանձնվեցին մի շարք խողովակաշարեր՝ ամրապնդելով Էներգակիրների արտահանման արեւմտյան ուղղությունը:

2-1. Էներգետիկ անվտանգությունը Հարավային Կովկասում

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հարավային Կովկասում ձեւավորվել է Էներգետիկ անվտանգության երկու համակարգ, որոնք պայմանակալորեն կարելի է անվանել **տարածաշրջանային** եւ **տեղական**: Առաջինի հիմքում ընկած է Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի տարածքով անցնող սուր Էներգետիկ միջանցքը՝ Բաքու-Ջեյհան, Բաքու-Սուփսա եւ Բաքու-Էրզրում խողովակաշարերով, որին կարող է ավելանալ Տրանսանատոլիական՝ TANAP գազամուղը: Ինչպես հայտնի է, Էներգետիկ այս միջանցքի ստեղծմանը նպաստել է Արեւմուտքն իր վերագրային մի շարք ընկերությունների ակտիվ մասնակցությամբ: Ադրբեջանից սկիզբ առնող Էներգետիկ սուր միջանցքի ձեւավորման աշխատանքները

²⁹⁰ Տես «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» (http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf):

րին մասնակցում են անգլո-ամերիկյան «Բրիթիշ փեթրոլիում», նորվեգական «Սթաթոյլ», ամերիկյան «Էքսոնմոբիլ», թուրքական ԲՈԹԱՍ եւ այլ ընկերություններ:

Հայաստանի Հանրապետության Էներգամուտանգույթային համակարգը, որը կարելի է անվանել տեղական, սկսեց ձեւավորել նաեւ Էներգետիկ ճգնաժամից դուրս գալու պահանջով:

Հայաստանը, «դուրս մնալով» միջազգային Էներգետիկ այս նախագծերից, ստիպված էր ձեւավորել Էներգամուտանգույթային սեփական համակարգը Ռուսաստան-Վրաստան-Հայաստան եւ Իրան-Հայաստան գազամուղների կառուցմամբ եւ շահագործմամբ, Էլեկտրաէներգիայի արտադրության եւ բաշխման համակարգերի սեփական հզորությունների ստեղծմամբ, նաեւ նոր ատոմային Էներգաբլոկի կառուցման նախագծով: Հայաստանը այսօր արդեն Էլեկտրաէներգիայի արտադրության ավելցուկ ունի եւ Էներգետիկ նոր հզորությունների գործարկման դեպքում կարող է դառնալ Էլեկտրաէներգիայի արտահանման հիմնական երկիրը տարածաշրջանում²⁹¹:

Հայաստանում Էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունները կազմում են տարեկան մոտ 8 մլրդ կիլովատտ/ժամ, իսկ սպառման պահանջարկը 7 մլրդ է: Նոր ատոմակայանի կառուցման, Արաքս գետի վրա իրանցիների հետ նոր հիդրոկայանների շահագործման եւ վերջապես՝ Հրազդանի ջէլի 5-րդ բլոկի ողջ հզորությամբ աշխատանքի դեպքում (այս բլոկը գործարկվել է 2013 դեկտեմբերի 2-ին²⁹²) Հայաստանի Էլեկտրաէներգիայի ավելցուկը կկրկնապատկվի, նաեւ կավելանան դրանք արտահանելու հնարավորությունները, հետեւաբար՝ կամրապնդվի նաեւ Էներգետիկ անվտանգության մակարդակը:

Ըստ մասնագետների՝ ներկայումս Հայաստանի Էներգետիկայի զարգացման գերակա ուղղություններն են.

- ատոմային Էներգետիկան,

²⁹¹ Տես Կ. Կարապետյան, Հայաստանի դերը Հարավային Կովկասի տարածաշրջանի Էներգետիկ անվտանգության ապահովման գործում: «21-րդ դար», 2008, հմ. 4 (22):

²⁹² ՀՀ եւ ՌԴ նախագահների մասնակցությամբ բացվեց Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ Էներգաբլոկը, <http://www.aysor.am/am/news/2013/12/02/sargsyan-putin-hrazdan/709352>

- տարածաշրջանային համագործակցությունը եւ ինտեգրումը,
- առաջնային էներգիայի աղբյուրների եւ ներկրման ուղիների բազմազանեցումը,
- վերականգնվող էներգիայի աղբյուրների լրիվ եւ արդյունավետ օգտագործումը եւ էներգախնայողությունը²⁹³:

Այս ուղղություններով էլ Հայաստանը շարունակում է զարգացնել եւ ամրապնդել էներգետիկ անվտանգության համակարգը, ինչը կնպաստի տարածաշրջանում մեր պետության դիրքերի ամրապնդմանը:

Վերը նշված էներգետիկ երկու համակարգերը՝ տարածաշրջանային եւ տեղական, իրար հետ համեմատելի չեն ծավալների, ֆինանսական ներդրումների եւ միջազգային հետաքրքրության տեսակետից, սակայն էներգաանվտանգության առումով, ինչպես ցույց տվեց 2008թ. վրաց-աբխազական ռազմական բախումը, բավականին մոտ են: Այդ ճգնաժամը բացահայտեց այս երկու համակարգերի հուսալիությունը ռազմական գործողությունների պայմաններում՝ դրանց ուժեղ եւ խոցելի կողմերը:

2008թ. օգոստոսյան իրադարձությունների ժամանակ դադարեց գործել Բաքու-Ջեյհան նավթամուղը, սակայն դա չազդեց համաշխարհային նավթի գնագոյացման վրա: Սա մեկ անգամ եւս ապացուցում է, որ գլոբալ էներգետիկ շուկայում՝ հատկապես նավթի, Հարավային Կովկասի էներգետիկ միջանցքը եական դերակատարություն եւ ազդեցություն չունի: Մասնավորապես պարզ դարձավ նաեւ, որ հարավկովկասյան էներգամիջանցքը հուսալի չէ, եւ նույնիսկ փոքր ռազմական բախումը հանգեցրեց դրա աշխատանքի ընդհատմանը: Այս իրավիճակը սպառնալիք ստեղծեց Վրաստանի եւ Ադրբեջանի էներգետիկ անվտանգությանը, որը ուղղակիորեն կախված է էներգետիկ միջանցքի անխափան գործունեությունից:

²⁹³ Տես Ա.Ա. *Գալստյան*, Վերականգնվող էներգետիկայի զարգացումը՝ որպես ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման եւ պետության պաշտպանունակության ամրապնդման երաշխիքներից մեկը: «ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները»: Ե., 2013, էջ 60:

Սպառնալիք ստեղծվեց նաև Հայաստանի համար, որը նավթամթերքների ներկրման խնդիրներ ունեցավ: Հետեւաբար՝ անվտանգության երկու համակարգերն էլ կարիք ունեն վերանայման. հայաստանյանը՝ նավթամթերքների այլընտրանքային ներմուծման հարցում, իսկ հարավկովկասյան Էներգամիջանցքինը՝ կայունության ամրապնդման առումով:

Վրաց-ռուսական ճգնաժամը ապացուցեց Հայաստանի կարելորությունը հարավկովկասյան Էներգամիջանցքի անվտանգության պահպանման եւ դրա կայուն շահագործման խնդրում, եւ որ առանց պաշտոնական Երեւանի համագործակցության այդ միջանցքի կայուն աշխատանքի մասին խոսելը հեռանկարային չէ:

Հայաստանյան Էներգաանվտանգության համակարգի դերի բարձրացման համար կարելոր է Իրանից՝ Թավրիզ-Երասխավան նավթամթերքի խողովակաշարի (բենզինամուղի) կառուցումը, ինչը Էականորեն կամրապնդի մեր երկրի անվտանգության մակարդակը:

Էներգետիկ անվտանգության երկու համակարգերը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ դրանցից մեկը ստեղծվել է Էներգակիրների ներմուծման, մյուսը՝ արտահանման տրամաբանության հենքի վրա, հետեւաբար՝ դրանց աշխատանքների համեմատությունը շատ դեպքերում պայմանական է եւ նպատակ է հետապնդում ցույց տալ ճգնաժամերի պայմաններում դրանց գործունեության հնարավորությունները:

Միջազգային ընկերությունների ներկայությունը Էներգակիրների արտահանումը ոչ միայն չի դարձնում ավելի ապահով, այլեւ շատ դեպքերում վտանգում է կայուն աշխատանքը: Հետեւաբար՝ կարելոր է հասկանալ տարածաշրջանի հակամարտությունների վրա Էներգետիկ գործոնի ազդեցության աստիճանը՝ գնահատելու համար դրա կայունությունն ու անվտանգությունը Հարավային Կովկասում:

3. Էներգետիկ աշխարհաքաղաքականությունը եւ զսպման գործոնները Հարավային Կովկասում

Հարավային Կովկասում խաղաղության պահպանումը նախ եւ առաջ պայմանավորված է ռազմական զսպման քաղաքականության արդյունավետությամբ, սակայն տարածաշրջանի վերածումը Էներգետիկ միջանցքի այդ քաղաքականությանը նոր որակ է հաղորդում: Ըստ ամերիկյան վերլուծաբանների՝ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը բացատրվում է աշխարհագրական դիրքով՝ ելքով դեպի Կենտրոնական Ասիայի Էներգակիրներով հարուստ տարածաշրջան, որը պետք է ապահովի Էներգակիրների լրացուցիչ պաշարների հոսքը Եվրոպա եւ ընդհանրապես համաշխարհային շուկա²⁹⁴:

Ինչպես արդեն նշել ենք, տեսական այս դրույթի իրականացումը՝ դեպի Եվրոպա Էներգակիրների հոսքի ապահովումը, սկսվեց դեռ անցյալ դարի 90-ական թվականների երկրորդ կեսից՝ Բաքու-Սուփսա, Բաքու-Ջեյհան նավթամուղների եւ Բաքու-Էրզրում գազամուղի կառուցմամբ*: Բացի նշված խողովակաշարերից՝ քննարկվում են TANAP, NABUCCO, TAP, AGRI, ITGI, White Stream** եւ այլ գազամուղների ծրագրերը, որոնք գազը Կասպից ծովի ավազանից եւ Մերձավոր Արեւելքից, հեղուկ կամ գազային վիճակում, պետք է փոխադրեն դեպի

²⁹⁴ Տես 3. *Бжезинский. Великая шахматная доска*, с. 146; *B. Shaffer. U.S. Policy toward the Caspian Region*: ...:

* 90-ական թվականներին կար այն համոզմունքը, որ Կասպից ծովի ավազանը նոր Քուվեյթ է եւ Էներգակիրների պաշարներով չի գիշում Պարսից ծոցին: Սակայն հետագայում ապացուցվեց, որ Կասպից ծովի ավազանում Ադրբեջանի, Թուրքմենստանի, Ղազախստանի եւ Ուզբեկստանի նավթի ապացուցված պաշարները միասին կազմում են համաշխարհային 3,7%-ը, մինչդեռ միայն Քուվեյթի նավթի պաշարները՝ 8,4%-ը: Տարածաշրջանի գազի պաշարները կազմում են համաշխարհային մոտ 9,5%-ը՝ զիջելով Զաթարի գազի պաշարներին՝ 13,5% (տես «BP Statistical Review of World Energy», 2010 (www.bp.com/statisticalreview)):

** Այս նախագծերով նախատեսվում է Կասպից ծովի ավազանից եւ Մերձավոր Արեւելքից Սեւ, Էգեյան եւ Ադրիատիկ ծովերով գազի առաքում դեպի Եվրոպա:

Եվրոպա: Այս նախագծերը ավելի են մեծացնում տարածաշրջանի նշանակությունը, քանի որ հարավկովկասյան միջանցքը սկսում է Եվրամիության Էներգետիկ նոր ռազմավարության եւ անվտանգության համակարգի՝ «Հարավային Էներգետիկ միջանցք» ծրագրի մաս կազմել²⁹⁵:

Էներգետիկ նախագծերի իրականացմամբ Հարավային Կովկասում զսպման եւ կայունության հաստատման քաղաքականությունը դառնում է Էներգետիկ միջանցքի անխափան գործունեությամբ շահագրգիռ տերությունների ռազմավարության կարելոր բաղկացուցիչ: Քանի որ զսպման քաղաքականության հիմքում նաեւ հակառակ կողմի հնարավոր ագրեսիվ գործողությունների կանխարգելումն է, ապա հարավկովկասյան Էներգետիկ միջանցքը կարելի է դիտարկել որպես տարածաշրջանում նման քաղաքականության իրականացման գործիքաբանի բաղադրիչ:

Հարավային Կովկասի Էներգետիկ միջանցքի կայուն եւ անխափան գործունեության գաղափարը մեծ տերություններին ստիպում է կարելորել խաղաղության պահպանումը տարածաշրջանում եւ հատկապես զգույշ լինել առկա սառեցված հակամարտությունների շուրջը ծավալվող իրադարձությունների նկատմամբ:

3-1. Էներգետիկ գործունը՝ տարածաշրջանում կայունության ապահովման կարելոր բաղկացուցիչ

Էներգետիկ գործունի դերի ակտիվացումը հանգեցրել է նաեւ դրա քաղաքական ազդեցության մեծացմանը տարածաշրջանում ընթացող հակամարտությունների վրա: Հարավկովկասյան Էներգետիկ միջանցքի կայուն աշխատանքին կարող են խոչընդոտել տարածաշրջանի հակամարտությունները, ինչը լրացուցիչ սպառնալիք է այդ միջանցքի գործունեության համար: Հետեւաբար՝ այն երկրները, որոնք կարող են նպաստել տարածաշրջանում անվտանգության մակարդակի բարձ-

²⁹⁵ Stu «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» (http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf):

րացմանը, լրացուցիչ լծակ են ձեռք բերում նաեւ Էներգետիկ այդ միջանցքի կայուն աշխատանքի ապահովման վրա ազդելու համար:

Բաքվի ռազմատենչ հայտարարությունների ֆոնին պաշտոնական Երեւանը լրացուցիչ խաղաթուղթ է ձեռք բերում՝ հանդես գալով որպես տարածաշրջանում կայունության ու խաղաղության պահպանման կողմնակից:

Էներգետիկ միջանցքի գործարկմամբ տարածաշրջանում նոր լայնածավալ պատերազմի հնարավորությունը որոշ չափով նվազել է, քանի որ հարվածի տակ կդրվեն գործող խողովակաշարերի գործունեությունը եւ նորերի կառուցման հնարավորությունը, այսինքն՝ Արեւմուտքի Էներգետիկ ռազմավարական շահերը:

2008թ. օգոստոսյան ճգնաժամը մասամբ հաստատեց այս իրողությունը, երբ Հարավային Օսիայում տեղի ունեցած ռազմական բախումները հանգեցրին տարածաշրջանից Էներգակիրների արտահանման ընդհատմանը*։ Բաքու-Ջեյհանի շահագործումից հետո արդեն միջազգային փորձագետները հայտարարում էին, որ նավթամուղը տարածաշրջանում կայունության ապահովման՝ զսպման գործիքարանի կարելորագույն մասը կկազմի, դարաբաղյան հակամարտության կողմերին կստիպի հեռու մնալ ռազմական լուծման գայթակղությունից²⁹⁶:

NABUCCO-ի, նմանատիպ այլ խողովակաշարերի՝ TANAP-ի եւ TAP-ի շահագործման դեպքում Էներգետիկ զսպման այս գործիքարանը էլ ավելի կընդլայնվի, քանի որ այս նախագծում ներդրում կատարող պետությունները եւ վերազգային նավթային ընկերությունները տարա-

* Ընդհատումը պայմանավորված էր նաեւ Թուրքիայում Զրդական աշխատավորական կուսակցության կողմից Բաքու-Ջեյհան խողովակաշարում կատարված ահաբեկչությամբ: Սակայն նույնիսկ առանց այդ գործողության էլ «Բրիթիշ փետրոլիումը» պատրաստվում էր կանգնեցնել նավթի առաքումը խողովակաշարով:

²⁹⁶ Stu *Thomas de Waal*. *Caucasian Standoff*, June 30, 2010 (http://www.foreignpolicy.com/articles/2010/06/30/caucasian_standoff):

Ծաշրջանի երկրներից իրենց ներդրումների անվտանգության որոշակի երաշխիքներ կպահանջեն*:

Նրանց անհանգստացնում են պաշտոնական Բաքվի ռազմատենչ հայտարարությունները²⁹⁷, նաեւ հայ մասնագետների պնդումները, թե հնարավոր պատերազմի դեպքում խողովակաշարերը կդառնան առաջնային թիրախ²⁹⁸: Արեւմուտքի համար հարավկովկասյան էներգետիկ միջանցքի աշխարհառազմավարական կարեւորությունը փորձում է խաղարկել Բաքուն՝ Արեւմուտքից պահանջելով դարաբաղյան հարցում ադրբեջանամետ լուծում²⁹⁹, սպառնալով էներգակիրները արտահանել դեպի Ռուսաստան եւ Իրան*:

Շանտաժի այս քաղաքականությունը Ադրբեջանը վարում էր Բաքու-Ջեյհան խողովակաշարի բանակցային գործընթացի ժամանակ, նույնը փորձում էր օգտագործել նաեւ NABUCCO-ի շուրջը սկիզբ առնող բանակցություններում, համոզված ենք, որ այս քաղաքականությունը կկրկնվի նաեւ Անդրադրիատիկ՝ TAP եւ Անդրանատոլիական՝ TANAP խողովակաշարերի դեպքում: Սակայն Իլիամ Ալիեւի իշխանությունն առանց «էներգետիկ աջակցության» չի կարող գոյատեւել, եւ նրա քաղաքական ու ֆինանսական կախվածությունը այդ գործոնից

* Բաքու-Ջեյհանի ընդհանուր արժեքը, շահագործումից հետո, կազմեց ավելի քան 6,4 մլրդ դոլար, Բաքու-Սուփսայինը՝ մոտ 1 մլրդ դոլար, իսկ NABUCCO խողովակաշարի ընդհանուր արժեքը նախապես գնահատվում էր 9 մլրդ եվրո: Ըստ «Բրիթիշ փետրոլիումի»՝ կառուցման դեպքում դրա իրական արժեքը կհասնի 14 մլրդ եվրոյի:

²⁹⁷ Տես «Baku may refuse from military rhetoric only after deoccupation of Azerbaijan lands». «Trend», 23.06.2010 (<http://en.trend.az/news/karabakh/1709353.htm>):

²⁹⁸ Տես *Ս. Միևսայան*, Խաղաղության պահպանման մեխանիզմը դարաբաղյան հակամարտությունում, զսպման տեսությունը սպառազինությունների ասիմետրիկ մրցավազքի պայմաններում, 21.10.2010 (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5082):

²⁹⁹ Տես «Ильхам Шабан: NABUCCO еще предстоит решить много вопросов, чтобы выйти на уровень строительства». Интервью с руководителем Центра нефтяных исследований Азербайджана (ЦНИА). ИА «REGNUM», 14.01.2011 (<http://www.regnum.ru/news/1364666.html>):

* 2010թ. Ադրբեջանը 500 մլն խմ գազ է վաճառել Ռուսաստանին եւ Իրանին:

չափազանց մեծ է³⁰⁰: Ինչպես Բաքու-Ձեյիանի դեպքում, պարզ է, որ խողովակաշարի քաղաքականացվածության եւ Արեւմուտքի համար նրա դերի կարեւորության, ինչպես նաեւ Բաքվի խուսանավելու մասին կարծիքը չափազանցված է: Եվրամիության կողմից Կենտրոնական Ասիայից գազի տարանցման գործընթացում Ադրբեջանի դերի կարեւորության վերանայումը պայմանավորված է մասնավորապես նաեւ Եվրոպայում թերթաքարային գազի արդյունահանմամբ, հեղուկ գազի ներմուծման ծավալների կտրուկ մեծացման գործընթացով, ինչպես նաեւ Անդրկասպյան գազամուղի կառուցման ահնարիւնության հաշվառմամբ³⁰¹:

Գազամուղի գործարկման դեպքում Բաքուն պատասխանատվություն է կրելու դրա աշխատանքի անվտանգության հարցում, իսկ դա ուղղակիորեն կախված է դարաբաղյան հիմնախնդրում ստատուս քվոյի պահպանումից: Այսինքն՝ NABUCCO-ն կամ դրան հետագայում փոխարինելու եկած որեւէ խողովակաշար տարածաշրջանում Էներգետիկ զսպման գործիքարանի հերթական բաղկացուցիչը կկազմի, եւ Ադրբեջանը չի կարողանա երաշխավորել այդ խողովակաշարի գործունեությունը առանց դարաբաղյան ճակատում երկարատեւ խաղաղության պահպանման:

Տարածաշրջանային քաղաքական զարգացումների եւ միջպետական հարաբերությունների վրա Էներգետիկ գործոնի ազդեցությունը պայմանավորված է նաեւ Էներգակիրների համաշխարհային պահանջարկի փոփոխմամբ եւ միջազգային բորսաներում գների շարժով, ինչպես նաեւ տարածաշրջանից գազի ու նավթի արտահանման ծավալների քանակով: Այս տեսանկյունից Ադրբեջանում տեղի են ունենում գործընթացներ, որոնք պայմանավորված են Էներգակիրների արտա-

³⁰⁰ Տես *James Nixey*. The South Caucasus: drama on three stages, 22.02.2010 (http://www.chathamhouse.org/sites/default/files/public/Research/Americas/us0510_nixey.pdf):

³⁰¹ Տես *Г.С. Котанджян*. Демифологизация NABUCCO и перезагрузка Мадридских принципов - ключ к решению карабахского конфликта. ИА «REGNUM», 25.09.2010 (www.regnum.ru/news/1329118.html):

հանման նրա հնարավորություններում նկատվող փոփոխություններով:

Ադրբեջանը, որի տնտեսական աճը բացատրվում է միայն նավթի ու գազի արտահանման ծավալների աննախադեպ ընդլայնմամբ, հայտնվել է նոր իրողության առջեւ: Հասնելով նավթի արտահանման իր հնարավորության բարձրակետին՝ նա արդեն սկսում է սպառել նավթի հաշվին տարածաշրջանում ռազմավարական առավելություն ստանալու իր ռեսուրսը:

2008-2010թթ. Ադրբեջանի նավթի արտահանման ծավալը հասավ 50-51 մլն տոննա տարեկան ցուցանիշի, իսկ արդեն 2011թ. առաջին կիսամյակի տվյալներով՝ Ադրբեջանը ԱՊՀ միակ երկիրն էր, որտեղ արդյունաբերության անկում է գրանցվել³⁰²: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ հաջորդող տարիներին նրա համախառն ներքին արդյունքի աճը չի գերազանցի 3,6%-ը³⁰³, իսկ տնտեսական աճի տեմպերի դանդաղումը կշարունակվի³⁰⁴:

Նավթային գործոնի թուլացման, հետեւաբար նաեւ տնտեսական աճի դանդաղման մասին փորձագետները նշում էին դեռ մի քանի տարի առաջ, շեշտելով, որ Ադրբեջանը շուտով կկանգնի լուրջ տնտեսական դժվարությունների առաջ, մասնավորապես՝ էներգակիրների արտահանման իր պարտականությունները կատարելու գործում: Այս գործընթացը կարող է խորանալ, եթե Ադրբեջանում նավթի արտահանման ծավալների նվազման միտումին ավելանա նաեւ միջազգային սակարաններում նավթի գների հնարավոր անկումը:

Ադրբեջանում արդյունաբերություն ասելով՝ առաջին հերթին պետք է հասկանալ նավթային ոլորտը: 2006թ. նավթարդյունաբերության ա-

³⁰² Стu «Межгосударственный статистический комитет Содружества Независимых Государств» (<http://www.cisstat.com/rus/macro/azer2.htm>):

³⁰³ Стu «Наименьший рост ВВП среди стран СНГ покажет Азербайджан - Всемирный банк». ИА «REGNUM», 13.01.2011 (<http://www.regnum.ru/news/1364256.html>):

³⁰⁴ Стu «The World Bank. Azerbaijan at a glance», 25.02.2011 (http://devdata.worldbank.org/AAG/aze_aag.pdf):

ճը Ադրբեջանում կազմել է 36%, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ էր աշխարհում, սակայն արդեն 2011թ. առաջին 5 ամիսներին նավթարդյունաբերության մեջ անկումը կազմել է 5%, իսկ տարին փակվեց 10,5% նվազմամբ, նույն չնայած եւ ավելի դանդաղ տեմպերով շարունակվեց նաեւ 2012թ.³⁰⁵ եւ կրկնվեց 2013թ.:

Սա չի նշանակում, թե հարավկովկասյան էներգետիկ միջանցքը կկորցնի իր գրավչությունը Արեւմուտքի համար, քանի որ տարածաշրջանում նավթային գործոնին փոխարինելու է գալիս գազը, եւ մշակվում են տարածաշրջանից գազի արտահանման մի շարք ծրագրեր, էներգետիկ անվտանգության գլոբալ համակարգում Կովկաս-կասպյան տարածաշրջանը շարունակում է կարելու տեղ զբաղեցնել:

Սակայն NABUCCO գազամուղի կրճատված West-NABUCCO տարբերակին փոխարինած TAP գազամուղը լավագույն դեպքում շահագործման կհանձնվի 2019թ., իսկ Ադրբեջանի գազի ամենամեծ հանքավայրը՝ Շահդենիզ-2-ը, կսկսի ողջ հզորությամբ գործել 2019 - 2020թթ. միայն:

Բացառված չէ, որ առաջիկայում ականատես լինենք Ադրբեջանում սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման, ինչը որոշակի ազդեցություն կունենա պետության ներքին եւ արտաքին քաղաքականության վրա: Հնարավոր է, որ պաշտոնական Բաքուն փորձի սրել իրավիճակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ շփման ողջ ճակատային գծում՝ շեղելու բնակչության ուշադրությունը ներքին խնդիրներից:

Այդ դեպքում ավելի կկարելորվի Հայաստանի Հանրապետության դերն Արեւմուտքի համար՝ որպես տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանմամբ շահագրգռված հիմնական պետության:

³⁰⁵ Статистический комитет Содружества Независимых Государств» (<http://www.cisstat.com/rus/macro/azer2.htm>):

4. Թերթաքարային գազի հեռանկարները եւ Հայաստանի Հանրապետությունը

Վերջին մեկ տասնամյակում «դասական» բնական գազի նոր մրցակից է ի հայտ եկել հանձին թերթաքարային գազի, որի տնտեսական եւ հատկապես քաղաքական հեռանկարների վերաբերյալ բանավեճերը մինչ օրս շարունակվում են: Բնական գազ արտահանող երկրները եւ հատկապես Ռուսաստանը պնդում են, որ դրա արդյունահանումը եւ շահագործումը շատ թանկ են, իսկ հյուսվող պատմությունները ավելի շուտ լեգենդներ են: Գազի ներմուծումից կախման մեջ գտնվող երկրները, ընդհակառակը, հենց թերթաքարային գազի մեջ են տեսնում իրենց «փրկությունը» էներգակիրներ արտահանող պետությունների քաղաքական ու տնտեսական ազդեցությունից:

Թերթաքարային գազի առաջին մշակումները սկսվել են դեռ անցյալ դարի կեսերին ամերիկյան Mitchell Energy & Development ընկերության կողմից, սակայն առաջատար տեխնոլոգիաների բացակայության պատճառով մինչեւ անցյալ դարի 80-ական թվականները լուրջ աշխատանքներ չէին տարվում³⁰⁶: Հետագայում, երբ մշակվեց այսպես կոչված հորիզոնական հորատանցման տեխնոլոգիան, թերթաքարային գազը մատչելի դարձավ, սակայն զանգվածային շահագործումը մինչեւ 21-րդ դար բացակայում էր թերթաքարային գազի տեխնոլոգիաների թանկության եւ միջազգային շուկայում գազի ցածր գների պատճառով:

Սակայն դեռ անցյալ դարի 90-ական թվականներին մի շարք նավթային խոշոր ընկերություններ՝ ExxonMobil, ConocoPhillips, Chevron եւ այլն, ամերիկյան հեղինակավոր Booz Alen Inc. ընկերությանը առաջարկեցին իրականացնել ռազմավարական մշակումներ՝ ոչ սովորական (unconventional)* գազի հնարավոր արդյունահանման հեռանկար-

³⁰⁶ Տես Ս. Սարգսյան, Թերթաքարային գազի ուրվականը: «Նորավանք», 03.02.2011 (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5346):

* Ոչ սովորական (unconventional) գազ ասելով սովորաբար նկատի ունեն թերթաքարային գազը, ածխային մեթանը եւ այսպես կոչված կոշտ գազը:

ները եւ զարգացման ընդհանուր միտումները հասկանալու համար³⁰⁷: Իրականացրած ռազմավարական խաղի (wargame) օգնությամբ հնարավոր եղավ ապացուցել, որ մեծ արագությամբ ընդլայնվող համաշխարհային տնտեսության համար թերթաքարային գազը կդառնա կենսական պահանջ ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական նկատառումներից ելնելով: Հետագա զարգացումները մասամբ ապացուցեցին այս կանխատեսման ճշմարտացիությունը:

Թերեւս հաջողված է ԱՄՆ-ի փորձը, որը նախ նվազեցրեց իր էներգետիկ կախվածությունը արաբական նավթից, ապա սկսեց լուրջ աշխատանք իրականացնել՝ ներմուծվող գազից իր կախվածությունը թուլացնելու համար*: 2004թ. ԱՄՆ-ում կտրուկ ավելացան թերթաքարային գազի արդյունահանման ծավալները³⁰⁸: Ներկայումս գազի արդյունահանման տեմպերով ԱՄՆ-ը գերազանցում է նույնիսկ Ռուսաստանի Դաշնությանը:

ԱՄՆ-ը, որը գազի սպառման ծավալով աշխարհի թիվ մեկ երկիրն է, կարողացավ ոչ միայն նվազեցնել իր կախվածությունը բնական հեղուկ գազի ներմուծումներից, որտեղ, ի դեպ, առաջատարը Զաթարն էր, այլեւ փորձում է հեղուկացված գազ արտահանել:

ԱՄՆ-ը, սակայն, փորձում է ոչ այնքան հեղուկ գազ արտահանել, որքան «էներգետիկ անկախության» իր հաջողված փորձը փոխանցել Եվրամիության անդամ երկրներին՝ առաջարկելով թերթաքարային գազի նոր ռազմավարության մշակում եւ իրականացում: Արեւելյան Եվրոպայում ԱՄՆ-ի թիվ մեկ դաշնակից համարվող Լեհաստանը սկսեց կիրառել այդ փորձը ամերիկյան ընկերությունների օգնությամբ՝ որոնողական աշխատանքներ ծավալելով ողջ երկրի տարածքով. արդյունքները սպասել չտվեցին:

³⁰⁷ Տես «Wargameing for leader. Play for Energy». New York, 2009, P. 144:

* Ներկայումս ԱՄՆ-ում սպառվող նավթի միայն 8%-ն է ներմուծվում Պարսից ծոցից, իսկ գազի սպառման ծավալում ներմուծումը կազմում է միայն 5%:

³⁰⁸ Carole Nakhle, The effect of the shale revolution on the world's gas producers and consumers, <http://www.worldreview.info/content/effect-shale-revolution-worlds-gas-producers-and-consumers>

2011թ. Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը անձամբ մասնակցեց թերթաքարային գազի առաջին հորատանցքի բացման արարողությանը: Ըստ նախնական հաշվարկների՝ Լեհաստանի արելեյան հատվածում կան գազի մեծ պաշարներ: Որոնողական աշխատանքներ իրականացվում են նաև Ուկրաինայում եւ Գերմանիայում: Լեհաստանի վարչապետը հայտարարել է, որ արդեն 2014թ. կսկսվի գազի արդյունաբերական շահագործումը³⁰⁹:

Թերթաքարային գազի շահագործման առաջին փորձը կարող է եականորեն փոխել ոչ միայն Լեհաստանի էներգետիկ անվտանգության համակարգը՝ նվազեցնելով նրա կախվածությունը Ռուսաստանից, այլև կիսթանի էներգետիկ նոր հումքի արդյունահանումը ամբողջ Եվրոպայում: Ինչպես նշում են մասնագետները, թերթաքարային գազը իսկական հեղափոխություն կարող է առաջացնել էներգետիկայի ոլորտում՝ ազդելով անվտանգության գործող համակարգերի եւ մշակվող ռազմավարությունների վրա:

Լեհաստանի վարչապետը համոզված է, որ նոր հանքավայրերը հնարավորություն կտան ոչ միայն բավարարելու սեփական պահանջարկը, այլև սկսելու գազի արտահանում Եվրոպական մյուս պետություններ՝ նվազեցնելով նաև նրանց կախվածությունը ռուսական գազի ներկրումից: Թերթաքարային գազի արդյունաբերական շահագործումը կազդի նաև գազի միջազգային գների վրա, որոնք, Ռուսաստանի պնդմամբ, ներկայումս «կապված» են նավթի գներին եւ, ըստ շատ մասնագետների, արհեստականորեն բարձրանում են նավթի պահանջարկի եւ գների ավելացման հետ մեկտեղ:

Արելեյան Եվրոպայում թերթաքարային գազի մեծ պաշարների հայտնաբերումը կարող է վերջ դնել ռուսական մենաշնորհին այդ բնագավառում: Սակայն այս ծրագիրը նաև կհարվածի Եվրամիության կողմից հովանավորվող «Յարավային միջանցք» էներգետիկ նախագծին եւ հատկապես NABUCCO, TANAP, TAP եւ նմանատիպ այլ ծրագ-

³⁰⁹ Տես *Kent Moors*. The Polish Energy Revolution Begins. «Money Morning», September 29, 2011 (<http://moneymorning.com/2011/09/29/the-polish-energy-revolution-begins/>):

րերի իրականացմանը՝ դրանք դարձնելով ոչ շահավետ, զրկելով այդ նախագծերը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական գրավչությունից:

Հասկանալի է, որ նման նախագծի իրականացումը եւ «Հարավային միջանցքի» նշանակության նվազեցումը բխում են նաեւ Հայաստանի շահերից: Էներգետիկ միջանցքի շնորհիվ քաղաքական օգուտներ շահելու Ադրբեջանի փորձերը հայտնի փաստեր են, NABUCCO կամ դրան փոխարինող այլ խողովակաշարի վերաբերյալ բանակցություններն Ադրբեջանը արդեն այսօր օգտագործում է ընդդեմ Հայաստանի:

Թերթաքարային գազի արդյունաբերական շահագործումը հետաքրքրում է նաեւ Հայաստանին ե՛լ քաղաքական, ե՛լ տնտեսական շարժառիթներով: 2011թ. հունիսի 2-ին Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը եւ ԱՄՆ-ի դեսպան Մարի Յովանովիչը Հայաստանում թերթաքարային գազի որոնման աշխատանքները ֆինանսավորելու փոխըմբռման համաձայնագիր ստորագրեցին³¹⁰:

Գաղտնիք չէ, որ Հայաստանում կան գազի եւ նավթի որոշակի պաշարներ, եւ ԱՄՆ-ի երկրաբանական ծառայությունը պետք է օգնի դրանց գնահատման եւ արդյունաբերական շահագործման տնտեսական նպատակահարմարությունը որոշելու: Ամերիկյան կողմը պատրաստակամություն է հայտնել ներդրումներ կատարելու հայտնաբերված հնարավոր պաշարների արդյունահանման համար:

Այս համաձայնագրից շատ չանցած՝ 2011թ. օգոստոսի 3-ին, վարչապետ Տիգրան Սարգսյանի ներկայությամբ Հայաստանի Էներգետիկայի նախարարության եւ օֆշորային International Minerals and Mines (IMM) ընկերության միջեւ կնքվեց հուշագիր, որ վերջինս պետք է ձեռնամուխ լինի Հայաստանում թերթաքարային գազի պաշարների հետախուզման եւ գնահատման աշխատանքներ իրականացնելուն³¹¹:

³¹⁰ Տես «U.S. To Explore Armenia’s Shale Gas Reserves» (<http://www.azatutyun.am/content/article/24213717.html>):

³¹¹ Տես «Western Investor To Look For Shale Gas In Armenia», August 04, 2011 (http://www.rferl.org/content/armenia_shale_gas/24287238.html):

Այս աշխատանքները Հայաստանում պետք է կատարի պայմանագրի հիման վրա հիմնադրված IMM Energy Armenia ընկերությունը, որը ստացել է նմանատիպ աշխատանքների իրականացման բացառիկ իրավունք: Աշխատանքները ֆինանսավորելու է ՀՀ կառավարությունը ԱՄՆ-ի տված հատուկ դրամաշնորհի միջոցով:

Առայժմ վաղ է խոսել Հայաստանում թերթաքարային գազի պաշարների հնարավոր հայտնաբերման մասին, սակայն դա կարող է եականորեն ազդել Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության համակարգի վրա՝ նվազեցնելով պետության կախվածությունն էներգակիրների ներմուծումից, եւ, բացի տնտեսական ազդեցությունից, լրջորեն կփոխի էներգետիկ քաղաքական հավասարակշռությունը ամբողջ տարածաշրջանում:

5. Հարավային Կովկասի էներգետիկ միջանցքի նշանակությունը Եվրամիության համար եւ Հայաստանը (ամփոփում)

Հարավկովկասյան էներգետիկ միջանցքը շարունակում է պահպանել աշխարհաքաղաքական իր կարեւորությունը Արեւմուտքի համար, սակայն դեռ չի կատարում աշխարհառազմավարական այն դերը, որը հաշվարկված է՝ Կենտրոնական Ասիայից էներգակիրների արտահանում դեպի Արեւմուտք: Մինչ օրս շարունակում է հիմնականում ադրբեջանական էներգակիրների արտահանման միջանցք լինել, ինչը տեղայնացնում եւ նվազեցնում է այդ միջանցքի աշխարհառազմավարական տրամաչափը: Սակայն նույնիսկ այդ պայմաններում միջանցքը կարեւոր է Արեւմուտքի համար, քանի որ Կենտրոնական Ասիայի էներգետիկ շուկա մտնելու պայքարը մոտակա տասնամյակում կմնա ԱՄՆ-ի եւ Եվրամիության արտաքին քաղաքականության օրակագում:

Հայաստանի Հանրապետությունը եւ Լեռնային Ղարաբաղը, մոտ լինելով էներգետիկ միջանցքին, ոչ միայն կրում են այդ միջանցքի ազդեցությունը, այլեւ ունեն այդ միջանցքի անվտանգության վրա ազդելու գործունե եւ դեռ չօգտագործած հնարավորությունը, որն էլ Հայաստանի

Հանրապետության համար կարող է դառնալ տարածաշրջանում զսպման եւ կայունության հաստատման քաղաքականության կարելորագույն բաղադրիչ: Այն տերությունները, որոնց համար հարավկովկասյան Էներգետիկ միջանցքը աշխարհառազմավարական կարելորություն ունի, չեն կարող երաշխավորել դրա կայուն գործունեությունը՝ անտեսելով Հայաստանի անվտանգային ռազմավարական շահերը:

Հարավային Կովկասի Էներգետիկ աշխարհաքաղաքականության մեջ Հայաստանի Հանրապետության դերակատարությունը ավելացնելու նպատակով հարկավոր է՝

- «տեղ զբաղեցնել» Արեւմուտքի Էներգետիկ անվտանգության նոր մշակվող ռազմավարության մեջ՝ որպես այդ միջանցքի կայունության երաշխավոր պետություն,
- մշակել հնարավոր ռազմական բախման դեպքում Էներգետիկ միջանցքի վրա արագ ազդելու արդյունավետ միջոցներ:

Հարավային Կովկասում Էներգետիկ աշխարհաքաղաքականության մաս է կազմում նաեւ իրավիճակի զարգացումը Կասպից ծովի ավազանում, պայմանավորված՝

- ծովում սպառազինության մրցավազքի ուժեղացմամբ,
- ծովի կարգավիճակի բանակցային գործընթացի զարգացումներով:

Տարածաշրջանում խաղաղության պահպանումը կարելի է բացատրել ռազմաքաղաքական զսպման քաղաքականության արդյունավետությամբ, որը, սակայն, չի կարող կայուն լինել եւ փոփոխվում է՝ կախված նաեւ Էներգետիկ աշխարհաքաղաքական զարգացումներից, հետեւաբար՝ պետք է մշակել զսպման քաղաքականության արդյունավետ մեխանիզմներ՝ Հարավային Կովկասում Էներգետիկ միջանցքի աշխարհառազմավարական նշանակության փոփոխմանը համահունչ:

Եվրամիության Էներգետիկ ռազմավարության բաղկացուցիչ «Հարավային Էներգետիկ միջանցք» նախագիծը նախատեսում է նաեւ Կասպից ծովի հատակով նոր գազամուղի կառուցում, ինչը ռազմաքաղաքական նոր լարվածության պատճառ է Կասպից ծովի ավազանում:

Նախագիծը նախատեսում է Կասպից ծովի ավազանից եւ Մերձավոր Արեւելքից գազի արտահանում դեպի Եվրոպա: Նոր ռազմավարության համատեքստում Եվրահանձնաժողովը բանակցություններ է վարում Ադրբեջանի եւ Թուրքմենստանի հետ՝ այդ նախագծին միանալու, ինչպես նաեւ Կասպից ծովով գազամուղի կառուցման վերաբերյալ:

Ինչպես արդեն նշել ենք, այս պայմաններում տարածաշրջանում հասունանում է ռազմաքաղաքական լարվածություն Կասպից ծովի հատակով գազամուղի կառուցման խնդրի պատճառով: Ստեղծված իրավիճակում նոր գազամուղների կառուցման քաղաքականությունը, մասնավորապես՝ «Յարավային միջանցք» նախագիծը, Կովկաս-կասպյան տարածաշրջանում կարող է տարանջատման նոր սահմաններ ստեղծել՝ Եվրամիություն, ԱՄՆ, Ադրբեջան եւ Թուրքմենստան՝ մի կողմից, Իրան, Ռուսաստան, նաեւ Չինաստան՝ մյուս կողմից:

Եվրամիության Էներգետիկ նոր ռազմավարության կարելորագույն նախագծերից մեկի՝ «Յարավային միջանցքի»³¹² շրջանակներում NABUCCO կամ մեկ այլ գազամուղի կառուցման ծրագիրը կարող է ազդել Յարավային Կովկասում ուժերի բաշխվածության վրա եւ սպառնալ տարածաշրջանի անվտանգությանը, եթե Եվրոպական միությունը ժամանակին քայլեր չձեռնարկի՝ կանխելու իրավիճակի հնարավոր սրումը:

«Յարավային միջանցքի» նպատակն է՝ Էներգետիկ լրացուցիչ հոսքեր ապահովել Յարավային Կովկասից եւ Մերձավոր Արեւելքից դեպի Եվրոպա: Այս նախագծի հիմքում Ռուսաստանից Էներգետիկ կախվածության թուլացման գաղափարն է, ինչի շուրջը համառ մրցակցություն է ընթանում հատկապես Կովկաս-կասպյան տարածաշրջանում, որը այս մրցակցության կիզակետում է, եւ որտեղ տեղի է ունենում ուժերի նոր դասավորություն՝ իրավիճակի փոփոխման հետեւանքով:

Յարավային Կովկասում սրվող Էներգետիկ մրցակցությունը ազդում է նաեւ տարածաշրջանի սառեցված հակամարտությունների, հատկապես դարաբաղյան հիմնախնդրի վրա: Ինչպես հայտնի է, Լեռնային

³¹² Stu «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» (http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf):

Ղարաբաղի Հանրապետության սահմաններից ոչ շատ հեռու անցնում են Ադրբեջանից դեպի Վրաստան եւ Թուրքիա ձգվող բոլոր խողովակաշարերը: Իսկ Հարավային Կովկասը շատ զգայուն տարածաշրջան է՝ մի շարք չլուծված հակամարտություններով եւ նոր հակամարտությունների ծագման մեծ հնարավորություններով:

Տերությունների Էներգետիկ մրցակցությունը հավելյալ լարվածություն է առաջացնում տարածաշրջանում, որտեղ շատ փխրուն խաղաղություն է պահպանվում: Էներգետիկ նոր զարգացումներից որոշակիորեն փոխվում է նաեւ ռազմաքաղաքական հավասարակշռությունը տարածաշրջանում: Գաղտնիք չէ, որ նավթով ու գազով հարուստ Ադրբեջանը, ի հաշիվ բնական այդ հարստության շահագործման, ոչ միայն ուժեղացնում է երկրի կառավարման ավտորիտար համակարգը, այլեւ հրահրում սպառազինության նոր մրցավազք, որի մեջ ներքաշվում է Հայաստանը: Ադրբեջանը չի թաքցնում եւ երբեք էլ չի թաքցրել, որ տարածաշրջանով անցնող Էներգետիկ հոսքերը եւ դրանցում Արեւմուտքի հետաքրքրությունը օգտագործում է ընդդեմ Հայաստանի: Վերջին 7-8 տարիներին նավթի արտահանման ծավալների մեծացումից եւ վառելիքի գների աննախադեպ աճից Ադրբեջանը շատ արագ հարստացավ, ինչը լրջորեն խախտում է առկա ռազմաքաղաքական հավասարակշռությունը ոչ միայն Հայաստանի հետ հարաբերություններում, այլեւ ընդհանրապես տարածաշրջանում³¹³:

Վրաց-ռուսական հակամարտությունն արդեն ցույց տվեց, թե ինչ փխրուն է հավասարակշռությունը տարածաշրջանում, եւ ինչպես կարող են որոշ անպատասխանատու քաղաքական գործիչների քայլեր հանգեցնել լոկալ պատերազմի, զոհերի, ինչպես նաեւ Էներգետիկ հոսքերի ընդհատման: Սառեցված հակամարտությունների պայմաններում իրավիճակի լարումը սպառնալիք է հարեւան պետությունների եւ Եվրոպայի Էներգետիկ ծրագրերի համար, քանի որ նրանք Հարավային Կովկասը եւ Կասպյան տարածաշրջանը դիտարկում են որպես Էներգիայի մատակարարման Ռուսաստանի այլընտրանք:

³¹³ Տես «Azerbaijan Preparing for War Against Armenia». «The Total Collapse», February 13, 2011 (<http://www.thetotalcollapse.com/azerbaijan-preparing-for-war-against-armenia/>):

Հարավային Կովկասի նոր գազամուղի կառուցման գաղափարն առաջ մղող լոբբիստները պետք է ընկալեն, որ հարավկովկասյան էներգետիկ միջանցքի կայունությունը ուղղակիորեն կախված է տարածաշրջանի անվտանգությունից եւ առկա հակամարտությունների հավասարակշռված մոտեցումից: Իսկ Հարավային Կովկասի փխրուն խաղաղության պահպանմանը սպառնում են պաշտոնական Բաքվի ռազմատենչ հռետորաբանությունը եւ սպառազինության մրցավազքը, ինչը պայմանավորված է էներգետիկ հոսքերից ստացվող հսկայական եկամուտներով: Հետեւաբար՝ հարավկովկասյան էներգետիկ միջանցքի կայունությունը խաթարվում է առաջին հերթին Ադրբեջանի իշխանությունների ռազմատենչությամբ, որը ժողովրդավարական պետություն կառուցելու իր անկարողությունը եւ Ալիևների ավտորիտար համակարգի գոյությունը փորձում է արդարացնել առկա հակամարտությամբ³¹⁴:

Նավթի ու գազի առկայությունը շատ հազվադեպ է հնարավորություն տվել այդ պետություններում ժողովրդավարություն կառուցելու, փոխարենը միշտ էլ նպաստել է բռնատիրական համակարգերի հաստատմանը: Հետեւաբար՝ բնական պաշարների վրա հիմնված ավտորիտար պետությունների հետ էներգետիկ գործարքներ իրականացնող երկրները ակամա դառնում են այդ ավտորիտարիզմի հովանավորը:

Այսինքն՝ ինչքան խորանում է Ադրբեջան-Արեւմուտք նավթային համագործակցությունը, այնքան փխրուն է դառնում տարածաշրջանի կայունությունը եւ այնքան հզորանում Ալիևների բռնատիրությունը: Եվրամիությունը իր էներգետիկ նոր ռազմավարությամբ, փաստորեն, ակամա դարձել է տարածաշրջանում սրվող նոր լարվածության «հովանավորը», նաեւ Ադրբեջանի՝ նոր սպառազինության մրցավազքի կազմակերպման հիմնական ֆինանսավորողը, բռնատիրական համակարգի երաշխավորը: Սա հատկապես տարօրինակ է, երբ Եվրամիությունը, հանձին Ֆրանսիայի, մաս է կազմում ԵԱՀԿ Մինսկի խմբի

³¹⁴ Stu «Expert: OSCE Minsk Group urging Azerbaijan to withhold armed rhetoric», 25.10.2011 (<http://www.panorama.am/en/politics/2011/10/25/expert/>):

համանախագահ երկրների, այսինքն՝ ուղղակիորեն ներգրավված է ղարաբաղյան հարցի միջնորդական առաքելությանը:

Ինչքան ուժեղանում է Ադրբեջանի դերը Եվրամիության Էներգետիկ անվտանգության համակարգում, այնքան վտանգվում է կայունությունը տարածաշրջանում, հետևաբար՝ Էներգետիկ միջանցքի գործունեությունը նույնպես դառնում է անհուսալի: Այսինքն՝ հենց Ադրբեջանն է տարածաշրջանում անկայունություն սերմանողը, եւ Եվրամիությունը չի կարող երաշխավորել հարավկովկասյան Էներգետիկ միջանցքի գործունեությունը՝ հիմնվելով միայն Ադրբեջանի եւ նրա քաղաքական ու տնտեսական շահերի վրա:

Հայաստանը, որը բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում է, առավել նախանձախնդրորեն է վերաբերվում տարածաշրջանի կայունությանն ու սեփական անվտանգությանը, եւ ունենալով չլուծված հակամարտություն, փակ սահմաններ, բավականին բարդ հարեւաններ՝ հանձինս Իրանի եւ Վրաստանի, զգուշորեն է վերաբերվում Եվրամիության նախաձեռնությանը՝ հերթական գազամուղը կառուցել եւ Ադրբեջանին ներառել իր Էներգետիկ անվտանգության համակարգում:

Այս պայմաններում Եվրամիությունը պետք է շահագրգռված լինի Հարավային Կովկասում կայունության, նաեւ անվտանգության բարձր մակարդակի պահպանման համար, քանի որ Ադրբեջանի ռազմական հռետորաբանությունը հուշում է, որ այդ պետությունն է սպառնում տարածաշրջանային անվտանգությանը, այսինքն՝ տարածաշրջանից Էներգակիրների արտահանմանը դեպի Եվրոպա: Եվ հակառակը՝ Հայաստանը, իր կայուն քաղաքական համակարգով, հավասարակշիռ մոտեցումով ու խաղաղությանը հասնելու ձգտումով, այն պետությունն է, որը կարողանում է զսպել Ադրբեջանի ռազմատենչությունն ու պահպանել կայունությունը եւ խաղաղությունը տարածաշրջանում: Այս քաղաքականության հիմքում սեփական անվտանգությունը պահպանելու մղումն է, որը նպաստում է նաեւ տարածաշրջանի կայունությանը, հետևաբար՝ Էներգակիրների անխափան հոսքին դեպի Եվրոպա:

ՀՀ-ն եւ Եվրամիությունը պետք է համատեղ մշակեն նոր մոտեցում տարածաշրջանում անվտանգության հաստատման եւ դրանում Հայաստանի դերի գնահատման հարցում՝ հասկանալով, որ շարունակա-

կան ներդրումներն Ադրբեջանի տնտեսության էներգետիկայի հատվածում անհավասարակշռություն են առաջացնում տարածաշրջանում, սպառնում կայունությանը: Եվ դա պետք է կարգավորվի Հայաստանի տնտեսության մի շարք ճյուղերում համարժեք ներդրումներով եւ տնտեսական ու հումանիտար լայնածավալ օգնությամբ, ինչը հնարավորություն կտա պահպանելու առկա փխրուն կայունությունը տարածաշրջանում: Եվրամիությունը պետք վերագնահատի Հայաստանի դերը տարածաշրջանում՝ որպես կայունության պահպանման կարելորագույն գործոնի, որը կարելուր առաքելություն է ստանձնել՝ պահպանելու անվտանգությունը եւ խաղաղությունը, ինչը ձեռնտու է ոչ միայն Հայաստանին, այլեւ էներգետիկ միջանցքի կայուն գործունեությամբ շահագրգիռ երկրներին:

Հայաստանի Հանրապետության մուտքը Եվրասիական տնտեսական միություն էականորեն փոխում ռազմաքաղաքական-անվտանգային միջավայրը տարածաշրջանում: Փոփոխվող իրավիճակը ազդում է նաեւ տարածաշրջանի էներգետիկ դիմակայունությանը եւ նպաստում մեր պետության էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանն ու հզորացմանը: Այսուհետ տարածաշրջանում էներգետիկ աշխարհաքաղաքական զարգացումները նոր որակ ու երանգ են ստանում, ինչը արդեն առանձին վերլուծության թեմա է:

RESUME

ENERGY SECURITY AND GEOPOLITICAL CHALLENGES IN THE CAUCASUS-CASPIAN REGION

Chapter 1: The International Status of the Caspian Sea and the competition around it

After the collapse of the Soviet Union, the Caucasus, the Caspian Sea Basin and Central Asia appeared in the focus of the Western powers. The above-mentioned regions were important with both their geographical location and the energy resources. The control over the extraction and exporting of those resources meant control over the whole region. The USA, the only superpower that remained after the collapse of the USSR, could not leave this region out of sight, especially the Caspian Sea Basin, which it considered a key link in the Caucasian - Central Asian region of strategic importance. Therefore, the domination over the Caspian Sea acquired a strategic importance for the world powers.

The Caspian Sea is the world's largest inland body of water with a total area of the reservoir is 371 thousand km². Historically, the issue of the legal status of the Caspian Sea has always been important to the countries of the region. The question was first raised during the Russian-Persian wars (1722-1723, 1804-1813, 1826-1828), and under the Treaties of Gulistan

and Turkmenchay Russia got an exceptional right to have naval forces in the Caspian Sea.³¹⁵

To determine the status of the Sea Soviet Russia and Persia signed treaties in 1921, 1935 and 1940, under which the parties shared equal rights for launching activity in the Caspian Sea. When new states emerged in the Caspian Sea Basin after the collapse of the Soviet Union, it became clear that the former Soviet-Iranian agreements did not suffice the new reality in the region. Therefore, it was necessary to conclude new agreements to determine the international status of the Caspian Sea. The old issue of whether the Caspian is a Sea or a Lake was again raised after the USSR collapse. In the official maps and atlases published in Soviet times the Caspian was mentioned as a Lake³¹⁶, while many international encyclopedias described it as a "sea-lake." This issue, which seems non-essential from the political point of view, brought about serious disagreements in the Caspian states.

The provisions of the International Law of the Sea did not provide the specialists and the residents of coastal states with an opportunity to conclude which status to "endow" to the Caspian Sea - that of a lake, a sea, an enclosed sea or something else. The dispute further deepened because of the Article 123 of the same law, which allows the states bordering an enclosed or semi-enclosed sea to cooperate with each other in the exercise of their rights and reach a common agreement on the international status of the sea. It was this broad framework of rights that was preventing the neighboring countries from making a final decision.

³¹⁵ See «История дипломатии», т. 2. Под ред. А. А. Громыко и др. 2-е издание, переработанное и дополненное. М.: Госполитиздат, 1959, с. 432 («A History of Diplomacy». Ed. by A. A. Gromyko and others, 2nd edition, revised and expanded. Moscow: Gospolitizdat, 1959, P. 432).

³¹⁶ See «Малый атлас СССР», 1978; «Малый атлас мира», 1981; «Географический атлас», 1980 («Small Atlas of the USSR», 1978; «Small Atlas of the World», 1981; «The Geographical Atlas», 1980).

Russia, as one of the important players in the struggle for the status of the Caspian Sea, adhered to the following viewpoint: "The Caspian is a special, inland basin, which the UN legislature on the sea and the internationally acceptable experience of division of seas do not apply to."³¹⁷

Under the conditions of deterioration of relations between the parties, an important role was ascribed to the influence of a third country, and it was the US at the time. In November 1997 the President of Kazakhstan, Nursultan Nazarbayev, left for Washington to ensure support from the White House. US President Bill Clinton declared at the meeting: "The position of Kazakhstan on the issue is our position."³¹⁸

The sectoral principle of division of the Caspian Sea started to "retreat," when Vladimir Putin came to power in Russia. He declared the Caspian Sea Basin an area of special interest for Russia. Foreign Minister Igor Ivanov declared: "The Caspian is a traditional zone of Russian national interest."³¹⁹

Turkmenistan's President Saparmurat Niyazov issued decision N-3467 on the "Determination of the geographical coordinates of the baselines of the Turkmen part of the Caspian Sea coast."³²⁰ With this decision the

³¹⁷ See *В.Ф. Грунин*. Правовой статус Каспийского моря и проблемы обеспечения национальных интересов Российской Федерации в прикаспийском регионе. «Журнал теории и практики Евразийства», № 13 (*V. F. Grunin*. The Legal Status of the Caspian Sea and the Problems of Ensuring the National Interests of the Russian Federation in the Caspian Region. «Journal of Theory and Practice of Eurasianism», N 13) (<http://www.e-journal.ru/bzarub-st6-13.html>).

³¹⁸ See *А. Бутаев*. Каспий: зачем он Западу? (*A. Butayev*. The Caspian: Why the West Needs it?) (<http://www.caspiy.net/>).

³¹⁹ See *Е. Тесемникова*. Россия смещает акценты. В Москве предлагают отложить определение статуса Каспия на неопределенный срок. «Независимая газета», 6 октября 2000 г. (*E. Tesemnikova*. Russia Shifts the Focus: Moscow suggests postponing the determination of the Status of the Caspian indefinitely. «Nezavisimaya Gazeta», October 6, 2000).

³²⁰ See *А. Бутаев*. Каспий: зачем он Западу? (*A. Butayev*. The Caspian: Why the West Needs it?) (<http://www.caspiy.net/>).

Turkmen President accepted the principle of sectoral division of the Sea, on condition that the factor of the Absheron Peninsula not be taken into consideration when determining the dividing line of the central part of the Sea, as extending deep into the Caspian Sea, the peninsula was bringing that line close to the Turkmen coast.

Actually expressing his agreement to the principle of sectoral division of the Caspian Sea, Iran undertook serious research and extraction works at its part of the coast. However, the Iranian principle of "sectoral" division rested on the principle of equal division of the Sea between the coastal states (20% to every country).

Formation of the new architecture of security of the Caspian Sea is of great significance for the West. As renowned American political scientist, former National Security Advisor to US President Zbigniew Brzezinski notes, the control over Central Asia is of geographical and strategically importance to the US, and this can be exercised through establishing influence over the Caspian Sea Basin and especially Azerbaijan, since that country is an important link between the West and Central Asia³²¹.

No significant progress has been registered over the 23 years of negotiations on the status of the Caspian Sea. There has been no real progress, although information emerges from time to time suggesting an agreement has been reached.³²²

The disagreements in the negotiations that have been continuing for 23 years can be explained by the following two factors: 1. mutually exclusive interests of the Caspian states; 2. active interference of a third country in the negotiation process.

³²¹ See З. Бжезинский. Великая шахматная доска. «Международные отношения». М., 2006, с. 146 (*Z. Brzezinski. The Grand Chessboard: International Relations. Moscow, 2006, P. 146*).

³²² See «Конвенция по статусу Каспийского моря согласована на 70%, но сопротивление сторон возрастает». ИА «REGNUM», 15.03.2007 («Convention on the Status of the Caspian Sea has been 70% agreed on, but the resistance of the parties is increasing». ИА «REGNUM», 15.03.2007) (www.regnum.ru/news/797095.html).

Chapter 2: The Energy Resources of the Caspian Sea and the Competition on the Construction of Gas Pipelines

The assessments of the oil and energy carriers, in general, in the Caspian Sea Basin are rather different. A considerable part of Azerbaijan's oils resources is centered in the Azeri-Chirag-Gunashli oilfield, discovered in 1980s³²³. The oil industry in other coastal countries started to develop later than in Azerbaijan; therefore, the reserves of those countries are more promising. It is known that about 1 billion, 462 tones of oil and 380 billion square meters of gas have been extracted in Azerbaijan throughout the history of oil industry.³²⁴ Most probably, this unprecedented exploitation of oil and gas comes to explain the fact that no new oil reserves have been discovered in the Azerbaijani section of the Caspian Sea.

In September 1994 Azerbaijani President Heydar Aliyev managed to conclude the so-called "Agreement of the Age", under which the Azerbaijani International Operating Company (AIOC) was established to explore and exploit the Azeri, Chirag and Gunashli oilfields discovered in 1980s. The British Petroleum (34.1%) and eight other large oil companies became the main shareholders of the newly created consortium³²⁵.

The next agreement was signed on the exploitation of Shahdeniz reserves, where 1 trillion square meters of gas was discovered.³²⁶ However, the main gas resources are centered in Turkmenistan, which exported 7.2

³²³ See Л. Левицкий. Каспий: удастся ли России сохранить влияние на «русском море»? (L. Levitsky. The Caspian: Will Russia manage to maintain the Influence on the «Russian sea»?) (http://www.russia-today.ru/2001/no_12/12_investigation_1.htm).

³²⁴ See «Нефтегазовая вертикаль», 2006, № 8 («The Oil and Gas Vertical», 2006, N 8) (<http://www.ngv.ru>).

³²⁵ See А. Муталибов. «Черное золото» так и не превратилось в «нефтедолларовый дождь». Журнал «Мировая энергетическая политика», 14 мая 2002 (A. Mutalibov. The «Black Gold» Never Turned into «Oil Dollar Rain». «World Energy Politics» magazine, May 14, 2002) (http://www.opec.ru/expert.asp?ex_no=57).

³²⁶ See «Нефть Баку», 12 апрель 2007 («Baku Oil», April 12, 2007) (<http://www.bakunews.info/news/1921.html>).

billion cubic meters of gas in 1992.³²⁷ To fight against the Russian gas monopoly Turkmenistan commissioned the first gas pipeline to Iran in 1996, which enabled to export up to 8 billion cubic meters of gas annually.³²⁸ The next direction of gas export Turkmenistan was interested in was China.

Uzbekistan, the second gas-rich country in Central Asia, also faces serious problems of production and exportation of gas. In 1992-2000 Uzbekistan managed to increase the volume of oil industry to 7 billion cubic meters annually.

The US and the European Union were actively promoting the idea of construction of an alternative route for exporting gas from the Caspian Sea. The question was only of political importance to the US and was aimed at weakening the dependence of the countries of the region on Russian pipelines, while the European Union pursued economic goals, as well, as the European gas market heavily depends on Russian gas exports.

Azerbaijan is trying to use its gas resources to become an alternative to Russia in supplying gas to Europe³²⁹. Although Azerbaijan does not possess the necessary amount of gas, it's important for the country to have its small, but stable share on the European gas market, which can bring economic and political benefits.

On January 13, 2011 the Presidents of the European Commission and Azerbaijan, Jose Manuel Barroso and Ilham Aliyev signed a declaration supporting the Southern Gas Corridor.³³⁰ In response to this process, the

³²⁷ See «Energy Information Administration. Caspian Sea Region: Survey of Key Oil and Gas Statistics and Forecasts», July 2006 (www.eia.doe.gov).

³²⁸ See «Новый газопровод из Туркменистана в Иран будет введен в строй 6 января», 05.01.2010 («New gas pipeline from Turkmenistan to Iran will be commissioned on January 6», 05.01.2010) (<http://www.centrasia.ru/newsA.php?st=1262712900>).

³²⁹ See *Ա. Մանվելյան*, Պայքար Անդրկասպյան գազամուղի կառուցման համար: «Գլոբուս Էներգետիկա» ամսագիր, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2008, հվ. 2 (*A. Manvelyan*. Struggle for Construction of Trans-Caspian Gas pipeline. «Globus Energy» Journal, «Noravank» Scientific-Educational Foundations, February 2008, N 2).

³³⁰ See «Joint Declaration on the Southern Gas Corridor» (http://ec.europa.eu/energy/infrastructure/strategy/doc/2011_01_13_joint_declaration_southern_corridor.pdf).

US Department of State Special Envoy for Eurasian Energy declared that the agreement of Azerbaijan and Turkmenistan was enough for laying a gas pipeline on the seabed³³¹. By supporting the construction of the Trans-Caspian pipeline, the US and the European Union, Azerbaijan and Turkmenistan actually incite another confrontation, which Russia has already responded to, declaring in May 2011 about the strengthening of the military Flotilla in the Caspian Sea.³³²

As it was expected, Iran's position fully coincided with that of Russia. Iran's Ambassador to Moscow Seyyed Mahmoud-Reza Sajjadi declared: "Iran understands Russia's anxiety about the EU plans of constructing a pipeline in the Caspian Sea"³³³.

The European Union has worked out a new energy strategy aimed at forming a common European energy market, which will enable the European Commission to negotiate with energy exporting countries on behalf of Europe as a whole. According to the new strategy, the following projects are considered within the framework of the "Southern Gas Corridor" project: NABUCCO, ITGI (Turkey-Greece-Italy), TAP (Greece-Adriatic sea-Italy): Preference was given to the NABUCCO and ITGI programs, which have even been given the special status of "European interests."

On September 25, 2011 the agreement on transit and purchase of Azerbaijani gas was signed in Turkey in the presence of Azerbaijani President Ilham Aliyev and Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan. The

³³¹ See «США поддерживают идею Транскаспийского газопровода, Ричард Морнингстар», 16 ноября 2011 («The US supports the Idea of Trans-Caucasian Gas Pipeline, Richard Morningstar», November 16, 2011) (<http://www.kursiv.kz/1195216143-ssha-podderzhivayut-ideyu-transkaspiskogo-gazoprovoda-richard-morningstar.html>).

³³² See С. Расов. Милитаризация Каспия продолжается, 26.04.2012 (*S. Rasov*. Militarization of the Caspian Continues, 26.04.2012) (<http://www.ru.journal-neo.com/node/15737>).

³³³ See «Islamic Republic News Agency reported that Iran is opposed to the European Union's attempts to transfer energy resources from the Caspian Sea to Western countries» (http://www.steelguru.com/middle_east_news/Iran_opposes_transfer_energy_resources_by_EU_from_Caspian_Sea/225950.html).

new Azerbaijani-Turkish pipeline was to be named Trans Anadolu Pipeline (TANAP).³³⁴

On a visit to Baku, U.S. State Department's Special Envoy for Eurasia Energy Richard Morningstar declared on November 14, 2011 that the US was ready to support any program that would be implemented within the framework of the "Southern Energy Corridor" project³³⁵.

Chapter 3: The Caspian oil routes as a new factor in the Caucasus-Caspian region

There was an opinion in the West and especially the United States in early 1990s that whoever controlled the export of oil from the Caspian region, would control the South Caucasus and Central Asia. The opinion was caused not only by the political situation in the region, when all oil-rich countries were eager to get rid of Russian influence, but also the fact that the security of the ruling regimes in those countries and their endurance were directly dependant on oil and gas revenues.

According to Azeri sources, the idea of constructing a new pipeline from the Azerbaijani section of the Caspian Sea was first brought forward as early as 1991. Five months after the end of the Karabakh war - the conclusion of the Ceasefire Agreement in Bishkek - on September 20, 1994, Aliyev managed to sign the "Agreement of the Century," under which Azerbaijan International Operating Company - AIOC was created.³³⁶

³³⁴ See «Новый азербайджано-турецкий газопровод будет называться Trans Anadolu». ИА «REGNUM», 18.11.2011 («The New Azerbaijani-Turkish gas pipeline will be named Trans Anadolu». IA «REGNUM», 18.11.2011) (<http://www.regnum.ru/news/1469065.html>).

³³⁵ See «Спецпредставитель госсекретаря США прибыл в Баку для обсуждения Транскаспийского газопровода?». ИА «REGNUM», 14.11.2011 («Has the US State Department's Special Envoy arrived in Baku to discuss the Trans-Caspian gas pipeline?». IA «REGNUM», 14.11.2011) (<http://www.regnum.ru/news/1467009.html>).

³³⁶ See «Azerbaijan Oil Contracts» (http://www.azer.com/aiweb/categories/magazine/62_folder/62_articles/62_socar_aioc.html):

During The New Great Game launched around the Caspian Sea, the US and Russia were paying a special attention to the most oil-rich country - Kazakhstan. Therefore, establishing influence on the former USSR country was gaining a strategic importance.

Kazakhstan and Russia were negotiating the construction of a new Tengiz-Novorossiysk pipeline. The two countries had signed the deal on June 17, 1992, but it grew into a real agreement only in 1996. The fact that part of the pipeline existed was a factor contributing to the signing of that contract.

It became clear in mid-1990s that to keep its influence Russia needed new political and economic levers, such as oil and gas pipelines by controlling which Russia could maintain its supremacy in the South Caucasus and Central Asia.

Before the construction of the Baku-Supsa pipeline, all oil routes from the Caspian Sea Basin were passing through Russia's territory, and this step of the US marked a breakthrough. This was also a clear indication of the start of a stage of new political developments in the region, when Russia's monopoly of bringing oil to the European market were weakening, therefore resulting in the weakening of Russian influence in the South Caucasus and Central Asia.

In 1996 the World Bank allocated \$12.5 million to BOTAS Company to study the project of construction of a new oil pipeline.³³⁷ As it could be expected, after the Turkish "research" the construction of Baku-Tbilisi-Ceyhan oil pipeline was said to be appropriate. The project was believed to be economically beneficial.

The long negotiations on the construction of Baku-Ceyhan were successfully completed with the signing of an agreement between the inter-

³³⁷ See A. Бутаев. Каспий: зачем он Западу? (A. Butayev. The Caspian: Why the West Needs it?) (<http://www.caspiy.net/>).

ested parties on August 1, 2002³³⁸. On that day the Baku-Tbilisi-Ceyhan Pipeline Company (BTC Co.) - a transnational structure -was created to construct and exploit the pipeline.

Enjoying support from Washington, after solving the issue of funding, the BTC Co. undertook the construction of the new pipeline. On May 28, 2006 for the first time the oil reached the Turkish port and poured into the terminal named after Heydar Aliyev. From there it was transported to Italy through the British Hawthorn oil tanker belonging to the British Petroleum,³³⁹ but the regular supply of oil started in July 2006. Israel became one of the first consumers of Azerbaijani oil. The Azerbaijani oil started to flow to Israel through Baku-Ceyhan pipeline³⁴⁰.

Kazakhstan's President Nursultan Nazarbayev had adopted the policy of diversifying the directions of export of Kazakh oil. The West was supporting the Kazakh President by bringing forward the idea of Baku-Ceyhan, but the Chinese direction was not part of the US programs in the region. The first results in Kazakhstan-China talks were registered in September 1997, when within the framework of an official visit to Astana China's Prime Minister Li Peng signed an agreement on the construction of a Kazakh-Chinese oil pipeline³⁴¹. The 3,200 km-long pipeline with the overall capacity of about 20 tones, with an estimated cost of up to \$9.5 billion, was stretching from Kazakhstan's Atirau to the Chinese city of Alashankou.

The USSR collapse was followed by a period of construction of oil pipelines in the Caspian Sea region, which concluded in 2006, when the Baku-

